

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի երաշխավորությամբ***

Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ գլխավոր խմբագրի տեղակալ
Ա. Մնացականյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
*Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса полиции Республики Армения*

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В
ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ
ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА
СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: заместитель главного редактора Артак Мнацаканян

**FOUNDER AND PUBLISHER:
"POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA" STATE NON-PROFIT
ORGANIZATION**

"BULWARK OF LAW" scientific-methodical journal

**It is published with the warranty of the Scientific Council of the Police
Educational Complex of RA**

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

The representative of the journal publishing: Deputy Head of the editor-in-chief
A. Mnatsakanyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Տիգրան Նսայան**,

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ. **Արտակ Մնացականյան**,

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Միրանուշ Պողոսյան**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան**,

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան**,

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ. **Գրիգոր Բաղիրյան**

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան**,

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան**,

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ **Աշոտ Սևաթունյան**,

ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Արա Ֆիդանյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գագիկ Գրիգորյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան**,

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով**,

ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բալաուն**:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор- заместитель начальника полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Есаян Тигран Микаелович**,

Заместитель главного редактора- начальник отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, майор полиции, кандидат юридических наук **Мнацаканян Артак Самвелович**,

Ответственный секретарь- заместитель начальника отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции **Погосян Сирануш Гришаевна**,

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Судья конституционного суда Республики Армения, доктор юридических наук, профессор **Хачатрян Ашот Гайкович**,

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Аракелян Сергей Ваганович**,

Главный советник начальника Полиции Республики Армения, полковник полиции, доктор юридических наук **Бадирян Григор Микаелович**

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Кочарян Оганнес Ишханович**,

Начальник Юридического управления Полиции Республики Армения полковник полиции, кандидат юридических наук, доцент **Мурадян Манук Оганнесович**,

Начальник Управления по связям с общественностью и информации Полиции Республики Армения, полковник полиции **Агаронян Ашот Сирасович**,

Начальник Национального бюро Интерпола РА, полковник полиции, кандидат юридических наук **Фиданян Ара Хоренович**,

Первый заместитель начальника Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Маркосян Мисак Меружанович**,

Начальник академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Григорян Гагик Таарович**,

Заместитель начальника академии Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук **Марандян Руслан Рафикович**,

Начальник кафедры уголовного процесса академии Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Оганесян Артак Робертович**,

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, доктор технических наук, профессор, генерал-майор полиции **Булгаков Олег Митрофанович**,

Первый заместитель начальника Академии управления МВД России, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Парадников Александр Геннадьевич**,

Заместитель начальника Омской академии МВД РФ (по научной работе), полковник полиции доктор юридических наук, профессор, **Бавсун Максим Викторович**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասլանյան Արայիկ

ԳՈՂՈՒԹՅԱՆ, ԿՈՂՈՊՈՒՏԻ ԵՎ ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ
ՆԵՐՔՈ7

Բիշարյան Արփինե

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....22

Գևորգյան Արուսյակ

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ33

Դավթյան Մելանյա

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ
ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴԸ39

Թադևոսյան Արման

ՏԻՐԱԶՈՒՐԿ ԳՈՒՅՔԻ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՅՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ.....54

Խաչատրյան Հռիփսիմե

ԱՆՁԱԾԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ67

Կարապետյան Էլյա

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ75

Հակոբյան Սամվել, Վարդանյան Անի

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....83

Ղազարյան Արտակ

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ (ՄՐՑԱԿՑԱՅԻՆ) ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ91

Ղազարյան Զեմա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ..... 115

Ղազարյան Տիգրան

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱԶԵՌՆԵԼՈՒ ՓՈՒԼԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 123

Մնացականյան Արտակ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 136

Մուրադյան Մանուկ

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԱՇԱՀՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈՍՄԵԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ..... 148

Պետրոսյան Հակոբ, Ներսիսյան Հայկ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ 161

Սահակյան Ալեքսանդր, Գրիգորյան Անուշ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱԾԻՆ
ՎԱՐՔԱԳԾԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆ 172

Սաֆարյան Ամալյա

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ..... 186

Տոնոյան Անժելա

ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 196

Օհանյան Դավիթ, Մարգարյան Վիկտորյա

ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ..... 206

Саргсян Аделина Арменовна

УГОЛОВНО-ПРАВОВОЕ ЗНАЧЕНИЕ ЯВКИ С ПОВИННОЙ И ЕЕ МЕСТО В
СИСТЕМЕ ДЕЯТЕЛЬНОГО РАССЛЕДОВАНИЯ ПО УК РА И РФ 219

ԳՈՂՈՒԹՅԱՆ, ԿՈՂՈՊՈՒՏԻ ԵՎ ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ասլանյան Արայիկ

*ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական
վարչության քրեագիտական հետազոտությունների
բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Դեռևս 1922 թվականի սովետական առաջին քրեական օրենսգրքում¹ գողությունը բնորոշվում էր որպես **գույքի գաղտնի** հափշտակություն (ՌՍՖՍՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդված), ինչն էլ իր համապատասխան ամրագրումն ստացավ նաև 1926 և 1960թթ. քրեական օրենսգրքերում: Հետագայում նշված հանցակազմում տեղ գտած բնորոշման վերաբերյալ որոշակի վերանայման փորձ կատարվեց միայն մեկ անգամ՝ ԽՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության 1947 թվականի հունիսի 4-ի «Քաղաքացիների անձնական ունեցվածքի պաշտպանությունն ամրապնդելու մասին» հրամանագրում², որտեղ գողությունը բնութագրվեց որպես **«քաղաքացիների անձնական ունեցվածքի գաղտնի կամ բացահայտ հափշտակություն»**, դրանով իսկ ներառելով իր մեջ առանց բռնության կողոպուտը: Սակայն գողության հանցակազմի նման բնորոշումը հետագա տարիների ընթացքում որևէ օրենսդրական ամրագրում չստացավ: Բովանդակային իմաստով էական փոփոխություններ չկրեցին նաև կողոպուտի և ավազակության հանցակազմերը նույնպես:

Վերը նշված հանցակազմերի՝ որակման և միմյանցից սահմանազատման վերաբերյալ մի շարք հիմնահարցեր իրենց հանգուցալուծումները փորձեցին գտնել նաև հետագա տարիների ընթացքում նույնպես: Օրինակ՝ 1986թ.

¹ Տե՛ս՝ Уголовный кодекс Российской Социалистической Федеративной Советской Республики 1922 года — первый советский уголовный кодекс, принятый 26 мая 1922 года на 3-й сессии IX съезда Советов. Вступил в силу с 1 июня 1922 года:

² Տե՛ս՝ Об усилении охраны личной собственности граждан. Указ Президиума Верховного Совета СССР от 4 июня 1947г. /«Ведомости Верховного Совета СССР» 1947 г./ - https://www.1000dokumente.de/index.html?c=dokument_ru&dokument=0012_eig&l=ru:

սեպտեմբերի 5-ի ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի №11 որոշումը, որը վերաբերում էր «Անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական պրակտիկային», սահմանում էր՝ այն գործողությունը, որն սկսվել է որպես գողություն, սակայն տուժողի կամ այլ անձանց կողմից հայտնաբերվելուց հետո շարունակվել է որպես գույքին տիրանալու կամ այն իր մոտ պահելու գործողություն, պետք է որակվի որպես կողոպուտ, իսկ բռնություն գործադրելու (անձի կյանքի և առողջության համար վտանգավոր) կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքի դեպքում՝ ավագակություն: Եթե բռնի գործողությունները կատարվել են գողությունն ավարտվելուց հետո թաքնվելու կամ բռնվելուց խուսափելու նպատակով, ապա դրանք չեն կարող դիտվել որպես կողոպուտ կամ ավագակություն և ենթակա են ինքնուրույն որակման քր. օր-ի համապատասխան հոդվածներով՝ կախված կատարված գործողությունների բնույթից և վրա հասած հետևանքների ծանրության աստիճանից³: Սակայն ինչպես ՀՀ 1961թ. քր. օր-ի, այնպես էլ ներկայիս ՀՀ գործող քր. օր-ի պարագայում գողության, կողոպուտի և ավագակության հանցակազմերի վերաբերյալ ձևավորված միատեսակ մոտեցումները շարունակվեցին:

Պետք է միանշանակ փաստել, որ ներկայումս հիշյալ հանցակազմերի շուրջ գոյություն ունեցող պատկերացումներն այլ պետություններում գործող քրեական օրենսդրությունների համեմատությամբ ունեն ինչպես որոշակի ընդհանրություններ, այնպես էլ էական տարբերություններ: Օրինակ՝ արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրություններում գողություն է համարվում ոչ թե ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը, ինչպես ընդունված է ՀՀ և մի շարք այլ հետխորհրդային տարածքի (մասնավորապես՝ ԱՊՀ) երկրների քրեական օրենսդրություններում, այլ՝ մեկ ուրիշին պատկանող գույքը խաբեությամբ վերցնելը⁴ կամ ուրիշին պատկանող շարժական գույքը տիրանալու (հասանելի դարձնելու) նպատակով գույքի նկատմամբ իրականացրած բռնությունը, կամ անձանց նկատմամբ իրականացրած

³ Sté u՝ Судебная практика по уголовным делам, сборник постановлений Пленумов Верховных Судов СССР, РСФСР и Российской Федерации, ЭКЗАМЕН, М., 2001г., էջ 331-338: Комментарии к Уголовному кодексу Российской Федерации, 6-е издание, под редакцией заслуженного деятеля науки РФ, док. юрид. наук, профессора **В.Т. Томина**, канд. юрид. наук, доцента **В.В. Свечкова**, ЮРАЙТ, М., 2010г., էջ 523:

⁴ Sté u՝ Уголовный кодекс Франции, законодательство зарубежных стран, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2002г, էջ 280:

բռնությունը կամ ահաբեկումը⁵ և այլն: Այսինքն՝ ինչպես վերոնշված, այնպես էլ մի շարք այլ երկրների քրեական օրենսդրությունների դեպքում գողության, կողոպտուի և ավազակության հանցակազմերի վերաբերյալ դեռևս չկան համընդհանուր նշանակություն ունեցող՝ միանշանակ և հստակ սահմանազատումներ: Կան երկրներ, որոնցում կա՛մ ընդհանրապես բացակայում են գողության, կողոպտուի և ավազակության հասկացությունները, կա՛մ դրանք միմյանցից սահմանազատված չեն, կա՛մ էլ, որպես կանոն, փոխարինված են ընդհանուր հասկացություններով: Այսինքն՝ մի դեպքում, դրանք կարող են ընդգրկված լինել գույքային հանցագործությունների, իսկ մյուս դեպքերում՝ բռնությամբ զուգորդված հանցագործությունների մեջ, կամ էլ՝ հանդես գալ զուգորդված: Օրինակ՝ ՄԱԿ-ի, Ինտերպոլի, այդ թվում նաև ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և մի շարք այլ պետությունների վիճակագրական տվյալներում բռնությամբ զուգորդված գույքի հափշտակության դեպքերի վերաբերյալ ընդունված են հետևյալ միասնական հասկացությունները. *Robbery* (անգլերեն), *Raub* (գերմաներեն), *Les volsviolents* (ֆրանսերեն): Դրանք կարելի է թարգմանել որպես *կողոպուտ, ավազակություն կամ բռնի գողություն*: Սակայն ավելի շուտ՝ որպես *կողոպուտ*: Այն, ըստ ծանրության աստիճանի, կարող է տարբերակվել՝ հասարակ, ծանրացուցիչ, զինված և այլ տեսակների⁶:

Հոլանդիայի քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում գողության, այսինքն՝ այնպիսի գործողության համար, որին նախորդել, ուղեկցվել կամ հետևել է բռնության կամ սպառնալիքի ակտն՝ այլ անձանց նկատմամբ... Գողությունը համարվում է նաև ծանրացուցիչ հանգամանքներում կատարված, եթե այն իրականացվել է գիշերը բնակարանում կամ փակ շինությունում (*այդպիսի պատասխանատվություն է նախատեսում նաև Հոլանդիայի քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածը*), ինչպես նաև՝ կատարվածին հետևել են ծանր մարմնական վնասվածքներ⁷:

⁵ St' u՝ Уголовный кодекс Испании, иностранное законодательство, Московский государственный университет имени М.В. Ломоносова, М., (ЗЕРЦАЛО) 1998г, էջ 77:

⁶ St' u՝ *Лунеев В. В.* Преступность XX века: мировые, региональные и российские тенденции. Издание 2-е, переработанное и дополненное, 2005 - <https://studfiles.net/preview/6747842/page/22/>:

⁷ St' u՝ Юридическая Россия. Федеральный правовой портал /v.3.2/ - <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1242430&subID=100100457,100100459,100100493,100100732>:

Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը նույնպես պարունակում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տարբեր դրսևորումներ: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել հետևյալը. հանցավոր ոսնձգությունների բոլոր այն տեսակները, որոնք կապված են ուրիշի գույքը բացահայտ կամ գաղտնի, բռնի կամ ոչ բռնի, զինված կամ անզեն կերպով տիրանալու գործողության հետ, ***ներառված են հափշտակության միասնական հասկացության մեջ:*** Բովանդակային իմաստով՝ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 311-1. հոդվածը գողություն է համարում *ուրիշի գույքը խաբեությամբ (խաբեբայական կերպով) վերցնելը:* Արարքը համարվում է նաև ծանրացուցիչ հանգամանքներում կատարված, եթե այն ուղեկցվել կամ դրան հետևել է բռնության գործադրում, գույքի ոչնչացում կամ վնասում և այլն: Նույն օրենսգրքի մեկ այլ՝ 311-2. հոդվածով՝ էներգիայի խաբեբայաբար վերցնելը, որը վնաս է պատճառել մեկ ուրիշ անձի, նույնականացվել է գողության հետ: Ինչպես Ֆրանսիայի 1810 թվականի քրեական օրենսդրությունը, այնպես էլ ներկայիս գործող քրեական օրենսդրությունը, չեն բնորոշում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ *կողոպուտը և ավազակությունը*⁸:

Եթե փորձենք Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսդրությունը համեմատել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության հետ, ապա այն, գողության հանցակազմի համեմատ, ունի հետևյալ (հիմնական) տարբերակիչ հատկանիշները՝

1. որպես գողության առարկա՝ համարվում է նաև էներգիան,
2. գողությունը՝ որպես հափշտակության կատարման եղանակ, չի պարունակում նշում՝ գաղտնիությամբ կատարված լինելու մասին,
3. բռնությամբ զուգորդված հափշտակությունը ներառված է գողության մեջ:

Որոշակի առանձնահատկություններ է պարունակում նաև Իսպանիայի քրեական օրենսդրությունը. վերջինիս 236-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մանր գողության համար, եթե այն իրականացվել է առաջին անհրաժեշտության կամ հասարակական նշանակության առարկաները հափշտակելու միջոցով: Օրենսգրքում բացակայում է ավազակության հանցակազմը, իսկ դրա փոխարեն, որոշ էական հատկանիշներ իրենց ամրագրում են ստացել գողության (քր. օր-ի 238-րդ հոդված) և կողոպուտի (քր.

⁸ Տե՛ս՝ Ֆրանսիայի Հանրապետության 1810թ.-ի և 1992թ.-ի (գործող) քրեական օրենսգրքերը:

օր.-ի 242-րդ հոդված) հանցակազմերում⁹:

Նմանատիպ մոտեցում պարունակում է նաև Ռումինիայի քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածը. այն, ընդհանուր առմամբ, արարքը դիտարկելով որպես կողոպուտ, հիմնականում պատասխանատվություն է նախատեսում բռնության և սպառնալիքի միջոցով իրականացված գողության համար¹⁰:

Գերմանիայի քրեական օրենսգրքում՝ «կողոպուտը»՝ որպես քրեորեն պատժելի արարք, առանձնացված չէ. գոյություն ունի «Raub¹¹» ասված եզրույթը, որը թարգմանաբար իր մեջ ներառում է և՛ բռնությամբ զուգորդված գողությունը, և՛ կողոպուտը, և՛ ավազակությունը¹²: Եթե ՀՀ գործող քրեական օրենսգիրքը որպես կողոպուտի և ավազակության հանցակազմերի հիմնական սահմանագատող հատկանիշ համարում է գործադրվող բռնության աստիճանը (կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելը կամ չլինելը), ապա Գերմանիայի քրեական օրենսգրքում և՛ կողոպուտը և՛ ավազակությունը *միասնական են*. այն, ընդհանուր առմամբ, կոչվում է **«ավազակություն»**: Հետաքրքիր մոտեցում է ցուցաբերված օրենսգրքի հատկապես 252-րդ պարագրաֆում, որտեղ պատասխանատվություն է նախատեսված **«ավազակային գողություն»** կատարելու համար: Նշված հոդվածի համաձայն՝ այն անձը, որը բռնվել է գողություն կատարելու ժամանակ և գողացված իրերն իր մոտ (իր տիրապետման ներքո) պահելու նպատակով գործադրում է մարդու կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն կամ այդպիսի բռնություն գործադրելու անմիջական (իրական) սպառնալիք, ապա նա ենթակա է պատասխանատվության՝ ավազակային հարձակում կատարելու համար:

Իտալիայի քրեական օրենսդրությամբ՝ գողություն է համարվում ուրիշի

⁹ Ст'у` Юридическая Россия. Федеральный правовой портал /v.3.2/ - <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1247923&subID=100111282,100111284,100111484,100111613,100111630#text:>

¹⁰ Ст'у` Уголовный кодекс Румынии. Принят 18 января 2017 года - <http://ugolovnykodeks.ru/2011/11/ugolovnyj-kodeks-rumynii/>:

¹¹ Ст'у` համացանցային թարգմանչական բառարաններ - <https://ru.pons.com/%D0%BF%D0%B5%D1%80%D0%B5%D0%B2%D0%BE%D0%B4/%D0%BD%D0%B5%D0%BC%D0%B5%D1%86%D0%BA%D0%B8%D0%B9-%D1%80%D1%83%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9/Raub:>
<https://www.babla.ru/%D0%BD%D0%B5%D0%BC%D0%B5%D1%86%D0%BA%D0%B8%D0%B9-%D1%80%D1%83%D1%81%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9/raub:>

¹² Ст'у` Գերմանիայի (ԳՖՀ) 1998թ.-ի (գործող) քրեական օրենսգրքի §242-րդ, §244-րդ և §249-րդ պարագրաֆները - <https://constitutions.ru/?p=5854:>

գույքի՝ առանց բռնության իրականացրած հափշտակությունը՝ անկախ այն հանգամանքից, թե այն կատարվել է *զաղտնի, թե՛ բացահայտ եղանակով*: Բացի դրանից, Իտալիայի քրեական օրենսդրությամբ (ինչպես Ֆրանսիայի դեպքում)՝ գողության առարկա է համարվում նաև էլեկտրական կամ ցանկացած այլ տեսակի էներգիան, որն ունի տնտեսական արժեք: Որպես կողոպուտ է համարվում գույքի այն հափշտակությունը, որն իրականացվել է բռնության կամ դրա սպառնալիքի ազդեցության ներքո, ինչպես նաև՝ գողությունից հետո հափշտակված գույքն իր մոտ պահելու նպատակով իրականացրած բռնությունը¹³....

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Ճապոնիայի քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը, որի համաձայն՝ արարքը համարվում է գողություն, եթե որևէ մեկը (*անկախ այն հանգամանքից, թե վերջինս իր գործողությունն իրականացրել է զաղտնի, թե բացահայտ եղանակով*) գողանում է ուրիշին պատկանող գույքը: Օրենսգրքի 239-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նաև հանցավորի կողմից անգիտակից վիճակի բերված տուժողից կատարված գողության համար՝ որակելով այն ավագակություն: Միննոյն ժամանակ, օրենսգրքի 238-րդ հոդվածով, արարքը համարվում է նաև ավագակություն, եթե հափշտակությունից հետո, գույքը վերադարձնելուն խոչընդոտելու կամ հանցավոր գործունեության հետքերը թաքցնելու նպատակով, գործադրվել է բռնություն կամ բռնության սպառնալիք: Արարքն ավագակություն է համարվում նաև այն դեպքում, երբ որևէ մեկը բռնության կամ սպառնալիքի ազդեցության ներքո խլում է ուրիշին պատկանող գույքը (236-րդ հոդված)¹⁴:

Բելգիայի քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով՝ գողության համար մեղավոր է համարվում նա, ով խաբեությամբ վերցրել է իրեն չպատկանող գույքը: Նույն օրենսգրքի 468-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում կատարված գողության համար, եթե այն իրականացվել է բռնության կամ սպառնալիքի գործադրմամբ¹⁵:

¹³ St' u` Юридическая Россия. Федеральный правовой портал /v.3.2/ - <http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=128867>:

¹⁴ St' u` Юридическая Россия. Федеральный правовой портал /v.3.2/ - <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1241616&subID=100097517,100097519,100097555,100097599#text>:

¹⁵ St' u` Уголовный кодекс Бельгии: Принят Законом от 8 июня 1867 г. По состоянию на 1 сентября 2001:

Չինաստանի (ՉԺՀ) քրեական օրենսգիրքը գողության (հոդված 264-րդ) վերաբերյալ որևէ կոնկրետ բնութագրում (գաղտնի կամ բացահայտ) չի տալիս՝ համարելով այն որպես ոչ բռնի հափշտակություն, այն դեպքում, երբ «կողպուտ» եզրույթի շրջանակներում, արարքը բնութագրվում է որպես՝ բռնությամբ, սպառնալիքով և այլ եղանակներով իրականացվող հափշտակություն (հոդվածներ՝ 263-րդ, 267-րդ և 268-րդ)¹⁶:

Լեհաստանի քրեական օրենսգրքի 278-րդ հոդվածի §1-ին պարագրաֆը, պատասխանատվություն է նախատեսում այն արարքի համար, երբ որևէ մեկը յուրացնելու նպատակով տիրանում է ուրիշին պատկանող շարժական գույքին, իսկ 4-րդ պարագրաֆը՝ այն գողության համար, որն իրականացվել է մտերիմ անձնավորությանը վնաս պատճառելու նպատակով (*տվյալ դեպքում՝ քրեական հետապնդում իրականացվում է միայն տուժողի հայտարարության հիման վրա*): Սույն հոդվածի 5-րդ պարագրաֆը նաև ամրագրել է, որ՝ 1, 3 և 4 պարագրաֆները կիրառելի են ինչպես էներգիայի, այնպես էլ բանկոմատից գումար ստանալու հնարավորություն ընձեռող բանկային քարտի գողության դեպքերում: Օրենսգրքի մեկ այլ՝ 279-րդ հոդվածը, առանձին պատասխանատվություն է նախատեսում նաև կոտրանքի միջոցով իրականացված գողության համար: Պատասխանատվություն է նախատեսվում նաև բռնության կամ սպառնալիքի կիրառման միջոցով իրականացված գույքի հափշտակության այնպիսի դրսևորումների համար, որոնք, ըստ էության, իրենց մեջ կողոպուտի և ավագակության, առանձին տարրեր են պարունակում¹⁷ (տե՛ս օրինակ՝ նշված օրենսգրքի 280-ից 282-րդ հոդվածները):

Իսրայելի քրեական օրենսգրքի 383-րդ հոդվածով՝ գողություն է համարվում, առանց սեփականատիրոջ համաձայնության, վերջինիս պատկանող գույքը խաբեությամբ և անբարեխիղճ կերպով վերցնելը՝ այդ գույքից նրան ընդմիշտ զրկելու մտադրությամբ (*օրենսգրքի 393-րդ հոդվածով՝ գողություն է համարում նաև մեկ ուրիշին վստահված գույքի հաշտակությունը նույնպես*): Օրենսգրքում ավագակության հանցակազմ նախատեսված չէ: Սակայն դրա փոխարեն նախատեսված է կողոպուտի հանցակազմ (հոդված 402-

¹⁶ St' u՝ Уголовный кодекс Китайской Народной Республики. Принят на 5-й сессии Всекитайского собрания народных представителей шестого созыва 14 марта 1997 года и вступила в силу с 1 октября 1997 года:

¹⁷ St' u՝ Юридическая Россия. Федеральный правовой портал /v.3.2/ - <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1246817&subID=100110056,100110058,100110097,100110191#text>:

րդ). այն պատասխանատվություն է նախատեսում, որպես գողություն իրականացված, այնպիսի գործողության համար, որի ընթացքում հափշտակված գույքն ստանալու, իր մոտ պահելու կամ գողության ընթացքում ցուցաբերված դիմադրությունը կանխարգելելու նպատակով ընթացքում, մինչ այդ կամ հետագայում, անձի կամ հափշտակված գույքի նկատմամբ գործադրում կամ սպառնում է գործադրել բռնություն¹⁸...

Բուլղարիայի քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածը (գողություն) պատասխանատվություն է նախատեսում ապօրինի տիրանալու նպատակով՝ ուրիշի տիրապետման ներքո գտնվող շարժական գույքն առանց վերջինիս համաձայնության վերցնելու համար: Գողություն է համարվում նաև այն արարքը, որն իրականացվել է գույքի որևէ հատվածի նկատմամբ իրավունք ունեցող անձի կողմից: Օրենսգրքի մեկ այլ՝ 198-րդ հոդվածով, պատասխանատվություն է նախատեսվում կողոպուտի, այն է՝ բռնության կամ սպառնալիքի գործադրմամբ ուրիշի տիրապետության ներքո գտնվող շարժական գույքն ապօրինի տիրանալու համար: Միննույն ժամանակ, հոդվածը կողոպուտ է համարում նաև ցանկացած այնպիսի գողություն, որն իրականացվել է հանցանքի վայրում բռնված հանցավորի կողմից բռնության կամ սպառնալիքի գործադրման եղանակով հափշտակվածը պահպանելու, ինչպես նաև գույքը հափշտակելու նպատակով անձին անգիտակից կամ անօգնական վիճակի հասցնելու համար¹⁹: Հարկ է նաև նշել, որ Բուլղարիայի քրեական օրենսգիրքը դասվում է այն օրենսգրքերի շարքին, որտեղ տրված է **«սպառնալիք»**²⁰ եզրույթի, օրենսդրական բնորոշումը: Այն ավագակության հանցակազմի վերաբերյալ, ուղղակի անդրադարձ չի կատարում:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Լատվիայի քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածը (գողություն), որի համաձայն՝ գողություն է հա-

¹⁸ St' u` Закон Израиля об уголовном праве. Постатейный перевод с иврита на русский язык. Автор перевода-судья Марат Дорфман. Издание второе переработанное и дополненное 2010г. /опубликовано 9 мая 2015г./ - <https://constitutions.ru/?p=11071>:

¹⁹ St' u` Уголовный кодекс республики Болгария. Принят Пятым Народным собранием на шестой сессии, четвертом заседании, состоявшемся 15 марта 1968 года:

²⁰ St' u` Բուլղարիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ *«Սպառնալիք է համարվում ահաբեկելու նպատակով անմիջականորեն իրականացված այն գործողությունը, որը լուրջ վտանգ է ներկայացրել սպառնալիք ստացողի կամ ներկա գտնվող ցանկացած այլ անձի կյանքի, առողջության, պատվի կամ գույքի համար»*:

մարվում ուրիշի շարժական գույքի *գաղտնի կամ բացահայտ հափշտակությունը*: Ի տարբերություն որոշ երկրների՝ Լատվիայի քրեական օրենսգիրքը կոդոպոտի հանցակազմ չի նախատեսում: Դրա փոխարեն օրենսգրքի 176-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ավագակության համար՝ բնորոշելով այն որպես ուրիշի շարժական գույքի հափշտակություն՝ գուցորդված բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով²¹:

Ի տարբերություն Լատվիայի քրեական օրենսդրության՝ Լիտվայի քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը (գողություն) պատասխանատվություն է նախատեսում միայն ուրիշի գույքի հափշտակության համար՝ որևէ հղում չկատարելով դրա կատարման (բացահայտ կամ գաղտնի) կոնկրետ եղանակի վրա: Լիտվայի քրեական օրենսգիրքը նույնպես պատասխանատվություն է նախատեսում ավագակության (180-րդ հոդված) համար՝ միաժամանակ չնախատեսելով առանձին հանցակազմ կոդոպոտի վերաբերյալ²²:

Հարկ է նշել, որ գողության, կոդոպոտի և ավագակության հանցակազմերին վերաբերող որոշակի միատեսակ և ընդհանրական բնույթի մոտեցումներ իրենց մեջ ունեն նաև հետխորհրդային տարածքի մի շարք այլ հանրապետությունների քրեական օրենսդրություններ նույնպես: Կոնկրետ դեպքում՝ գողության հանցակազմը, օրինակ, Ռուսաստանի Դաշնության (քր. օր-ի 158-րդ հոդված)²³, Բելառուսի Հանրապետության (քր. օր-ի 205-րդ հոդված)²⁴, Վրաստանի Հանրապետության (քր. օր-ի 177-րդ հոդված)²⁵, Ղազախստանի Հանրապետության (քր. օր-ի 188-րդ հոդված)²⁶, Կիրգիզիայի Հանրապետության (քր. օր-ի 200-րդ հոդված)²⁷, Մոլդովայի Հանրապետության (քր.

²¹ St u՝ Уголовный кодекс республики Латвии. Закон, принятый Сеймом 17 июня 1998 года и обнародованный Президентом государства 8 июля 1998 года:

²² St u՝ Юридическая Россия. Федеральный правовой портал /v.3.2/ - <http://www.law.edu.ru/norm/norm.asp?normID=1243877&subID=100107735,100107738,100107766,100107864#text>:

²³ St u՝ Уголовный кодекс Российской Федерации. Принят Государственной думой 24 мая 1996 года; вступил в силу с 1 января 1997 года:

²⁴ St u՝ Уголовный кодекс Республики Беларусь /9 июля 1999 г. № 275-3/. Принят Палатой представителей 2 июня 1999 года Одобрен Советом Республики 24 июня 1999 года:

²⁵ St u՝ Уголовный кодекс Грузии. Принят 22 июля 1999 года ; Введен в действие с 1 июня 2000 года:

²⁶ St u՝ Уголовный кодекс Республики Казахстан. Кодекс Республики Казахстан от 3 июля 2014 года № 226-V ЗРК. В Кодекс предусмотрены изменения Законом РК от 03.07.2019 № 262-VI (вводится в действие с 01.01.2020):

²⁷ St u՝ Уголовный кодекс Кыргызской Республики. Принят Жогорку Кенешем Кыргызской

օր-ի 186-րդ հոդված)²⁸, Էստոնիայի Հանրապետության (քր. օր-ի 139-րդ հոդված)²⁹, Տաջիկստանի Հանրապետության (քր. օր-ի 244-րդ հոդված)³⁰, Թուրքմենստանի Հանրապետության (քր. օր-ի 227-րդ հոդված)³¹, Ուկրաինայի Հանրապետության (քր. օր-ի 185-րդ հոդված)³², Ուզբեկստանի Հանրապետության (քր. օր-ի 169-րդ հոդված)³³, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետության (քր. օր-ի 177-րդ հոդված)³⁴ քրեական օրենսդրություններով, բնորոշվում է որպես «**գույքի գաղտնի հափշտակություն**»։ Վերը նշված միատեսակ վերաբերմունքը պահպանվել է նաև կոդոպուտի և ավագակության հանցակազմերի դեպքում, ինչը որոշակի իմաստով պայմանավորված է նաև տվյալ հանցակազմերի վերաբերյալ ԱՊՀ երկրների մոդելային քրեական օրենսգրքում³⁵ տեղ գտած՝ բովանդակային և սկզբունքային բնույթի ընդհանրական մոտեցումներով։

Արդեն տևական ժամանակ է, ինչ Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում գողության, կոդոպուտի և ավագակության հանցակազմերի՝ որպես հափշտակության ինքնուրույն եղանակների սահմանազատման և քրեաիրավական որակմանն առնչվող բազմաթիվ հարցեր իրենց համապատասխան հանգուցալուծումն են գտել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային

Республики 22 декабря 2016 года от 2 февраля 2017 года №19 (вводится в действие Законом КР от 24 января 2017 года № 10 с 1 января 2019 года. В редакции Закона КР от 15 мая 2019 года N 62):

²⁸ St u՝ Уголовный кодекс Республики Молдова. Принят 18/04/2002 года; Введен в действие с 12/06/2003 года:

²⁹ St u՝ Уголовный кодекс Эстонской Республики. Принят 12.06.2002 года, вступил в силу 1 сентября 2002 года:

³⁰ St u՝ Уголовный кодекс Республики Таджикистан. Принят 21 мая 1998 года и вступила в силу с 1 сентября 1998 года:

³¹ St u՝ Уголовный кодекс Туркменистана. Подписан 12 июня 1997 года и вступила в силу с 1 января 1998 года:

³² St u՝ Уголовный кодекс Украины. Принят Верховной Радой Украины 5 апреля 2001 г. и вступил в силу 1 сентября 2001 года:

³³ St u՝ Уголовный кодекс Республики Узбекистана. Утвержден Законом РУз от 22.09.1994 г. № 2012-ХІІ. Введен в действие с 01.04.1995 г. /с изменениями в соответствии с Законом РУз от 04.03.2019 г. № ЗРУ-526. Дата актуализации: 07.03.2019г./:

³⁴ St u՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին, ՀՕ-528-Ն):

³⁵ St u՝ Модельный Уголовный кодекс : Рекомендательный законодательный акт для Содружества Независимых Государств: Принят на седьмом пленарном заседании Межпарламентской Ассамблеи государств - участников Содружества Независимых Государств : Постановление № 7-5 от 17 февраля 1996 года:

որոշումներում: Մասնավորապես, ելնելով խնդրի կարևորությունից և անհրաժեշտությունից՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, օրինակ, 2013 թվականի փետրվարի 15-ին Ժ.Դուկասյանի և այլոց վերաբերյալ թիվ **ԵԷՂ/0091/01/11** քրեական գործով կայացված որոշմամբ մեկնաբանել է կողոպուտի և ավագակության հանցակազմերը՝ համատեքստում քննարկելով օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Ընդհանրացնելով ավագակության և կողոպուտի հանցակազմերի միավորման շուրջ իրավաբանական գրականության մեջ առկա հիմնավորումները, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրների քրեաիրավական պրակտիկայում տեղ գտած մոտեցումները՝ միանշանակ պետք է փաստել, որ ավագակության և կողոպուտի հանցակազմերի միավորման գաղափարն ունի արդիական նշանակություն և կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քր. օր-ի հետագա կատարելագործման համար: Ուստի, ելնելով վերոգրյալից, *առաջարկվում է*, համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ՀՀ քր. օր-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում ընդգրկված ավագակության (ՀՀ քր. օր-ի 175-րդ հոդված) և բռնությամբ զուգորդված կողոպուտի (176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ) հանցակազմերի միավորման արդյունքում ստեղծել *ավագակության միասնական հանցակազմ*, իսկ ավագակության հանցակազմը բնորոշող օրենսդրական սահմանումը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. **«Ավագակությունը՝ ուրիշի գույքի հափշտակությունն է, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով»³⁶:**

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերը նշված բնորոշման արդյունքում ավագակության հանցակազմից դուրս է մնում կողոպուտի հասարակ տեսակը, այն է՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը, ուստի *առաջարկվում է՝* կողոպուտի հանցակազմի հասարակ տեսակն ընդգրկել գողության հանցակազմում (ՀՀ քր. օր-ի 177-րդ հոդված) և այն բնորոշել հետևյալ բովանդակությամբ. **«Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի կամ բացահայտ հափշտակությունը....»:**

Նշված բոլոր փոփոխությունների արդյունքում, այն է՝ կողոպուտի հանցակազմից կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության

³⁶ Տե՛ս՝ **Ա. Ասլանյան** Ավագակության հանցակազմի որակման հետ կապված մի շարք հիմնախնդիրների քրեաիրավական վերլուծություններ, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, «ՀՀ դատավորների միություն» հասարակական կազմակերպություն, №1-2/175-176, Երևան, 2014թ, էջ 16-27:

հատկանիշի տարանջատումը և այն որպես ավագակություն համարելը, ինչպես նաև կողոպուտը որպես գողության հանցակազմի բացահայտ դրսևորման եղանակ դիտարկելը, ըստ էության, արմատապես փոխում են տվյալ հանցակազմերի վերաբերյալ տասնամյակներ շարունակ որպես ավանդույթ ձևավորված այն պատկերացումները, որոնք մինչ օրս գոյություն են ունեցել: Բացի այդ, առաջարկվող փոփոխությունները կարող են նաև նպաստել նրան, որ գույքի բացահայտ հափշտակությունը դիտարկվի որպես գողության հանցակազմի նոր եղանակ, իսկ այդպիսի հափշտակության հետևանքով պատճառված վնասը ստանա ավելի հստակ օրենսդրական կարգավորում:

Ինչպես ակնհայտ է դառնում արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրություններում տեղ գտած որոշ հասկացությունների վերաբերյալ իրականացված վերլուծություններից, հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսդրության մեջ բացակայում են նաև այնպիսի բնորոշումներ, ինչպիսիք են՝ **«բռնություն»**, **«սպառնալիք»**, **«զենք»**, **«որպես զենք օգտագործվող առարկա»** և այլ եզրույթները: Մասնավորապես՝ արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությունների մեջ, «զենք» հասկացությանը գուցա հեռ, տրված են նաև այնպիսի հասկացությունների վերաբերյալ օրենսդրական բնորոշումներ, ինչպիսիք են՝ **«վտանգավոր զենք»** (ԱՄՆ, Գերմանիա), **«մահաբեր զենք»**, **«մահաբեր ֆիզիկական ուժ»** (ԱՄՆ), **«վտանգավոր միջոցներ»** (Իսպանիա) և այլն³⁷:

Այս իմաստով՝ ՀՀ դատական պրակտիկան նույնպես անմասն չէ, և անհրաժեշտ են գործուն քայլեր՝ որոշ քրեաիրավական հասկացությունների բացը ՀՀ քրեական օրենսդրության մեջ լրացնելու համար:

Որոշակի քրեաիրավական գնահատման կարիք ունեն նաև դատական պրակտիկայում հանդիպող այն գործողությունները, որոնք իրականացվում են տեխնիկական միջոցների գործադրմամբ, որոշ դեպքերում՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով հանցավորի համար ի սկզբանե նպատակադրված գործողությունների բնույթն ու ինտենսիվությունը փոխելու տեսանկյունից

³⁷ St' u՝ *Колмаков Д. А.* Грабежи и разбои в уголовном законодательстве зарубежных стран. Тамбовский государственный университет им. Г.Р. Державина, г. Тамбов, Российская Федерация, соискатель кафедры уголовного права и процесса; Следственное управление УВД по г. Тамбову, г. Тамбов, Российская Федерация, зам. начальника отдела СО, капитан юстиции - <https://cyberleninka.ru/article/v/grabezhi-i-razboi-v-ugolovnom-zakonodatelstve-zarubezhnyh-stran>:

(օրինակ՝ տուժողին հանդիպելու դեպքում որպես տեխնիկական միջոց հանդիսացող մետաղյա լինգի գործադրմամբ սկսված գողությունը կարող է վերածել կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ զուգորդված հափշտակության՝ ավազակության): Ուստի, **առաջարկվում է** տեխնիկական միջոցների գործադրման հանգամանքը՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ,³⁸ այսուհետ ընդգրկել ՀՀ քր. օր-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխի՝ ավազակության (ՀՀ քր. օր-ի 175-րդ հոդված), կողոպուտի (ՀՀ քր. օր-ի 176-րդ հոդված) և գողության (ՀՀ քր. օր-ի 177-րդ հոդված) հանցակազմերին վերաբերող հոդվածներում, իսկ **ավազակության միասնական հանցակազմ ձևավորելու դեպքում** գողության և ավազակության հանցակազմերում:

Բացի դրանից, **առաջարկվում է** գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերում՝ որպես արարքը որակյալ դարձնող հատկանիշ, ՀՀ քր. օր-ում պատասխանատվություն նախատեսել նաև **գիշերային ժամերին կատարվող հափշտակությունների համար**³⁹:

Միննույն ժամանակ, հաշվի առնելով արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությունների վերաբերյալ իրականացված որոշ ուսումնասիրություններ, **առաջարկվում է նաև** էլեկտրական կամ ջերմային էներգիան, ինչպես նաև գազը և ջուրը, նույնպես դիտել որպես **հափշտակության առարկա**⁴⁰: Այս համատեքստում նույնիսկ տեղին է հիշել 1926թ. ՌՍՖՍՀ քր. օր-ի 163-րդ հոդվածը, որը պատասխանատվություն էր նախատեսում էլեկտրական էներգիայի գողության համար⁴¹:

³⁸ Տե՛ս՝ **Ս. Ասլանյան** Հափշտակությունների որակման առանձնահատկությունները ըստ ՀՀ քրեական իրավունքի: Մեղմագիր՝ իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012թ.:

³⁹ Համաձայն՝ ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի (*Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները*)՝ գիշերային ժամանակ է համարվում ժամը 22.00-ից մինչև 7.00-ը ընկած ժամանակահատվածը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշյալ ժամանակահատվածը, հանցավոր գործունեության ծավալման քրեաբանական իմաստով, համարվում է առավել նպաստավոր, իսկ քրեադատավարական բնույթի գործողությունների կազմակերպման և իրականացման տեսանկյունից՝ ոչ մատչելի (*որոշ դեպքերում նաև՝ խնդրահարույց*), ուստի քրեաիրավական տեսանկյունից ավելի նպատակահարմար կլիներ, եթե տվյալ հանգամանքը նույնպես՝ արժանանար համարժեք իրավական գնահատականի:

⁴⁰ Մանրամասն տե՛ս՝ **Ս. Ասլանյան**, Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների որոշ հիմնախնդիրներ («Դատական իշխանություն», 2016թ., №1/199):

⁴¹ Տե՛ս՝ Уголовный кодекс Р.С.Ф.С.Р. редакции 1926 года (с изм. и доп., внесенными

Այսպիսով, կարելի է փաստել, որ սույն հոդվածում գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերի վերաբերյալ առկա բոլոր առաջարկությունները կարող են նաև էական նշանակություն ունենալ նախկին ԽՍՀՄ տարիների քրեական օրենսդրությունների հետ դեռևս իր խոր արմատներով կապված՝ ՀՀ գործող քրեական օրենսդրության հետագա բարեփոխումների համար:

СОСТАВ ПРЕСТУПЛЕНИЯ КРАЖИ, ГРАБЕЖА И РАЗБОЯ В СВЕТЕ СОПОСТАВИТЕЛЬНОГО АНАЛИЗА УГОЛОВНЫХ КОДЕКСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЗАРУБЕЖНЫХ СТРАН

Асланян Араик Вардгесович

*заместитель начальника отдела
криминалистических исследований
Экспертно-криминалистического управления
полиции РА, подполковник полиции,
канд. юрид. наук*

На основе проведенного сопоставительного анализа автор исследует вопросы регулирования составов преступления кражи, грабежа и разбоя, нашедшие отражение в уголовных законодательствах ряда зарубежных стран, а также важнейшие вопросы, касающиеся указанных составов преступления.

Обобщая подходы, имеющиеся в отечественном уголовном законодательстве и уголовных законодательствах ряда зарубежных стран, изучая уголовно-правовые особенности, сходства и различия, автор выдвигает предложения, которые могут иметь важное значение для дальнейших реформ Уголовного кодекса Республики Армения по части указанных составов преступления.

Ключевые слова: кража, грабёж, разбой, единый состав преступления, технические средства, энергия, ночное время, хищение.

ELEMENTS OF THEFT, ROBBERY AND ASSAULT IN THE LIGHT OF COMPARATIVE ANALYSIS OF CRIMINAL CODES OF THE RA AND FOREIGN COUNTRIES

Aslanyan Arayik

*Deputy Head of the Division of Criminalistic Research of the
Criminal Forensics Department of RA Police Police Lieutenant
Colonel PhD in Jurisprudence*

Based on a comparative analysis in the article author examines the regulation of the elements of theft, robbery and assault in the criminal legislations of a number of foreign countries and underlines the most important issues of the elements of these crimes.

Summarizing the approaches of the RA criminal legislation and those of foreign countries, examining the criminal-legal particularities, the similarities and differences, the author makes suggestions that can have a significance importance in the further reforms of the Criminal Code of the RA as regards the elements of crime.

Key words: theft, robbery, assault, elements of crime, technical means, power, nighttime, embezzlement.

Հոդվածը գրախոսվել է՝ 31.01.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 05.02.2020թ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բիշարյան Արփինե

Եվրոպական համալսարանի

իրավագիտության ամբիոնի դասախոս,

Եվրոպական համալսարանի հայցորդ

ՀՀ օրենսդրությունը համայնքների բնակչության՝ տեղական ինքնակառավարման իրականացմանը նպատակաուղղված գործունեության ինքնուրույնությունը շաղկապում է նախ՝ այն տարածքների որոշակիացման հետ, որտեղ տեղական բնակչությունն իրավասու է տեղական ինքնակառավարում իրականացնել, երկրորդ՝ համայնքային սեփականության ինքնուրույն կառավարման, համայնքի բյուջեի ձևավորման, հաստատման և կատարման, տեղական տուրքերի և վճարների սահմանման և այլնի համար ՏԻՄ-երին համապատասխան լիազորություններով օժտելու, երրորդ՝ այդ ամենի իրավական ամրագրման հետ¹: Ժողովրդավարության խորացման քաղաքական ավանդույթների ձևավորման խնդրում բացառիկ կարևորություն է ստանում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովող մեխանիզմների մշակումը, քանզի միայն այդ դեպքում հնարավոր կլինի խթանել ապակենտրոնացման հետագա խորացմանը և խոչընդոտել տեղական ինքնակառավարման համակարգի արժեզրկմանը:

Ընդհանրապես, կառավարման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես է իրականացվում աշխատանքի բաժանումը, ինչպես են բաշխվում խնդիրները, որոնք շատ կարևոր են, ինչպես են պատվիրակվում այդ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ լիազորությունները: Ղեկավարի գործունեության գնահատման կարևոր չափորոշիչներից մեկն էլ այն է, թե ինչպես է նա իրականացնում լիազորությունների պատվիրակումը, որը բավական բարդ խնդիր է: Եթե ինչ-որ անձ իր վրա է վերցնում բավարար մակարդակով խնդրի իրականացման պատասխանատվությունը, կազմակերպությունը

¹Տես՝ Օրդյան Է. Հ., Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Ոստումնական ձեռնարկ, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 67:

պետք է նրան տրամադրի պահանջվող ռեսուրսները: Ղեկավարությունը դա իրականացնում է խնդիրների հետ լիազորությունների պատվիրակման միջոցով²:

Իսկ լիազորություն ասելով՝ պետք է հասկանալ ռեսուրսների տնօրինման և կարգադրություններ անելու սահմանափակ իրավունք, իսկ վերջինս նշանակում է, որ ռեսուրսները կարող են օգտագործվել միայն կազմակերպության նպատակներն իրականացնելու համար³: Լիազորությունների պատվիրակման հիմքում պետք է դրվի աշխատանքի հստակ բաժանումը կառավարման ապարատում, ընդ որում, պետք է հստակ սահմանվեն այն նպատակներն ու խնդիրները, որոնք ենթակա են իրականացման կոնկրետ ստորաբաժանման կամ աշխատողի կողմից և դրանց համապատասխան սահմանվեն այն լիազորությունները, իրավասությունները, որոնք անհրաժեշտ են առաջադրված խնդիրների իրականացման համար:

Այս կամ այն լիազորությունները ՏԻՄ-երին փոխանցելը հնարավորություն է տալիս խուսափելու համապետական մակարդակում իշխանության ավելորդ կենտրոնացումից և կենտրոնական կառավարությանը ձեռքազատելու զուտ տեղական խնդիրներ լուծելու հոգսերից: Միաժամանակ այն նպաստում է պետությունից անձի օտարացման հաղթահարմանը և քաղաքացիական հասարակության հետ պետության մերձեցմանը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, մինչև տեղական ինքնակառավարման ապակենտրոնացված համակարգի ներդրումը, երկրում գործում էին Խորհրդային Միությունից ժառանգություն ստացած կենտրոնացված որոշումներ, ինչի հետևանքով բնակչությունը, զրկված էր կոմունալ խնդիրների լուծման գործում ուղղակի մասնակցություն ունենալու հնարավորությունից: Իսկ կենտրոնացված համակարգի գոյությունն արդարացված չէր, քանի որ իշխանության ներկայացուցիչ պաշտոնյան, չլինելով տեղի բնակիչ, այդքան էլ քաջատեղյակ չէր լինում համայնքային խնդիրներին: Նման պայմաններում ակնհայտ էր դառնում տեղական նշանակության խնդիրների լուծման՝ նախկինում պետության վրա դրված պարտավորությունները համայնքներին փոխանցելու անհրաժեշտությունը:

²Տե՛ս՝ Мексон М., Алберт М., Хедоури Ф., Основы менеджмента, М., 1992, с. 390.

³Տե՛ս՝ Дафт Ричард Л., Менеджмент, СПб, 2001, с. 210.

Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածում նշված է. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքով սահմանված շրջանակներում գործողությունների լիակատար ազատություն ունեն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի վերաբերյալ, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի: Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները պետք է լիակատար և բացառիկ լինեն: Դրանք չեն կարող սահմանափակվել կենտրոնական կամ տարածքային մարմինների կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների»: Միանալով Խարտիայի իրավական պահանջին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև համակարգին առնչվող այլ օրենքների ընդունմամբ օրենսդիրը սահմանում է ՏԻՄ-երի լիազորությունների և իրավասությունների շրջանակները: Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, սահմանելով տեղական ինքնակառավարման կարգավորման հարցերի շրջանակը, սահմանազատում է նաև ՏԻՄ-երի լիազորությունները նշված հարցերի լուծման առնչությամբ: Խոսքը վերաբերում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու փոխհարաբերությունների բնույթին, քանի որ համայնքի ղեկավարը՝ որպես գործադիր մարմին, իսկ ավագանին՝ ներկայացուցչական մարմին, տեղական ինքնակառավարման համակարգում ունեն ուրույն տեղ ու դեր, ուստի համայնքի ղեկավարի և ավագանու միջև լիազորությունների արդյունավետ բաշխումն ու նրանց կառուցողական համագործակցությունը կարևորագույն նախադրյալ է համայնքում արդյունավետ ինքնակառավարում իրականացնելու համար⁴:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՏԻՄ-երի լիազորությունները լինում են՝ սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով: Պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: Պարտադիր են այն լիազորությունները, որոնց

⁴Տես՝ Սուվարյան Յու. Մ., Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2014, էջ 128:

իրականացման նպատակով ստեղծվել են ՏԻՄ-երը: Պարտադիր լիազորությունները հիմնականում առնչվում են համայնքի համար կենսական և վարչական բնույթի կարևոր խնդիրներին, որոնց կատարումից ՏԻՄ-երը չեն կարող հրաժարվել: Պարտադիր լիազորությունները ենթակա են առաջնահերթ ֆինանսավորման և անընդմեջ կատարման:

Կամավոր լիազորություններն այն բոլոր գործողություններն են, որոնք ՏԻՄ-երն իրականացնում են սեփական նախաձեռնությամբ, չեն հակասում օրենքներին և ֆինանսավորվում են համայնքային բյուջեի միջոցներից: Այս հարցում օրենքը սահմանել է ՏԻՄ-երի փոխհարաբերությունները՝ նշելով, որ կամավոր լիազորությունների իրականացման կարգն ու ֆինանսական անհրաժեշտ միջոցները համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է համայնքի ավագանին: Թեև օրենքն համայնքներին սահմանում է որոշ կամավոր լիազորություններ, ՏԻՄ-երը կարող են հրաժարվել դրանց կատարումից, բացի այդ՝ կամավոր լիազորությունների ցանկը, ըստ օրենքի, սպառիչ չէ: Ավագանու գործունեության կազմակերպումը կարևորագույն հարցերից է, որից մեծապես կախված է ավագանու աշխատանքի արդյունավետությունը:

Լիազորությունների կատարման ուղղությամբ համայնքների անհրաժեշտ տնտեսական և ֆինանսական հիմքերի գնահատական կարող է դիտվել Վ.Հարությունյանի հետևյալ կարծիքը. «Տեղական ինքնակառավարման մարմինները ծանրաբեռնված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված հսկայածավալ լիազորություններով, որոնք ֆինանսական լիարժեք ապահովվածություն չունեն: ՏԻՄ-երի կամավոր լիազորությունների, ինչպես նաև պետության պատվիրակած մասով ֆինանսավորումները գրեթե բացակայում են, սակայն ՏԻՄ-երը իրավասություններ չունեն չֆինանսավորվող լիազորությունները փոփոխելու կամ կասեցնելու համար»⁵: Այնուհետև հեղինակը նշում է. «Տեղական ինքնակառավարման մարմինների վրա դրված, բայց պետական բյուջեի կողմից չֆինանսավորվող լիազորությունների վերացման իրավական կարգավորման խնդիրը, մեր կարծիքով, անհրաժեշտ է տեղափոխել օրենսդրական դաշտ և դրան լուծում տալ բյուջետային ֆեդերալիզմի և միջբյուջետային հարաբերությունների կարգավորման շրջանակներում»⁶: Լիազորությունները լիարժեք կատարելու, համայնքների կողմից դրանք ֆինանսավորելու

⁵ Տես՝ Հարությունյան Վ., Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2003, էջ 31:

⁶ Տես՝ նույն տեղում:

տեղական աղբյուրների համատեքստում անհրաժեշտ է նկատել նաև, որ «ՀՀ ՏԻՄ գործունեության անցած տարիների փորձը ցույց է տվել, որ դրա հետագա զարգացման ու կատարելագործման համար անհրաժեշտ է մշակել ապակենտրոնացման ռազմավարություն և հետևողականորեն իրականացնել այն: Ռազմավարությունը պետք է հստակ սահմանի ՏԻՄ-ին լիազորությունների փոխանցման ոլորտները, ժամկետները, փուլերը, կառուցակարգերը, գնահատման միջանկյալ ցուցանիշները և չափանիշները»: Այնուհետև նշվում է, որ ՏԻ համակարգի զարգացումն անհնար է մասնավորապես առանց ՏԻՄ կարողությունների ամրապնդման և «ՏԻՄ լիազորություններին համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրման»⁷: Տվյալ դեպքում ավելի վաղ բերված չֆինանսավորվող լիազորությունները վերացնելու վերաբերյալ կարծիքի և լիազորություններին համապատասխան ֆինանսավորելու առումով կարծես թե առկա է որոշակի անհամադրելիություն: Մի կողմից՝ հանել, իսկ մյուս կողմից՝ տրամադրել ֆինանսական միջոցներ: Մի կողմից՝ ի վերջո ընդունել տրամադրվող ֆինանսական միջոցների անբավարարության հանգամանքը, իսկ մյուս կողմից՝ ի վերջո ավելացնել պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորման ծավալները:

Հայրենական տնտեսագետների կարծիքով՝ համայնքների զարգացման կարևոր նախապայմաններից մեկը ՏԻՄ կարողությունների ձևավորումն ու ամրապնդումն է: «Միայն օրենքով ՏԻՄ լիազորությունների տրամադրումը բավարար չէ իրական ժողովրդավարության հաստատման և համայնքների զարգացման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ձևավորել ՏԻՄ կարողությունները»⁸:

Ավագանու լիազորությունները սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով: Սովորաբար, լիազորությունների իրականացումը պայմանավորված է գործունեության կազմակերպմամբ: Ավագանու գործունեության կազմակերպումը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 13): Ավագանու գործունեության և որոշումների ընդունման կազմակերպումը պայմանավորված է նիստերի անցկացմամբ՝ կոլեգիալության սկզբունքով: Ավագանին ներկայացուցչական մարմին է: Ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու

⁷ Տես՝ նույն տեղում:

⁸ Տես՝ Օրդյան է. Հ., նույն աշխ. մեջ, էջ 97:

գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերը տեղի են ունենում առնվազն երկու ամիսը մեկ անգամ, որոնք հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը: Համայնքի ավագանու նիստերը դոնբաց են: Առանձին դեպքերում, ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ, կարող է անցկացվել դոնփակ նիստ: Ընդհանրապես, ըստ օրենքի, համայնքային նշանակության, համայնքի գործունեության, արտաքին հարաբերությունների, ներքին շատ խնդիրներին առնչվող հարցեր հանգուցալուծում են ստանում համայնքի ավագանու որոշմամբ և հաստատմամբ:

Ավագանու լիազորությունների լիարժեք իրականացման, համայնքային նշանակության հարցերի լուծման անհրաժեշտությունից ելնելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար կարող է իր որոշմամբ ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը սահմանվում են ավագանու կանոնակարգով: Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմիններին:

Համայնքի ղեկավարը միանձնյա գործադիր մարմին է և իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը նվիրված է համայնքի ղեկավարի լիազորություններին՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Համայնքի ղեկավարը հիմնականում իրականացնում է գործառնական բնույթի խնդիրներ՝ իր իրավասության սահմաններում ինքնուրույն ձևավորելով այն անձնակազմը, որի օգնությամբ պետք է իրականացնի իր գործառույթները: Նշվածից կարելի է եզրակացնել, որ համայնքի ղեկավարի կարգավիճակը մեծապես պայմանավորված է համայնքի ավագանու հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթով: Համայնքի ավագանին՝ որպես ներկայացուցչական

մարմին, իր իրավասության շրջանակներում իրականացնում է այնպիսի գործառնություններ, որոնք ներկայացնում են համայնքը պաշտոնական հարաբերություններում, միաժամանակ՝ վերահսկելով համայնքի ղեկավարի գործունեությունը: Մակայն նրա իրավասություններն սկսվում են իր գործունեության կազմակերպումից, ըստ որի՝ համայնքի ավագանին օրենքի պահանջներին համապատասխան ընդունում է իր կանոնակարգը, ինչպես նաև որոշում է կայացնում՝ ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ: Համայնքի ավագանին պաշտոնական հարաբերություններում իր իրավասության շրջանակներում որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ձևավորելու մասին, այլ համայնքների հետ միավորվելով՝ նոր համայնքներ ստեղծելու վերաբերյալ առաջարկ ներկայացնում պետական լիազորված մարմին, ինչպես նաև որոշում է կայացնում՝ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից համայնքի խնդիրներին վերաբերող և օրենքով սահմանված գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթեր ստանալու վերաբերյալ, որը, ի դեպ, մեկամսյա ողջամիտ ժամկետում պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտադիր պետք է կատարեն:

Համայնքի ղեկավարը ենթակա չէ պետական կառավարման որևէ մարմնի, հետևաբար՝ վերջիններս չեն կարող վերահսկել համայնքի ղեկավարի գործունեությունը: Մակայն օրենքով սահմանված է այնպիսի կարևոր դրույթ, ըստ որի՝ համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում համայնքի ավագանին⁹: Համայնքի ավագանին վերահսկում է նաև բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը: Մա կարևոր դրույթ է օրենքում, քանի որ ելնելով ՏԻՄ-երի սկզբունքներից՝ վերահսկողությունը՝ որպես ցանկացած արդյունավետ գործունեության անբաժանելի տարր, համայնքի ղեկավարի նկատմամբ պետք է իրականացնի այնպիսի մի մարմին, որը դարձյալ ներկայացնում է համայնքի բնակչության շահերը: Ուշագրավ է, որ համայնքի ավագանին իր իրավասության շրջանակներում ի վիճակի է ընդունել այնպիսի որոշումներ, որոնք վերաբերում են ոչ միայն համայնքի աշխատակազմի գործունեությանը, այլև ենթակա են պարտադիր կատարման համայնքի ողջ տարածքում:

⁹ Տես՝ Օրդյան Է. Հ., նույն աշխ.մեջ, էջ 32:

Մեր դիտարկմամբ՝ օրենքը չի խախտել ո՛չ ավագանու, ո՛չ էլ համայնքի ղեկավարի անկախությունը, ինչը դրսևորվում է որոշումներ ընդունելիս նրանց դերի որոշակի հավասարաչափ բաշխման մեջ: Այն շատ կարևոր դրույթ է, քանի որ օրենսդրական մակարդակով են կանոնակարգվում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունները՝ համայնքի ավագանու ընդունած որոշումների առնչությամբ, և նշված մարմինների միջև ծագած խնդիրների լուծումը տեղափոխվում է իրավական հարթություն: Այստեղ պետք է նշել ավագանու ևս մեկ կարևոր իրավասություն, այն է՝ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելը, որը կապված է վերջինիս գործունեության անարդյունավետությամբ: Համաձայն այս դրույթի՝ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ առաջարկություն կարող է ներկայացվել համայնքի ավագանու անդամների նախաձեռնությամբ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 3-րդ): Օրինականության սկզբունքն այս գործընթացում պահպանվում է նաև այնքանով, որ համայնքի անվստահություն հայտնելու առաջարկն ավագանին ընդունում է համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելիի համաձայնությամբ, այսինքն՝ հստակ սահմանվում է ձայների այն քանակը, որի դեպքում ընդունվում է նման առաջարկը: Պետք է նաև նշել, որ օրենսդիրը հստակ սահմանում է, որ համայնքի ղեկավարի պաշտոնանկության հարցը կարող է քննարկվել միայն վերջինիս կողմից լիազորությունները ստանձնելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, ինչը համայնքի ավագանու այդ իրավասությունը սահմանափակում է՝ նպատակ հետապնդելով այս հարցում կանխել քաղաքական կամ տնտեսական հնարավոր կամայականությունները:

Այսպես՝ օրենսդիրը ՏԻՄ-ին վերապահել է լայն լիազորություններ՝ որոշակիորեն պահպանելով հակակշռման և զսպման մեխանիզմի տարրերը լիազորությունների պատշաճ կատարման առնչությամբ և անմիջական վերահսկողությամբ: Սակայն այլ հարց է, եթե լիազորությունների չկատարման կամ բնակչության համար ոչ բարենպաստ վարչարարության դեպքում համայնքի ավագանին համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու իրավունք ունի, ապա համայնքի ղեկավարն ավագանու գործառույթների չիրականացման դեպքում իրավունք չունի անվստահություն հայտնելու ավագանուն կամ անդամին, ինչպես նաև լուծարելու այն իրավունքի ուժով:

Մեր դիտարկմամբ, դրանով արդեն իսկ խախտվում է այդ մարմինների հա-

րաբերությունների կոմպենսացիան և անհրաժեշտ է օրենսդրական կարգավորմամբ համայնքի ղեկավարին հակազդման լծակ ապահովել ավագանու լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Լիազորությունների իրականացման համար ՏԻՄ ապահովելով հակազդման լծակներ՝ օրենսդիրը կերաշխավորի ՏԻՄ-ի լիազորությունների արդյունավետ իրականացումը:

Անշուշտ, ապակենտրոնացման սկզբնական ձեռքբերում պետք է համարել այն, որ տեղի ունեցավ քաղաքական ապակենտրոնացման գործընթաց, որի շնորհիվ նոր կազմավորված տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ստացան ինքուրույն և սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը, տնօրինելու համայնքային սեփականությունն ու միջոցները: ՏԻՄ-երին օրենքով տարաբնույթ և բազմաբովանդակ լիազորությունների նախատեսումը և իրականացումը համարվում են այդ մարմինների գործունեության հիմնական ուղղությունները: Իսկ ՏԻՄ-երին պատվիրակել այս կամ այն լիազորությունը նպատակահարմար և արդյունավետ կարելի է համարել, եթե այն ամբողջությամբ ֆինանսապես «հովանավորված» լինի գործադիր իշխանության կողմից, քանզի օրենսդրորեն նախատեսվել էր դեռևս չի երաշխավորում լիազորությունների պատշաճ կատարումը:

Մեր համոզմամբ, ՏԻՄ-երի լիազորությունների իրականացումն այլ ձևակերպմամբ պայմանավորված է «համայնքային քաղաքականության» համաչափ մշակմամբ և կատարմամբ: Թեև «համայնքային քաղաքականություն» եզրույթը չունի օրենսդրական ամրագրում, այնուհանդերձ, առաջարկվում է «համայնքային քաղաքականություն» մշակումը՝ այն կապելով ՏԻՄ-երի կարողությունների հետ: Անշուշտ, «համայնքային քաղաքականություն» մշակելու հիմնահարցն ինքնին ենթադրում է օրենքով սահմանված խնդիրների լուծման նպատակով ընտրել արդյունավետ գործիքակազմ: Մեր դիտարկմամբ՝ «համայնքային քաղաքականությունը» տեղական ինքնակառավարման համակարգի մաս է կազմում և ամենևին աղերս չունի կենտրոնական իշխանության քաղաքականության հետ, սակայն նման քաղաքականության մշակումը չի կարող ունենալ էական նշանակություն, եթե այն մասը չէ պետական քաղաքականության: «Համայնքային քաղաքականության» մշակման առումով նկատի ունենք նաև «համայնքային խնդիրների լուծման քաղաքականությունը», ուստի «համայնքային քաղաքականությունը» որոշ առումով պետական քաղաքականության բաղադրիչ կարելի է համարել, քանի որ պետական քաղաքականության

ծրագրերի մեջ պատվիրակված լիազորությունների դեպքում պարտադիր է ֆինանսական միջոցների ապահովումը և դրանց կատարման նկատմամբ լիազորմարմնի վերահսկողությունը:

Ինչ խոսք, սահմանադրական նոր կարգավորումներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նոր փոփոխություններով (2016թ.) համայնքային խնդիրների լուծման «ծանրագույն բեռը» դարձյալ կրում են ՏԻՄ-երը՝ իրենց լայնածավալ լիազորություններով և համայնքի աղքատիկ միջոցներով: Վերջինս երբեմն «կաշկանդում» է որոշ ծրագրերի ամբողջությամբ իրականացմանը, սակայն անժխտելի է ՏԻ ոլորտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունները, և օրենսդրական փոփոխությունների համատեքստում փոփոխվում են նաև ՏԻՄ-երի գործունեության կազմակերպման, իրավասությունների շրջանակը, մեծանում է պետական ծրագրերով նախատեսված ֆիսկալ աջակցությունը:

ЗАКОНОДАТЕЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ ПОЛНОМОЧИЙ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

Бишарян Арпине

преподаватель юридического факультета

Европейского университета,

соискатель Европейского университета

Эффективность деятельности органов местного самоуправления обусловлена объемом полномочий, предусмотренных законом. Реализация полномочий органов местного самоуправления в различных сферах общественной жизни дает им возможность немедленно фиксировать существующие проблемы и должным образом решать общественные вопросы местного значения. В статье представлены особенности законодательного регулирования обязательных, добровольных и делегированных полномочий главы муниципального образования и местной администрации (далее - ОМС), основы и порядок их реализации.

Ключевые слова: глава муниципального образования, местная администрация, политика сообщества, обязательные и добровольные полномочия, делегированные полномочия.

LEGISLATIVE REGULATION OF AUTHORITIES OF LOCAL SELF-GOVERNMENT BODIES

Bisharyan Arpine

Lecturer at the Faculty of Law of European University,

Fellow Applicant of European University

The effectiveness of the activities of local self-governing bodies is caused by the scope of authorities prescribed by law. Implementation of the authorities of local self-governing bodies in various spheres of public life gives them the opportunity to fix immediately the existing problems and to solve the public issues of local significance properly. The article presents the peculiarities of legislative regulation of the mandatory, voluntary and delegated authorities of the Head of the municipality and the local administration (hereinafter LSGBA), the bases and procedure for their implementation.

Keywords: Head of the municipality, local administration, community policy, mandatory and voluntary authorities, delegated authorities.

Հոդվածը գրախոսվել է՝ 23.01.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 31.01.2020թ.

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Գևորգյան Արուսյակ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հասարակագիտական
առարկաների և հոգեբանության ամբիոնի դասախոս,
Կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքի
առաջատար մասնագետ, Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության
ամբիոնի դասախոս, նույն համալսարանի կիրառական
հոգեբանության ամբիոնի ասպիրանտ*

Մասնագետների կարծիքով իրավապահ գործունեությունն առաջացել է 20-րդ դարի 60-ական թվականներին¹: Ամբողջ աշխարհում պետական գործունեության ինքնուրույն տեսակի՝ իրավապահ գործունեության միջոցով է ապահովվում պետությունում մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, սակայն իրավապահ գործունեության հասկացությունն իրավական որևէ ակտում տրված չէ, ուստի դրա վերաբերյալ բնորոշումը մենք փորձեցինք տալ նրա հոգեբանական առանձնահատկությունների միջոցով: Իրավապահ գործունեություն իրականացնում են իրավապահ մարմինները:

- Իրավապահ մարմինները պետական տարբեր մարմինների համադրություն են, որոնք, օրենքով սահմանված իրավասությունների բնույթով, իրենց իրավապահ գործունեությունն իրականացնելիս մասնագիտացված են անձի, հասարակության և պետության կենսական շահերը ոտնձգություններից պաշտպանելու համար²:

- Իրավապահ մարմինները հաստատություններ են, որոշ դեպքերում՝ պետական կամ այլ անձինք (օրինակ՝ դատավոր, քննիչ), որոնք, համաձայն

¹ Камышников А.П., Махинин В.И. Основы управления в правоохранительных органах. Учебник Отв. ред. Б.С. Тетерин. - М.: Изд-во Московского психолого-социального института; Воронеж: Издательство НПО «Модек», 2004. - 218 с.

² Ежова О. Н. Основы управления в правоохранительных органах: курс лекций /О. Н. Ежова. –Самара: Самарский юридический институт ФСИН России, 2015. с 36

օրենքի, պարտավոր են հավասարաչափ պաշտպանել ֆիզիկական (իրավաբանական) անձանց, պետության իրավունքներն ու ազատությունները³:

- «Իրավապահ մարմիններ» եզրույթը սահմանվում է որպես իրավաբանական գիտելիքների ամբողջություն, որի շրջանակներում ուսումնասիրվում է այդ մարմինների կազմակերպումը, գործառույթները, գործունեության ուղղությունները, նպատակները, փոխգործակցությունը միմյանց և այլ պետական մարմինների հետ⁴:

Հոգեբանական տեսանկյունից՝ իրավապահ մարմինների աշխատակիցների իրավապահ գործունեությունը նրանցից պահանջում է լարված, համբերատար, գիտելիքներով և օրենքին խստորեն հետևելու վրա հիմնված բարձր պատասխանատվությամբ աշխատանք: Աշխատանքային նշված պահանջներին համապատասխանելու և դրանք լիովին բավարարելու իմաստով խիստ կարևոր են աշխատակցի անհատական առանձնահատկություններն ու անձնային որակների համապատասխանությունը՝ տվյալ մասնագիտության օբյեկտիվ պահանջներին:

Մինչ առանձնահատկություններին անդրադառնալը պետք է նշել, որ առհասարակ իրավապահ գործունեությունն ընդգրկում է պետական և հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներ, որոնց գործունեության բովանդակությունն են կազմում օրենքի գերակայության ապահովումը, արտաքին քաղաքականության իրականացման, մշակույթի, կրթության զարգացման համար պայմանների ստեղծումը, պետական անվտանգության ապահովումը և այլն: Ինչ խոսք, վերջիններիցս ամենակարևորն օրենքի գերակայության ապահովման խնդիրների կարգավորումն է, հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարելը, քաղաքացիների, պետական և հասարակական կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այս խնդիրները բոլոր պետական մարմինների, հաճախ հասարակական կազմակերպությունների մտահոգության առիթ են լինում: Պետական մարմինների ճնշող մեծամասնության համար իրենց գործունեության շրջանակը սահմանափակված չէ վերոգրյալ առաջադրանքներով, այն է՝ օրենքի պաշտպանության խնդիրները: Նրանց համար առաջին պլանում այլ խնդիրներ կան՝ լուծել տնտեսության արդի և հետագա, մշակույթի,

³ Рыжаков А. П. Правоохранительные органы: учебник для вузов.— М.: ИНФРА-М, 2004. с 14

⁴ Савюк Л. К. Правоохранительные органы: Учебник. — М.: Юрист, 2004.с. 42

գիտության, կրթության, պետական անվտանգության, արտաքին քաղաքականության և այլ խնդիրներ: Այդ մարմիններն իրականացնում են օրենքի գերակայության պաշտպանության գործունեությունն իրենց հիմնական խնդիրների կատարման հետ: Մինևույն ժամանակ, պետական մարմինների ընդհանուր համակարգում կան այնպիսիները, որոնք ստեղծվում են միայն կամ հիմնականում օրենքի պաշտպանության համար, որոնց գործունեությունն էլ անվանվում է «իրավապահ գործունեություն»: «Ընդհանուր առմամբ, իրավապահ գործունեությունն իրենից ներկայացնում է լարվածություն, համբերություն, բարեխղճություն, գիտելիքներ և բարձր պատասխանատվություն պահանջող աշխատանք՝ հիմնված օրենքի նորմերին խստագույն հետևելու վրա»⁵: Վ.Լ.Վասիլևը տարբերակում է իրավապահ գործունեության բովանդակությունը կազմող և այն բնորոշող վեց հիմնական կողմ կամ գործունեության ձև՝ սոցիալական, կառուցվածքային, կազմակերպչական, հավաստիության, հաղորդակցական, ճանաչողական, և ըստ այդ կողմերի՝ առանձնացնում է դրանցից յուրաքանչյուրին համապատասխան անձնային և մասնագիտական որակներ, հմտություններ և կարողություններ: Այսպես՝ **սոցիալական** կողմը ենթադրում է ընդհանուր արդարամտություն, սկզբունքայնություն և մասնագիտական ձգտում՝ արդարությանն ու նրա հաստատմանը, մասնագիտական հպարտություն, մասնագիտության էթիկայի նորմերի հետևում և այլ որակներ, ինչպես նաև մանկավարժական հմտություններ: **Կառուցվածքային** կողմին համապատասխանում են հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, ընդհանուր և մասնագիտական ինտելեկտը, ինտուիցիան և այլ որակներ, ինչպես նաև՝ ներքին գործերի և նյութերի ուսումնասիրման, պլանավորման հմտություններ: **Կազմակերպչական** գործունեությանը համապատասխանող որակներն են՝ կազմակերպվածությունը, կամքը, հաստատակամությունը, շփման մեջ կազմակերպչական առանձնահատկությունները, մասնագիտական գործունեության ընթացքում համապատասխան գործառույթների իրականացումը կազմակերպելու հմտությունը: **Հավաստիությունը** ենթադրում է ճշգրտություն, ճշտապահություն, զարգացած գրավոր խոսք և գործնական փաստաթղթեր կազմելու, բանավոր խոսքը գրավոր շարադրելու, սարքավորումների հետ աշխատելու հմտություններ: **Հաղորդակցական** գործունեությունը ենթադրում է զգացմունքային

⁵ Васильев В. Л., Юридическая психология, 6-е издание, Питер, 2009, 129 с

կայունության, զգայունության, մարդուն լսելու և նրա հետ խոսելու, սեփական հույզերն ու զգացմունքները վերահսկելու, հաղորդակցումը կառավարելու, ինչպես նաև կապ հաստատելու հմտություններ, իսկ **ճանաչողական** գործունեությունը՝ հետևողականություն, հետաքրքրասիրություն, ուշադրության կայունություն, կողմնորոշվելու կարողություններ և ուշադրությունը կենտրոնացնելու, կանխատեսման հմտություններ և այլն⁶:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք ասել, որ իրավապահ գործունեությունն ունի մի շարք էական առանձնահատկություններ. դրանք են՝

1. Իրավապահ գործունեությունն ուղղված է պահպանելու և պաշտպանելու քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության իրավունքներն ու օրինական շահերը:

2. Երկրորդ առանձնահատկությունը դրսևորվում է այն փաստով, որ նման գործունեությունը չի կարող իրականացվել առանց ազդեցության միջոցների կիրառման: Օրինակ՝ եթե հանցագործություն է կատարվել, ապա՝ պատիժը կարող է նախատեսվել միայն քրեական օրենսգրքով, կամ՝ եթե պատճառվել է գույքային վնաս, ապա՝ կարող է դրվել այդ վնասը հատուցելու պարտավորություն:

3. Իրավապահ գործունեության հաջորդ կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ իրավապահ գործունեության ընթացքում կիրառվող իրավական միջոցները (հարկադրանքի միջոցներ) պետք է խստորեն համապատասխանեն օրենքին:

4. Մյուս առանձնահատկությունն այն է, որ այդ գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ որոշակի ընթացակարգերին համաձայն: Այդ գործունեության ընթացքում կիրառվող իրավական չափորոշիչները նախատեսված են կոնկրետ օրենքներում և ենթակա են խիստ պահպանման: Դրանց խախտումը կարող է հանգեցնել հետագա որոշումն անօրինական կամ անվավեր ճանաչելուն:

5. Եվ վերջապես, իրավապահ գործունեության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ դրա իրականացումը դրված է հատուկ ստեղծված պետական մարմինների վրա: Այդ մարմինների կազմակերպումը և գործունեությունը կարգավորվում են համապատասխան օրենքներով՝ ներառյալ առավել կարևոր խնդիրները լուծելու համար նախատեսված հատուկ ընթացակարգային կանոններ սահմանելով: Այս ամենը միասին ուղղված են այդ

⁶ Васильев В. Л., Юридическая психология, 6-е издание, Питер, 2009, с.138-155

մարմինների կողմից իրավունքը պաշտպանելու համար ձեռնարկված միջոցների օրինական, արդար և արդյունավետ գործունեությանը:

Այնուամենայնիվ, ամփոփելով, կարող ենք ասել, որ վերոնշյալ առանձնահատկությունների պահպանման, իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական գործունեության արդյունավետության ձևավորման, վերջինիս մակարդակի բարձրացման և նրանց մասնագիտական գործունեության արդյունավետության ապահովման նկատառումներով անհրաժեշտ է, որ իրավական մարմինների աշխատակիցները պարբերաբար անցնեն.

- ինքնավերահսկողության ներքին ուղղվածության ձևավորման վարժանքներ
- հուզական ինքակառավարման վարժանքներ
- հաղորդակցման և միջանձնային դրական հարաբերությունների կառուցման միջոցների տիրապետման վարժանքներ:

НЕОБХОДИМОСТЬ ПСИХОЛОГИЧЕСКОЙ СТОРОНЫ ДЛЯ ПОДДЕРЖКИ ОСОБЕННОСТЕЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СОТРУДНИКОВ ПРАВООХРАНИТЕЛЬНЫХ ОРГАНОВ

Геворгян Арусяк Геворговна

*Преподаватель кафедры социальных наук и психологии
Образовательного комплекса полиции РА, ведущий
специалист по обеспечению качества образования
преподаватель кафедры психологии Армянского
государственного педагогического университета им. Абовяна,
аспирант кафедры прикладной психологии*

В статье представлены предпосылки возникновения правоохранительной деятельности. Автор определил понятийный аппарат правоохранительных органов, изложил психологические характеристики правоохранительной деятельности, которые составляют и характеризуют правоохранительные органы, определяют перспективы их дальнейшего развития. В заключении предлагаются психологические упражнения для поддержания специфики правоохранительной деятельности, обеспечения и повышения эффективности профессиональной деятельности сотрудников правоохранительных органов, повышения их профессионализма.

Ключевые слова: правоохранительная деятельность, правоохранительные органы, профессиональная деятельность, эффективность деятельности, личностные характеристики, личностные качества, психологические упражнения.

THE PSYCHOLOGICAL SIDE OF MAINTAINING THE CHARACTERISTICS OF THE ACTIVITIES OF LAW ENFORCEMENT OFFICERS

Gevorgyan Arusyak

*Lecturer at Chair of Social Sciences and Psychology
of the Police Educational Complex of RA, Leading Specialist
of Education Quality Assurance Lecturer at the Chair of Psychology
of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
PhD Student of the Department of Applied Psychology*

The article presents a historical background to the beginning of law enforcement activities. The definitions of law enforcement agencies, in the integrity of different state agencies, have been considered. Meanwhile, the psychological characteristics of law enforcement activities, the types of activities making part of the content of law enforcement, as well as the perspectives of their further development have been underlined and defined in the article. At the end of the article some psychological exercises have been suggested aiming at ensuring the effectiveness of law enforcement officers' activities and increasing the level of their professionalism.

Keywords: law enforcement activity, law enforcement agencies, professional activity, effectiveness of the activity, personal characteristics, personal qualities, psychological exercises.

Հոդվածը գրախոսվել է՝ 29.01.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 05.02.2020թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Դավթյան Մելանյա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
հասարակագիտական առարկաների և հոգեբանության
ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների
թեկնածու, ոստիկանության մայոր*

Ինչպես բոլոր գիտությունները, այնպես էլ հասարակության քաղաքական կյանքն ուսումնասիրող գիտությունը՝ քաղաքագիտությունը, ունի իր ձևավորման պատմությունը և ուսուցման մեթոդը: Վաղ ժամանակներից այն համարվել է գիտություն՝ պետական կառավարման մասին: Ինչպես բոլոր գիտությունների, այնպես էլ քաղաքական գիտության համար մեթոդական հիմք է հանդիսանում փիլիսոփայությունը, քանի որ փիլիսոփայության տիրույթում է գիտությունների հիմնական հետազոտական մոտեցումները:

1. գոյաբանությունը, հետևաբար նաև այն հարցը, թե ինչն է ընկած հասարակության, պետության, քաղաքական այս կամ այն սուբյեկտի, երևույթների գոյության հիմքում:

2. իմացաբանությունը՝ թե ինչպես կարելի է ճանաչել այս կամ այն հասարակական, քաղաքական երևույթները՝ օգտագործելով նաև էմպիրիկ գիտությունների օրինաչափություններն ու գիտելիքները:

3. արժեքաբանությունը՝ ինչպես է արժևորվում քաղաքագիտությունը որպես մշակույթի տարր:

4. մարդաբանությունը՝ ինչպես է մարդ-հասարակություն, մարդ-պետություն հարաբերություններում ձևավորվում քաղաքական մարդը՝ քաղաքացին:

Քաղաքական գիտության ձևավորման տեսական հիմքերի մեջ մտնում են.

- ուսմունքներ, գաղափարներ, որոնք տանում են դեպի իդեալական հասարակություն,
- սոցիալական նորմեր, որոնք կարգավորում են մարդկանց փոխհարաբերությունները, ձևավորում պետական հաստատությունները:

Մինչև 20-րդ դարի 20-30-ական թվականներն այս գիտությունը համարվել է ուսմունք, տեսություն պետության մասին, որը կոչվել է պետականագիտություն:

Քաղաքական գիտության դպրոց առաջին անգամ բացվել է 1857 թ. ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանում, 1871-ին՝ Ֆրանսիայում, 1895-ին՝ Լոնդոնում: 20-րդ դարի սկզբից մինչև 60-ականները քաղաքական գիտության զարգացումն ընթանում էր ամերիկյան սցենարով: Եվրոպայում ֆաշիստական վարչաձևն ստիպում էր գիտնականներին մեկնել ԱՄՆ (Ջ. Ֆրեյդ, Հ. Մոգենթաու, Կ. Մանհեյմ, և ուրիշներ): 1948 թ. ՄԱԿ-ի կրթության և մշակույթի հանձնաժողովի նախաձեռնությամբ հստակեցվում են քաղաքական գիտության հետազոտության հիմնախնդիրները. քաղաքական տեսություն, քաղաքական ինստիտուտներ, քաղաքական կուսակցություններ, կուսակցական համակարգեր, միջազգային հարաբերություններ և այլն:

Ամերիկյան քաղաքական սցենարների կողքին ստեղծվում էին եվրոպականը, իսկ 1962-ից՝ խորհրդայինը, թեև որպես ինքնուրույն առարկա այն ուսումնական հաստատություններում չէր դասավանդվում:

Քաղաքագիտության ձևավորման ինստիտուցիոնալ գործընթացների մեջ կարևորվում է քաղաքագիտության մեթոդաբանությունը, կատեգորիաները, գործառույթները, ապարատը, հարակից գիտությունների համակարգը և այլն¹:

«Քաղաքագիտության մեթոդաբանություն» հասկացությունն առաջացել է *methodos* բառից, որը նշանակում է քաղաքական երևույթների հետազոտման, ուսումնասիրման, ճշմարիտ գիտելիքի բացահայտման, ճանաչման եղանակ:

Քաղաքագիտությունը, ինչպես բոլոր գիտությունները, ներառում է գիտնականների ստեղծագործություններն ու դրանց հետազոտության արդյունքները, մեթոդաբանական, վերլուծական տարբեր եղանակներով ստացված գիտելիքները: Հետևաբար, առաջնային է դառնում հատուկ ուշադրություն

¹<https://hy.wikipedia.org/wiki/ինստիտուցիոնալիզմ>

Ինստիտուցիոնալիզմ (*լատ.՝ insti- tutio* -հրահանգ, հորդոր), 20-րդ դարի_ բուրժուական պետականագիտության ուղղություն: Ինստիտուցիոնալիզմը հասարակության, պետության և իրավունքի խնդիրների քննարկման հիմքը համարում է «ինստիտուցիան»՝ որոշակի նպատակով միավորված մարդկանց կայուն խումբը (ընտանիք, կուսակցություն, եկեղեցի, արհմիություն, պետություն):

դարձնելը **քաղաքագիտության մեթոդաբանությանը**՝ որպես քաղաքական կյանքի ճանաչման, գնահատման, քաղաքական երևույթների հետազոտման, ուսումնասիրման միջոց, օբյեկտիվ գիտելիքների ստացման, մշակման, ընդհանրացման միջոց:

Գիտությունները միմյանցից տարբերվում են իրենց տերմինաբանությամբ՝ կատեգորիալ ապարատով, որը տվյալ գիտության լեզուն է, գործիքը, օբյեկտիվ աշխարհի ճանաչողության ձևն ու մակարդակը: Կատեգորիալ ապարատով է պայմանավորված տվյալ գիտության բովանդակությունը: Կոնկրետ քաղաքական գիտության կատեգորիաների ուսումնասիրության ժամանակ հանդիպում ենք որոշ դժվարությունների, որոնք պայմանավորված են տարբեր երկրների, տարբեր ժողովուրդների պատմական, տնտեսական, աշխարհագրական, իրավական, հոգեբանական մշակութային և այլ քաղաքական կյանքի վրա ազդող գործոններով: Հետևաբար, քաղաքագիտությունն իր մեջ ներառում է երեք խմբի կատեգորիալ ապարատ:

1. Ընդհանուր կատեգորիալ ապարատ, որը միջազգային հարթակում, բոլոր երկրների համար հանդես է գալիս որպես համընդհանուր գիտելիք, դրանցից են «քաղաքակրթություն», «հասարակություն», «ժողովուրդ», «մշակույթ», «միջազգային քաղաքականություն», «աշխարհաքաղաքականություն» և այլն:

2. Քաղաքագիտությունն իր մեջ ներառում է նաև այնպիսի կատեգորիաներ, որոնք ստեղծում են կապ իրեն հարակից գիտությունների հետ, դրանցից են «իրավական պետություն», «քաղաքացիական հասարակություն», «կոնֆլիկտ», «քաղաքական հոգեբանություն», «սոցիալական քաղաքականություն» և այլն:

3. «Սեփական կատեգորիաներ»-ն այսպես կոչվող՝ այն կատեգորիալ ապարատն է, որը ձևավորվում է՝ հաշվի առնելով կոնկրետ ազգային առանձնահատկությունները, կոնկրետ պետության տնտեսական զարգացման մակարդակը և այլն: Սեփական երկրի գիտական, գրական, քաղաքական մշակութային կատեգորիաների շրջանակներում, դրանց բովանդակության մեկնաբանությամբ էլ արդի ժամանակներում առաջ է գալիս «Հայրենական քաղաքագիտությունը»²:

² https://vuzlit.ru/936567/otechestvennaya_politologiya, отечественная политология, национальные политологические школы
http://politiparties.ru/2011/06/aktualnye_problemy_otechestvennoi_politologii/:

Եվ այս բոլորի մեջ առկա են այնպիսի առանցքային կատեգորիաներ ինչպիսիք են՝ «քաղաքական իշխանությունը», «քաղաքական համակարգը», «քաղաքական սուբյեկտը», «քաղաքական կուսակցություններ», «քաղաքական գաղափարախոսություն» և այլն: Քաղաքագիտությունը սպասարկում է հանրությանը, տալիս է պետության կառուցվածքային տարրերի, քաղաքական շահերի ու պահանջմունքների, դրանց վերարտադրության գործընթացների մասին գիտելիքներ, հարաբերակցվում է տնտեսության, մշակույթի, իրավունքի, և այլ երևույթների ու գործընթացների հետ՝ ենթարկելով քաղաքական չափումների: Քաղաքագիտությունն այսօր դիտարկվում է որպես հումանիտար գիտություն, քանի որ, ինչպես բնական գիտությունները, չի ենթարկվում չափումների, թեև հասարակական կարծիքների, ընտրությունների, վիճակագրությունների հետազոտությունների ժամանակ հստակ պատկեր կարող է ունենալ, որի հիմքի վրա կարելի է կոնկրետ ընդհանրացումներ անել: Քաղաքական գործընթացներում կոնկրետ գիտելիքներով կարելի է ապահովել լեգիտիմություն, ընտրություններում՝ կոնկրետ թեկնածուների հաղթանակ, ձևավորել սոցիալական խմբեր ու քաղաքական կուսակցություններ և այլն:

Քաղաքագիտության ուսուցման մեթոդաբանությունը ընտրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ քաղաքական գիտությունն ունի տեսական և պրակտիկ մասեր: Քաղաքական ինստիտուտների ու նրանց գործընթացների վերլուծությամբ կարելի է մշակել այնպիսի քաղաքական տեխնոլոգիաների ամբողջություն, որն ուղղված կլինի գործնական կիրառման և ռեալ քաղաքական արդյունք ստանալու նպատակին և կարող է դրսևորվել որպես օրինաչափություն: Այսպիսով՝ քաղաքական գիտությունը հանդես է գալիս որպես տեսական ու պրակտիկ գիտելիքների միասնական համակարգ: Տեսական քաղաքագիտությունը կարող է սպասարկել քաղաքական պրակտիկային, իսկ կիրառական քաղաքագիտությունն իր հերթին կարող է ունենալ խնդիր, որը տեսական մշակման կարիք կունենա:

Քաղաքագիտության ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քաղաքագիտությանը հարակից գիտությունների համակարգը սնվում է բազմաթիվ հասարակական գիտություններից՝ փիլիսոփայությունից, պատմությունից, գրականությունից, հոգեբանությունից, աշխարհագրությունից, իրավագիտությունից, սոցիոլոգիայից և այլ գիտութ-

յուններից: Այսինքն՝ քաղաքականությունը՝ որպես արդի իրականության ակտիվ մաս, ուսումնասիրվում է բազմաթիվ գիտությունների կողմից: Հետևաբար, նրա հետազոտման օբյեկտը մնում է քաղաքական կյանքը, որն առարկայանում է նրա մեջ որևէ կոնկրետ նպատակ ու խնդիր տեսնելու, ապա՝ հետազոտելու, վերլուծելու, հասկանալու ակնկալիքով: *Հայրենական քաղաքագիտության ձևավորման ինստիտուցիոնալ գործընթացի մեջ մտնում են հայ գիտնականների ստեղծագործությունները՝ սկսած վաղ միջնադարից, մինչև արդի ժամանակները: Անդրադառնալով մեթոդաբանական, վերլուծական և հետազոտության եղանակներին՝ ձեռք են բերվել գիտելիքների մի յուրատեսակ ամբողջություն, որին կարելի է կոչել հայրենական քաղաքագիտություն:*

Այժմ դիտարկենք այս ուղղությունը՝ որպես հայ քաղաքական մտքի, հայ քաղաքական գիտելիքների արտադրման, կուտակման, կիրառման մի ուրույն շտեմարան, սոցիալական ինստիտուտ, որն իր մեջ ներառում է նաև քաղաքական հայագիտությունը:

Ըստ ռուս քաղաքագետ Մ. Վ. Իլյինի. «Խնդիր կա ըմբռնելու այնպիսի ավանդույթ, որի վրա կարող ենք և պետք է խարսխենք հայրենական քաղաքական գիտությունը, որը՝ որպես գիտական դիսցիպլին, ռուս քաղաքագետների համար ոչ միայն արդիական է, այլև հրամայական: Մինչև հեղափոխությունը և սովետական ժամանակներում շատ գիտական նվաճումների մեջ ունեցել ենք ցավալի տգիտություն: Այսօր հստակ պետք է ներկայացվի քաղաքական խնդիրների գիտական հիմնավորման տրամաբանությունն ու դինամիկան՝ իր բոլոր շրջադարձերով, հին Ռուսաստանի, ԽՍՀՄ-ի և նոր Ռուսաստանի համար:

Պետք է խոստովանել, որ, ի հայտ բերելով և վերլուծելով քաղաքական մտածողության ճանաչողական մատրիցան՝ (կադապարը) մինչև այսօր բավարար ուշադրության չի արժանացել՝ բացառությամբ «Ռուսական մշակույթի պատմությունից», որը վերջին տասնամյակում միայն կանոններ է պարունակում: Վաղ ժամանակների պատմաբանների, բանասերների, իրավաբանների աշխատանքները և ստեղծագործությունները նկարագրվել և վերլուծվել են որպես սկզբնօրինակներ, և, որպես կանոն, հեռու են եղել քաղաքական մտքից և պրակտիկայից:

Քաղաքական և իրավական մտքի հուշարձանների, հիշատակարանների, պատմության վերաբերյալ ստեղծագործությունների ընդհանուր բնութագրերը, որպես կանոն, ժամանակագրական հաջորդականությամբ հետևել

են մեկը մյուսին: Այսպիսով՝ ոչ ոք չի փորձել դուրս բերել «Սևեռուն գաղափարներ» ու միջանցիկ խնդիրներ, որոնց լուծումներն ամեն անգամ նորովի դրսևորվել են որպես քաղաքական պատմություն, որի մեջ զուգակցված պահված են եղել *մտավոր ավանդույթները*: Այդ մտավոր ավանդույթներն են, որ ձևավորում են քաղաքական գիտության հայրենական ձևը»³:

Պետք է նշել, որ հայ ժողովուրդը ևս մշակույթի բոլոր ձևերում ունի իր սեփական «մտավոր ավանդույթները»՝ ձևավորված իր բազմադարյա պատմության և ապրած փորձի բովում: Ուստի, քաղաքագիտության ուսուցման ընթացքում անհրաժեշտ է շեշտադրել հայրենի քաղաքագիտության ինստիտուտները, դրանց առանձնահատկությունները:

Արդեն երեք տասնամյակ է, որ ՀՀ-ում տասնյակ մասնագետներ ու քաղաքագետներ զարգացնում են հայրենի քաղաքագիտությունն ու նրա ինստիտուցիոնալացումը: Մեր հանրապետությունում միննույն քաղաքական մտահոգությունն է՝ ունենալ համընդհանուր քաղաքական գիտելիքներ ու մշակույթ միջազգային քաղաքական հարթակում հանդես գալու և հայրենական քաղաքական գիտելիքներ՝ այդ հարթակում ամրագրելու համար:

«Հայ քաղաքական մտքի պատմությունը»⁴՝ որպես հայ քաղաքագիտության դասընթաց, արդեն երկու տասնամյակի պատմություն ունի մեզանում, որտեղ հայ քաղաքական միտքը զարգանում է ընդհատումներով, դրվագներով՝ կախված հայ ժողովրդի անցած պատմական ճակատագրից: Հայ քաղաքական մտքի պատմությունը սկսվում է հայ գրերի գյուտով, թարգմանական ու հայ գրականության ստեղծմամբ, իրավաքաղաքական մտքի առաջին հուշարձաններով: «Մտավոր ավանդույթների» ներդրումը մեզանում սկսվում է 5-րդ դարի քաղաքական մտածողներով, ինչպիսիք են՝ Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին: «Հայ քաղաքական մտքի» կամ «մտավոր ավանդույթների» ներդրումների երկրորդ փուլը կայանում է դասական միջնադարում՝ 10-14-րդ դարերում, այնպիսի նշանավոր քաղաքական մտքի ներկայացուցիչներով ինչպիսիք են՝ Դավիթ Ալավկաորդին, Մխիթար Գոշը, Սմբատ Գունդստաբլը, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Վահրամ Բաբունին, Գրիքոր Տաթևացին և այլք: Երրորդ

³ Ильин М.В. Отечественная политология: осмысление традиции // Политическая наука: Сб. научных трудов/РАН. ИНИОН. – М., 2001, С 5-6.

⁴ Հ. Գ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, ԵՊՀ, Եր., 2002: Տե՛ս նաև Հայ քաղաքական մտքի պալմություն, գիրք Ա, միջին դարեր /5-18դդ./, Եր., 2013:

փուլը կայանում է ուշ միջնադարում՝ հայ քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչների՝ Բարայել Օրու, Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի թողած արժեքներով: Չորրորդ փուլը՝ հայ քաղաքական միտքը նոր դարաշրջանում՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, կայանում է հայ քաղաքական հոսանքների ու քաղաքական ավանդական կուսակցությունների առաջնորդների ստեղծագործություններում, ոչ միայն ազգային-ազատագրական տեսական ժառանգությունների, այլև նրանց գործնական ծրագրերի մեջ: Հինգերորդ փուլը՝ հայ քաղաքական միտքը նորագույն ժամանակաշրջանում՝ ՀՀ երեք հանրապետությունների շրջանում՝ 1918-ից մինչև մեր օրերը: «Մտավոր ավանդույթներ» են կուտակվում ամենաբազմաթիվ ստեղծագործություններում, որտեղ մշակվում են նույնիսկ արդի քաղաքական բանաձևեր՝ հայ ազգի ամենաարդի խնդիրներին վերաբերող, ինչպիսիք են քաղաքական հայագիտությունը, հայկական հարցը, ազգային գաղափարախոսությունը, արցախյան խնդիրը և այլն:

Որպես օրինակ, հետազոտության հատուկ նյութ դարձնելով Մադրասի հայ քաղաքական դպրոցի ներկայացուցիչ, 18-րդ դարի հայ քաղաքական հրապարակախոսության հիմնադիր Մովսես Բաղրամյանի թողած ժառանգությունը՝ «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ»⁵ աշխատությունը՝ ժամանակակից բնորոշմամբ, կարելի է ասել, որ այն իր վերնագրով և բովանդակությամբ արդեն հայրենական քաղաքագիտության ձևավորման ինստիտուցիոնալ գործընթացի սկզբնավորումն է: Ինչպես վերևում նշվեց, ինստիտուցիոնալիզմը, դիտելով որպես *insti et tutio* – լատինական բառերի համադրություն, նշանակում է հրահանգ, հորդոր: Նրա հորդորների բովանդակությունը, կառուցվածքը, վկայակոչված հայոց պատմական ու աշխարհագրական տեղեկատվությունը, նրա ստեղծագործության ժանրն ու հրապարակախոսական բնույթը վկայում են, որ Բաղրամյանը եվրոպական-լուսավորչական ժամանակաշրջանի մտածողներին ու ստեղծագործողներին համարժեք քաղաքագետն է մեզանում:

Հայրենի քաղաքագիտության հետազոտության առարկան ուսանողներին ուսուցանելիս լավ օրինակ կարող է լինել «Հորդորակի» բովանդակության լուսաբանումը, որից ուսանողները կարող են պատկերացնել, թե որն է

⁵ Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1772:

Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, թարգմանությունը գրաբար բնագրից և ծանոթագրությունները Պ. Մ. Խաչատրյանի, Երևան, ԵՊՀ, 1991:

եղել 18-րդ դարի քաղաքական գիտության հետազոտման նյութը:

Այն մեզ է հասել 1772–1773 թվականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում կատարված տպագրությամբ: Հետագայում նրա հինգերորդ և վեցերորդ գլուխները ռուսական բանակի սպա Վառլամ Վահանովը թարգմանել է ռուսերեն, որը հրատարակվել է Պետերբուրգում 1786 թվականին և բարձր գնահատականի է արժանացել ժամանակակիցների կողմից: «Հորդորակի» աշխարհաբար թարգմանությունն ու հրատարակությունն իրականացրել է ժամանակակից հայ անվանի բանասեր Պողոս Խաչատրյանը 1991 թվականին:

«Նոր տետրակ որ կոչվում է հորդորակը»⁶ կարևոր ստեղծագործություններից է, գուցե առաջին ձեռնարկը, որը սահմանագիծ է հոգևոր ու աշխարհիկ ստեղծագործությունների մեջ: Աշխատությունն սկսվում է «Մաղթանք առ ամենասուրբ երրորդությանն» նախաբանից, ութ գլուխներից հիշատակարաններից և երկու թեմատիկ ցանկերից:

Առաջին գլուխը կրում է «Մաղթանքներիցս հետո երգ, ուղղված հայկազն երիտասարդներին ու պատանիներին՝ սթափվելու համար ծուլության քնի վեհերոտ և անհոգ թմրությունից» վերնագիրը:

Այս և հաջորդ երկու գլուխները Բաղրամյանն անվանում է «Երգ», որը ուշ միջնադարում գրեթե քաղաքական հրապարակախոսական ժանր էր:

Երկրորդ գլուխը, որ կրում է «Հորդորական երգ՝ քաջալերելու համար հայկազուններին, մանավանդ նրանց նորաբողոք ու ծաղկափթիթ երիտասարդներին ու պատանիներին» խորագիրը, բանաստեղծ-հրապարակախոսը հորդորում է արիանալ, քաջանալ և ազգային ստրկամտությունն ու նախատինքը վերացնել: Նրանց խորհուրդ է տալիս հետևել ստրկությունից ազատագրված ժողովուրդների հերոս զավակների և հայոց քաջ նախնիների օրինակին:

«Ով արամյան ազգի որդիք, աղեկտուր և ահաբեկ երբեք, երբեք
այսուհետև դուք թշնամուց մի վախեցեք,

Այլ հինավուրց նախնիներին, հսկաներին նմանվելով՝
նրանց հանգույն արիացեք»⁷:

Երիտասարդությանը ազատատենչության կոչ անելուց հետո Բաղրամյանը դիմում է նրանց ծնողներին, հորդորում ու ոգեշնչում, որպեսզի նրանք

⁶ Տե՛ս Մ. Դավթյան, Հ. Մանուշարյան, Մովսես Բաղրամյան, Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը, ԵՊՀ., Եր., 2015, էջ 54-75:

⁷ Նոր տետրակ..., էջ 37:

իրենց որդիներին կրթեն ու մարզեն և նվիրաբերեն հայրենիքի ազատագրության նվիրական գործին: Այս նպատակն է հետապնդում, «Նոր տետրակի» նաև «Հորդորական և աղաչական երգ, ներբողաբար ասված մեր ազգակիցների համար» գլուխը:

«Նոր տետրակի» չորրորդ գլուխը, որը կրում է «Գոհություն և շնորհակալություն մեր եկեղեցու առաջնորդներին, բոլոր վարդապետներին, քահանաներին և համայն պաշտոնյաներին» վերնագիրը, հետապնդում է կարևոր մի նպատակ. գնահատելով հայ հոգևորականության խաղացած պատմական դերը հայ ժողովրդի կյանքում՝ Բաղրամյանը, այնուամենայնիվ, նրբորեն նկատում է, որ նրանց խնդիրը ոչ թե դարերով սովորություն դարձած անեծքն է՝ ուղղված սեփական ժողովրդին, այլ հայ երիտասարդությանը կրթելն ու հայրենասիրության ոգով դաստիարակելն է:

«Նոր տետրակի» հինգերորդ գլուխը հայոց պետականության պատմության շարադրանքն է: Այն սկսվում է Նոյի և համաշխարհային ջրհեղեղի մասին հանրահայտ գրույցով և տրվում Նոյի սերնդաբանությունը: Նոյից սերված հայերի ծննդաբանությունը հասցնում է մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ զոհված Հայկ Նահապետի վերջին սերունդը՝ Վանի որդի Վահեն: Այնուհետև ավելացնում է հայոց թագավորական տների՝ «Նկարագրություն Արշակունյաց թագավորների», «Նկարագրություն Հայոց մարզպանների», «Նկարագրություն Բագրատունյաց թագավորների» սերունդների շարքը: Վերջին ենթագլուխը նվիրված է Կիլիկիայի հայոց արքայատոհմի պատմությանը: Տաղանդավոր քաղաքագետ-հրապարակախոսը, որպես հայոց ինքնիշխան պետականության վերջին իրողություններ, ներկայացնում է Արցախի մեկիքությունների համառոտ պատմությունը: Ինքնիշխան Արցախը դարձնում է ռազմական-քաղաքական կենտրոն, որի շուրջը պետք է համախմբվեր ողջ հայությունը:

Բաղրամյանի քննարկվող ստեղծագործությունը հավաստի պատմական աղբյուր է՝ կերտված բանիմաց ականատեսի կողմից, պարունակելով փաստական հարուստ տվյալներ XVIII դարի սոցիալական ուժերի, երևույթների, դեպքերի, մշակութային ու գիտական կյանքի մասին:

Բաղրամյանն օգտագործում է ոչ միայն իր ժամանակի պատմության ընձեռած հնարավորությունները, այլև անցյալի պատմության առատ նյութերը: Անդրադառնալով պատմությանը, հետևելով պատմական դեպքերի զարգացման ընթացքին՝ նա անցյալի մեջ գտնում է արժեքավոր փաստեր, որոնցով

հնարավոր է համախմբել ու գոտեպնդել յուրայիններին:

Պատմության այսպիսի շարադրանքը նախատեսված է քարոզչության համար, և շատ զորեղ է նրա ապացուցողական ուժը: Բաղրամյանն ընդգծում է, որ Բագրատունյաց թագավորությունը, Ջաքարյանների իշխանությունը և Կիլիկյան հայկական պետությունը ժամանակին եղել են ոչ միայն տարածաշրջանի ինքնիշխան ու բարգավաճ պետություններ, այլև պետաիրավական տեսակետից ներկայացնում էին այնպիսի բարձր մակարդակ, որոնք համատեղելի էին միջնադարյան Եվրոպայում կազմավորվող պետությունների տիպերին, և որոշ տեղերում, նույնիսկ գերազանցում էին նրանց իրենց կողմից կազմված իրավունքի նորմերով: Ապացույցը Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի հանրահայտ դատաստանագրքերն են⁸:

Չբավարարվելով ազգային պատմության ուսուցողական շարադրանքով, Բաղրամյանն այլ ժողովուրդների պատմության փաստերով նույնպես ցանկանում է ոգևորել հայ երիտասարդությանը.

Բաղրամյանն իր աշխատության վեցերորդ գլխում, որ կրում է «Այն մասին, թե այժմ ում իշխանության տակ է հայոց աշխարհը, նաև մանրամասն տեղեկություններ, թե հայերը քանի նահանգ և գավառ ունեն» խորագիրը, տալիս է Մեծ Հայքի 15 նահանգների և նրանցից դուրս գտնվող 5 հայաբնակ նահանգների բնակավայրերի նկարագրությունը:

Բաղրամյանի հայտնագործած հայրենիքը հայ ժողովրդի ապրելատարածքն է, որ հայրենիքի մեծ գաղափար է դարձել հազարամյակների ընթացքում, երբ այն պատվել է հայ ժողովրդի պատմամշակութային, ազգագրական ու ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, թշնամիների դեմ մղած պատերազմներում տարած հաղթանակներով և հայրենիքի հերոսների թափած արյունով: Բաղրամյանի հայրենիքը հենց սկզբից ներկայանում է իբրև մի ընտրյալ երկիր՝ իր Արարատով, Նախիջևանով, Դրախտի չորս գետերով և նրանց հետ կապված նվիրական ավանդույթներով, որոնք վկայում են, որ երկինքն առաջնություն է տվել այդ երկրին՝ դարձնելով նրան մարդկության առաջին հայրենիքը:

Հայրենի հողի ու ջրի կախարդական ուժի մասին գոյություն ունեցող ա-

⁸ Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Եր., 1975: Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի) ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեաց Ա. Վ. Ղլտճեան, Մբ էջմիածին, 1918:

ռասպելը Մովսես Բաղրամյանի մոտ քաղաքական ազատության ձգտող համապարփակ գաղափար է դարձել: Այդ հայրենիքը տարածվում է Կասպից ծովից մինչև Կորդվաց լեռները և Վիրքից մինչև Ասորեստան: Պարսկահայաստանի նկարագրությունն սկսում է Ուտիք աշխարհից և ավարտվում Արարատով, Թուրքահայաստանինը՝ Բարձր Հայքից և ավարտվում Մոկքով: Որպես հայկական 16-17-18-րդ նահանգներ՝ ներկայացնում է Փոքր Հայքի գավառները: Հայոց 19-րդ նահանգը համարում է Կիլիկիան, 20-րդը՝ Հայոց Միջագետքը: Թվարկելով պատմական Հայաստանի բոլոր աշխարհները՝ Բաղրամյանը կանգ է առնում նրանցում գտնվող քաղաքների, ավանների, գյուղերի վրա, պատմում տեղի ունեցած պատմական խոշոր իրադարձությունների, պետական, հասարակական, քաղաքական հիշարժան դեպքերի, դեմքերի ու նաև բնական ռեսուրսների մասին:

Հենց այս հատկանիշներով էլ «Նոր տետրակի» վեցերորդ գլուխը դուրս է գալիս սովորական աշխարհագրական ակնարկի շրջանակներից և դառնում հայրենագիտական ու քաղաքական աշխարհագրության առաջին արժեքավոր ստեղծագործությունը հայ իրականության մեջ:

Հաջորդ գլխում՝ «Այն մասին, թե ինչու կործանվեց հայոց իշխանությունը, գլխավորապես ինչ կարծիքներ կան այդ մասին», Բաղրամյանն առաջադրում է յոթ հիմնական պատճառ: «Մեր թագավորության անկման պատճառներից առաջինը ոչ այլ ինչ է, – գրում է նա, – եթե ոչ այն, որ մեր իշխանները ձգտեցին լինել ինքնիշխան»⁹: «Երկրորդ պատճառը հետևյալն է, – շարունակում է Բաղրամյանը, – մեր թշնամին ոչ թե իր գործությամբ տիրեց մեզ, այլ մեր թշնամու խոհեմությունն էր, որ կաշկանդելով ու կապելով մեզ բազկակապ արեց, բայց ոչ թե մեր ձեռքի գործության, այլ մեր մտքի կուրության պատճառով: Եվ ճիշտ է այն, որ մարդ նախ՝ հիմարանում է, ապա՝ կորչում...»¹⁰:

Երրորդ պատճառն այն է, որ մեր երիտասարդները ոչ թե արիության պակասությունից են պարտություն կրել, այլ տգիտաբար միմյանց դեմ են դուրս եկել և փոխանակ թշնամիներին կոտորելու, այլազգիներին միանալով իրար են կոտորել:

Չորրորդ պատճառը նույնպես անմիաբանությունն է:

Հինգերորդ պատճառը ծուլությունն է: Մեր բնաշխարհն աղքատացավ ոչ

⁹ Նոր տետրակ..., էջ 129:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 133:

թե բերք ու պտղի պակասությունից, – դժգոհում է Բաղրամյանը, – այլ ծուլությունից ու անփութությունից: Իսկ ծուլների առաջ արքայության դռներն էլ փակ են: Ինչպես որ ծուլությունը բազմաթիվ չարիքների պատճառ է, այնպես էլ արիությունը, որ ծուլության հակառակն է, բազում բարությունների պատճառ է¹¹:

Վեցերորդ պատճառը Բաղրամյանը համարում է մեր հանդուգն, անզգամ ու անհնազանդ կամակորությունը¹²:

Յոթերորդ պատճառը հայերի ուսումնաստյացությունն է, որի պատճառով օրեցօր ձեռք բերեցինք տգիտություն: Այս վիճակից դուրս գալու համար Բաղրամյանը խորհուրդ է տալիս հայ երիտասարդներին կրթվել ու լուսավորվել:

«Նոր տեսրակի» ութերորդ գլուխը, որ կրում է «Այն հարկերի մասին, որ ամեն տարի օտարներն ինչքան կարողանում՝ բռնությամբ պահանջում են հանապազ մեր ազգից ու հայոց աշխարհից» վերնագիրը, իրոք, Հայաստանի ազատագրության հնարավորությունը հիմնավորելու համար տալիս է վիճակագրական տեղեկություններ Հայաստանի ու հայերի մասին: Եվ ընթերցողի առջև բացվում է մի դրախտային աշխարհ: Բաղրամյանի Հայաստանն ընդարձակածավալ է, ունի 20 նահանգ, 258 գավառ, 103 քաղաք, 77400 գյուղ, ընդամենը 4 մլն 644 հազար տուն, որոնցում ապրում են 27 մլն 864 հազար մարդ: Դրանց ուղիղ կեսը՝ 13 մլն 932 հազարը, նրա հաշվելով հայեր են: Հայ բնակչության հարկատու տղամարդկանց թիվը հասնում է 5 մլն 224, 5 հազարի, որոնք վճարում են 10 մլն 449 հազար ոսկի գլխահարկ և զանազան այլ անուղղակի հարկեր: Ընդամենը հայ ազգը թուրքերին ու պարսիկներին տարեկան վճարում է 20 մլն 898 հազար ոսկի կամ 4 մլն 179 հազար պարսկական թուման: Ահա տեսեք, թե կամավոր կերպով ինչքան անբավ ու անքանակ դրամ ենք վճարում այլազգիներին՝ այդ ոչինչ համարելով մեր աչքում, դեռ չհաշված մյուս վճարները¹³: Այս վիճակում հայ ժողովուրդն ապրել է ավելի քան 400 տարի, որի ընթացքում հայ ազգի բազում սերունդներ հառաչելով մեռան անմխիթար վիճակում: Եթե օտարներին այդքան անհուն գումարներ ենք տալիս իբրև հարկ, ինչեր կարող ենք անել՝ այդ գումարները ծառայեցնելով մեր օգտին: Նրանք կարող են բավարարել պատերազմողներին, վերացնել մեր նախատիներն ու ազատել այն ձեռքերից, որոնք նեղում ու նսեմացնում են մեզ:

¹¹ Նշվ. աշխ., էջ 135:

¹² Նշվ. աշխ., էջ 136:

¹³ Նշվ. աշխ., էջ 162:

Բաղրամյանի հրապարակախոսության հաջողության հիմնական պայմաններից մեկը նրա բազմակողմանի ու բազմաբնույթ փաստարկներն են, որոնք հնարավորություն են տալիս ընթերցողին կատարել հիմնավոր եզրակացություններ ու ընդհանրացումներ: Նրա փաստերը, տվյալներն իմաստավորում են XVIII դարի սոցիալական կյանքը՝ անմիջական քաղաքական նշանակությամբ:

Հրապարակախոսը կանխադրում է՝ պոստուլացնում այնպիսի դրույթներ, որոնք ընդունվում են որպես անառարկելի տվյալներ: Նրա համար պոստուլատ-կանխադրույթներ են հանդիսանում աստվածաշնչից արվող վկայությունները և հայոց պատմությունից բերված քաղվածքները, որոնք ընդունվում են որպես ելակետ, ապացուցման կարիք չունեցող ճշմարտություն:

Ընթացող իրականության մասին խոր գիտելիք տարածելու գործում համազգային ուսուցիչ *Բաղրամյանի երկը կատարում է հասարակական-ուսուցողական գործառույթ*՝ տեղեկատվական-ճանաչողական գործառույթ, *այն պարզ պատճառով, որ բազմակողմանիորեն ազդում է ընթերցողի ամենօրյա մտածողության վրա:*

Ազգային մանկավարժի ֆունկցիան Բաղրամյանը կատարում է բազմաթիվ միջոցներով ու հնարանքներով: Մի դեպքում՝ ուղենշում է աճող սերնդի դաստիարակության հիմնական սկզբունքներն ու եղանակները, մյուս կողմից՝ իր առաջադրած համազգային գաղափարներով դիմորոշում է ազգին դեպի ազատություն ու անկախություն:

Բաղրամյանի հետազոտության *օբյեկտը XVIII դարի հայ հասարակությունն* է, նպատակը՝ նրան ազգային արժանապատվության ու ազատության ոգով դաստիարակելը, քաղաքական գիտելիքներով զինելը:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ *հայրենական քաղաքագիտության ձևավորման հորդորական մեթոդը, ժամանակակից իմաստով, ինստիտուցիոնալ գործընթաց է, որում իր ավանդն է ունեցել Մովսես Բաղրամյանը: Նա իր «Տեսրակ-դասագրքում» կիրառում էր* պատմական, պոստուլացման, պատճառա-հետևանքային, ապացուցման, փաստարկման, հոդեորական մեթոդները:

Ժամանակների պահանջով զարգացնում է իր կատեգորիալ ապարատը՝ «Մթափման հորդորներ», «Քաջալերման հորդորներ», «Ազգակիցների համախմբման հորդորներ», որով էլ պայմանավորվում է «Նոր տեսրակի» նպա-

տակը՝ իր *հասարակական-ուսուցողական* ու տեղեկատվական-ճանաչողական գործառնությունը: Այն իր մեջ ներառում է այնպիսի գիտություններ, ինչպիսիք են՝ հայոց պատմությունը, հայրենագիտական ու քաղաքական աշխարհագրությունը, հայրենի բնությունը, տնտեսագիտությունը, վիճակագրությունը, ժողովրդագրությունը, փիլիսոփայությունը և այլն:

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ОТЕЧЕСТВЕННОЙ ПОЛИТОЛОГИИ И МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ

Давтян Меланья Хачатуровна

*преподаватель кафедры обществоведческих дисциплин
и психологии колледжа Образовательного комплекса
полиции Республики Армения, канд. полит. наук,
майор полиции*

В статье автором делается вывод о том, что «уверительный» метод формирования отечественной политической науки является, в современном смысле, институциональным процессом, в который свой большой вклад внес великий публицист XVIII века Мовсес Баграмян. В соответствии с требованиями эпохи, он развил категориальный аппарат «трезвостью, ободрением, консолидацией» для поднятия духа армянской молодежи и освобождения Армении от персидско-турецкого ига.

Ключевые слова: отечественная политология, методология политологии, интеллектуальная традиция, Мовсес Баграмян, «Новая тетрадь», армянская политическая мысль, метод увещевания.

THE PROCESS OF FORMATION OF NATIVE POLITICAL SCIENCE AND ITS TEACHING METHOD

Davtyan Melanya

*Lecturer at the Chair of Social Sciences and Psychology
of the College of the Police Educational Complex of RA,
PhD in Political Sciences, Police Major*

In the article the author comes to the conclusion that the “persuasive” method of native political science formation is an institutional process in a modern sense, in which a significant contribution was made by the great publicist of the 18th century Movses Baghramyan.

On the demands of the times, he developed a categorical apparatus with “appeals to soberness, encouragement and consolidation” in order to raise the spirits of the Armenian youth and to liberate Armenia from the Persian-Turkish yoke.

Key words: native political science, political science methodology, intellectual tradition, Movses Baghramyan, “New Book”, Armenian political thought, persuasive method.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.02.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 05.02.2020թ

ՏԻՐԱԶՈՒՐԿ ԳՈՒՅՔԻ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Թադևոսյան Արման

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի մագիստրանտ*

Երբ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերվում առաջին անգամ կամ նախկին սեփականատիրոջ իրավունքից անկախ և նույնիսկ կամքին հակառակ, ապա սեփականության իրավունքի ձեռքբերման այդպիսի եղանակը կոչվում է սկզբնական եղանակ:

Օրենսդրությամբ նախատեսված են սկզբնական եղանակով գույք ձեռք բերելու տարաբնույթ հիմքեր: Դրանք իրենց ամրագրումն են ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 11-րդ՝ «Սեփականության իրավունք ձեռք բերելը» վերտառությամբ գլխում: Սույն աշխատանքում հիմնական ուսումնասիրության առարկա են հանդիսացել տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը, ձեռքբերման վաղեմության ուժով և ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը:

Օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ տիրագուրկ է համարվում այն գույքը, որը սեփականատեր չունի կամ որի սեփականատերը անհայտ է կամ էլ այն գույքը, որի սեփականատերը հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

«Տիրագուրկ գույքը» հավաքական հասկացություն է, որն իր մեջ ներառում է այնպիսի տարատեսակներ, ինչպիսիք են՝ շարժական տարատեսակ գույքը, որից սեփականատերը հրաժարվել է, տիրագուրկ անշարժ գույքը, առանց հսկողության թողնված կենդանիները, գտանքը, գանձը: Հռոմեական մասնավոր իրավունքի համաձայն՝ տիրագուրկ գույք էր համարվում նաև թշնամիներին պատկանող գույքը:¹ Արտասահմանյան օրենսդրության մեջ տիրագուրկ գույքերի շարքին են դասում նաև բնության բարիքները՝ վայրի

¹ Տե՛ս Վ. Դ. Ավետիսյան, Հռոմեական մասնավոր իրավունք, ԵՊՀ հրատարակչություն 2010թ. էջ 54-55

հատապտուղները, սնկերը, ձկները, վայրի կենդանիները:² ՀՀ քաղաքացիական օրենսգրքը դրանք տիրագուրկ չի համարում: Օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ, օրենքին համապատասխան, սեփականատիրոջ ընդհանուր թույլտվությամբ կամ տեղական սովորույթի համաձայն թույլատրվում է անտառներում, ջրավազաններում կամ այլ տարածքներում հատապտուղներ կամ այլ հանքամատչելի գույք հավաքել, ձկան կամ կենդանիների որս կատարել, համապատասխան գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերում այն հավաքած կամ որսած անձը: Այդպիսի գույքը Հայաստանում գրեթե միշտ ունի սեփականատեր:

Վերը թվարկված գույքի նկատմամբ սեփականության իրավունք կարող է առաջանալ այն հանրահայտ կանոնի համաձայն, որ տիրագուրկ գույքն անցնում է այն անձին, ով առաջինն է տիրանում դրան (*res nullius primo occupanti cedit*):³

Տիրագուրկ գույքերին տիրանալու նշանակությունն այն է, որ նոր սեփականատերը, ստանալով սեփականության իրավունք, փոխարենը ոչինչ չի տալիս, մինչդեռ գույքը, որը չունի սեփականատեր և, հետևաբար, չի մասնակցում ո՛չ իրավական, ո՛չ տնտեսական շրջանառությանը, վերադառնում է շրջանառություն, ստանում է «երկրորդ կյանք»:⁴

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ առաջանում էր պետական սեփականության հողի տիրագուրկ ճանաչման իրավական հարցադրում: Օրենսգրքի 178-րդ հոդվածը կիրառվում է 280-րդ հոդվածի հետ միաժամանակ: Օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

Վճռաբեկ դատարանը նշեց, որ նշվածի բովանդակությունից հստակ երևում է, որ այն վերաբերում է քաղաքացիների և իրավաբանական անձանց

² Տե՛ս **Գերմանական քաղաքացիական օրենսգրք**, 960-րդ հոդված, 1898

³ Տե՛ս **Е. А. Суханов**, Российское гражданское право, учебник, в 2 томах, том 1, Москва 2011, էջ 523

⁴ Տե՛ս **Бубнов, Максим Юрьевич**, Приобретательная давность как основание приобретения право собственности, Рязань 2003, էջ 73

կողմից իրենց սեփականության իրավունքից հրաժարվելուն և իր մեջ չի ներառում պետության կողմից իրեն պատկանող գույքից հրաժարվելու հնարավորություն: Բացի այդ, պետական հողը տիրագուրկ ճանաչելու ինստիտուտ գոյություն չունի: Ավելին, գործում է մեկ այլ՝ հողի նկատմամբ պետական սեփականության կանխավարկածի սկզբունք, որի բովանդակությունն այն է, որ սեփականատեր չունեցող բոլոր հողերը համարվում են պետության սեփականությունը: Նշված սկզբունքն իր արտացոլումն է ստացել ՀՀ հողային օրենսգրքի 55-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածներում, որոնց համաձայն՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են:⁵

Խնդրահարույց է այն հանգամանքը, որ Օրենսգիրքը շարժական գույքի սեփականության իրավունքի առաջացում ձեռքբերման վաղեմության ուժով չի նախատեսում: Մինչդեռ արտասահմանյան զարգացած մի շարք երկրների օրենսդրություններում հանդիպում են այդպիսի իրավակարգավորումներ: Այդպիսի հնարավորություն է նախատեսում նաև ՌԴ Քաղաքացիական օրենսգիրքը, որը մասնավորապես շարժական գույքի համար որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու ժամկետ նախատեսում է 5 տարին:⁶

Գայտը նշում էր, որ սեփականության իրավունքի ձեռքբերումը վաղեմության հետ կապելը հիմնված էր հանրային շահի վրա (*bono publico*) և նպատակ էր հետապնդում թույլ չտալ, որ սեփականության իրավահարաբերություններում տևական ժամանակաընթացում պահպանվեն անորոշությունն ու անվստահությունը: Հին շրջանում շարժական իրերի համար որպես ձեռքբերման վաղեմության ժամկետ սահմանված էր մեկ տարին, իսկ անշարժ իրերի համար՝ երկու տարին:⁷

Կարծում ենք՝ հստակ ժամկետ սահմանելու անհրաժեշտություն կա, քանի որ բացի այն դեպքերից, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով (լքյալ գույք, գանձ, գտանք և այլն), պետք է հնարավորություն լինի նաև շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառման միջոցով:

⁵ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ 3-410 (ՎԴ) գործ, 2007 թվականի մայիսի 18

⁶ Տե՛ս ՌԴ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 234, 1994 թվականի հոկտեմբերի 21

⁷ Տե՛ս Վ. Դ. Ավետիսյան, Հռոմեական մասնավոր իրավունք, ԵՊՀ հրատարակչություն 2010թ. էջ 56

Ինչ վերաբերում է տիրագուրկ անշարժ գույքին, ապա այդպիսի գույքն այլ անձի կողմից սեփականության իրավունքով կարող է ձեռք բերվել միայն ձեռքբերման վաղեմության ուժով:

Ձեռքբերման վաղեմությունն օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է:

Օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է իրեն չպատկանող տիրագուրկ գույքը՝ որպես սեփական գույք, ապա այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք: Այս նորմի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես, դրանք են՝ **1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ**. Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն, **2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը**, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի որպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում, **3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ**: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն: Տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը,

որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը, **4. տիրապետումը պետք է լինի բացահայտ**, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով: Գույքի տիրապետումը կարող է իրականացվել ոչ միայն այնտեղ բնակվելով, այլ դրա խնամքի, որպես սեփական գույքի տիրապետելու այլ ձևերով:

Ձեռքբերման վաղեմությանը, Օրենսգրքի 187-րդ և 280-րդ հոդվածների սահմանադրականությանը ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է՝ նշելով, որ դրանք համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը⁸:

Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքն այս հարցում բավական բազմազան է, ուստի կոնկրետ օրինակներն առավել հստակ կդարձնեն վերջինիս դիրքորոշումը:

Մասնավորապես, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման, յուրաքանչյուր գործով դատարանները պետք է պարզեն բոլոր վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Օրինակ՝ գործերից մեկով Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով, որ Երևանի Բաֆֆու փողոցի բնակիչներ Ավետիք և Էմմա Աղամիրյանների, Ա. Հակոբյանի, Վ. Սեյրանյանի, Ա. Գրիգորյանի և Զ. Զազյանի 29.11.2006թ. հայտարարության համաձայն՝ 1964թ. Բ. Նիկողոսյանը Ս. Սարիբեկյանին գյուղից տեղափոխվելու նպատակով Երևանի Բաֆֆու 51 հասցեի հողամասի որոշ հատված հատկացրել է նրան բնակելի տուն կառուցելու և բնակություն հաստատելու համար, իսկ «Շենքերի, շինությունների պահպանում և սպասարկում» ՓԲԸ-ի սեփական տնատիրությունը սպասարկող թիվ 12 տեղամասի 21.11.2006թ. տեղեկանքի համաձայն՝ Մ. Սարիբեկյանը 1964 թվականից բնակվում է Երևանի Բաֆֆու 51 հասցեում, և Մ. Սարիբեկյանի կողմից կատարվել է 1994-1997 թվականների, 1999 և 2004 թվականների համար Երևանի Բաֆֆու 51 հողի հարկի վճարումները, արձանագրեց, որ գույքի փաստացի տիրապետող՝ Մ. Սարիբեկյանը 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ և որպես սեփական գույք տիրապետել է վեճի առարկա հողատարածքը, ինչի ուժով դրա նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք: Վճռաբեկ դատարանը տվյալ գործով անդրադարձավ ձեռքբերման վաղեմության պայմաններին առանձին-առանձին և նշեց, որ Սարիբեկյանի՝ Աղազարյանի կողմից զբաղեցված հողատարածքի՝ 10 տարի անընդմեջ տիրապետումն ուղղակիորեն հիմնավորվում է Երևանի Բաֆֆու փողոցի բնակիչների և «Շենքերի, շինությունների

⁸ Տե՛ս **ՀՀ Սահմանադրական դատարան**, Որոշում ՍԴՈ-667, 2006 թվականի նոյեմբերի 21

պահպանում և սպասարկում» ՓԲԸ-ի սեփական տնտեսության հայտարարությամբ, որոնցում նշվում է Մ. Սարիբեկյանի կողմից 1964 թվականից գույքի տիրապետման փաստը, բացահայտությունը հիմնավորվում է տիրապետման մասին իրենց իրազեկվածությամբ (հողատարածքի սեփականատիրոջ և նույն փողոցի բնակիչների), այսինքն՝ տիրապետումը չի եղել հողատարածքի սեփականատիրոջ և այլ անձանցից գաղտնի եղանակով, իսկ բարեխղճությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ հողամասի սեփականատեր Բ. Նիկողոսյանն անձամբ է հրավիրել Մ. Սարիբեկյանին և հատկացնելով առանձին հողատարածք՝ թույլատրել այդ հողամասի վրա կառուցել բնակելի տուն: Այսինքն՝ հողատարածքի սեփականատիրոջ կողմից Մ. Սարիբեկյանին տուն կառուցելու նպատակով հողամաս տրամադրելը, վերջինիս բավարար հիմք է տվել ենթադրելու, որ նա այդ հողատարածքը տիրապետելու է որպես սեփական գույք, իսկ Բ. Նիկողոսյանը, թույլատրելով կառուցել տուն և 1991թ-ից սկսած (այն պահից երբ նա դարձել է հողատարածքի սեփականատեր) այն հետ չպահանջելով, փաստացի կատարել է այնպիսի գործողություններ, որոնք վկայում են իր կողմից այդ հողամասից հրաժարվելու մասին: Ինչ վերաբերում է վեճի առարկա հողատարածքը որպես սեփական գույք տիրապետելուն, ապա դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ Մ. Սարիբեկյանը մասնակցել է գույքի կառավարմանը. կառուցել է տուն, հոգ է տարել դրա պահպանման համար՝ վճարելով հողի հարկի գումարները⁹:

Ընդհանրապես, Վճռաբեկ դատարանը ձեռքբերման վաղեմության վավերապայմաններին անդրադառնում է այդպիսի յուրաքանչյուր դեպքում՝ նշելով, որ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելիս էական նշանակություն ունեն ոչ թե գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների վերաբերյալ ապացույցները, այլ դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողի կողմից տասը տարի և ավելի բարեխղճորեն, անընդմեջ ու բացահայտ օգտագործելու և տիրապետելու հանգամանքները:

Դատական պրակտիկայում հիմնական խնդիրները կապված են լինում ձեռքբերման վաղեմության վավերապայմաններից մեկի՝ բարեխղճության

⁹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական գործ թիվ 3-1435 (ՎԴ), 2007 թ. նոյեմբերի 10

հետ: Ուստի, Վճռաբեկ դատարանի կողմից քննված բողոքներում ձեռքբերման վաղեմության վավերապայմաններից առավել վիճահարույցը Բարեխոհությունն է: Դա անձին պետք է հիմք տա ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն: Բացի այդ, կարևոր նշանակություն ունի նաև անձի կողմից գույքը որպես սեփականը տիրապետելը: Վճռաբեկ դատարանն իր մի քանի որոշումներում մերժեց ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի պահանջը՝ հիմք ընդունելով Բարեխոհության բացակայությունը:

Օրինակ՝ գործերից մեկով Վճռաբեկ դատարանը կարևորեց այն փաստը, որ Ք. Գալստյանի և Կ. Գալստյանի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Ք. Գալստյանն իր սեփականության ներքո գտնվող բնակարանը նվիրել է Կ. Գալստյանին, իսկ նշված բնակարանում Ք. Գալստյանը բնակվել է Կ. Գալստյանի համաձայնությամբ: Այսինքն՝ նվիրատվության հիման վրա Ք. Գալստյանի սեփականության իրավունքը վեճի առարկա բնակարանի նկատմամբ դադարել է, հետևաբար, բնակարանի հետագա տիրապետման ընթացքում վերջինս գիտակցել է, որ օգտագործում է Կ. Գալստյանի սեփականության ներքո գտնվող գույքը: Այսինքն՝ բնակարանի տիրապետումը Ք. Գալստյանին չէր կարող բավարար հիմքեր տալ ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Ք. Գալստյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով չի կարող դիտվել բարեխիղճ, քանի որ վեճի առարկա գույքն այլ անձի սեփականությանը հանձնելուց հետո բնակարանում բնակվելով Ք. Գալստյանը բավարար հիմքեր չէր կարող ունենալ ենթադրելու, որ նա այդ գույքն իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետելու է որպես սեփականը: Հետևաբար, Ք. Գալստյանը բարեխղճորեն չի տիրապետել վեճի առարկա անշարժ գույքը:¹⁰

Հարկ է նկատի ունենալ, որ դատական պրակտիկայում երբեմն տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ճանաչվել միայն տիրագուրկ գույքի նկատմամբ, թե դա հնարավոր է նաև սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ: Վճռաբեկ դատարանն իր թիվ 3-1451 (ՎԴ) նախադեպային որոշմամբ հստակ պատասխանեց այդ հարցերին, նշելով.

¹⁰ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական գործ թիվ 3-433 (ՎԴ) 2008թ. հուլիսի 25

Ինչ վերաբերում է Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված այն պատճառաբանությանը, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ձեռք բերվել միայն տիրագուրկ գույքի նկատմամբ, ապա այն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի և 178-րդ հոդվածի 3-րդ մասի համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտի կիրառությունը սահմանափակված չէ միայն տիրագուրկ գույքով: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող մեկնաբանվել որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտի կիրառությունը սահմանափակող դրույթ: Այն հանգամանքը, որ տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով, ինքնին չի ենթադրում, որ նույն եղանակով սեփականության իրավունք չի կարող ձեռք բերվել այլ անշարժ գույքի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալ երկու հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ձեռք բերվել այն գույքի նկատմամբ, որը տիրագուրկ է (օրենքով սահմանված կարգով ճանաչվել է տիրագուրկ) կամ որը տիրագուրկ չէ, բայց դրա սեփականատերն օրենքով սահմանված ժամկետում անտարբեր վերաբերմունք է ցուցաբերել դրա նկատմամբ:¹¹

Վերոնշյալ նախադեպը բավականին կարևոր էր: Կարծում ենք՝ եթե նույնիսկ գույքի սեփականատերը հայտնի է, սակայն հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից, ապա այդ գույքը պետք է ճանաչվի տիրագուրկ դրա նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ճանաչելու համար (Օրենսգրքի 178-րդ հոդված, 1-ին մաս):

Ինքնակամ կառույցը ևս դասվում է սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակների թվին: Միաժամանակ այն անձը, ով իրականացրել է ինքնակամ կառուցումը, դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերում: Այսինքն՝ չունի սեփականության իրավունք և համապատասխանաբար չունի այդ կառույցը տնօրինելու իրավունք (վաճառել, նվիրել, վարձակալության հանձնել, կատարել այլ գործարքներ): Դրա փո-

¹¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական գործ թիվ 3-1451 (ՎՂ), 2007թ. հոկտեմբերի 10

խարեն ինքնակամ կառույցը (եթե նրա նկատմամբ սեփականության իրավունքը չճանաչվի դատական կարգով) կարող է քանդվել այն կառուցած անձի կողմից կամ նրա հաշվին:¹²

Ըստ Օրենսգրքի 188-րդ հոդվածի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց անհրաժեշտ թույլտվության կամ քաղաքաշինության և շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով ստեղծված բնակելի շենքեր, շինություններ, այլ կառույցներ կամ այլ անշարժ գույքը:

Ինքնակամ կառուցում կատարողը դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերում, քանի որ կառույցը ենթակա չէ պետական գրանցման՝ թույլ տրված խախտումների պատճառով: Ըստ այդ հոդվածի՝ դատարանը կարող է ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչել այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը: Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Այսինքն՝ տվյալ դեպքում, ըստ էության, ինքնակամ կառույցի նկատմամբ հողամասի սեփականատիրոջ սեփականությունը ճանաչելը դատարանի իրավունքն էր և ոչ թե պարտականությունը՝ հաշվի առնելով նաև դրա օրինականությանն առնչվող մի շարք պահանջներ (օրինակ՝ քաղաքացիների կյանքն ու առողջությունը):

Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադարձ է կատարել նաև «ինքնակամ կառույց» հասկացությանը: Մասնավորապես,

¹² См. у О. О. Шерстнева, Самовольное строение: Признание право собственности, Глава 1. Понятие самовольного строения 2007

պրակտիկայում հաճախ իրականացված շինարարությունը դիտվում էր որպես վերակառուցում, որի համար շինարարական թույլտվություն, ըստ դատարանների, անհրաժեշտ չէր: Մասնավորապես, գործերից մեկում անձն իր շինությունը քանդել և նրա փոխարեն կառուցել էր նույն շինությունը: Երբ որ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննվեց դատարանում, ՀՀ վարչական դատարանը հայցի մերժման հիմքում դրեց այն հանգամանքը, որ Արտակ Ոսկանյանի կողմից իրականացվել է վերակառուցում, որի համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքերը բացակայում են:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը նշեց՝ կառույցը համարվում է ինքնակամ, եթե

1. այն կառուցվել է օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում,
2. կառուցվել կամ վերակառուցվել է առանց թույլտվության,
3. կառուցվել կամ վերակառուցվել է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

Հետևաբար, հիմք ընդունելով նաև «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, հին շինության քանդման և դրա փոխարեն նորի կառուցման (թեկուզ նույն մակերեսով) համար անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն:¹³

Այս նախադեպը էական նշանակություն ունեցավ այն առումով, որ այն հստակ սահմանեց այն պայմանները, որոնցից թեկուզ մեկի առկայության դեպքում կառույցը կարող է համարվել ինքնակամ:

Մեկ այլ հետաքրքիր գործ Վճռաբեկ դատարանի կողմից քննվեց ուրիշի հողամասում տեղադրված ավտոտնակը որպես ինքնակամ կառույց դիտարկելու և Օրենսգրքի 274-րդ հոդվածի հիման վրա ապամոնտաժելու վերաբերյալ:

Մասնավորապես, այդ գործով խնդիրն այն էր, որ ավտոտնակը տեղադրվել էր դեռևս այն ժամանակ, երբ հողի նկատմամբ գործում էր պետական բացառիկ սեփականությունը, իսկ ավտոտնակը տեղադրվել էր ՀՍՍՀ աշխա-

¹³ Տե՛ս **ՀՀ Վճռաբեկ դատարան**, Վարչական գործ թիվ ՎԴ/0377/05/08, 2008 թվականի նոյեմբերի 28

տավոճների դեպուտատների Երևանի Լենինյան շրջսովետի գործադիր կոմիտեի 1975 թվականի որոշմամբ սահմանված թույլտվությամբ: Երբ հետագայում հողամասը սեփականաշնորհվել էր, և հողամասի սեփականատերերը դիմեցին դատարան, այնտեղ տեղադրված ավտոտնակն ապամոնտաժելու պահանջով դատարանները հայցը բավարարեցին: Մասնավորապես, նշված գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով հայցը բավարարելու վերաբերյալ դատարանի վճիռը, պատճառաբանել էր. «...կողմերի միջև բացակայում են պայմանագրից բխող հարաբերություններ, գույքի սեփականատեր հանդիսանում են հայցվորները, վիճելի գույքը տիրապետում են պատասխանողները, որպիսի պայմաններում դատարանը միանգամայն իրավացիորեն կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի կանոնները»:

Վճռաբեկ դատարանը, պարզելով այն հարցը, թե արդյո՞ք ավտոտնակը համարվում է ինքնակամ կառույց, և, հետևաբար, արդյո՞ք տվյալ գործով կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, նշեց.

Վիճելի ավտոտնակը չի համարվում ինքնակամ կառույց, և դրա վրա չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներն այն պատճառով, որ սույն գործով ավտոտնակը տեղադրվել է օրինական կարգով, առկա է վիճելի ավտոտնակը հիշյալ հողամասում տեղադրելու իրավական հիմք, որով թույլատրվել է Երևանի Չեխովի փողոցի 16-րդ շենքի թիվ 42 բնակարանի բնակիչ Մայսկի Մացակյանին տեղադրելու շարժական ավտոտնակ անձնական օգտագործվող «Ժգուլի» մակնիշի ավտոմեքենայի համար՝ Երևանի Չեխովի փողոցի 1-ին փակուղու թիվ 19 տան բակում, որի սեփականատերն էր Անուշավան Պետրոսյանը: Այսինքն՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնության առկայության պայմաններում տիրապետումը չի կարող դիտվել ապօրինի¹⁴:

¹⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0498/02/10, 2011 թվականի հոկտեմբերի 14

ПРОБЛЕМЫ БЕСХОЗЯЙНОГО ИМУЩЕСТВА, ПРИБРЕТАТЕЛЬНОЙ ДАВНОСТИ И САМОВОЛЬНОЙ ПОСТРОЙКИ В ПРАВОПРИМЕНИТЕЛЬНОЙ ПРАКТИКЕ РА

Тадевосян Арман Юрикович

*Магистрант кафедры правоведения Академии
государственного управления Республики Армения*

Предметом исследования автора стали приобретение права собственности на бесхозное имущество и на самовольную постройку, а также приобретение права собственности на основании приобретательной давности. В статье рассматриваются различные законодательные акты и судебная практика Республики Армения, в частности, прецедентные решения Кассационного суда. В результате исследования были сделаны следующие выводы: кассационный суд в своих прецедентных решениях изложил условия, при наличии хотя бы одного из которых постройка может считаться самовольной; право собственности на бесхозное недвижимое имущество может быть приобретено только на основании приобретательной давности. Кассационный суд в рамках своей конституционной миссии устанавливает прецедентное право в отношении приобретательной давности. По мнению Кассационного суда, суды должны определять одновременное наличие всех вышеперечисленных условий в каждом отдельном случае; гражданский кодекс Республики Армении не предусматривает приобретение права собственности на движимое имущество на основании приобретательной давности. В то время, как в различных развитых странах существуют такие правовые регулирования. Мы считаем, что необходимо установить точный срок приобретательной давности, поскольку помимо случаев, прямо предусмотренных законом, должна быть также возможность приобрести права собственности на движимое имущество с помощью приобретательной давности.

Ключевые слова: Гражданский кодекс РА, право собственности, движимое имущество, недвижимое имущество, Кассационный суд, условия приобретательной давности, Конституционный суд, судебная практика.

THE ISSUES OF THE OWNERLESS PROPERTY, THE ACQUISITIVE PRESCRIPTION AND THE UNAUTHORIZED CONSTRUCTION IN THE LAW ENFORCEMENT PRACTICE OF THE REPUBLIC OF ARMENIA

Tadevosyan Arman

Master of Laws Public Administration

Academy of the Republic of Armenia

The subject of the research is the acquisition of the right of ownership of the ownerless property and unauthorized construction, as well as the acquisition of the right of ownership on the basis of acquisitive prescription. The article discusses various legislative acts and judicial practice of the Republic of Armenia, in particular, the case-law of the Court of Cassation. As a result of the study, the following conclusions were made:

1. The court of Cassation, in its case-law, set out the conditions, in the presence of at least one of which the building can be considered unauthorized.
2. The right of ownership on ownerless immovable property can be acquired only on the basis of acquisitive prescription. The Court of Cassation, as part of its constitutional mission, has established case-law in relation to acquisitive prescription. According to the Court of Cassation, in each case, the courts must determine the simultaneous presence of all of the above-mentioned conditions.
3. The Civil Code of the Republic of Armenia does not provide for the acquisition of the right of ownership to movable property on the basis of acquisitive prescription. While in various developed countries there are such legal regulations. We think that it is necessary to establish the exact time of acquisitive prescription, since in addition to cases expressly provided by the law, there should also be the opportunity to acquire the right of ownership to movable property using acquisitive prescription.

Keywords: Civil Code of RA, the right of ownership, movable, immovable property, Court of Cassation, conditions for acquisitive prescription, Constitutional Court, judicial practice

Հոդվածը գրախոսվել է՝ 26.12.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 10.01.2020թ.

ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Խաչատրյան Հռիփսիմե

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի
ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ*

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման միջոցները պետք է ուղղված լինեն ոչ միայն հանցավորության պատճառների և պայմանների հայտնաբերմանն ու վերացմանը, այլ նաև պատժի նպատակների իրականացմանը, պրոֆիլակտիկ ներգործությամբ ձեռք բերված արդյունքներն ամրապնդելուն, որպեսզի կանխվի պատիժը կրող կամ արդեն իսկ պատիժը կրած անչափահասի վերադարձը հանցավոր ուղի: Հասարակության համար առավել կարևոր է անչափահասների հանցագործությունների (այդ թվում՝ խմբային) կանխարգելումը, քան մեղավորների նկատմամբ քրեական պատասխանատվության խիստ միջոցների կիրառումը:

Ուղղիչ-դաստիարակչական ներգործության ինտենսիվությունը, պատժողական և դաստիարակչական միջոցների հարաբերակցությունը, ինչպես նաև ուղղման գործընթացի շարունակականությունը պայմանավորված են հանցագործության ծանրության աստիճանով և անձի բարոյագրկության մակարդակով, ինչպես նաև նախկինում դատվածության առկայությամբ¹: Այս դրույթն ամբողջությամբ տարածվում է խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի վրա, որի նկատմամբ նշանակվում է ազատազրկման ձևով պատիժ:

Ուսումնասիրելով 2010-2017թթ. ընթացքում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների նկատմամբ դատարանի կայացրած 292 դատավճիռներ², արձանագրում ենք, որ խմբի կազմում հանցանք կատարած

¹ St' u Бычков С.Н. Исполнение уголовного наказания в виде лишения свободы в исправительных колониях особого вида режима (организационно-правовые вопросы и характерные особенности). Автопеч.дис. ... канд. юрид. наук. СПб., 1996, էջ 7:

² Քրեական գործերի ցանկերը տրամադրվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 24.06.2016թ. թիվ Ե-4102 և 16.04.2018թ. թիվ դդ-4.2 Ե-26.11 գրություններով, որոնց հիման վրա էլ ուսումնասիրվել են www.datalex.am կայքից վերցրած փորձառական նյութերը:

անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժն ունի հետևյալ ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 29)՝

Աղյուսակ 29

տարի	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Միջին. ցուցանիշ
ազատազրկման դատապարտված անչափահասների տեսակարար կշիռ	88.1%	71.1%	73.2%	74.6%	73.3%	75.0%	58.3%	65.5%	72.4%
ազատազրկման ձևով պատիժը քրեակատարողական հիմնարկում կրածների տեսակարար կշիռը	20.3%	34.4%	33.3%	30.0%	40.0%	24.2%	0%	8.3%	23.8%
ՀՀ քր.օր-ի 70 հոդվածի կիրառում	74.6%	59.4%	66.7%	50.0%	54.5%	75.8%	100%	91.7%	71.6%
ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատում՝ համաներման արդյունքում	5.1%	6.3%	0%	20.0%	5.4%	0%	0%	0%	4.6%

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասները քրեական պատասխանատվության են ենթարկվել՝ գերակշիռ դեպքերում դատապարտվելով ազատազրկման: Սակայն ոչ բոլոր դեպքերում է խմբի կազմում հանցանք կատարած անչափահասն ազատազրկման ձևով պատիժը կրել: Նշված ժամանակահատվածում, ըստ միջինացված ցուցանիշի, դատապարտված անչափահասների 23.8%-ն է ազատազրկման ձևով պատիժը կրել, իսկ 71.6%-ի նկատմամբ դատարանը կիրառել է ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի դրույթները՝ պատիժը պայմանական չկիրառելով և փորձաշրջան նշանակելով:

Պրակտիկայում այստեղ առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ վերոնշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ. չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել ակոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք: Պրոբացիոն գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

այն դեպքում, երբ դատարանը դատավճռով դատապարտյալի վրա դնում է լրացուցիչ պարտականություններ, արդեն իսկ պրոբացիայի շահառուն, առանց ավելորդությունների, ենթարկվում է պրոբացիոն ներգործության: Հատկապես դա խնդիր է պրոբացիայի անչափահաս շահառուների շրջանում: 2010-2017թթ. ընթացքում կայացված դատավճիռների վերլուծության արդյունքների համաձայն, ըստ միջինացված ցուցանիշի՝ ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ լրացուցիչ պարտականություններ դրվել են խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 9.3%-ի վրա: Այս խնդրի լուծումը տրված է ՀՀ նոր քր. օր-ի Նախագծում, որտեղ դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելը ոչ թե դատարանի իրավունքն է, այլ պարտականությունը: Կարծում ենք՝ դա կբարձրացնի պատիժը պայմանական չկիրառելու արդյունավետությունը:

Մնացած դեպքերում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասներն ազատվել են պատիժը կրելուց համաներման արդյունքում: Այս քաղաքականությունն իրականացվում է՝ ելնելով այն հանգամանքից, որ ազատազրկման ձևով պատիժը պատժի համակարգում ամենախիստն է: Անձնական իրավունքների սահմանափակումներն ու հասարակությունից մեկուսացվածությունն ավելի շուտ քայքայող ներգործություն են ունենում դատապարտյալի անձի վրա, քան նպաստում են անձի գիտակցական ուղղման գործընթացին³, ինչը հատկապես վերաբերում է անչափահասներին:

Համաձայն ՀՀ քր. օր-ի 85-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ, կամ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Իսկ 91-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների (այսուհետ՝ ԴԲՀՄ) կիրառմամբ: Սակայն դատական պրակտիկայի վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ ԴԲՀՄ- ները կիրառվում են հազվադեպ, (տե՛ս աղյուսակ 30)՝

³ Sté u Лапшин В.Ф, Ефремов Р.С. Исправление несовершеннолетних осужденных при применении наказания в виде лишения свободы: вопросы совершенствования // проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирования уголовно- исполнительской системы России. Сборник материалов международной научно-практической конференции, Вологда, 27 апреля 2012 г., էջ 158:

Աղյուսակ 30

տարի	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Միջին. ցուցանիշ
Խմբի կազմում հանցանք կատարած ԴԲՀՄ-ների ենթարկված անչափ. տեսակարար կշիռը	7.5%	1.1%	19.5%	7.5%	8.0%	4.5%	23.3%	14.5%	10.7%

Նշված ժամանակահատվածում, ըստ միջինացված ցուցանիշի, ԴԲՀՄ-եր կիրառվել են խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 10.7%-ի նկատմամբ: Կարծում ենք, որ անչափահասներին հանցավոր մշակույթից զերծ պահելու քաղաքականության համատեքստում առավել նախընտրելի են ԴԲՀՄ-ները, քանի որ վերջիններս չունեն պատժի տարրեր և չեն առաջացնում դատվածություն: Կարևորը պետության արձագանքն է հանցագործությանը, որը պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացումն է՝ պետական հարկադրանքի այս միջոցի կիրառմամբ:

Շատ հետազոտողների և պրակտիկ աշխատողների կարծիքով քրեական գործերի կարճամյա հարցի դրական լուծումը վճռորոշ նշանակություն ունի, քանի որ անչափահասի ուղղման համար հնարավորություն է ստեղծում՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների ներգործությամբ⁴: ԴԲՀՄ-ի էությունը անչափահասին որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու մեջ է, որն ունենում է նվազագույն հարկադրանքի բնույթ: ԴԲՀՄ-ների կիրառումը պետք է հիմնված լինի համալիր միջոցառումների վրա, որոնք ուղղված են անչափահասի դաստիարակմանը: Առաջին հերթին դրանք պետք է լինեն մանկավարժական միջոցներ, որոնք չեն պարունակի պատժի բնորոշ տարրեր:

ԴԲՀՄ-ների ոչ հաճախակի կիրառումը, կարծում ենք, պայմանավորված է նաև դրա տեսակների անկատարությամբ:

Կարծում ենք, որ այստեղ պետք է իրականացնել բարեփոխումներ, մասնավորապես՝

1. պետք է սահմանափակել ազատազրկման ձևով պատժի նշանակումն

⁴ Стé и Смелова С.В., Некрасова А.А. Принудительного меры воспитательного воздействия как средство предупреждения преступлений несовершеннолетних // проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирования уголовно- исполнительской системы России. Сборник материалов международной научно-практической конференции, Вологда, 27 апреля 2012 г., էջ 274:

առհասարակ անչափահասների նկատմամբ,

2. խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների նկատմամբ դրևորել տարբերակված մոտեցում՝ կախված հանցագործության տեսակից, քանակից, ծանրության աստիճանից, անձնային բնութագրից,

3. ուղղման և վերադաստիարակման գործընթացում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների նկատմամբ կիրառել առավել լայն հոգեբանական ներգործություն,

4. վերասոցիալականացման գործընթացում օրինապահ վարքագծի սոցիալական խրախուսումը, որը ենթադրում է միջնակարգ կրթության և մասնագիտության ձեռքբերում, հետազայում՝ պատժի կրումից հետո աշխատանքի տեղավորման նպատակով,

5. դատապարտյալի նկատմամբ ապահովել վերասոցիալականացումն ինչպես պատժի կրման ընթացքում, այնպես էլ պատիժը կրելուց հետո:

Վերթվարկյալներից առաջին կետի պահանջը պետք է իրականացվի՝ խթանելով ազատագրված հետ չկապված պատժատեսակները և հատկապես դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները: Ամեն անգամ դատարանը, ազատագրված ձևով պատժի վերաբերյալ դատավճիռ կայացնելով և կիրառելով ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի դրույթները, անչափահասների մոտ ստեղծում է վստահություն, որ ազատագրված ձևով պատիժ չեն կրի:

Կարծում ենք՝ ԴԲՀՄ-ի կիրառման խթանման համար այստեղ ճիշտ կլինի խոսել սկզբունքորեն նոր մոդելի՝ **հատուկ դաստիարակչական կենտրոնի** մասին: Այս նորարարությունը պետք է ուղղված լինի կանխելու անչափահասների «հանցավոր վարակվածության» գործընթացը: Անչափահասներն այստեղ կուղղորդվեն դատարանի որոշմամբ, որտեղ էլ յուրաքանչյուրի նկատմամբ կցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ հոգեբանամանկավարժական միջոցների ներգործությամբ: Այս կենտրոնի ստեղծումը կարևորում ենք, որովհետև դատարանը, կիրառելով ԴԲՀՄ, անչափահասի վարքագծի նկատմամբ հսկողությունը դնում է ծնողների և համապատասխան վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա: Կարծում ենք՝ դա այնքան էլ արդյունավետ չէ, քանի որ ծնողներն առանց այդ պարտավորության էլ անչափահասի վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնում են, եթե դա դրական լիներ, ապա անչափահասը չէր հայտնվի այդ կարգավիճակում: Իսկ այդպիսի կենտրոնում պետք է աշխատեն հատուկ

մասնագիտական պատրաստվածությունն ստացած մասնագետներ (մանկավարժներ, հոգեբաններ, իրավաբաններ, քրեաբաններ, սոցիալական աշխատողներ), պետք է լինեն հատուկ ծրագրեր՝ ուղղված անչափահասների դրական գործունեության ձևավորմանը և լիարժեք վերասոցիալականացմանը: Սա կապահովի նաև երկրորդ կետի պահանջը:

Երկրորդ կետն առանձնացրել ենք՝ ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետությունում անչափահասների քրեակատարողական հիմնարկը մեկն է, և խմբի կազմում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անչափահասները, անկախ հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից, պատիժը կրում են նույն քրեակատարողական հիմնարկում:

Երրորդ կետի համաձայն՝ հոգեբանամանկավարժական ներգործության ինտենսիվությունը պետք է պայմանավորված լինի հանցագործության տեսակով, քանակով, ծանրության աստիճանով, անձի սոցիալ-հոգեբանական ձևախեղման աստիճանով, դատվածության առկայությամբ: Այստեղ խնդիրը քրեակատարողական հաստատությունում իրական այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնց միջոցով ճիշտ ժամանակին և արդյունավետ կիրականացվի համապատասխան ներգործությունը: Ցավոք, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը չունի նման հնարավորություն, և կարծում ենք, որ դա պետք է իրականացվի դաստիարակչական կենտրոնի ստեղծմամբ և նրա գործունեության ընթացքում:

Չորրորդ կետի համաձայն՝ պետք է խթանել ուղղման գործընթացում կրթություն և մասնագիտություն ստանալու հնարավորությունը: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում որոշ չափով կրթական ծրագրեր իրականացվում են ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, սակայն պարտադիր տարրական գիտելիքների՝ հիմնականում հայոց լեզվի և մաթեմատիկայի շրջանակներում: Մեր կարծիքով, դա բավարար չէ, քանի որ պատիժը կրելուց հետո անձի համար հնարավորություն չի ստեղծում լիարժեք ինտեգրվելու հասարակությանը՝ կրթություն և մասնագիտություն ստանալու համար: Բացի այդ, մեր խնդիրը պետք է լինի դատապարտյալին առավելագույնս ներգրավելը արհեստ սովորելուն, մասնագիտություն ստանալուն, ինչպես նաև քրեակատարողական հիմնար-

կի հասարակական կյանքին մասնակցելուն: Վարքագծի կանոնների սահմանափակումներին հետևելը, կրթություն և մասնագիտություն ստանալու ձգտումը պետք է հիմք հանդիսանան դատապարտյալի նկատմամբ խրախուսական միջոցների կիրառման համար, օրինակ՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու և այլն:

Հինգերորդ կետի համաձայն՝ դատապարտյալի նկատմամբ վերասոցիալականացման գործընթացը պետք է իրականացնել դաստիարակչական աշխատանքների ընթացքում՝ շեշտադրումը դնելով անձին սոցիալ-մանկավարժական աջակցություն ցուցաբերելու վրա: Բնականաբար, մարդուն պարզապես հասարակությունից մեկուսացնելով կամ սահմանափակելով իրավունքները՝ կանխարգելման համատեքստում բավարար չէ դատապարտյալի ուղղման և վերադաստիարակման համար: Անհրաժեշտություն է առաջանում նաև հոգեբանամանկավարժական ներգործության՝ հաշվի առնելով անհատական բնութագրի առանձնահատկությունները, հնարավորինս արձագանքելու նրանց խնդիրների, կարիքների լուծմանը, նրանց ներգրավելու քրեակատարողական հիմնարկի առօրյային, որոնց արդյունքում էլ կարելի է հաջողության հասնել դատապարտյալի ուղղման գործընթացում:

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևյալին.

1. Անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկում ապահովել մասնագիտական պատրաստվածության պատշաճ որակ, խմբային պրոֆիլակտիկայի մարտավարության մշակում և կիրառում, խմբի անդամների միմյանցից մեկուսի՝ ազատագրվման ձևով պատժի կրման հնարավորություն:

2. Ազատագրվման ձևով պատիժը պետք է անչափահասի նկատմամբ նշանակվի ծայրահեղ դեպքում, երբ մնացած միջոցներով հնարավոր չէ անչափահասի ուղղումը:

3. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ դաստիարակչական կենտրոն, որտեղ յուրաքանչյուր անչափահասի նկատմամբ կցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ հոգեբանամանկավարժական միջոցների ներգործությամբ:

НЕКОТОРЫЕ УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ПРОТИВОДЕЙСТВИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Хачатрян Рипсима Мгеровна

*Старший преподаватель кафедры Уголовного
права и криминологии факультета правоведения
Академии Образовательного комплекса полиции РА,
подполковник полиции*

Статья посвящена исследованию некоторых вопросов противодействия групповой преступности несовершеннолетних.

В статье рассматриваются вопросы, связанные со стимулированием принудительных мер воспитательного характера, необходимостью создания специального воспитательного учреждения, а также с ресоциализацией несовершеннолетнего осужденного в процессе противодействия преступности несовершеннолетних (в том числе групповой преступности).

Ключевые слова: противодействие групповой преступности несовершеннолетних; несовершеннолетний, совершивший преступление в составе группы лиц; специальное воспитательное учреждение; средство принуждения воспитательного характера, наказание в виде лишения свободы.

SOME CRIMINAL-LEGAL AND CRIMINOLOGICAL ISSUES OF COMBATING GROUP CRIME OF MINORS

Khachatryan Hripsime

*Senior Lecturer at the Chair of Criminal Law and
Criminology, Police Academy of the Police Educational
Complex of RA, Police Lieutenant Colonel*

The article is devoted to the study of some issues of combating group crime of minors. The author discusses the issues related to the stimulation of compulsory measures of educational nature, the need of establishing a special educational institution, as well as the resocialization of minor convicts in the process of combating juvenile delinquency (including group crime).

Key words: combat of group crime of minors, minor who committed a crime as a part of a group, special educational institution, compulsory measure of educational nature, punishment in the form of imprisonment.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.02.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 03.02.2020թ.

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կարապետյան Էլյա

*Հայաստանի Հանրապետության ոստիկանության
Կրթահամալիրի Միջազգային համագործակցության
և ՏՏ ներդրման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության
ավագ լեյտենանտ, ասպիրանտ*

Հիմնվելով Երեխայի իրավունքների ժնկյան հռչակագրի վրա՝ «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ.) հռչակում է՝ «Երեխան (նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը) կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության՝ ներառյալ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»։ Երեխաների օրինական իրավունքների և շահերի քրեաիրավական պաշտպանությունը, հոգեբանական և բարոյական զարգացման ապահովումը երեխաների իրավական պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է¹։

Յուրաքանչյուր ժամանակակից հասարակության համար երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, նրանց ֆիզիկական և հոգեբանական զարգացման և հասարակության լիարժեք անդամ դառնալու համար սոցիալականացման ապահովումը հիմնական խնդիրներից է։

Չնայած երեխաների իրավական կարգավիճակի ամրապնդմանն ուղղված բազմաթիվ դրույթների ամրագրմանը իրավունքի տարբեր ճյուղերում և ՀՀ-ում առկա երեխաների պաշտպանությամբ ու իրավունքների ապահովմամբ զբաղվող ենթակառուցվածքների գոյությանը՝ մենք շարունակում ենք բախվել երեխաների իրավունքների խախտումների մասին վկայող բազմաթիվ փաստերի։ Բացակայում է իրապես մարդասիրական, համաչափ և կշռադատված մոտեցումը, որը կվկայի մեր հանրապետությունում երեխաների նկատմամբ լիարժեք հոգատարության, կյանքի և առողջության պաշտպա-

¹ Ст' у Бойко Т. К., Вопросы привлечения к уголовной ответственности лиц, вовлекающих несовершеннолетних в преступную и антиобщественную деятельность // Советник юриста. 2011. № 4. URL : <http://dis.ru/library/667/26642/>

նության, անձեռնմխելիության և այլ իրավունքների պաշտպանության մասին:²

Այս ենթատեքստում պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին երեխաների շահերի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը գնալով ավելանում են: Դա ակներև է ՀՀ քննչական կոմիտեի հրապարակած տվյալներում՝ ըստ որոնց 2018 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում քննվել է երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 317 քրեական գործ՝ նախորդ տարվա 265 քրեական գործի համեմատությամբ, աճը կազմում է շուրջ 20 տոկոս: Վարույթում գտնվող գործերով որպես տուժող ճանաչվել է 305 երեխա, որոնցից 157-ը՝ մինչև 12 տարեկան, 43-ը՝ 12-14 տարեկան, 69-ը՝ 14-16 տարեկան, 36-ը՝ 16-18 տարեկան: Տուժող ճանաչված 305 երեխաներից 66-ի նկատմամբ (տուժող երեխաների ընդհանուր թվի 21.6%) բռնությունն իրականացվել է ընտանիքի անդամի կողմից:³

Անհրաժեշտ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետությունում այս բնույթի գրանցված հանցագործությունների ցուցանիշները դեռևս չեն արտահայտում այդ հանցագործությունների իրական պատկերը, քանի որ այս հանցագործություններն ունեն լատենտայնության բարձր մակարդակ՝ պայմանավորված անչափահասի տարիքային, հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններով, ինչի արդյունքում նրանք կա՛մ չեն գիտակցում իրենց նկատմամբ կատարված գործողությունների հանցավոր բնույթը, կա՛մ իրենք իսկ շահագրգիռ են, որպեսզի չբացահայտվեն համապատասխան դեպքերը:⁴

² Տե՛ս Իսկանդարյան Ա.Ա., «Երեխաների իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքները ՀՀ-ում» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2014թ., էջ 3

³ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտե URL:

http://investigative.am/news/view/%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.html?fbclid=IwAR07616U40uJKm2wTPHw5EZyp15ovO9mMbPxfh4I_J6C_xDSqURb_ToXRvY, վերջին դիտում՝ 25.05.2019թ.

⁴ Տե՛ս Прокументов Л.М. «Некоторые проблемы уголовно-правового регулирования защиты прав несовершеннолетних», Вестник Томского государственного университета, Томск, 2011г., էջ. 100

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության քրեաիրավական հիմնահարցերը Հայաստանում ուսումնասիրված են որոշ հեղինակների աշխատություններում, սակայն այդ ուսումնասիրությունները հիմնականում ուղղված են երեխայի առանձին իրավունքների ուսումնասիրմանն ու լուսաբանմանը: Աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության համակարգում երեխաների շահերի պաշտպանությանն ուղղված ներկայիս քրեաիրավական քաղաքականության նպատակների և հիմնական ուղղությունների ներկայացումն է:

Ընդհանուր առմամբ երեխաների իրավունքների և շահերի մասին կարող ենք խոսել 2 իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության տակ հասկանում ենք երեխաների կյանքի ապահովման քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական միջոցառումների համալիր:⁵

Երեխաների շահերի պաշտպանությունն առաջին հերթին ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրության փոփոխություններով առաջին անգամ առանձին հոդվածով (հոդված 37) ամրագրվեց երեխայի իրավունքների պաշտպանությունը, իսկ 86-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկն է երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Երեխայի շահերի պաշտպանությանն ուղղված ՀՀ օրենդրության հիմքում ընկած են մի շարք միջազգային պայմանագրեր, որոնք են «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, Նվազագույն տարիքի մասին կոնվենցիան, Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոնները), Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշներն անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ), Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Հավանայի կանոնները), Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների

⁵ Гончарова С.В., Полунина Е.Н., «Уголовно-правовая защита прав и интересов несовершеннолетних», Вестник Волжского университета В.Н. Татищева N2, 2018, էջ 148

ուղենիշները (Վիենայի ուղենիշները), Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները, Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոնները) և ԵԽ նախարարների կոմիտեի հանձնարարականները:

Նեղ իմաստով՝ երեխաների շահերի պաշտպանության մասին խոսելիս գործ ունենք երեխաների իրավունքների և շահերի ոտնահարման դեպքում առաջացող իրավական մեխանիզմների հետ: Այդ իրավունքները պաշտպանվում են քրեական, վարչական, քաղաքացիական և ընտանեկան օրենսգրքերով:⁶

Մասնավորապես՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը ծնողական պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու, ծնողական իրավունքները չարաշահելու և մի շարք այլ դեպքերում նախատեսում է ծնողական իրավունքներից զրկում կամ ծնողական իրավունքների սահմանափակում: Ծնողների կողմից երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի, այդ թվում՝ երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելու դեպքում նախատեսվում է ծնողական իրավունքներից զրկում:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը ևս սահմանում է մի շարք դրույթներ, որոնք ուղղված են երեխաների շահերի պաշտպանությանը: Այսպես, այս օրենսգրքով անչափահասներին իրավախախտման մեջ ներառելը համարվում է պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք: Նույն օրենսգրքի 178-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ծնողների և նրանց փոխարինող անձանց կողմից երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չկատարելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում ներկայացված են ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները: Այս գլխում պատասխանատվություն է սահմանվում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար (հոդված 165), երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար (հոդված 166), երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող

⁶ Гончарова С.В., Полунина Е.Н., «Уголовно-правовая защита прав и интересов несовершеннолетних», Вестник Волжского университета В.Н. Татищева N2, 2018, էջ 148

նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելու կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար (հոդված 166.1), ծնողներից երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու համար (հոդված 167), խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի համար (հոդված 168), որդեգրման գաղտնիքը հրապարակելու կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելու կամ հարկադրելու համար (հոդված 169), երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու համար (հոդված 170), երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար (հոդված 171) և ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու համար (հոդված 173):⁷

Թվարկված շարքով երեխաների դեմ ուղղված հանցագործությունները ՀՀ քրեական օրենսգրքում չեն սահմանափակվում: ՔՕ այլ գլուխներում պատասխանատվություն է սահմանվում երեխաների շահերի դեմ ուղղված այնպիսի հանցագործությունների դեպքում՝ մոր կողմից նորածին երեխայի սպանությունը (հոդված 106), բռնաբարություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը (հոդվածներ 138 և 139), խոշտանգում (հոդված 119), մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով և վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը (հոդված 123, 124), անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը (հոդված 127), եվգենիկական փորձեր իրականացնելը (հոդված 127.1), մարդուն առևանգելը (հոդված 131), թրաֆիքինգ կամ շահագործումը (հոդված 132.2), շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը (հոդված 132.3), ազատությունից ապօրինի զրկելը (հոդված 133), պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (հոդված 262), թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործարկմանը հակելը կամ ներգրավելը (հոդված 272) և վարձկանությունը (հոդված 395):

Երեխաների շահերի քրեաիրավական պաշտպանությունն արտացոլված է ՀՀ մի շարք այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Անցկացված հետազոտությունների արդյունքում մշակվել է Հայաստանի Հանրապե-

⁷ ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 18.04.2003

տությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը և այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների ժամանակացույցը, որը կառավարության 2017թ. հուլիսի 13-ի նիստի արձանագրության քաղվածքով հավանության է արժանացել: Հիշյալ ռազմավարության շրջանակներում երեխաների քրեաիրավական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրներից են քրեադատավարական համակարգի՝ անչափահաս տուժողների նկատմամբ զգայուն մոտեցումների ձևավորման անհրաժեշտությունը, նրանց իրավունքների վերականգնման կառուցակարգերի ոչ արդյունավետ կիրառումը և օրենքին առնչվող երեխաների (տուժող, վկա, իրավախախտ) կարիքներին համապատասխան ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը: Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներն են.

ա) արդարադատության ոլորտում երեխաների հետ աշխատող մասնագետների և ծառայողների վերապատրաստումներ երեխայակենտրոն մոտեցումների զարգացման նպատակով, մասնագիտական ուղեցույցների, ձեռնարկների տպագրություն, առնվազն 3 վերապատրաստում, 5 ձեռնարկ և ուղեցույցներ,

բ) իրավախախտ, տուժող և վկա երեխաների կարիքների, դրանց ապահովման համար անհրաժեշտ ծառայությունների մատչելիության ուսումնասիրություն, ուսումնասիրության արդյունքում ստացված ծառայությունների հասանելիության շեմի բարձրացում՝ առնվազն 20% աճ:⁸

Անվիճելի է, որ երեխաների շահերի քրեաիրավական պաշտպանությունը վերոնշյալով չի սահմանափակվում:

Այսպիսով, երեխաների շահերի դեմ ուղղված նշված գործողությունների շարքը սահմանելով՝ պետությունը իրականացնում է երեխաների իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը: Սակայն հաշվի առնելով երեխաների դեմ կատարվող հանցագործությունների աճը՝ առաջարկվում է առավել մեծ ուշադրություն դարձնել ընտանիքի անդամի կողմից երեխայի նկատմամբ կատարվող բռնությանը, պարտականությունները չկատարելուն

⁸ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին եվ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 13 հուլիսի 2017 թվականի նիստի արձանագրությունից քաղվածք N 30

և սահմանել առավել խիստ պատասխանատվություն: Եվ ինչպես նշել է Ա.Ա.Ստրոկովը՝ երեխաների սուբյեկտիվ իրավունքի և շահերի պաշտպանության քրեաիրավական պաշտպանության երաշխիք է համարվում պետության կողմից նորմերի, սանկցիաների և պատասխանատվության սահմանումը:⁹

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ СРЕДСТВА ЗАЩИТЫ ИНТЕРЕСОВ ДЕТЕЙ В РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Карапетян Эля Грайровна

*Старший инспектор отдела международного
сотрудничества и внедрения информационных
технологий Образовательного комплекса полиции РА,
старший лейтенант полиции, аспирант*

Одной из основных задач современного общества является защита прав и интересов детей, обеспечение их социализации, физического и психического развития для последующего становления в качестве полноценных членов общества. Несмотря на закрепленные в разных разделах права множество положений, направленных на укрепление правового статуса детей и на имеющиеся в РА инфраструктуры, занимающиеся защитой детей и соблюдением их прав, мы продолжаем сталкиваться со множеством фактов, свидетельствующих о нарушениях прав детей.

В рамках данной работы представлены основные цели и направления современной уголовно-правовой политики, направленной на защиту интересов детей в системе государственной политики Республики Армения.

Ключевые слова: дети, несовершеннолетний, интересы, уголовно-правовая защита, ответственность.

⁹ Տե՛ս Տրոկով Ա. Ա. Преступления против несовершеннолетних. Характеристика зарубежного законодательства в вопросах совершения преступлений против несовершеннолетних по аналогии с главой 20 Уголовного кодекса Российской Федерации // Проблемы в российском законодательстве. 2008. № 2. էջ 204–205.

CRIMINAL-LEGAL MEANS OF CHILDREN'S INTERESTS PROTECTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Karapetyan Elya

*Senior Inspector of International Cooperation and IT
Division of the Police Educational Complex of RA,
Police Senior Lieutenant, PhD Student*

Protecting children's rights and interests, ensuring their physical and psychological development and socialization, in order to be full members of society, is one of the main tasks of each modern society. Despite the existence of many fixed provisions in different clauses of law, aimed at strengthening the legal status of children and infrastructures protecting and ensuring children's rights in the Republic of Armenia, we are currently facing a number of facts of children's rights infraction.

In the framework of this article it is presented the main goals and directions of modern Criminal Law policy aimed to protect the interests of children in the system of state policy of the Republic of Armenia.

Key words: children, minor, interests, criminal-legal protection, liability.

Հոդվածը գրախոսվել է՝ 05.02.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 07.02.2020թ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հակոբյան Սամվել

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
Ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի վճարովի
ուսուցման 3-րդ կուրսի սովորող*

Վարդանյան Անի

*ՀՀԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» ՊՈԱԿ,
Հոգեբանական փորձաքննությունների
բաժնի պետ*

Ընտանեկան բռնության¹ դեպքերով Հայաստանում հարուցված քրեական գործերի և դրանց հիման վրա նշանակված դատահոգեբանական փորձաքննությունների քանակական ցուցանիշների աճի, ինչպես նաև ընտանեկան բռնության՝ որպես բազմամասնագիտական ուսումնասիրման ենթակա երևույթի գիտական հետազոտությունների և դրանց արդյունքների կիրառման լայն հնարավորության պայմաններում ներկայումս խիստ արդիական են ինչպես բռնության՝ որպես առանձին հասկացության էության և առանձնահատկությունների, այնպես էլ ընտանիքում դրա դրսևորման ձևերի, հոգեբանական յուրահատկությունների և իրավական գնահատման չափանիշների մասնագիտական վերլուծությունը և ընտանեկան բռնության կանխարգելման համապատասխան միջոցների մշակումը և կիրառումը:

Գիտական հետազոտությունների շրջանակներում բռնությունն ուսումնասիրելի է բազմաթիվ ասպեկտներով, այդ թվում նաև՝ որպես անձի հանցավոր վարքի նշան: Իրավագիտության մեջ բռնությունն առավելապես բնութագրվում է որպես դիտավորյալ ֆիզիկական ներգործություն՝ ուղղված մեկ այլ անձի, վերջինիս կամքին հակառակ՝ նպատակ ունենալով մարդու առողջությանը կամ անձնական կյանքին հասցնել վնաս:² Իրավագետների մեկ այլ խմբի կարծիքով բռնությունը որոշակի արտոնություններ, տնտեսական կամ քաղաքական իշխանություն ձեռք բերելու կամ պահպանելու համար որոշակի դասի կամ սոցիալական խմբի կողմից հարկադրանքի տարբեր ձևերի կիրառումն է:

¹Սույն հոդվածում «ընտանեկան բռնություն» և «ընտանիքում բռնություն» հասկացությունները կիրառվում են որպես հոմանիշներ:

² Насилие, по определению Всемирной Организации Здравоохранения

Կան նաև բազմաթիվ այլ ձևակերպումներ՝ «տուժողի նկատմամբ ֆիզիկական ուժ կիրառելը»³, «ցանկացած ազդեցություն տուժողի մարմնական անձեռնմխելիության վրա»⁴, «իրական կամ հավանական ֆիզիկական վնասի պատճառումն է, որի ներքո հասկացվում է մարդու անատոմիաֆիզիոլոգիական ամբողջականության խախտումը»:⁵

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում անդրադարձել է հանցավոր բռնության սահմանմանը:⁶ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Հետևաբար, եթե արարքը փաստացի չի առաջացրել նշված հետևանքները և այդպիսիք պատճառելու դիտավորությամբ չի բնութագրվում, ապա իր նվազ կարևորության պատճառով չի կարող հանցագործություն համարվել: Ընտանեկան բռնության մեկնաբանություն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դեռ չի տրվել:

Գիտական գրականության մեջ բռնությունը դիտարկելի է լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով դրա մեկնաբանությունը ենթադրում է, որ բոլոր հանցագործությունները կատարվում են տուժողի կամքին հակառակ, որի հիմքում էլ ընկած է բռնությունը: Նեղ իմաստով բռնությունը մեկնաբանվում է որպես ֆիզիկական ներգործության տարրեր կամ դրա սպառնալիք: Ինչպես երևում է, բռնությունը հաճախ ասոցացվում է ֆիզիկական ներգործության հետ, սակայն տուժողի հոգեվիճակի վրա ազդում է ոչ միայն ֆիզիկական ներգործությունը, այլ նաև շատ այլ հանգամանքներ, որոնք այս կամ այլ կերպ հակասում կամ առնվազն չեն համապատասխանում տուժողի կամքին, օրինակ՝ պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը, տարրեր բնագավառներում ազատության սահմանափակումը, աշխատանքային բարի համբավը պախարակելը: Ուշագրավ է, որ «բռնություն» եզրույթը շատ հաճախ

³Տե՛ս, Советское уголовное право. Особенная часть. М., 1962. էջ 206:

⁴Տե՛ս, Пионтовский А.А., Меньшагин В.Д. Курс советского уголовного права. Особенная часть. М., 1995. Т. 1. էջ 722:

⁵Տե՛ս, Старков О.В. Бытовые насильственные преступления (причинность, групповая профилактика, наказание). Рязань, 1992. էջ 34:

⁶2012 թ. նոյեմբերի 1-ի թիվ ԱԴԴ/0176/01/11 որոշում:

փոխարինվում է «ագրեսիա» բառով: Չնայած այս եզրույթներն ունեն նման իմաստաբանական բովանդակություն, սակայն դրանք բոլորովին նույնական չեն:⁷

«Ագրեսիա» եզրույթը սովորաբար օգտագործվում է հարձակողական և կործանարար գործողություններ նկարագրելու նպատակով, իսկ բռնությունը կարող է դրսևորվել ակտիվ (որոշակի գործողությամբ. օրինակ՝ ծեծ) և պասիվ (անգործությամբ. օրինակ՝ անօգնական վիճակում թողնելը, չինամելը) ագրեսիայի տեսքով:⁸

Ըստ բնույթի՝ բռնությունը բաժանվում է 2 խմբի.

- բացահայտ
- թաքնված,

ինչը ենթադրում է տարբեր եղանակներով քողարկված բռնություն:

Հատկանշական է, որ ՀՀ-ում ընտանեկան բռնությունն առավելապես թաքնված բնույթ է կրում, և ընդունված բարքերի ու արժեքների պայմաններում չի խրախուսվում բարձրաձայնել բռնության՝ նույնիսկ պարբերաբար կրկնվող դրսևորումների մասին, ինչի արդյունքում հասարակության կողմից ընդունված չլինելուց և նույն հասարակության կողմից հավանական բացասական վերաբերմունքի արժանանալուց խուսափելու միտումով պայմանավորված՝ մարդիկ փորձում են իրենց խնդիրը սեփական տան պատերից դուրս չներկայացնել, որն էլ հանգեցնում է ոչ միայն խնդրի չլուծման հետևանքով հուզական կուտակվածությանը և ընտանիքի մյուս անդամների վրա բացասական ազդեցությանը, այլև հաճախ հիմք է հանդիսանում այլ հանցագործությունների, ինչպես օրինակ՝ ինքնասպանության հասցնելու, սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու:

Ժամանակակից հոգեբանության մեջ ընտանեկան բռնության շրջանակներում «բռնություն» եզրույթը ներառում է ցանկացած գործողություն, որի հիմնական նպատակն է վերահսկել զուգընկերոջ վարքը, թելադրել նրան սեփական կամքը՝ առանց հաշվի առնելու նրա շահերը, ցանկությունները, զգացմունքները և այլն: Հոգեբանական բռնության հիմնական ձևերն են.

1) մեկուսացումը (տեղեկատվական սահմանափակում. Տեղեկատվության զրկում կամ դրա նկատմամբ խիստ վերահսկողություն),

⁷Խրիստենկո, 2004:

⁸Малкина-Пых И. Г. Психология поведения жертвы 1.3 Насилие: виды и формы: ПИТЕР, 2017. – 126-130с

2) վարկաբեկումը (սեփական հասկացողության և կարծիքի, իրավունքի զրկում, ծաղր և ոչ կառուցողական քննադատություն),

3) բնական կարիքների բավարարման վերահսկողությունը (սննդի, քնի, հանգստի և այլն), ինչը հանգեցնում է տուժողի ֆիզիկական սպառմանը,

4) մշտական սպառնալիքները՝ պատճառաբանությամբ կամ առանց պատճառաբանության՝ հեշտությամբ վերածելով ֆիզիկական բռնության:⁹

Ներկայումս ընտանեկան բռնությունը ՀՀ-ում և ամբողջ աշխարհում համարվում է գերխնդիր, որի լուծման նպատակով մշակվում են տարբեր մեթոդներ: Օրենսդրական դաշտում ընտանեկան բռնությունը կարգավորվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով, որի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ընտանիքում բռնություն է համարվում նույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Ընտանիքում բռնության տեսակներն են՝

1) ֆիզիկական բռնություն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.

2) սեռական բռնություն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.

3) հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը.

4) տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը.

5) անտեսում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի

⁹Ю.Иванюшкина Психологическое насилие: Как привлечь агрессора? Что такое домашнее насилие? [онлайн] – old.ostanovinasilie.org. Доступ через Интернет: <http://old.ostanovinasilie.org/>

կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմաններ չստեղծելը (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն):

Հատկանշական է, որ ընտանեկան բռնությունն անմիջականորեն փոխկապակցված է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցագործությունների հետ: Օրինակ՝ 104-րդ հոդվածով (սպանությունը), 109-րդ հոդվածով (անզգուշությամբ մահ պատճառելը), 110-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 118-րդ հոդվածով (ծեծը), 119-րդ հոդվածով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 131-րդ հոդվածով (մարդուն առևանգելը), 139-րդ հոդվածով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), 167-րդ հոդվածով (ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը) և շատ հաճախ ընտանեկան բռնության փաստը բացահայտվում է վերոնշյալ որևէ հանցագործության կատարումից հետո միայն: Նման մոտեցումն արդարացված չէ, քանի որ ընտանեկան բռնության ոչ բոլոր դրսևորումներն են քրեորեն պատժելի, ինչը հանգեցնում է օրենսդրորեն ամրագրված ձևակերպման թերի լինելուն:

Ավելին, ՀՀ քրեական օրենսգիրքն ընտանեկան բռնության վերաբերյալ որևէ ձևակերպում չի նախատեսում, այն դեպքում, երբ վերջին տարիներին ընտանեկան բռնության վերաբերյալ հատուկ հոդվածներ են ներառվել Վիետնամի, Հոնդուրասի, Դոմինիկյան Հանրապետության, Հնդկաստանի, Իսպանիայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Կոլումբիայի, Մեքսիկայի, Պանամայի, Պարագվայի, Սերբիայի Հանրապետության, Սալվադորի, Սան-Մարինոյի, Սլովակիայի, ԱՄՆ-ի, Ուրուգվայի քրեական օրենսգրքերում¹⁰:

Մեր հասարակությունում հաճախ ընտանեկան բռնության գոհը կինն է, բռնացողը՝ տղամարդը, որոշ դեպքերում կնոջ նկատմամբ բռնացողի դերում հանդես են գալիս նաև ամուսնու կամ իր ազգականները: Առհասարակ, ընտանեկան բռնության դրսևորումներն առավելապես պայմանավորված են սովյալ ազգին, համայնքին, սոցիալական և էթնիկ խմբին բնորոշ արժեհամա-

¹⁰St'e'u, Додонов В.Н., Капинус. О.С., Щерба С.П. Сравнительное уголовное право. Особенная часть: Монография. М., 2010, էջ 190:

կարգով, վարքուբարքով, չգրված նորմերով, կրոնական դավանանքով, ընտանեկան դերերի խրախուսվող մոդելներով և այլ սոցիալ-մշակութային առանձնահատկություններով: Ըստ էության, ընտանեկան բռնության շարունակական բնույթը կապված է նաև հասարակության ցածր իրավագիտակցության հետ, և վերոնշյալ խնդիրը նպաստում է ընտանեկան բռնության դեպքերի պրոգրեսիվ աճին:

Ընտանեկան բռնության շրջանակներում քննարկելի են նաև երեխաների նկատմամբ ծնողների կողմից կատարվող բռնության դեպքերը, որոնք նույնպես սակավաթիվ չեն, ընդ որում, դիտարկելի են ոչ միայն բռնության անմիջական զոհ հանդիսանալու, այլև ընտանեկան բռնության երկրորդական զոհ լինելու դեպքերը, ինչը նշանակում է, որ երեխաները, ականատես լինելով ծնողների վիճաբանությանը, վերջիններիս կողմից գործադրվող ֆիզիկական և հոգեբանական բռնությանը, դառնում են բռնության ոչ անմիջական զոհ:¹¹

Հաշվի առնելով ՀՀ սոցիալ-մշակութային բարքերը, ընտանեկան բռնության շրջանակներում տուժողի հոգեբանական փոփոխությունների, բռնարարի հետ սիմբիոտիկ կապի մեջ գտնվելու, նրա նկատմամբ տաժած իրարամերձ զգացողությունների պայմաններում վերջինիս հետհուզական կապվածության դրսևորումների առկայությունը, այս ոլորտում բազմաոլորտ մասնագետների ոչ բավարար գիտելիքները, հաճախ սուբյեկտիվ, կենցաղային պատկերացումներով սահմանափակվող գործելառճը և հանրության անվստահությունն իրավապահ համակարգի նկատմամբ՝ ակնհայտ է, որ այս ոլորտում իրավապահ մարմինների պրոֆեսիոնալիզմի պակասը թողնում է իր բացասական հետևանքները, որի արդյունքում բռնարարների անպատժելիությունը հանդիսանում է ընտանեկան բռնությանը խթանիչ գործոն: Վերջին տարիներին նկատվել է վստահության բարձրացում իրավապահ համակարգի նկատմամբ և ոստիկանների, քննիչների իրազեկվածության էական բարձրացում, սակայն դա դեռ բավարար չէ ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար, քանի որ սոցիալական, հոգեբանական, աջակցման և ռեաբիլիտացիոն ոլորտներում դեռ շատ են բացերն ու խնդիրները, ինչը պարտավորեցնում է առաջնային ուշադրություն դարձնել հոգեբանների, սոցիալական աշխատողների և այլ մասնագետների վրա

¹¹Еникиолопов С.Н, Чудова Н.В.:агрессивность и имплицитная теория насилия// Прикладная юридическая психология. – N2.- 2017. – 18-26.

և կազմակերպել նրանց պատրաստումն ու վերապատրաստումը:

Այսպիսով, վերլուծելով ընտանեկան բռնության հիմնական դրույթները՝ կարող ենք ասել, որ այն բազմաշերտ և գլոբալ հիմնախնդիր է, ուստի ընտանեկան բռնության դեպքերը նվազեցնելու և բռնության գոհ դարձած անձանց արդյունավետ աջակցություն ցուցաբերելու նպատակով հարկավոր է տվյալ խնդրին առնչվող տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ իրականացնել համապատասխան մասնագիտական վերապատրաստումներ՝ զարգացնելով բռնության, դրա առանձնահատկությունների, ընտանիքում դրա դրսևորման ձևերի և թաքնված կողմերի բացահայտման ցուցանիշների վերաբերյալ իրազեկվածությունը և ձևավորելով աշխատանքային արդյունավետ հմտություններ, իսկ հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման շրջանակներում իրենց իրավունքների և պարտականությունների մասին ծանուցել նաև երեխաներին (դպրոցական համապատասխան ծրագրերի և ծնողների հետ իրականացված համապատասխան ծնողավարման դասընթացների միջոցով), ամուսնացող զույգերին ՔԿԱԳ մարմնում ամուսնության փաստը վկայող փաստաթուղթն ստորագրելուց հետո, և իհարկե, լիարժեք կիրառել բռնության համար օրենքով սահմանված պատասխանատվությունը՝ կանխելով անպատժելիության հետևանքով դրանց տարածման և որպես բնականոն երևույթ ընդունելու և սերնդեսերունդ փոխանցելու տենդենցը:

НЕКОТОРЫЕ ЮРИДИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОЦЕНИВАНИЯ СЕМЕЙНОГО НАСИЛИЯ

Акопян Самвел Ваграмович

*Студент 3 курса юридического
факультета Образовательного
комплекса полиции Республики
Армения*

Варданян Ани Робертовна

*Руководитель отдела
психологических экспертиз
«Национальное Бюро Экспертиз»
НАН РА*

Учитывая рост числа уголовных дел, возбужденных по делам семейного насилия в Республике Армения, назначенных на их основе судебно-психологических экспертиз, тот факт, что семейное насилие выступает в качестве явления, подлежащего научному междисциплинарному изучению, а также широкие возможности применения на практике результатов подобных исследований, в статье рассматривается сущность самого явления «насилие», формы его проявления в

семье, психологические особенности и юридические оценочные стандарты.

Ключевые слова: семейное насилие, судебно-психиатрические экспертизы, физическое насилие, пострадавший, угрозы, насильник.

SOME LEGAL AND PSYCHOLOGICAL ASPECTS OF DOMESTIC VIOLENCE EVALUATION

Hakobyan Samvel

*Third Year Student at the Faculty of
Law, Police Education Complex of RA*

Vardanyan Ani

*Head of the Department of
Psychological Examinations,
«National Bureau of Expertise» SNPO*

Considering the criminal cases initiated in the Republic of Armenia on domestic violence and the increase in forensic psychology expertises based on them, as well as taking into account the wide range of scientific research on domestic violence, the article presents the essence of “violence”, its forms of expression in the family, the psychological characteristics and the criteria for legal evaluation.

Key words: domestic violence, forensic psychological examination, physical violence, injured, threats, violent.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.09.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 12.09.2019թ.

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ (ՄՐՅԱԿՑԱՅԻՆ) ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղազարյան Արտակ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի քրեական դատավարության
ամբիոնի ավագ դասախոս*

Կասկած չի հարուցում, որ քրեական դատավարությունը, ժամանակատարածքային (պատմա-աշխարհագրական) իրողություններով պայմանավորված, կարող է ունենալ տարբեր կառուցվածք:

Դեռ ավելին՝ միննույն ժամանակաշրջանում և միննույն աշխարհագրական տարածքում էլ քրեական դատավարության կազմակերպումը հնարավոր է իրականացնել տարատեսակ եղանակներով:

Արդյունքում, պատմահամեմատախիրավական հարթությունում գծագրվում է քրեական դատավարության կազմակերպման մի «խայտաբղետ» պատկեր, և ինչպես իրավագիտորեն նշում են Մոսկվայի պետական համալսարանի գիտնականները. «Քրեադատավարագիտությունը չէր կարող հավակնել գիտություն կոչվելու իրավունքին, եթե չփորձեր հաղթահարել այս պատմական և համեմատախիրավական բազմազանությունը՝ առաջարկելով քրեական դատավարության որոշակի վերացական «ձևեր» կամ «մոդելներ», որոնք հանդիսանում են կոնկրետ քրեական դատավարության համակարգերի էմպիրիկ հետազոտությունների վերջնարդյունք, եթե որոշակի չափանիշների հիման վրա չիրականացներ այդ «ձևերի» և «մոդելների» հետագա դասակարգում և վերջապես՝ եթե չտար դրանց առավելագույն ընդհանրացումը «իդեալական տիպերի» կամ արքետիպերի հարթությունում»¹:

Հենց այս հանգամանքն է պայմանավորում քրեական դատավարության կազմակերպման մոդելների (տիպերի) վերաբերյալ արդեն մի քանի հարյուրամյակ չնվազող գիտական հետաքրքրությունը:

Սկսած 18-րդ հարյուրամյակի կեսերից՝ եվրոպական իրավաբանական

¹ См. у Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки, - 2-е изд., испр. -М.: Статут, 2017, էջեր 125-126:

միտքը ձեռնամուխ է լինում քրեական դատավարության մոդելների (տիպերի) ուսումնասիրությանը, դրանցից ամեն մեկի թեր և դեմ կողմերի բացահայտմանը, և այն հարցի քննարկմանը, թե որ տիպի դատավարությունը կարող է հանդիսանալ գործերը քննելու և լուծելու առավել արդյունավետ միջոց, որով և հնարավոր կլինեն ապահովել հանրային շահը՝ միաժամանակ չանտեսելով վարույթի մասնակիցների մասնավոր շահերը²:

Այս առնչությամբ հիշատակման է արժանի ռուս գիտնական Վ.Լուկյանովի՝ դեռևս 1861թ. արված դիտարկումը. ««Մեղադրական սկիզբ» և «մեղադրական դատավարություն», «քննչական սկիզբ» և «քննչական դատավարություն», - ահա այս տերմիններն ու հասկացություններն են, որոնք անցյալ հարյուրամյակի կեսերից դարձան գիտության և պրակտիկայի խորագին հետազոտման առարկա և ծնեցին հսկայական գրականություն, որի ներկայացուցիչներն էին Եվրոպայի լավագույն մտածողները»³: Եվ չնայած հարցի վերաբերյալ չնվազող հետաքրքրությանը՝⁴ մինչ օրս քրեական դատավարության գիտության մեջ չկա ձևավորված մեկ միասնական կարծիք՝ ո՛չ դատավարության ամեն մի մոդելի բովանդակության, ո՛չ այդ մոդելը կազմող էական հատկանիշների վերաբերյալ, ոչ էլ ձևավորված է քրեական դատավարության տարատեսակ մոդելները (տիպերը) բնորոշող միասնական տերմինաբանություն:

Կ. Միտերմայերը, դատավարության մոդելների և դրանց յուրաքանչյու-

² Այս առիթով գերմանացի հայտնի իրավաբան Կ.Միտերմայերն արձանագրում էր, որ 18-րդ հարյուրամյակի կեսերից շատ սուր բանավեճեր էին ծագում այն մասին, թե ո՞ր սկիզբն է՝ մեղադրական, թե հետախուզական (քննչական), որը պետք է ընկած լինի քրեական դատավարության հիմքում, տե՛ս **Миттермайер К.Ю.А.**, Законодательство и юридическая практика в новейшем их развитии в отношении к уголовному судопроизводству / пер. В. Бартенева. СПб.: Типография Правительств.Сената, 1864, էջ 215:

³ Վ.Լուկյանովից մեջբերումն ըստ **Васильева Е.Г.**, Уголовный процесс: догматико-аксиологическое исследование: монография. М.: Юрлитинформ, 2013, էջեր 167-168:

⁴ Տե՛ս նաև **Немировский Э.Я.** Отношение приговора к обвинению. Одесса, 1906., **Чельцов-Бебутов М.А.** Курс уголовно-процессуального права: очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах. Т. 1. М., 1957, **Смирнов А.В.** Модели уголовного процесса. - СПб.: «Наука» ООО Издательство "Альфа", 2000, **Васильева Е.Г.** նշվ.աշխ., **Печегин Д.А.** Сочетание состязательного и следственного начал при производстве дел в международном уголовном суде, дис. ...канд. юрид.наук, Москва, 2016, **Хачина Э. Э.** Эволюция форм судебного процесса в московском государстве в конце XV - первой половине XVII вв. дисс. ...канд. юрид.наук, Курск, 2018.

րի հատկանիշների առանձնացման վերաբերյալ գիտական վեճին անդրադառնալով, նշում էր. «...շատ հեղինակներ, ովքեր այս բանավեճին մասնակից են եղել, հստակ չէին պատկերացնում՝ որն է հանդիսանում մեղադրական, որը հետախուզական դատավարություն: Նրանք այս կամ այն դատավարության հատկանիշների կամ հայտնի պայմանների մասին պատկերացում էին կազմում սեփական քմահաճությամբ... նույնիսկ տեղյակ չէին, թե ինչ կերպ է կազմակերպված դատարանը այն պետություններում (օրինակ՝ Անգլիայում), որտեղ այսպես կոչված մեղադրական սկիզբն է գործում...շատերը սխալմամբ կարծում էին, որ ֆրանսիական դատավարությունը հիմնված է մեղադրական սկզբի վրա...խառնում էին ընդհանուր գերմանական դատավարությունը՝ նույնացնելով այն հետախուզական դատավարության հետ»⁵:

Պետք է նկատել, որ դատավարության այս կամ այն մոդելին վերագրվող հատկանիշների մասին տարակարծությունները չեն վերացել մինչ օրս⁶, այդ

⁵ Տե՛ս **Миттермайер К.Ю.А.**, նշվ. աշխ., էջեր 215-217, 220:

⁶ Օրինակ՝ ճմարտության բացահայտումը Ա.Վ.Սմիռնովը համարում է մրցակցային դատավարության տարատեսակի՝ հանրային-հայցային դատավարության նպատակ: Նա նշում է. «Եթե մեր առջև մրցակցային դատավարություն է, որը հետապնդում է օբյեկտիվ ճմարտության բացահայտման նպատակ և միննույն ժամանակ մեղադրյալին համարում է անմեղ, բոլոր կասկածները մեկնաբանում հոգուտ նրա, իսկ ապացուցման պարտականությունը դնում է մեղադրողի վրա, կարճ ասած՝ պաշտպանությանը օժտում է առավելություններով, դա անխոս գործերի քննության հանրային-հայցային կարգ է» (տե՛ս **Смирнов А.В.**, նշվ. աշխ., էջ 44): Իսկ մեկ այլ դատավարագետ՝ Ա.Պ.Բլինկովը, իր հոդվածներից մեկում մրցակցային դատավարության դեմ խոսելիս փաստացիորեն արձանագրում է մրցակցային դատավարությունում ճմարտության բացահայտման նպատակի բացակայությունը. «Հասարակությունն ունի այնպիսի քրեական դատավարության կարիք, որն օբյեկտիվ ճմարտություն է դավանում և այդպիսով նախադրյալներ է ստեղծում ոչ թե «անհատական արդարության», այլ համընդհանուր և համընդգրկուն արդարության համար: Քրեական դատավարության այդպիսի իդեալական մոդել է հանդիսանում օբյեկտիվ ճմարտության դատավարությունը (հեղինակը դատավարության այս մոդելը հակադրում է մրցակցային դատավարության մոդելին՝ Ա.Ղ.)... Իրական օբյեկտիվ և իրական արդար չի կարող լինել այն քրեական դատավարությունը, որը ներքուստ ինքն իր մեջ պարփակված է, որը գործի էությունը հանգեցնում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի ուժերի ստուգելուն՝ դուրս չգալով մրցակցային դատավարական ձևի սահմաններից...Պետությունն ու հասարակությունը կարիք ունեն ոչ թե դատական պայքարի երկարացման գեղեցիկ ձևական գործիքների, այլ՝ օբյեկտիվ ճմարտության բացահայտման արդյունավետ միջոցների և օրինական արդարադատ որոշման արձանագրման (տե՛ս Блинков А.П., Состязательный и объективно-истинный типы уголовного процесса в свете нового подхода к типологии уголовного судопроизводства Юридическая наука Вестник Нижегородской академии МВД России № 1 (41), 2018, էջեր 223-228):

պատճառով էլ տարբեր հեղինակների մոտ դատավարության նույն մոդելը տարատեսակ պատկեր է ստանում:

Սույն հոդվածում մենք, վերլուծելով իրավաբանական գրականության մեջ առկա կարծիքների բազմազանությունը մեղադրական (մրցակցային) դատավարության վերաբերյալ, կառանձնացնենք գիտական տեսակետների երկու ընդհանուր ուղղություն, տեսություն՝ բացահայտելով դրանցից յուրաքանչյուրում մրցակցային դատավարության մեկը մյուսից տարբերվող, բոլորովին այլ պատկերները, առանձնացնելով այն էական չափանիշները, որոնցով այդ երկու տեսությունները տարբերվում են միմյանցից:

Եվ ահա մեր առջև հիմնական հարցերը՝ ո՞րն է մեղադրական (մրցակցային) դատավարության էությունը, ի՞նչ կերպ է այն կազմակերպվում և ի՞նչ հատկանիշներ ունի:

Հարցին, թե ինչ է հարկավոր մրցակցության համար, առաջին հերթին կարող ենք պատասխանել, որ անհրաժեշտ է կողմերի առկայություն: Կողմերի, որոնք ունեն հակադիր շահեր: Շահերի հակադրությունն իր հերթին առաջացնում է վեճ վերջիններիս միջև: Արդյո՞ք վիճող կողմերը «բավարար են» մեղադրական (մրցակցային) դատավարության առկայությունը հավաստելու համար, այլ կերպ՝ արդյո՞ք վիճող կողմերի առկայությունը հանդիսանում է մեղադրական (մրցակցային) դատավարության ինքնաբավ տարր:

Հարցին պետք է տալ բացասական պատասխան: Կողմերի միջև վեճն այդպես էլ կմնար վեճ՝ չվերաճելով դատավարության, եթե չլիներ մի երրորդ մարմին՝ դատարանը: Այլ կերպ ասած՝ եթե ընդհանրապես մրցակցության (տնտեսական, ռազմական և այլն) համար բավարար են վիճող (պայքարող, մրցակցող) կողմեր, ապա դատավարության մեղադրական (մրցակցային) տիպի կազմակերպման համար երկու վիճող կողմի առկայությունը բավարար չէ, այստեղ անհրաժեշտ է երրորդի՝ վեճը լուծողի առկայությունը՝ դատարանի առկայությունը:

Տեղին է այստեղ հիշատակել մինչհեղափոխական ցիվիլիստ Վ.Մ.Գորդոնի հետևյալ խոսքերը. «Մինչև երկու կողմի հարաբերությունների մեջ չմտնի երրորդը՝ դատարանը, կլինի վեճը, բայց չի լինի դատավարություն. դատարանի մասնակցությունը նույնքան անհրաժեշտ է, որքան անհրաժեշտ է վիճող կողմերից յուրաքանչյուրի մասնակցությունը: Անկարելի է սկսել դատավարություն ինքդ քեզ հետ: Անկարելի է սկսել դատավարություն առանց

դատարանին դիմելու»:⁷

Բայց արդյո՞ք դատարանի և վիճող կողմերի առկայությունն ինքնին բավարար են մեղադրական (մրցակցային) դատավարության կազմակերպման (գոյության) համար: Այստեղ պետք է նկատել, որ նշված երկու տարրերը թեև մեղադրական (մրցակցային) դատավարության հիմնաքարերն են, այնուամենայնիվ, դատավարությունը չի լինի մրցակցային, եթե չլինի դրա մյուս կարևորագույն տարրը՝ կողմերի հավասարությունը: Եթե չլինի կողմերի հավասարություն, կլինի անհավասար կամ որ նույն է՝ ոչ մրցակցային վեճ, ինչը իրականում կհիմաստազրկի դատավարության էությունը՝ վեճի արդար լուծումը: Կողմերի հավասարությունն իր հերթին ապահովվում է ոչ միայն կողմերի իրավահավասարությամբ, այլ նաև՝ դատարանի՝ որևէ կողմում

⁷ Տե՛ս **Гордон В.М.** Понятие процесса в науке гражданского судопроизводства. (Вступительная лекция). Ярославль, 1901, էջ 9: Այստեղից էլ՝ մաքուր մրցակցային (հայցային) դատավարության բացասական «վերաբերմունքը» մինչդատական գործունեությունն իբրև դատավարական դիտարկելու հարցի վերաբերյալ:

1919 թ. դատավարագետ Ն.Ն Պոլանսկին նշում էր, որ «քրեական դատավարություն» ընդհանուր անվան տակ, բացի դատական վարույթից նաև քրեական հայց նախապատրաստող հետաքննությունը և դատավճռի կատարման փուլը ներառելը, պայմանավորված է ոչ թե տեսական կամ սկզբունքային նկատառումներով, այլ միայն ձևավորված ավանդույթներին տեղ տալու ուժով: (Տե՛ս **Полянский Н.Н.**, Цель уголовного процесса. Ярославль, 1919, էջեր. 21, 29,31): Արդեն մեր օրերում Լ.Վ. Գոլովկոն քննարկվող հարցի մասին խոսելիս նշում է. «...Քրեական դատավարության անգլո-սաքսոնական դոկտրինը նախնական քննությանը վերաբերվում է այնպես, ինչպես դրան վերաբերվում է քաղաքացիական դատավարության մայրցամաքային դոկտրինը՝ նրանում տեսնելով մինչդատավարական գործունեություն, որը շատ քչերին է հետաքրքրում մինչև հայց ներկայացնելը»: (Տե՛ս Головки И.В., Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. - М.: Правоведение, 2009, էջ 327): Զարգացնելով այս միտքը՝ Ե.Գ. Վասիլևան հերքում է մեղադրական-մրցակցային դատավարության մոդելներում (հեղինակի տերմինաբանությամբ՝ հայցային դատավարության մոդելում՝ Ա.Դ.) քրեական հայցին նախորդող մինչդատական գործունեության դատավարական նշանակությունը՝ նշելով, որ այդպիսի մինչդատական գործունեությունը մեղադրական-մրցակցային դատավարությունում կարող է լինել միայն ոչ դատավարական (քրեական հայցի նախապատրաստում), իսկ բոլոր այն դեպքերում, երբ մինչդատական վարույթում իրականացվող գործունեությանը տրվի դատավարական նշանակություն, ապա այն արդեն կլինի ոչ թե մեղադրական-մրցակցային, այլ ինկվիզիցիոն-հետախուզական (հեղինակի տերմինաբանությամբ՝ որոնողական): (Տե՛ս **Васильева Е.Г.** նշվ. աշխ., էջ 304-305):

չգտնվելու պայմանով⁸:

Խմբավորելով վերը նկարագրված հիմնադրույթները՝ կստանանք մի պատկեր՝ անաչառ ու անկախ դատարանի առջև վիճող հավասար կողմերի պատկերը:

Այստեղից էլ ծնվում է դատավարագիտության մեջ մեծագույն բազմակարծությունների աղիթ հանդիսացած հարցերից մեկը. արդյո՞ք այս հատակնիշները (կողմերի առկայությունը, նրանց հավասարությունը և անկախ դատարանի առանձնացվածությունը կողմերից) մեծ հաշվով «բավարար են» դատավարությունը մրցակցային կոչելու համար:

Դատավարագիտությունն այս հարցին տալիս է բազմազան պատասխաններ, որոնք կարող ենք խմբավորել երկու հիմնական տեսությունների մեջ:

Տեսություն, որը բավարար է համարում հավասար կողմերի առկայությունը և դատարանի՝ նրանցից տարանջատված լինելը դատավարությունը մեղադրական (մրցակցային) կոչելու համար (այն մենք պայմանականորեն կանվանենք «**մեղադրական (մրցակցային) ձևի տեսություն**»): Եվ տեսություն, որը քրեական հետապնդման, պաշտպանության և գործի լուծման ֆունկցիաների ֆորմալ տարանջատումից, կողմերի իրավահավասարությունից բացի դատավարությունը մեղադրական (մրցակցային) դիտարկելու համար նաև դատավարության մեղադրական (մրցակցային) սկիզբի վրա հիմնված լինելու հատկանիշն է առանձնացնում (այս տեսությանն էլ կտանք «**մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման տեսություն**» պայմանական անվանումը):

⁸ Ի.Ֆոյնիցկին այս առնչությամբ նշում էր. «Կախված այն հանգամանքից, թե այդ գործառույթները (հեղինակը նկատի ունի մեղադրելու գործառույթը-Ա.Դ.) դրվում են այն անձանց վրա, որոնք հանդիսանում էին դատարանի մարմիններ, թե դրա համար (մեղադրական ֆունկցիա իրականացնելու համար-Ա.Դ.) ստեղծվում են հատուկ մարմիններ, որոնք դատարանից անկախ են և նրանից անջատ, հանրային դատավարության երկու տեսակ է ստացվում՝ հետախուզական տեսակը և մրցակցային դատավարության տեսակը» (տե՛ս **Фойницкий И. Я** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.Петербург, типография товарищества "Общественная польза", 1912, էջ 69):

Դատարանի՝ կողմերից անջատ լինելու հանգամանքը մեղադրական և ինկվիզիցիոն դատավարության տարբերակիչ հիմնական հատկանիշներ էր համարում նաև ավստրիացի նշանավոր դատավարագետ Շ.Գլազերը (տե՛ս **Глазер Ю.** Глазер Ю. Руководство по уголовному процессу, Т.1 (пер. А. Лихачева). СПб, 1884, էջ 26):

Հարկ է ընդգծել, սակայն, որ դրանք երկուսն էլ ակնհայտ և անհերքելի են դիտարկում մրցակցային դատավարության համար վերը քննարկված հատկանիշների առկայությունը:

«Մեղադրական (մրցակցային) ձևի» տեսություն

«Մեղադրական (մրցակցային) ձևի» տեսությունը (Կ.Բիրկմեյեր⁹, Ի.Յա.-Ֆոյնիցկի¹⁰, Է.Յա.Նեմիրովսկի¹¹, Ա.Յա. Վիշինսկի¹², Մ.Ս. Ստրոգովիչ¹³, Ա.Վ.Սմիրնով¹⁴, Կ.Բ. Գալինովսկի¹⁵ և այլք) հիմնված է ֆունկցիաների ֆորմալ բաժանման վրա: Տեսության հիմնական էությունն այն է, որ մեղադրական (մրցակցային) է համարվում այն դատավարությունը, որտեղ գոյություն ունի հավասար կողմերի և անկախ, անաչառ դատարանի ու նրանց կողմից իրականացվող գործառնությունների ֆորմալ բաժանում: Այլ կերպ՝ նշված հանգամանքներն ինքնաբավ են դատավարությունը մրցակցային անվանակոչելու համար:

Սակայն, ընդունելով մեղադրական (մրցակցային) դատավարության հիմնական, ինքնաբավ այս հատկանիշները, որոշ հեղինակներ այս տեսության շրջանակներում կարևորում են ճշմարտության բացահայտման ու դատարանի ակտիվության գաղափարները և կողմերի՝ դատավարության ընթացքը տնօրինելու սահմանափակվածությունը: Կարծում ենք՝ նպատակահարմար է ներկայացնել նաև այս տեսության առավել «մասնավոր բնույթի» այդ հայացքները:

«Մեղադրական (մրցակցային) ձևի» տեսության կողմնակիցներն ընդունում են այն փաստը, որ մրցակցային քրեական դատավարության կազմակերպման համար անհրաժեշտ են ինչպես հավասար կողմեր, այնպես էլ անաչառ դատարան, և որ անկարելի է դրանց ֆունկցիաների միախառնումը:

Կողմերի և դատարանի տարբեր գործառնություններ իրականացնելու հանգամանքից բխեցվում է այն, որ առանց մեղադրանքի (առանց մեղադրանքի

⁹ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ., էջ 310:

¹⁰ Տե՛ս **Фойницкий И. Я.** նշվ.աշխ.:

¹¹ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ.:

¹² Տե՛ս **Вышинский А.Я.**, К положению на фронте правовой теории, 1937, рус.՝ **Строгович М.С.** Природа советского уголовного процесса и принцип состязательности. М.: Юрид. изд-во НКЮ СССР, 1939 էջեր 109-110:

¹³ Տե՛ս **Строгович М.С.**, նույն տեղում:

¹⁴ Տե՛ս **Смирнов А.В.**, նշվ.աշխ.:

¹⁵ Տե՛ս **Калиновский К.Б.**, Законность и типы уголовного процесса: Дис. ... канд. юрид. наук: СПб., 1999

կողմից քրեական հայց ներկայացնելու) դատարանը չի կարող սեփական նախաձեռնությամբ սկսել քրեական վարույթ (հակառակ դեպքում դատարանն ինքը հանդես կգար իբրև մեղադրող՝ դատավարությունը վերածելով ինկվիզիցոնի): Գործում է դատավարության հայտնի՝ «nemo iudex sine actore» կանոնը:

Մակայն նշված կանոնն այս տեսության շրջանակներում ստանում է բացասական և ոչ թե դրական նրբերանգ, այստեղ դրանով ընդգծվում է դատարանի սեփական նախաձեռնությամբ դատավարությունն սկսելու **անհնարինությունը և ոչ թե կողմերի՝ դատավարության առարկան տնօրինելու իրավասությունը**:

Այս տեսության ներկայացուցիչ որոշ հեղինակներ (Ուիլման, Կրիգ, Բելինգ, Բիրկմեյեր, Նեմիրովսկի¹⁶), մեկ քայլ առաջ կատարելով, նշում են, որ *հանցավոր արարքից ծնված նյութական հարաբերության յուրահատուկ բնույթն իր հետքն է թողնում նաև քրեական դատավարության, վերջինիս յուրահատուկ կազմակերպման վրա*: Այսպես՝ ըստ Նեմիրովսկու քրեաիրավական հարաբերությունների յուրահատուկ բնույթից է բխում «դրա իրականացման անհրաժեշտությունը, քրեական հետապնդման պաշտոնական բնույթը (Offizialprinzip), որն անկախ է մասնավոր անձանց կամայականությունից»: Հեղինակը նշում է նաև, որ նյութական քրեաիրավական հարաբերության բնույթը պահանջում է դրա «իրացման անհրաժեշտությունը հենց այն չափով, ինչ չափով այն առաջացել է պետության համար»: «Պետք է ճանաչվի հենց այն քրեական պահանջախնդրությունը, որը հիմնավորված է հանցավոր արարքով՝ ո՛չ ավել, ո՛չ պակաս (Immutabili tatsprinzip): Դրա համար էլ, իհարկե, արարքը պետք է որոշվի իր իսկական տեսքով (նյութական ճմարտության սզկբունք)»¹⁷:

Այսպիսով, վերոհիշյալ գիտնականները *քրեական դատավարության առարկա* են դիտարկում *ոչ թե ներկայացված մեղադրանքը (քրեական հայցը)*, այլ քրեական հայցի հիմք հանդիսացած *պատմական արարքը*¹⁸, հետևաբար,

¹⁶ Նշված հեղինակների տեսակետները տե՛ս Немировский Э.Я. նշվ.աշխ., էջ 310:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸ Այս տեսության կողմնակիցներից ոմանք, օրինակ՝ Նեմիրովսկին, դատավարության առարկա է դիտարկում հանցավոր արարքի արդյունքում հանցագործի և պետության միջև առաջացած քրեաիրավական հարաբերությունը, տե՛ս Немировский Э.Я. նշվ.աշխ., էջ. 316:

և մրցակցային քրեական դատավարության նպատակն է դառնում բացահայտել այդ արարքն¹⁹ իր բոլոր կողմերով՝ կողմերի և դատարանի ֆորմալ տարանջատված լինելու պայմաններում:

Այսինքն՝ վերոգրյալից բխեցվում է դատավարության՝ նյութական ճշմարտության բացահայտման նպատակը (սկզբունքը), (որի բացահայտման պարտականությունն էլ իր հերթին կրում է դատարանը):

Արարքի օբյեկտիվ ուսումնասիրության (նյութական ճշմարտության բացահայտման) անհրաժեշտությունից էլ իր հերթին բխեցվում է արդեն սկսված դատավարության (երբ արդեն ներկայացվել է քրական հայց) *հետագա ընթացքի տնօրինումը կողմերի հայեցողությունից դուրս լինելու գաղափարը*:

Տեղին է այս առումով հիշել դատավարագետ Նեմիրովսկու արած այն դիտարկումը, որ մեղադրական սկիզբը նպատակ ունի, մինչ մեղադրողի կողմից մեղադրանքի ներկայացմամբ արտաքին ազդակ ստանալը դատարանին արգելել սեփական գործունեություն սկսելը: «...բայց վերջինս նպատակ ունի միայն սահմանափակել կատարվածի հայտնի շրջանակը, որի վերաբերյալ տարածվում է քրեական վարույթը: Մեղադրական դատավարության մասին ցիվիլիստիկական տեսակետը, քաղաքացիական իրավունքի անալոգիաները և կողմերի առաջարկություններից դատավորի կախվածությունը կիրառելի չեն քրեական դատավարությունում, որը ձգտում է նյութական ճշմարտությանը»²⁰:

¹⁹ Այստեղ տեղին է 1893թ Կորնֆելդի արած այն դիտարկումը, որ «Քրեական դատավարությունում հետազոտվում է հենց հանցավոր արարքի փաստերի ճշմարտացիությունը, որի հետ կապված են իրավական հետևանքները, մինչդեռ քաղաքացիական դատավարությունում հետազոտվում են կողմերի՝ փաստերի մասին արված հայտարարությունների ճշմարտացիությունը» (տե՛ս **Kornfeld**, Civilprozessuale Grundsätze, 1893, էջ 19, մեջբերումն ըստ **Васьковский Е.В.** Курс гражданского процесса: Субъекты и объекты процесса, процессуальные отношения и действия. (Классика гражданского процесса)- М.: Статут, 2016, էջ 357):

²⁰ Պետք է նկատել, որ Նեմիրովսկին ամբողջովին չի բացառում մեղադրողի կողմից դատավարության ընթացքի տնօրինումը (հեղինակի տերմինաբանությամբ դատախազի նյութական դիսպոզիտիվություն ունենալու հանգամանքը), աշխատանքի հաջորդ էջերում առավել մանրամասնելով իր տվյալ միտքը՝ նա նշում է, որ դատախազը կարող է տնօրինել դատավարության ընթացքին նախաքննությունը դադարեցնելու, դատարանում մեղադրանքից հրաժարվելու եղանակով: Մակայն միևնույն ժամանակ հեղինակը նշում է, որ չանելով դա, չօգտվելով այդ լիազորությունից՝ դատախազն արդեն իրավունք չի ունենա դատարանին սահմանափակել դատավարության առարկայի հետազոտման գործում (տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ., էջ 316): Այս նույն հարցի վերաբերյալ մեկնաբանելով 1864թ. քրեական դատավարության կանոնադրության նախատեսված կառուցակարգերը՝

Սրանից ելնելով էլ գիտության մեջ սկսվում է միմյանից տարանջատվել դատավարության կազմակերպման մեղադրական (մրցակցային) **ձևը** (կողմերի և դատարանի ֆորմալ բաժանվածությունը, կողմերի հավասարությունը և ամեն մեկի առանձին գործառույթ կատարելը) և մեղադրական (մրցակցային) **սկզբունքը (սկիզբը)** (դատավարության առարկան և ընթացքը տնօրինելու կողմերի իրավասությունը)։ վերլուծվող տեսությանը հարող գիտնականների կարծիքով դրանցից միայն առաջինն է կարող քրեական դատավարությունում գործարկվել (Քոեստլին²¹, Կ.Բիրկմեյեր²²)։

Ա. Տաուբերը, կիսելով Գոգելի տեսակետը, նկատում է. «Թեև դատախազը կարող է հրաժարվել մեղադրանքից (տե՛ս Կանոնադրության 740-րդ հոդված), սակայն այդպիսի հրաժարումը դատարանին չի տալիս գործի վարույթը կարճելու իրավունք և չի ազատում վերջինիս մեղադրական ակտի մեջ ձևակերպված մեղադրանքը դատավճռով լուծելու պարտականությունից, թեկուզն այն չի պաշտպանվում դատախազի կողմից» (տե՛ս **Тайбер Л.Я.** Иск, обвинение и состязательное начало (процессуальные параллели). // Вестник гражданского права. № 2, Петроград, 1917. էջեր 77-78)։

Իր մեկ այլ հոդվածում Տաուբերը, քննարկելով դատախազի կողմից դատարանում մեղադրանքը մեղմացման առումով փոփոխելուց հետո դատարանի՝ ցարական կանոնադրությամբ նախատեսված այն լիազորությունը, որով վերջինիս չի զրկվում ներկայացված սկզբնական մեղադրանքով (ավելի ծանրով) գործը լուծելու հնարավորությունից, նկատում է, որ այդպիսի կարգավորումը ինքին շեղում էր մրցակցային սկզբից (տե՛ս **Тайбер Л.Я.** Иск, обвинение и состязательное начало (процессуальные параллели). // Вестник гражданского права. № 1. Петроград, 1917, էջ 99-100)։

²¹ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ., էջ 311։

²² 1884թ. հրատարակված իր հոդվածում Կ.Բիրկմեյերը նշում է, որ մրցակցային ձևը պետք է տարբերվի մրցակցային (դիսպոզիտիվ) սկզբունքից (տե՛ս **Немировский Э.Я.**, նույն տեղում), իսկ արդեն 1898թ. արձանագրում է, որ «քրեական դատավարությանը բնութագրական է մրցակցային ձևը (Anklageform, nicht Anklageprinzip), այն դեպքում, երբ սովորաբար քաղաքացիական դատավարությունում գերիշխում է ոչ միայն մրցակցային ձևը (Verhandlungsform), այլ նաև մրցակցային սկիզբը (Verhandlungsmaxime) (Տե՛ս **Birkmeyer K.** Das deutsche Strafprozessrecht. Berlin, 1898, էջեր 134-138 մեջբերումն ըստ **Тайбер Л.Я.** Иск, обвинение и состязательное начало (процессуальные параллели). // Вестник гражданского права. № 2. Петроград, 1917, էջ 88). (Բեկինգը, օրինակ, մեղադրական (մրցակցային) ձևը նշելու համար օգտագործում է մեղադրական մրցակցային ձևի սկզբունք (Anklageformprinzip) եզրույթը, այն տարանջատելով մեղադրական (մրցակցային) սկզբունքից, որի տակ վերջինս հասկանում էր մասնավոր անձի կողմից դատավարության առարկան տնօրինելու իրավունքը (տե՛ս **Немировский Э.Я.**, նույն տեղում)։

Պետք է նկատել, որ քննարկվող եզրույթները, ինչպես իրավաբանական շատ այլ եզրույթներ, գրականության մեջ միասնական ընկալում չեն ստացել։ Այսպես, Ե.Վասկովսկին քաղաքացիական դատավարության իր հայտնի «կուրսում» խոսելով

Եվ քանի որ այս մոտեցմամբ մեղադրական (մրցակցային) է դիտարկվում այն քրեական դատավարությունը, որտեղ հավասար կողմերն ու դատարանը տարանջատված են, իրականացնում են տարբեր գործառնություններ (առկա է մեղադրական (մրցակցային) **ձևը**), սակայն միաժամանակ այն նաև դատավարություն է, որտեղ գործում է նյութական ճշմարտության սկզբունքը՝ ճշմարտությունը բացահայտել պարտադրելով նաև **դատարանին**²³, ինքնաբերաբար որոշ հեղինակների կողմից բխեցվում է **դատարանի ակտիվ դերը**՝ սեփական նախաձեռնությամբ ապացույց հավաքելու և այդպիսով ճշմարտության բացահայտմանը, անկախ կողմերի տրամադրած ապացուցողական նյութից, հասնելու լիազորությունը²⁴:

Հենց վերն ասվածի լույսի ներքո պետք է հասկանալ Ի.Ֆոյնիցկու²⁵ այն տեսակետը՝ ըստ որի. «... դատավարության մրցակցայնությունը դատարանին չի զրկում օբյեկտիվ, իրական կամ նյութական ճշմարտությանը համապատասխանող պատասխան տալու իրավունքից և պարտականությունից, այն ամեննին չի պահանջում, որ դատարանը բավարարվի ձևական ճշմարտությամբ այնպես, ինչպես դա հասկանում և հաստատում են կողմերը:

մրցակցային սկզբի կամ մրցակցային սկզբունքի (Verhandlungsmaxime) մասին, այն փաստացի նույնացնում է ոչ թե կողմերի դատավարության առարկան տնօրինելու, այլ միայն նախանշելու համար վերջիններիս, ապացույցների հավաքման և ներկայացման գործընթացը՝ փաստական նյութի տնօրինման իրավունքը (տե՛ս **Васьковский Е.В.** նշվ. աշխ., էջ 355):

²³ Ականավոր գերմանացի գիտնական Հ. Ջաքարյանն այս առումով, սակայն նշում է. «...քրեական օրենքի կիրառման ժամանակ դատարանը չպետք է կաշկանդված լինի կողմերի առաջարկով և այդ ոլորտում կարող է գնալ նաև ultra petita partium, նրանց պահանջներից այն կողմ, և քրեական հայցի շրջանակներում դատարանին պետք է վերապահվի մի գործունեություն իրականացնելու լիազորություն, որը կանխորոշված է քրեական դատավարության նպատակով և գերագույն սկզբունքով: Այդ գերագույն սկզբունքը նյութական ճշմարտությունն է, իսկ նպատակը՝ գործի լուծումն իրավաբանական կերպով և իրավաբանական ձևում» (մեջբերումն ըստ **Немировский Э.Я.** նշվ. աշխ., էջ 310):

²⁴ Օրինակ՝ Բ.Վ. Պոպովն այս առնչությամբ արձանագրում էր, որ դատարանը ոչ թե նոտարական գրասենյակ է, որ կողմերի գործարքները ձևակերպի, այլ նյութական ճշմարտություն հետախուզող է (մեջբերումն ըստ **Тайбер Л.Я.** Иск, обвинение и состязательное начало (процессуальные параллели). // Вестник гражданского права. № 2. Петроград, 1917, էջ 83):

²⁵ Վերջինս մրցակցային դատավարության էական հատկանիշներ էր համարում դատարանից անկախ իրավահավասար կողմերի առկայությունը, որոնք ունեն գործին մասնակցելու իրավունք, ինչպես նաև դատարանի՝ կողմերի գործառնություններից ազատ լինելը:

Քրեական դատարանը կարող է և նույնիսկ պարտավոր է իր ենթակայության տակ գտնվող բոլոր միջոցները գործադրել իր համար գործն ամբողջությամբ պարզաբանելու համար: Դատավարությունում քրեական դատարանի դերը ամեննին պասիվ չէ. նա իր նախաձեռնությամբ իրավասու է կանչել գործի համար անհրաժեշտ վկաներին և պահանջել ստանալ այլ ապացույցներ...»²⁶:

Այսպիսով, մեղադրական (մրցակցային) դատավարությունն այս տեսության դիտանկյունից ուրվագծվում է իբրև կողմերի և դատարանի ֆորմալ բաժանվածության հիման վրա կառուցվող դատավարություն: Հավասար կողմեր, անաչառ դատարան և վերջիններիս գործառույթների ֆորմալ բաժանում. սա՛ է մրցակցային դատավարության կազմակերպման հիմնական ուղենիշը, գերգաղափարը²⁷: Քննարկվող տեսության մեջ ընդգծվում է դատարանի սեփական նախաձեռնությամբ վարույթ սկսելու արգելքը (կիսախտվի գործառույթների ֆորմալ բաժանումը), սակայն այն ամեննին էլ չի բացառում արդեն սկսված դատավարությունում դատարանի ակտիվությունը, սեփական նախաձեռնությամբ ապացույց հավաքելը, ընդհակառակը, այս տեսության որոշ ներկայացուցիչներ դատարանի ակտիվությունը նույնիսկ դիտարկում են իբրև մրցակցային դատավարության էական հատկանիշ, որը պայմանավորված է նյութական ճշմարտությունը բացահայտելու և, ըստ այդմ, քրեական օրենքի ճիշտ կիրառումը (ըստ որոշ հեղինակների նաև՝ կողմերի փաստացի հավասարությունը) ապահովելու պահանջով: Հետևաբար և, մրցակցային դատավարության հանդեպ նման հայացքը խիստ սահմանափակում է (կամ որոշ հեղինակների կողմից՝ ընդհանրապես բացառում է) դատավարության առարկան և ընթացքը տնօրինելու կողմերի հետագա հայեցողությունը.²⁸

²⁶ Տե՛ս **Фойницкий И. Я.** նշվ. աշխ., էջ 72:

²⁷ Գրեթե նույնական մոտեցումն է ցուցաբերում Ա. Սմիրնովը՝ դատավարության մոդելներին նվիրված հայտնի աշխատանքում նշելով. «...Երեք հատկանիշ՝ կողմերի առկայությունը, նրանց դատավարական հավասարությունը և կողմերից առանձնացված դատարանի անկախությունը, ինքնաբավ են մրցակցության համար: Եթե այս հատկանիշները միավորված են մեր առջև, անկասկած դատավարության մրցակցային մոդելն է» (տե՛ս **Смирнов А. В.**, նշվ. աշխ., էջ 19):

²⁸ Թեև մեր կողմից փորձ արվեց մեղադրական (մրցակցային) դատավարության այս տեսության էությունը բացահայտվել առավելապես 19-րդ և 20-րդ դարերում գործած գիտական հայացքների հիման վրա, այնուամենայնիվ, դա ամեննին չի վկայում նշված տեսության հնացած, ոչ արդիական լինելու մասին: Մեր ժամանակներում էլ լույս են տեսնում բազմաթիվ հրապարակումներ, որոնց հեղինակներին կարելի է դասել այս

«Մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսություն

Քննարկվող տեսության շրջանակներում գիտնականների կողմից նույնպես ընդունվում և ընդգծվում էր այն հանգամանքը, որ մեղադրական (մրցակցային) քրեական դատավարությունը պետք է կառուցվի հավասար կողմերի և դատարանի ֆորմալ տարանջատված լինելու գաղափարի հիման վրա, և որ նրանցից յուրաքանչյուրը պետք է կատարի իր գործառույթը: Եվ եթե նշված տարրերը «մեղադրական (մրցակցային) ձևի» տեսության դատավարության հիմքն էին կազմում, ապա այս տեսության շրջանակներում դրանք հիմքից վեր են ածվում մեղադրական (մրցակցային) դատավարությունը կառուցելու **պարտադիր պայմանի**:

Հենց այս պատճառով նշված տեսության կողմնակիցներն ընդգծում էին, որ դատավարության կողմերի և դատարանի միմյանցից տարանջատված լինելը և տարբեր գործառույթներ իրականացնելը (մեղադրական (մրցակցային) **ձևի** առկայությունը) դեռևս դատավարությունը չի դարձնում մեղադրական (մրցակցային): Մեղադրական (մրցակցային) **ձևին** զուգահեռ՝ հեղինակների համոզմամբ պետք է դատավարությունը կառուցվի և ամբողջովին ներծծված լինի մեղադրական (մրցակցային) **սկզբունքով (սկիզբով)** (Anklageprinzip): Եվ միայն մեղադրական (մրցակցային) **ձևի** և մեղադրական (մրցակցային) **սկիզբի** միահյուսման արդյունքում կարող է կազմակերպվել (պատկերվել) մեղադրական (մրցակցային) դատավարություն. դրանցից մեկի բացակայությունը կվկայի մեղադրական (մրցակցային) դատավարության բացակայության մասին:

Ներկայացվող այս հայացքների շրջանակներում *բոլորովին այլ ընկալում է ստանում* «nemo iudex sine actore» կանոնը: Ի տարբերություն «մեղադրական (մրցակցային) ձևի» տեսության՝ այս տեսության շրջանակներում նշված կանոնն սկսում է ընկալվել *ոչ միայն բացասական* (դատարանի կողմից իր նախաձեռնությամբ քրեական դատավարություն չսկսելու), *այլև որոշակիորեն այլ իմաստով*:

Նշված տեսության շրջանակներում ուրվագծվում էր հետևյալը պատկերը, քանի որ քրեական դատավարությունը դատարանի առջև հավասար կողմերի միջև վեճ է, հետևաբար և՛ կողմերից էլ պետք է կախվածության մեջ

դրվի այդ վեճի ընթացքը: Այստեղից էլ բխեցվում է մրցակցային դատավարությունում *կողմերի՝ վեճի, հետևաբար և՛ դատավարության ընթացքի տնօրինման իրավասությունը*:

Եվ եթե ներկայացված առաջին տեսության շրջանակներում դատարանը «*nemo iudex sine actore*» կանոնի շրջանակներում չէր կարող սեփական նախաձեռնությամբ սկսել քրեական դատավարությունը, բայց երբ արդեն «արտաքին ազդակը» կար (ներկայացված էր քրեական հայցը մեղադրողի կողմից), ելնելով նյութական ճշմարտության սկզբունքից, վերջինս ազատ էր իր գործունեության մեջ (փաստացի վերաճելով դատավարությունը տնօրինողի), ապա արդեն քննարկվող տեսության շրջանակներում *սահմանափակվում է քրեական հայց ներկայացնելուց հետո դատարանի այդ ազատությունը՝ գործի ընթացքի տնօրինումը կախվածության մեջ դնելով կողմերից*:

Այս առնչությամբ գերմանացի իրավաբան Շտեյնզը նշում էր, որ, մեղադրական սկզբունքին համապատասխան, մեղադրողն ու մեղադրյալը պետք է լինեն «վեճի օբյեկտի տնօրինողը»: «Ամբաստանյալին իրական առավելություն տվող հետևողականորեն կենսագործված մեղադրական սկզբունքի համաձայն՝ դատարանն իրավասու չէ ինքնուրույն սահմանել ոչ միայն կոնկրետ արարքը, որի համար ամբաստանյալը պետք է պատասխանատվության ներգրավվի, այլ նաև այդ արարքի մի մասը՝ ինչպես օրինականության, այնպես էլ կոնկրետ (փաստական -Ա.Ղ.) տեսանկյունից, որ պետք է հանդիսանա դատավարության օբյեկտ և դատավճռի առարկա»²⁹:

Այս մոտեցմամբ քրեական դատավարության առարկան կատարված պատմական արարքից (փաստական արարքից)՝ տեղափոխվում է դեպի ներկայացված քրեական հայց:

Ընդ որում՝ «*nemo iudex sine actore*» կանոնից բխեցվում է, որ դատավարության մեղադրանքի կողմն է նախ որոշում՝ *հայց ներկայացնել, թե՛ ոչ, և երկրորդ՝ ինչ ձևակերպմամբ ներկայացնել հայցը՝ կանխորոշելով դատավարության առարկան*:

Այս առնչությամբ դատավարագետ Ե.Վասիլևան նկատում է. «Քրեական հայցը պահանջ է, որում այն դատարան ներկայացնելու պահին մեղադրող-հայցվորը մատնանշում է, թե *ինչ և ինչի հիման վրա է նա* պահանջում: Նախ-

²⁹ **Stelling** - Ueber anklage besserung. Gottingen, 1866, էջեր 120, 121, 126, 127, մեջբերումն ըստ **Немировский Э.Я.** նշվ.աշխ. էջ 289:

նական տեսքով հայցի կազմումն ամբողջությամբ թողնված է հայցվորի լիակատար տնօրինությանը, և քրեաիրավական վեճի ձևակերպումը կախված է միայն նրանից, *թե նա ինչ կերպ է այն պատկերացնում*»³⁰ (վերջին ընդգծումներն իմն են՝ Ա.Ղ.):

Եվ քանի որ քրեական հայցը կառուցվածքային առումով կազմված է երեք տարրից՝ փաստական հիմքից, իրավաբանական հիմքից ու պահանջից³¹, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի ձևակերպումն ընկնում է մեղադրողի վրա՝ դրանց շրջանակներով դատավարության առարկան սահմանափակելով³²:

Նման մոտեցման շրջանակներում արդեն դատարանի խնդիրն է լինում պարզել *ոչ թե կատարված արարքի լինել-չլինելու*, այլ՝ ներկայացված *քրեական հայցի հիմնավոր լինել-չլինելու հարցը*:

Ընդ որում՝ դատավարության առարկայի տնօրինումը կողմերին վերապահելու հանգամանքից՝ նշված տեսության շրջանակներում բխեցվում է մի կարևորագույն դրույթ, որն էլ ավելի է սահմանափակում դատարանի ինքնագործունեության հնարավորությունը, *այն է՝ դատարանը չպետք է դուրս գա կողմի ներկայացված պահանջից (Ne eat iudex ultra petita partium)*: Սա իր հերթին նշանակում է, որ դատարանը նման մոտեցման պայմաններում չպետք է որոշում կայացնելիս «բավարարի» այլ, մեղադրող-հայցվորի պահանջից տարբերվող ուրիշ այլ բան (ներառյալ՝ պահանջից ավելին), քանի որ այդ պարագայում հայցի առթիվ կայացվում է մի որոշում, որ հայցվորի պահանջում չկա, **իսկ դա կնշանակի չներկայացրած հայցի առթիվ որոշման կայացում**³³:

³⁰ Տե՛ս **Васильева Е.Г.**, նշվ.աշխ., էջ 311:

³¹ Քրեական հայցի փաստական, իրավաբանական հիմքերի և պահանջի կետի մասին առավել մանրամասն տե՛ս **Васильева Е.Г.**, նշվ.աշխ., էջ 312:

³² Դատավարագիտության մեջ այս հարցում միասնականություն չկա նույնիսկ այն հեղինակների շրջանում, ում կարելի է դասել «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության կողմնակիցների շարքում: Օրինակ՝ Տաուբերը այս առումով նկատում էր, որ «մեղադրական սկիզբը» չի կարող սահմանափակել դատարանի կողմից փաստերին տրվող սեփական քրեաիրավական գնահատականը (որակումը), ինչը հեղինակը պայմանավորում էր մեկ այլ հայտնի՝ «*jura novit curia*» կանոնով: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Таубер Л.Я.** Иск, обвинение и состязательное начало (процессуальные параллели). // Вестник гражданского права. № 1. Петроград, 1917, էջ 92-97:

³³ Տե՛ս **Гольмстен А.Х.** Юридические исследования и статьи. СПб.: Типография М.М. Стасюлевича, 1894, էջ 421, **Таубер Л.Я.** նշվ. աշխ., էջ 89:

Այս առումով Վ.Սլուչնսկին քրեական դատավարության իր դասագրքում արձանագրում է, որ մեղադրական ձևի դատավարության սկզբունքներից ելնելով՝ դատավճիռը չի կարող դուրս գալ այն մեղադրանքի սահմաններից, որով մեղադրյալը դատի էր տրվել: Հեղինակը նաև նշում էր, որ «մաքուր» մեղադրական դատավարության կազմակերպման դեպքում, երբ անձին մեղադրանք ներկայացվել է, օրինակ, կողոպուտի համար, դատարանը, կողմերի մրցակցային գործունեությամբ ապացույցները գնահատելով, չի կարող կայացնել այս մեղադրանքից դուրս այլ հանցագործությամբ մեղադրական դատավճիռ (օրինակ՝ գողության մեղադրական դատավճիռ) և պետք է կայացնի կամ մեղադրական, կամ արդարացման դատավճիռ՝ ներկայացված կողոպուտի մեղադրանքով³⁴:

Բացի այդ, դատավարության առարկան տնօրինելու «լիազորություն-իրավասությունն» ունի ոչ միայն մեղադրանքի, այլ նաև պաշտպանության

³⁴ См. у **Случевский В.** Учебник русского уголовного процесса. Судоустройство - судопроизводство (издание 4-е, дополненное и исправленное). - С.-Петербург, типография М. М. Стасюлевича, 1913, էջ 495: Մեղադրական (մրցակցային) դատավարության հիման վրա կառուցված հին անգլիական դատավարության մասին խոսելով՝ Ի. Ֆոյնիցկին իր հերթին արձանագրում է. «Քանի որ քրեական դատարանի քննության առարկան քրեական հայցն է և ոչ թե մեղավորությունն ընդհանրապես (ինչպես մայրցամաքում է), քրեական դատարանը, բնականաբար, պետք է կայացնի արդարացման դատավճիռ, եթե հայցային պահանջը (indictement) ինչ-ինչ պատճառով չի բավարարվում՝ անկախ նույնիսկ մեղադրյալի ակնհայտ մեղավորությունից» (տե՛ս **Фойницкий И.Я.** Оправдательные решения присяжных заседателей и меры к их сокращению. СПб., 1879. էջեր 16, 17, մեջբերումն ըստ **Васильева Е.Г.** նշվ.աշխ., էջ 314: Համանման ուղենիշային մոտեցում էր որդեգրվել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում (ինչը, սակայն, չպահպանվեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում)՝ համաձայն որի «դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը և ապացուցվածությունը: Եթե դատարանում ապացույցների հետազոտման արդյունքում դրանք չեն հաստատվում, ապա (անկախ իրական մեղադրանքի ավելի խիստ կամ ավելի մեղմ լինելու փաստից) դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ՝ որևէ պատասխանատվություն չկրելով նման որոշման հետևանքների համար» (տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 10.04.2011թ. արձանագրային որոշման 8.23 կետ, էջ 50):

կողմը: Այստեղ, սակայն, քրեական հայցի ընթացքի տնօրինումն իրականացվում է «դրական» եղանակով՝ քրեական հայցի ընդունմամբ³⁵։ չկա վեճ՝ պետք է ավարտվի դատավարությունը։

Եվ եթե կողմերին է վերապահված քրեական հայցը տնօրինելու իրավասությունը (քրեական վարույթն առաջ է շարժվում միայն նրանց ակտիվ գործունեության շնորհիվ), ապա այստեղից էլ ինքնաբերաբար «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության կողմնակիցները կողմերի տնօրինությունը տարածում են նաև իրենց դատավարական դիրքորոշումը հիմնավորող *փաստերի* ու դրանք հաստատող *ապացույցների* հավաքման ոլորտների վրա։

Ե.Գ.Վասիլևան, «քրեական պատասխանողի»՝ քրեական հայցին պատասխանելու իրավունքի կառուցվածքի մեջ իրավացիորեն ներառելով ինչ-

³⁵ Այստեղից էլ՝ բոլորովին այլ ընկալում է ստանում անգլոամերիկյան իրավունքում մեղադրյալի մեղքի ընդունումը՝ դիտարկվելով ոչ թե իբրև ինքնուրույն ապացույց, այլ իբրև քրեական հայցի ընդունման ակտ։

Այս առումով պետք է համաձայնել Լ.Գոլովկոյի հետևյալ դիտարկմանը. «Ինչ վերաբերում է մեղադրյալի կողմից իր մեղքի ընդունմանը (guilty plea-ի ինստիտուտը), ապա թեկուզև այդ ընդունումը (եթե այն կամավոր է) դատավորի համար առաջացնում է դատավարական պարտականություն հրաժարվել գործի ըստ էության քննությունից և կայացնել մեղադրական դատավճիռ, այն ոչ մի կերպ չի կարելի կապել ոչ ընդհանրապես ապացույցների գնահատման ինստիտուտի հետ, ոչ էլ մասնավորապես ապացույցների ձևական տեսության հետ։ Խիստ ասած՝ մեղքի ընդունումն այդ դեպքում ոչ մի կապ չունի ապացուցողական իրավունքի հետ, քանի որ նշանակում է ոչ թե «ապացույցների առանձին տեսակ» (ինչպես մայրցամաքային դատավարությունում), այլ մեղադրյալի՝ իր դեմ առաջադրված մեղադրանքի հետ համաձայնություն, որը հանում է մեղադրողից ապացուցման պարտականությունը։ Այստեղ խոսքը մրցակցության սկզբունքի դրսևորման մասին է, երբ կողմերից մեկը հրաժարվում է դատարանում գործի էության վերաբերյալ դատավարական վեճից, ապա դատական քննությունը և ապացույցների հետազոտությունն ընդհանրապես կորցնում են իմաստը» (տե՛ս **Головко Л.В.**, Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. - М.: Правоведение, 2009, էջ 282):

Իրավաբանական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ առկա է նաև կտրականապես հակառակ տեսակետ՝ ըստ որի մեղադրյալի կողմից մեղադրանքի ընդունումը պետք է դիտարկել ոչ թե իբրև քրեական հայցի տնօրինում այն ընդունելու միջոցով, այլ ապացուցողական տեսանկյունից՝ դրան նայելով իբրև ապացույցի։ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Тайбер Л.Я.** Иск, обвинение и состязательное начало (процессуальные параллели). // Вестник гражданского права. No 2. Петроград, 1917, էջեր 82-85:

պես քրեական հայցի պաշտպանության դատավարական միջոցները, այնպես էլ հայցի ընդունման իրավունքը, հստակեցնում է, որ փաստի ընդունման իրավունքը հայցի ընդունման իրավունքի մասնավոր դրսևորում է³⁶: Նա մասնավորապես նշում է. «Փաստի ընդունման իրավունքը հանդիսանում է ավելի լայն իրավունքի՝ հայցի ընդունման իրավունքի մասնավոր դեպք: Քրեական պատասխանողը, ունենալով հայցն ամբողջությամբ ընդունելու իրավունք, նաև ունի փաստերից յուրաքանչյուրն առանձին վերցրած ընդունելու իրավունք (*In eo quod plus sit semper inest et minus*). Այսպիսի ընդունումն ազատում է մեղադրանքի կողմին (քրեական հայցվորին) դատարանի առաջ այն ապացուցելու պարտականությունից: Վերջինս էլ մեխանիկորեն ընդունում է ճանաչված փաստը»³⁷:

Մեղադրական (մրցակցային) դատավարության քննարկվող տեսության շրջանակներում, որտեղ դատավարության «տերը» կողմերն են, և նրանց կամքն ու ակտիվ գործողություններն են գործի «շարժիչ ուժը», դատավարության առարկան ոչ թե կատարված արարքն է, այլ ներկայացված քրեական հայցը: Դատավարության այսպիսի ընկալումն այս տեսության շրջանակներում իր հերթին փոխում է նաև ապացուցման վերաբերյալ ընկալումները. այստեղ արդեն փոխվում են և՛ ապացուցման նպատակը, և՛ ապացուցման սուբյեկտների շրջանակները:

³⁶ Տե՛ս **Васильева Е.Г.** նշվ.աշխ., էջեր 294-295:

³⁷ Տե՛ս **Васильева Е.Г.** նշվ.աշխ., էջ 298:

Այս առումով անգլիացի հայտնի իրավաբան Դ.Ստիֆենը նշում էր. «Դատավարության ընթացքում ոչ մի փաստ ապացուցելու անհրաժեշտություն չկա, որը գործի լուսմներից առաջ կամ դրա ժամանակ կողմերը կամ նրանց ներկայացուցիչները իրար միջև համաձայնեցրել են ընդունել՝ դրա մասին հղում անելով գործի ներկայացման ժամանակ»: Սակայն, միևնույն ժամանակ, հեղինակն ավելացնում էր, որ ծանր հանցագործությունների դատական քննության ժամանակ մեղադրյալը չի կարող անել այնպիսի խոստովանություններ, որոնք վերացնում են ապացուցելու պարտականությունը, (տե՛ս **Стифен Дж.** Очерк доказательственного права. Перевод с 8-го английского издания с вступительными статьями **П.И. Люблинского**, СПб, Сенатская типография, 1910, էջ 80), ինչն արդեն մեր համոզմամբ շեղում է մրցակցային սկզբից: Մեր ժամանակներում փաստերի ընդունման գործարքների և այդպիսի գործարքների հետևանքների մասին տե՛ս, օրինակ, **Pizzi W. T.**, Fact-Bargaining: An American Phenomenon, 8 Fed. Sent'g Rep. 336 (1996), նաև՝ **Мельников Е.А.**, Уголовное преследование в условиях действия системы разделения властей (досудебное производство), дисс. ...канд. юрид.наук. Москва, 2017, էջեր 183-186:

Այսպիսի դատավարությունում ապացուցման նպատակը ոչ թե ճշմարտության բացահայտումն է, այլ կողմի (մեղադրանքի կամ պաշտպանության) դատավարական դիրքորոշման (ներկայացված քրեական հայցը կամ դրանից պաշտպանությունը) հիմնավորումը³⁸:

Հետևաբար և՛ կողմերի «ինքնավարությունից» և դատավարությունն ինքնուրույն «տնօրինելու» իրավասությունից էլ բխում է սեփական դիրքորոշումը հիմնավորող ապացույցները ներկայացնելու իրավասությունը (քրեական հայցը հիմնավորելու և/կամ դրանից պաշտպանվելու բեռը):

Այստեղ հատուկ ենք շեշտը դնում կողմերի՝ իրենց դիրքորոշումն ապացույցներով հիմնավորելու *իրավունքի (բեռի)* վրա. դիրքորոշումը հիմնավորելը ոչ թե պարտականություն է, այլ իրավունք, որը չիրացնելը չի առաջացնում պատասխանատվություն, այլ հանգեցնում է նրան, որ «պահանջ դիրքորոշումը» (քրեական հայցը կամ դրանից պաշտպանությունը) մնում է չհիմնավորված՝ կողմի համար դրանից բխող անբարենպաստ հետևանքով³⁹ (հայցի վերաբերյալ կողմի համար անբարենպաստ որոշում կայացնելու դատական որոշման տեսքով (մեղադրական կամ արդարացման)):

Եվ քանի որ ապացուցումը հանդիսանում է կողմի դիրքորոշման հիմնավորման միջոց (որպես հետևանք դատավարական շահի բավարարման միջոց), հետևաբար ապացուցման սուբյեկտներ են դիտարկվում միայն կողմերը. *դատարանն արդեն այս հայեցակարգում սկսում է հանդես գալ պասիվ*

³⁸ Թեև մի փոքր այլ առնչությամբ, (մայրցամաքային դատավարության մրցակցային դատական բնությունում ապացուցման բնույթի մասին խոսելիս), սակայն համանման դիրքորոշում է արտահայտում նաև Գոլովկոն՝ նշելով. «...ապացուցման բնույթը այստեղ արդեն այլ է. կողմերի համար խոսքը ոչ թե քննչական գործողությունների կատարմամբ գործի հանգամանքների հաստատման մասին է, այլ՝ ապացույցների միջոցով սեփական դատավարական դիրքորոշումը հիմնավորելու մասին» (տե՛ս **Головко Л.В.** Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: նշվ. աշխ., էջ 263):

³⁹ Այս առումով «Ապացույցների տեսությունը սովետական քրեական դատավարությունում» գրքի հեղինակները նույնպես արձանագրում են, որ. «Ապացուցման ծանրությունը (բառացի՝ բեռը, տաժանելի բեռը) հավասարազոր չէ իրավաբանական պարտականությանը: Ապացուցման բեռը բնութագրական է մեղադրական դատավարությանը, որտեղ այն բաշխված է կողմերի միջև, ընդ որում՝ կողմի՝ իր պահանջների հիմնավորման համար ապացույց չներկայացնելն առաջացնում է անբարենպաստ հետևանքներ...» (տե՛ս Теория доказательств в советском уголовном процессе. Отв. редактор **Н. В. Жогин**, изд. 2-е исправленное и дополненное, М., «Юрид. лит.», 1973, էջ 508): Հեղինակներն այնուհետև արձանագրում են, որ ապացուցման բեռը նման իմաստներով (այդ թվում՝ ապացուցման փաստական, ձևական, նյութական բեռի իմաստով) սովետական քրեական դատավարությունում գոյություն չունի (տե՛ս նույն տեղը):

դիտորդի դերում⁴⁰: Հակառակը կվկայեր դատարանի իր անաչառ դիրքից դուրս գալու և դատավարության կողմի գործառույթ ստանձնելու մասին (դատարանն ուզած-չուզած կսկսեր կողմերից մեկի դիրքորոշումը հիմնավորել)⁴¹:

Հարցի այսօրինակ լուծումն ինքնաբերաբար հանգեցնում է նման մրցակցային դատավարությունում նյութական ճշմարտության բացահայտման սկզբունքի բացառմանը⁴² և որպես հետևանք՝ դատարանի պասիվությանը⁴³:

⁴⁰ Այս ամենն իր հերթին գիտության մեջ առաջ է բերել ու բերում է մրցակցության սկզբունքի խիստ քննադատություն: Օրինակ՝ Գոլովկոն այս առումով նշում է. «Ի տարբերություն ամերիկյան քրեական դատավարության՝ եվրոպական համակարգը մեզ ավելի հասկանալի է: Ընդ որում, այն արդեն շատ վաղուց ընդունում է քրեական արդարադատության սոցիալական չափումը և ելնում է այն հանգամանքից, որ պետությունն ու նրա ներկայացուցիչները պետք է ակտիվ կարգավորող դեր կատարեն՝ ապահովելով սոցիալական հավասարակշռությունը և փորձելով հարթել առաջին հերթին իրավապահ մեքենայի և մեղադրյալի ապրիորի անհավասարությունը, և երկրորդ՝ արդեն հենց մեղադրյալների գույքային անհավասարությունը, որոնք լավագույն փորձագետներին կամ ապացույց հավաքելու նպատակով երկրով մեկ փաստաբանների գործուղումները ոչ միշտ է, որ կարող են վճարել»: (Տե՛ս Л.В. Головкин, Российский уголовный процесс и объективная истина // Обвинение и защита по уголовным делам, исторический опыт и современность, (Сборник статей по материалам Международной научно-практической конференции, посвященной 100-летию со дня рождения профессора Николая Сергеевича Алексеева (г. Санкт-Петербург, 28-29 июня 2014 года), Санкт-Петербург, 2015, էջ 62):

⁴¹ «Դատավորի չեզոքությունը,- գրում է է. Գրանդեն,- տարբեր իմաստ է ստանում երկու համակարգերում (խոսքը մասնավորապես մրցակցային և ոչ մրցակցային (ինկվիզիցիոն) քրեադատավարական համակարգերի մասին է- Ա.Դ.): Մրցակցային համակարգում չեզոքությունը հոմանիշ է պասիվությանը, ոչ մրցակցային համակարգում, այն հավասարվում է անկողմնակալությանը» (տե՛ս Grande E., "Dances of Justice: Tango and Rumba in Comparative Criminal Procedure," Global Jurist: Vol. 9: Iss. 4 (Frontiers), Article 6, 2009, էջ 11):

⁴² Տե՛ս, օրինակ, Jimeno-Bulnes, M., Jimeno-Bulnes, M., American Criminal Procedure in a European Context (December 8 2012). Cardozo Journal of International and Comparative Law (JICL), Vol. 21, No. 2, 2013, էջ 434, որտեղ հեղինակը արձանագրում է, որ ճշմարտության (նյութական ճմարտության) բացահայտումը մրցակցային դատավարության նպատակ չէ: Մեղադրական (մրցակցային) դատավարությունում նյութական ճշմարտության (կամ հեղինակի խոսքերով՝ «իրական ճշմարտության») բացահայտման անհնարիության (բարդությունների) մասին տե՛ս Weigend T. 'Is the Criminal Process about Truth?: A German Perspective' (2003) 26 Harvard J.L. & Pub. Pol'y, էջ 157:

⁴³ Այստեղ խոսքը գլխավորապես դատարանի քրեական հայցի տնօրինման և մասնավորապես դատարանի ապացուցողական պասիվության և ոչ թե **ընդհանրապես** պասիվության մասին է: Այն որ մեղադրական (մրցակցային) դատավարության պայմանը կողմերի հավասարությունն ապահովելու, ինչպես նաև անձանց իրավունքների ու

Այս մոտեցումն իր շատ հստակ արձանագրումն է ստացել գերմանացի իրավաբան Գարտների հետևյալ դատողություններում. «Դատարանի խնդիրը սահմանափակվում է հետազոտելով, թե իրականում գոյություն ունե՞ն այդ հանգամանաքներն այն տեսքով, ինչպես այն պնդում է հայցվորը, և արդյո՞ք գործող իրավունքի նորմերին համապատասխան են անցկացվել դրանք: Եթե դատարանը, չսահմանափակվելով դրանով, սկսեր ինքնուրույն փնտրել փաստական հանգամանքներ և ապացույցներ, իսկ հետո նաև դրանց վերաբերյալ եզրահանգումներ աներ՝ ելնելով գործող իրավունքից, ապա կհայտնվեր կողմի դիրքում և դատական որոշման մեջ պիտի ստուգեր իր սեփական հետևությունները»⁴⁴:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել վերոշարադրյալը, ապա մեր առջև կպատկերվի մի դատավարություն, որը դեռևս 170 տարի առաջ մանրամասն նկարագրվել էր Ջ.Վ.Պլանկի կողմից: Դատավարություն, որտեղ կողմերն ու դատարանը տարանջատված են, որտեղ գործի ընթացքը կախվածության մեջ է դրվում կողմերից, դատավարություն, որտեղ «մեղադրանքը՝ մեղադրողի պնդումը, պետք է ձևավորվի միայն նրա կողմից, որի բովանդակությունն ու առանցքային մասերը պետք է մնան անփոփոխ, առանձին փաստերի ընդունումը կամ մեղադրողի՝ քրեաիրավական պահանջից հրաժարումը պետք է

օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակով կարող է և պետք է նախատեսի վեճի (դատավարության) հստակ ձևականացված կանոններ, կարծում ենք՝ կասկած չի հարուցում: Տեղին է հիշատակել գերմանացի ակադեմիկոս Գախին, ով այս առումով նշում էր. «Դատավարական օրենքը երբեք չպետք է հարմարվի անփութությանն ու հիմարությանը. դրանք, ինչպես և կյանքում ամենուր, այստեղ՝ դատարանում նույնպես, առանց նյութական արդարությունը խախտելու, պետք է հանգեցնեն անցանկալի հետևանքների, այդ թվում, որոշակի պայմաններում, նաև իրական իրավունքի կորստին»: (Վախից, մեջբերումն ըստ Васьковский Е.В. նշվ. աշխ., էջ 351):

Այստեղ դատարանը ոչ թե «խուլ» և «համր» պասիվ դիտորդ է, այլ նա է վերահսկում, որ հավասար կողմերը իրենց իրավական վեճում օգտագործեն *միայն իրավակայն այն գործիքները, որոնք իրենց է վերապահված օրենքով թույլ չտան վեճի՝ օրենքով նախատեսված կարգի խախտումներ և մրցեն միայն այդ կարգում: Այս հարցերի ապահովման համար դատարանը դառնում է բավականին ակտիվ:*

Շենց մեղադրական (մրցակցային) դատավարությանը հատուկ վեճի (դատավարության) հստակ ձևականացված կանոնների մի մաս էլ հանդիսանում են յուրահատուկ ապացույցների համակարգը, ապացույցների թույլատրելիության յուրահատուկ կանոնները և այլն, որն էլ գիտության մեջ դիտարկվում է իբրև մեղադրական (մրցակցային) դատավարության յուրահատուկ հատկանիշ:

⁴⁴ Մեջբերումն ըստ Васьковский Е.В. նշվ. աշխ., էջ 362

վերացնեն վեճը՝ անկախ ճանաչված հանգամանքին դատարանի տված գնահատականից⁴⁵: Դատավարություն, որտեղ «մեղադրյալը իր հերթին պետք է ունենա մեղադրանքն ամբողջությամբ կամ դրա մի մասով ընդունելու իրավունք, և այդ դեպքում դատարանը պետք է սահմանափակվի միայն իրավունքի հարցերի լուծմամբ⁴⁶, որտեղ «Կողմերն են հավաքում նյութը, առաջարկում այն դատարանին և տնօրինում են այդ նյութը, դատարանը սահմանափակվում է դրա քննարկմամբ և կողմերի միջև վեճի լուծմամբ...»⁴⁷, որտեղ «...այդ տնօրինության նկատմամբ դատարանի վերահսկողությունը կամ օժանդակությունը մոտեցնում են դատավարությունը քննչական ձևին...»⁴⁸:

Մեղադրական դատավարության այս ընկալման շրջանակներում, ինչպես ցույց տրվեց վերևում, դատարանը խիստ սահմանափակված է: Այստեղ, ինչպես նշում է Պլանկը, դատարանը նյութի հավաքմանը մասնակցում է այնքանով, որ *ex officio* կանխում է անվավեր կամ անկարևոր (ոչ էական) քայլերը⁴⁹: Բացի այդ, դատարանը չի շեղվում նաև նախանշված քրեական հայցի առարկայից. «նույնիսկ մեղադրական դատավարության ծայրահեղ դրսևորումներից որոշակի շեղումներ թույլ տալու դեպքում դատավճիռ կայացնելիս դատարանը շարունակում է ենթարկված լինել կողմերի ազդեցությանը՝ իրավասու չլինելով իրավական կազմի ավելացման համար լրացնել ցանկացած փաստական հանգամանք, որի վրա կողմը մատնանշում չի արել և իր համոզմունքի մշակման համար օգտվել ապացույցներից, որոնք իրեն

⁴⁵ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ, էջ 296:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

⁴⁷ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ, էջ 295-296:

Մրցակցային դատավարության վերաբերյալ համանման մոտեցում առկա է նաև անգլալեզու գրականության մեջ, տե՛ս, օրինակ **Goodpaster G.**, On the Theory of American Adversary Criminal Trial, 78 J. Crim. L. & Criminology 118, Article 3, (Spring 1987), էջեր 119-120:

Ջիմենո-Բուլնեսն այս առումով գրում է. «... անգլո-ամերիկյան և հատկապես ԱՄՆ-ի քրեական դատավարության մրցակցային բնույթը կողմերի միջև ագրեսիվ պայքարի արտաքին տեսք է հաղորդում, որում նրանք կառուցում են իրենց պատմությունները անկողմնակալ և պասիվ հանդիսատեսի առաջ, ով հանդես է գալիս իբրև որոշում կայացնող: Այս հայեցակարգը հատկապես տեղ է գտնում դատական քննության փուլում, որը «կողմակենտրոն» է, ի տարբերություն եվրոպական քրեական դատավարությունների, որոնք դատարանակենտրոն են: Մրցակցային համակարգում դատախազության և պաշտպանի դերերը էական են դառնում դատավարությունը ղեկավարելու ու կառավարելու հարցում, որտեղ պետք է տեղ գտնի երկու կողմերի ապացույցների ներկայացումը» (տե՛ս **Jimeno-Bulnes, M.**, նշվ.աշխ., էջ 431)

⁴⁸ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ էջ 296:

⁴⁹ Տե՛ս **Немировский Э.Я.** նշվ.աշխ էջ 297:

չեն ներկայացվել»⁵⁰:

Մենք միտումնավոր ընդհանրացումը կատարեցինք Ջ.Պլանկին մեջբերելով՝ ընդգծելու համար այն փաստը, որ վերջինս այն գիտնականներից էր, որ տվել էր մեղադրական (մրցակցային) դատավարության այսպիսի հստակ բնորոշում, որը գրեթե ամբողջովին համընկնում է մեր քննարկած «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության շրջանակներում մեղադրական (մրցակցային) դատավարության բնորոշ գծերին: Մեղադրական (մրցակցային) դատավարության հանդեպ համանման մոտեցումներ են ունեցել նաև այլ ականավոր գիտնականներ ((Բար, Շտեյնզ, Վալբերգ)⁵¹, Վլ.Սլուչնսկի, մեր օրերում, գործող այլ գիտնականներ⁵²):

Ընդհանրացնելով՝ պետք է արձանագրենք, որ թեև մեղադրական (մրցակցային) դատավարության վերաբերյալ գիտական հայացնքները խիստ բազմազան են, սակայն, այնուամենայնիվ, դրանց միջև առկա է ընդհանրություն: Ակնհայտորեն նկատվում են այդ բազմազան հայացնքների մեջ տեսական երկու ուղղություններ, որոնք մենք փորձեցինք խմբավորել տեսությունների մեջ՝ նշելով դրանցից յուրաքանչյուրի բնորոշ գծերը, հատկությունները: Մա իր հերթին թույլ կտա հայկական դատավարագիտության մեջ այս տեսությունները ենթարկել քննադատական մանրակրկիտ վերլուծության՝ ավելի «բյուրեղացնելով» մեղադրական (մրցակցային) դատավարության մասին ունեցած մեր գիտելիքները:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

⁵¹ Տե՛ս նույն տեղում:

⁵² «Մաքուր ձևով մրցակցային դատավարությունը ենթադրում է մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման (արդարադատության) ֆունկցիաների մեկը մյուսից տարանջատում, մեկի ձեռքում մի քանի գործառույթների միավորման անթույլատրելիություն, դատարանի՝ կողմերից և ընդհանրապես կողմնակի ազդեցություններից անկախություն, անաչառություն, գործի ընթացք և լուծում կողմերի ջանքերով և նրանց ներկայացրած ապացույցների հիման վրա՝ նրանց փաստարկումների հաշվառմամբ...» (տե՛ս **Пашин С. А.** Состязательный уголовный процесс. М., 2006, էջ 13):

ДВЕ ТЕОРИИ ОБВИНИТЕЛЬНОГО (СОСТЯЗАТЕЛЬНОГО) УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА

Казарян Артак Арменович

*Старший преподаватель кафедры уголовного
процесса Академии Образовательного комплекса
полиции РА*

В статье автор анализирует научные взгляды на состязательный процесс с позиций двух разных теорий, которые отличаются друг от друга по ряду характеристик. Автор делает попытку выявить указанные отличия.

Ключевые слова: состязательный процесс, материальная истина, активность суда.

THE TWO THEORIES OF ACCUSATORIAL (ADVERSARIAL) CRIMINAL PROCEDURE

Ghazaryan Artak

*Senior Lecturer at the Chair of Criminal
Procedure of the Academy of the Police
Educational Complex of RA*

In the article the author analyzes the scientific views about the adversarial procedure from the point of view of two different theories. The author tries to reveal the different characteristics of those theories.

Key words: adversarial procedure, substantive truth, activity of the court.

Հոդվածը գրախոսվել է՝ 31.01.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 03.02.2020թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ղազարյան Ջենա

*ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի
համայնքապետարան, 2-րդ կարգի մասնագետ
Երևանի պետական համալսարանի մագիստրանտ*

Հայաստանի Հանրապետությունը 2003թ. փետրվարի 5-ից Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ է, իսկ 2015թ. հունվարի 2-ից ուժի մեջ է մտել ՀՀ-ի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագիրը: Մի կողմից՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան նպաստում է ԱՀԿ համաձայնագրերի առաջնային նպատակներից մեկը հանդիսացող առևտրի ազատականացմանը, իսկ մյուս կողմից՝ ստեղծում է խնդիր, որը վերաբերում է երկուստեք ստանձնած պարտավորությունների կատարմանը: Միջազգային առևտրում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումը թե՛ ունիվերսալ, թե՛ տարածաշրջանային մակարդակով ունի էական նշանակություն ՀՀ առևտրատնտեսական քաղաքականության, տնտեսական զարգացման ու անվտանգության համար: Անդամակցությունն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը դիտարկվում է որպես միջազգային հանրության կողմից պետության առևտրային քաղաքականության վստահելիության ճանաչում, և այս համատեքստում կարևոր է պարզել, թե ինչպես է ՀՀ՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցությունը դիտարկվում ու բնորոշվում հենց Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից: Ներկայումս հրատապ խնդիրներից է այն, թե ինչպես են միջազգային իրավունքի տարբեր ճյուղերը և նորմերը փոխգործակցում: Առևտրի համաշխարհային կազմակերպության և Եվրասիական տնտեսական միության անդամակցության պայմաններում ՀՀ-ն գտնվում է այնպիսի իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է չօտարանալ ստանձնած պարտավորություններից և պահպանել միջազգային հեղինակությունը:

ԱՀԿ-ին անդամակցելու ՀՀ հիմնական նպատակներն են տնտեսական զարգացումն ու արտաքին տնտեսական հարաբերությունների հետագա ազատականացումը: ԱՀԿ-ին անդամակցելով՝ ՀՀ-ը մտադիր է ապահովել ներքին արտադրության համար անհրաժեշտ արտահանման շուկաներ, ամրապնդել մրցակցային հիմունքներով անհրաժեշտ ապրանքների անխափան ու կանխատեսելի ներմուծումը, ընդլայնել տնտեսության վերարտադրության համար անհրաժեշտ ներդրումային ներհոսքը, ապահովել ներքին արտադրանքի որակն ու միջազգային չափանիշները:¹ Անդամակցության օրվանից Հայաստանը պարտավորվել է, որ ապրանքների առևտրի հետ առնչվող բոլոր օրենքներն ու կանոնակարգերը և այդպիսի իրավունքների նկատմամբ կիրառվող բոլոր վճարները, տուրքերն ու հարկերը գործելու են ԱՀԿ շրջաններում ունեցած իր պարտավորությունների հետ լրիվ համապատասխանությամբ:² ՀՀ անդամակցության տասնհինգ տարիների ընթացքում ՀՀ-ի դեմ երկու հայց է ներկայացվել ԱՀԿ և երկուսն էլ՝ Ուկրաինայի կողմից. առաջինը ներկայացվել է 2010թ-ին ՀՀ այն միջոցառումների դեմ, որոնք ազդում են ծխախոտի և ոգելից խմիչքների ներմուծմանը և ներքին վաճառքին³, իսկ երկրորդը՝ 2018թ-ին ուկրաինական արտադրության պողպատե խողովակների որոշ տեսակների վրա հակադեմփինգային մաքսատուրքեր կիրառելու որոշման վերաբերյալ⁴:

Կասկածից վեր է, որ ՀՀ անդամակցությունը ԱՀԿ-ին առաջադիմական քայլ էր: Առևտրային կապերի զարգացմանը վերաբերող հարցերն ունեն էական նշանակություն միջազգային հարաբերություններում: Այն հանգամանքը, որ, որպես ԱՀԿ անդամ պետություն, ՀՀ-ում գործում են միջազգայնորեն ընդունված նորմերը, այլ պետությունների մոտ բարձրացնում է ՀՀ հեղինակությունը՝ որպես առևտրային գործընկեր-պետություն: ՀՀ ԱՀԿ անդամակ-

¹ Տե՛ս Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան: ԱՌՏ, 2002, էջ 150:

² Տե՛ս ԱՀԿ անդամակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրականացման ուսումնասիրություն (գնահատում), Գլոբալ Էս-Փի-Մի, Երևան, 2008, էջ 14:

³ Տե՛ս World Trade Organisation, Armenia-Measures Affecting the Importation and Internal Sale of Cigarettes and Alcoholic Beverages, WT/DS411/2Rev:

⁴ Տե՛ս World Trade Organisation, Armenia - Anti-Dumping Measures on Steel Pipes - Request for consultations by Ukraine, WT/DS569/1 G/L/1264 G/ADP/D127/1:

ցության ձեռքբերումների շարքում կարևոր է նաև առանձնացնել Հայաստանի օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային նորմերին, որն առաջին հերթին նպաստում է առավել արդյունավետ կառավարում ունենալուն: ԱՀԿ անդամակցությունը թույլ է տալիս ընդգրկվելու այլ տնտեսական միավորումների մեջ: Ավելին, օրենսդրական փոփոխությունները, ԱՀԿ պահանջներին համապատասխան, հեշտացնում են ինտեգրումն այլ տնտեսական միավորումներ: 2015թ. հունվարի 1-ից ԵԱՏՄ գործունեության մեկնարկը Եվրասիական տարածաշրջանում դրեց տնտեսական ինտեգրման նոր փուլ: ԵԱՏՄ-ն ստեղծվել է Բելառուսի, Ղազախստանի ու Ռուսաստանի Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա: Մաքսային միությունն սկսել է գործել 2010թ. հունվարից, իսկ 2011թ. դեկտեմբերին որոշում է կայացվել Միասնական տնտեսական տարածքը ձևավորող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու մասին, ինչն էլ նախանշել է 2012թ. հունվարի 1-ից ՄՏՏ ձևավորող համաձայնագրերի կիրառումը՝ մինչև 2015թ. ԵԱՏՄ ստեղծման վերջնական նպատակով: 2014թ. մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական խորհրդի բարձրագույն նիստում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրների նախագահներն ստորագրել են Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը (այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր), որն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 1-ից:⁵ ԵԱՏՄ գործունեությունը կանոնակարգվում է «Միության մասին» պայմանագրով, որը բաղկացած է 4 մասից, 28 բաժնից և ունի 118 հոդված: Պայմանագրին կցվում է 33 հավելված:⁶

ԵԱՏՄ անդամ երկրներն են Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Հայաստանը և Ղրղզստանը:⁷

«Միության մասին» պայմանագրի 1-ին հոդվածը սահմանում է. «1. Սույն Պայմանագրով Կողմերը հիմնադրում են Եվրասիական տնտեսական միութ-

⁵ Տե՛ս Եվրասիական տնտեսական միություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջը՝ <https://www.mfa.am/hy/international-organisations/6> (01.09.2019):

⁶ Տե՛ս Հարությունյան Վ., Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 123:

⁷ Տե՛ս ԵԱՏՄ պաշտոնական կայքէջը՝ <http://www.eaeunion.org/?lang=am#about> (01.09.2019):

յունը, որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատությունը, սույն Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը: 2. Միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն»:⁸ Եվրասիական տնտեսական միությունը երկրների միջև ինտեգրացիայի շատ բարձր տարատեսակ է՝ նպատակաուղղված ընդհանուր շուկայի ստեղծմանը: ԵԱՏՄ-ն ենթադրում է ոչ միայն Մաքսային միության ձևավորում, այլ նաև համաձայնեցված և մի շարք ուղղություններով միասնական տնտեսական քաղաքականության իրականացում: ԵԱՏՄ անդամակցությամբ Հայաստանը ստիպված է սկզբունքորեն փոխել երրորդ երկրների նկատմամբ իր առևտրային քաղաքականությունը, իսկ Հայաստանը, լինելով փոքր և ներմուծումից կախված երկիր, որդեգրել էր պարզ և ազատական առևտրային քաղաքականություն: Այնուամենայնիվ, աշխարհը տարածաշրջանային տնտեսական միավորումների բաժանելուց առաջ անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք առկա՞ են ԱՀԿ համաշխարհային ձգտումներից շեղումներ, և եթե՝ այո, ապա՝ դրանց հնարավոր հետևանքները: ԱՀԿ-ԵԱՏՄ փոխհարաբերակցության հիմնական խնդիրն է ԵԱՏՄ ոչ բոլոր դրույթների համապատասխանությունը ԱՀԿ համաձայնագրերին (սակագնային/ոչ սակագնային կարգավորումներ, ազգային շուկայի պաշտպանություն, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ) և դրանց ներդաշնակեցմանը: ԱՀԿ-ԵԱՏՄ շրջանակներում ստանձնած պարտավորությունների միջև առկա հակասություններն անհրաժեշտ է կարգավորել վերջիններիս կողմից փոխձանաչման և համաձայնեցման ճանապարհով: ԱՀԿ և ԵԱՏՄ սերտ համագործակցության արդյունքում միայն հնարավոր կլինի ամրապնդել միջազգային իրավունքի համակարգը և միասնությունը: Կարծում ենք, սակայն, բացակայում են ԱՀԿ-ԵԱՏՄ համադրելի գործունեությունն ապահովող գործուն մեխանիզմները: Խնդիրն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե ՀՀ-ԱՀԿ, ՀՀ-ԵԱՏՄ համատեքստում, այլ ԱՀԿ-ԵԱՏՄ: Միջազգային առևտրային ի-

⁸ Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքէջը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95203> (01.09.2019):

րավունքը, ներառելով ԱՀԿ և ԵԱՏՄ իրավունքը, դիտվում է որպես միջազգային իրավունքի անբաժանելի մաս: ԱՀԿ իրավական համակարգի բացարձակ ինքնությունն բնույթը, այլ պայմանագրային ռեժիմներից անջատված լինելու փաստը տեղ չեն գտնում ՎԿՄ կողմից քննվող որևիցե մի գործում: Ամեն դեպքում գոյություն ունեցող պայմանագրային ռեժիմներն իրականում չեն կարող և չպետք է լինեն ինքնություն և առանձին: ԱՀԿ իրավունքն առանձին համակարգ չէ. այն համարվում է միջազգային իրավունքի «ենթահամակարգ»:⁹ Կարծում ենք, որ ԱՀԿ ու ԵԱՏՄ իրավունքները միջազգային իրավունքի համակարգից մեկուսացված չեն և ներդաշնակեցված պետք է մեկնաբանվեն ու գործեն՝ հաշվի առնելով համակարգային ինտեգրացիայի նպատակները: Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք նաև այն եզրակացությանը, որ ԱՀԿ նորմերն ունեն առաջնահերթություն ԵԱՏՄ նորմերի նկատմամբ. ԵԱՏՄ-ն հիմնվում է ԱՀԿ իրավունքի վրա, պարունակում է հղումներ նրան, փորձ է կատարում իր համաձայնագրերը ներդաշնակեցնել և համաձայնեցնել ԱՀԿ համաձայնագրերի հետ: ԵԱՏՄ-ն կազմավորվել է, քանի որ ԱՀԿ իրավունքն անդամ պետություններին թույլ է տալիս կիրառել միջոցներ, որոնք դիտվում են որպես «արտոնյալ տնտեսական բացառություններ»:¹⁰ ԱՀԿ նորմերի առաջնահերթությամբ է պայմանավորված, որ օրինակ՝ ապրանքի ներմուծման դեպքում հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոց սահմանելուն նախորդող ուսումնասիրություն անցկացնելու նախաձեռնության մասին ԱՀԿ անդամ հանդիսացող ԵԱՏՄ անդամ պետությունները ծանուցում են ԱՀԿ պաշտպանական միջոցների մասին հանձնախմբին, կամ այն, որ Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու առնչությամբ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամների հետ բանակցություններ են անցկացվում ՀՀ համապատասխան սակագնային պարտավորությունների փոփոխման վերաբերյալ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոններին, ինչպես նաև «Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին» 2011 թվականի մայիսի 19-ի պայմանագրի 1-ին հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

⁹ St' u Pawelyn J., Conflict of Norms in Public International Law: How WTO Law Relates to Other Norms of International Law, New York, Cambridge University Press, 2003, էջ 38:

¹⁰ St' u Bossche P., The Law and Policy of the World Trade Organisation, New York, Cambridge University Press, 2005, էջ 648:

Առանձնակի ուշադրություն է հարկավոր դարձնել այն հանգամանքին, որ 2018թ. սեպտեմբերի 25-ից Եվրասիական տնտեսական հանձնաժողովն սկսել է քննարկել ԱՀԿ աշխատանքային խմբում ԵԱՏՄ-ին դիտորդի կարգավիճակ շնորհելու մասին հարցը: ԱՀԿ համաձայնագրին անդամակցության հնարավորություն չի ընձեռում կազմակերպություններին, այլ միայն դիտորդի: Միջազգային միջկառավարական կազմակերպություններին դիտորդի կարգավիճակի շնորհումը հնարավորություն է տալիս այս կազմակերպություններին մասնակցել այն քննարկումներին, որոնք նրանց համար ուղղակի հետաքրքրություն են ներկայացնում: Դիտորդի կարգավիճակ ստանալու համար հայտ կարող են ներկայացնել այն կազմակերպությունները, ովքեր առևտրային քաղաքականության հարցերում ունեն ուղղակի հետաքրքրություն և իրավասություն կամ էլ ԱՀԿ համաձայնագրի V հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ունեն ԱՀԿ պարտականություններին առնչություն ունեցող պարտականություններ: Կազմակերպության ներկայացուցիչները կարող են հրավիրվել ելույթ ունենալու այն մարմնի հանդիպումներին, որտեղ ունեն դիտորդի կարգավիճակ, սակայն ելույթ են ունենում անդամներից հետո, չեն կարող մասնակցել որոշումների կայացմանը և առանց հատուկ հրավիրման՝ առաջարկներ ներկայացնել:¹¹ Դիտորդները չեն կարող միջնորդություն ներակայացնել ԱՀԿ վեճերի կարգավորման մարմնում, ինչպես նաև այն չեն կարող ներկայացվել նրանց դեմ:¹² Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես ցույց է տվել մի շարք խնդիրների առկայությունը: ԱՀԿ վեճերի կարգավորման մարմնի պրակտիկայից հետևում է, որ տարածաշրջանային տնտեսական համաձայնագրերով ստեղծված դատարանները, այդ թվում նաև՝ Եվրասիական տնտեսական միության դատարանը, չեն կարող քննել ԱՀԿ համաձայնագրերից բխող հարցերը. միայն կարող են օգտվել ԱՀԿ համաձայնագրերից՝ մեկնաբանելու ԵԱՏՄ իրավական նորմերը: ԱՀԿ վեճերի կարգավորման մարմինը ԵԱՏՄ իրավական նորմերը դիտում է որպես միջոցներ՝ ԵԱՏՄ անդամ պետություններից որևէ մեկի կողմից ընդունված, քանի որ ԵԱՏՄ-ն ԱՀԿ անդամ չէ. ԵԱՏՄ և իր մարմինների գործողությունները վերագրվում են միության ան-

¹¹ St' u WTO, Rules of Procedure for Sessions of the Ministerial Conference and Meetings of the General Council, Annex 3: Guidelines for Observer Status for International Intergovernmental Organizations in the WTO, WT/L/16, 25 July 1996:

¹² St' u Առևտրի համաշխարհային կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ https://www.wto.org/english/tratop_e/dispu_e/dispu_settlement_cbt_e/c1s4p1_e.htm (01.09.2019):

դամ պետություններին: ԱՀԿ անդամ պետություններն անհրաժեշտ է, որ կարևորեն ԱՀԿ վեճերի կարգավորման մարմնի բարեփոխման հարցը: Անհրաժեշտ է առաջնահերթություն տալ այն փաստին, որ ԱՀԿ-ն միջազգային իրավունքի մի մասն է: ԱՀԿ-ն իր իրավասությունների շրջանակներում կարող է սահմանել իր առևտրային նորմերը, այլ միջազգային կազմակերպությունները՝ իրենցը, սակայն երբ կարիք կա լուծելու որևէ վեճ, բոլոր կիրառելի և համապատասխան նորմերը պետք է կիրառվեն՝ լուծելու վեճը միջազգային իրավունքին համապատասխան: Առաջարկվում է, որ ԱՀԿ դիտորդի կազավիճակ ստացած կազմակերպություններին, որոնց անդամներն ԱՀԿ անդամ են, իրենց իրավասության տակ գտնվող հարցերում հնարավորություն ընձեռվի ներկայացված լինել ԱՀԿ վեճերի կարգավորման մարմնում:

Անդամակցության վերաբերյալ ԱՀԿ համաձայնագրի XII հոդվածի ու ՄԱԳՀ XXXIII հոդվածի միջև առկա է որոշակի անհամապատասխանություն և անճշտություն: Եթե առաջնորդվենք ԱՀԿ համաձայնագրի XII հոդվածով, ապա այն պետությունները, որոնք մաքսային միության անդամ են, չեն կարող անդամակցել ԱՀԿ-ին, ինչը, բնականաբար, չի գործում և անիմաստ է դարձնում ՄԱԳՀ XXIV հոդվածը, որը պետություններին թույլ է տալիս կազմավորել ազատ առևտրի գոտիներ և մաքսային միություններ: Եթե ԵԱՏՄ անդամ պետությունները, բացառությամբ դիտորդի կարգավիճակ ունեցող Բելառուսի, անդամակցում են ԱՀԿ-ին, ապա Բելառուսի անդամակցությունից հետո ինչու ԵԱՏՄ-ն էլ չի կարող անդամակցել ԱՀԿ-ին, ինչպես օրինակ՝ Եվրոպական միության դեպքում է: Կարծում ենք, որ անդամակցությունը կնպաստի առկա հակասությունների արդյունավետ վերացմանը, դատական պրակտիկայում առկա խնդիրների լուծմանը ու ԱՀԿ-ԵԱՏՄ ներդաշնակեցմանը: Այս պարագայում ՀՀ համար առանձնապես կարևոր կլինի Թուրքիայի դիրքորոշումը և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հետագա զարգացման ընթացքը: ԵԱՏՄ անդամակցության արդյունքում էապես կմեծանա հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման հնարավորությունը, քանի որ այս դեպքում Թուրքիան դժվար թե վերապահում կատարի և հրաժարվի ՀՀ հետ ազատ առևտրային բանակցություններից: Սա ՀՀ համար կլինի տնտեսական դիվանագիտության հաղթանակ: ՀՀ-ն պետք է առանցքային ուշադրություն հատկացնի տնտեսական դիվանագիտությանը, որն անհրաժեշտ է պետությունների ինտեգրված և համակարգված դիվանագիտության համար և պետք է դառնա ՀՀ դիվանագիտական ռազմավարության հիմնաքարը:

ВЗАИМООТНОШЕНИЯ, СВЯЗАННЫЕ С ЧЛЕНСТВОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ВСЕМИРНОЙ ТОРГОВОЙ ОРГАНИЗАЦИИ И ЕВРАЗИЙСКОМ ЭКОНОМИЧЕСКОМ СОЮЗЕ

Казарян Джема Артаковна

специалист второго класса Муниципалитета

*г.Армавира, магистр Ереванского государственного
университета*

В этой статье анализируются обязательства Республики Армения в международной торговле в рамках Всемирной торговой организации и соотношение принятых Республикой Арменией обязательств с ВТО, обязательства в рамках членства в Евразийском экономическом союзе, их особенности и существующие проблемы. Представлены соотношение норм ВТО и ЕАЭС, проблемы гармонизации положений ЕАЭС с соглашениями ВТО, а также проблемы, возникающие в судебной практике и сделаны соответствующие предложения.

Ключевые слова: организация, экономический союз, договор, региональная экономическая интеграция, политика, экономическая дипломатия.

THE CORRELATION OF THE OBLIGATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE INTERNATIONAL TRADE WITHIN THE FRAMEWORK OF ITS MEMBERSHIP TO WTO AND EAEU

Ghazaryan Jema

Second Class Specialist at Armavir Municipality,

Master of Laws, Yerevan State University.

The article covers the obligations of the Republic of Armenia in the international trade in the framework of its membership to the World Trade Organization and Eurasian Economic Union, its features and existing problems. The author examines the correlation of the norms of World Trade Organisation and Eurasian Economic Union, the problems of harmonization of EAEU status with the WTO agreements. Also, some problems from judicial practice are presented with suggestions to their solution.

Key words: organization, economic union, treaty, regional economic intergration, economic policy, economic diplomacy.

Հոդվածը գրախոսվել է՝ 16.01.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 30.01.2020թ.

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱԶԵՌՆԵԼՈՒ ՓՈԻԼԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ղազարյան Տիգրան

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի ասպիրանտ*

Քրեական վարույթ նախաձեռնելու, այն է՝ քրեական գործի հարուցման փուլը կարգավորող իրավանորմերը և դրանց կիրարկման արդյունքում ձևավորված իրավակիրառ պրակտիկան մշտապես գտնվել են ինչպես դատավարագետների, այնպես էլ պրակտիկ իրավաբանների ուշադրության կենտրոնում: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ քրեական գործի հարուցման փուլն իր մեջ ներառում է նախաքննության և հետաքննության մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ ներկայացված յուրաքանչյուր հաղորդման քննության և դրա արդյունքում համապատասխան որոշումների ընդունման դատավարական կարգը, միաժամանակ՝ անմիջականորեն առնչվում է անձի իրավունքներին և օրինական շահերին, քանի որ սույն փուլում արդեն իսկ անձը կարող է հանդիպել դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման՝ չունենալով համապատասխան դատավարական կարգավիճակ և դրանով պայմանավորված՝ համապատասխան իրավունքներ և պարտականություններ:

Քրեական գործ հարուցելն ընդունված է դիտարկել որպես քրեական դատավարության համեմատաբար առանձնացված փուլ, որին բնորոշ են կոնկրետ խնդիրներ, քրեական դատավարության սուբյեկտների հատուկ շրջանակ, միայն իրեն բնորոշ դատավարական ձև և որոշումների շրջանակ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո՝ 1998 թվականից մինչ օրս կատարվել են բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ, իսկ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով այս դատավարական փուլի իրավակարգավորումներն ստացել են տրամագծորեն այլ տեսք՝ նպատակ հետապնդելով կատարելագործել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, քննարկման և լուծման դատավարական կարգը, ապահովելով մասնավոր և հանրային շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

Քրեական գործի հարուցումը քրեական դատավարության սկզբնական փուլն է, որի ընթացքում պարզվում են քրեական գործ հարուցելու բավարար հիմքերի և առիթների առկայությունը կամ բացակայությունը, որոշում է կայացվում քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ինչպես նշում է Մ.Ս.Ստրոգովիչը, հետաքննության մարմինները, քննիչը, դատախազն արձագանքում են հայտնի դարձած հանցագործության դեպքը, որը անհրաժեշտ է անհապաղ բացահայտել, իսկ այն կատարող անձին՝ հայտնաբերել և ապահովել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը¹:

Տեղին է հիշատակել նաև Վ.Յա.Չեկանովի խոսքերն առ այն, որ պետությունը, իր համապատասխան մարմնի միջոցով քրեական գործի քննությունն սկսելով, արձագանքում է հանցագործության հատկանիշներ պարունակող յուրաքանչյուր արարքի՝ իրականացնելով մի շարք դատավարական գործողություններ հանցագործության և հանցանք կատարած անձի բացահայտման նպատակով²:

Այլ դատավարագետներ ընդգծում են, որ նախաքննության և հետաքննության մարմինները, ինչպես նաև դատախազը, քրեական վարույթ նախաձեռնելու փուլում լուծում են հետևյալ հարցերը. առկա՞ են արդյոք անհրաժեշտ տվյալներ, որպեսզի սկսվի կոնկրետ քրեական գործով քննությունը, ինչպե՞ս է անհրաժեշտ արձագանքել իրենց հայտնի դարձած փաստերին, որը պարունակում է ենթադրյալ հանցագործության հատկանիշներ, պահանջվո՞ւմ է արդյոք իրավապահ մարմինների միջամտությունը, թե՞ ոչ³:

Քրեական գործի հարուցման փուլի իրավական նշանակությունն այնպիսի դատավարական կարգի ապահովման մեջ է, որի պայմաններում կբացառվի քրեադատավարական գործիքակազմի անհիմն և անհարկի կիրառումը, հետևաբար նաև՝ ոչ հանցավոր դեպքերի կապակցությամբ անձանց իրավունքների ու օրինական շահերի սահմանափակումները և քրեաիրավական ռեսուրսների վատնումը:

¹Տե՛ս Ստրогович М.С. Курс советского уголовного процесса. Т.П. Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. – М., 1970, էջ 9:

²Տե՛ս Чеканов В.Я. Прокурорский надзор в уголовном судопроизводстве. – Саратов, 1972, էջ 31:

³Տե՛ս Карев Д.С., Савгирова Н.М. Возбуждение и расследование уголовных дел.-М., 1967, էջ 3:

Քննարկվող փուլի առաջնային խնդիրներից է քրեական գործ հարուցելու առիթի օրինականության, ինչպես նաև հիմքերի բավարարության պարզումը, որով քրեադատավարական իրավահարաբերությունները կտարանջատվեն այլ հասարակական, այդ թվում՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից:

Վերոգրյալի համատեքստում կարելի է եզրահանգել, որ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում քրեական գործի հարուցման փուլի էությունն իրավասու պաշտոնատար անձի կողմից կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ հայտարարությունների, հաղորդումների պատշաճ ընդունումն է, գրանցումը, քրեադատավարական ընթացակարգերով առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության պարզումն է, որի արդյունքում հնարավոր կլինի հանգել հետևության, թե արդյո՞ք առկա են քրեական գործ հարուցելու, թե՞ այն մերժելու հիմքեր:

Քրեական դատավարության տեսության մեջ քրեական դատավարության փուլերը բնորոշվում են որպես դատավարության փոխկապակցված, սակայն միմյանցից տարբերվող և հարաբերականորեն ինքնուրույն մասեր, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են քրեական դատավարության ընդհանուր խնդիրներից բխող անմիջական խնդիրներ, մասնակցող մարմինների և անձանց որոշակի շրջանակ, յուրահատուկ քրեադատավարական հարաբերություններ, դատավարական գործունեության որոշակի ընթացակարգ, դատավարական ձև, որն ավարտվում է ամփոփիչ դատավարական որոշման կայացմամբ⁴:

Ուստի տրամաբանական հարց է ծագում, թե քրեական գործի հարուցման փուլի առջև ինչպիսի խնդիրներ են դրված: Նշված հարցի վերաբերյալ որոշ դատավարագետներ առանձնացնում են խնդիրների առավել նեղ շրջանակ, իսկ որոշներն ընդլայնում են դրանք:

Օրինակ՝ Ա.Ռ.Միխայլենկոն առանձնացնում է քրեական գործի հարուցման փուլի հիմնական խնդիրները. հանցագործությունների վերաբերյալ ներկայացված սկզբնական նյութերի ընդունում, ուսումնասիրում, անհրաժեշտության դեպքում նաև այլ նյութերի և տվյալների ձեռքբերում՝ նպատակ

⁴ Տե՛ս ՀՀ քրական դատավարություն: Ընդհանուր մաս. (4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) /Մ.Դիլբանդյան, Ա.Հարությունյան, Գ.Ղազինյան և այլք.-ԵՊՀ-Եր.: 2006, էջ 18:

հետապնդելով քրեական գործի հարուցման առիթի օրինականության և բավարար հիմքերի առկայության հաստատման կամ դրանց հերքման, դեպքի բացահայտման, վարույթը բացառող հանգամանքների պարզման, հանցագործությունների կանխման և խափանման, օրենքով սահմանված կարգով հանցագործությունների հետքերի ամրագրման⁵:

Իսկ Ի.Ա.Կրյուչատովը սույն փուլի խնդիրների մեջ ներառում է ենթադրյալ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ բավարար տվյալների հայտնաբերումն ու ամրագրումը, արդյունքում՝ քրեական գործի հարուցումը՝ հանցագործության լիարժեք բացահայտման և հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար, ինչպես նաև այն հանգամանքների վերհանումը, որոնք բացառում են քրեական գործով վարույթը և ենթադրյալ հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը՝ համապատասխանաբար արդարացնող կամ ոչ արդարացնող հիմքով: Ինչպես նաև հիշյալ փուլի խնդիրների շարքին կարելի է դասել այն միջոցառումների համալիրի արդյունավետ կիրառումը, որոնք ժամանակին կկանխեն նախապատրաստվող կամ կխափանեն արդեն իսկ սկսված հանցագործությունը, կարձագանքեն հանցագործության հետքեր պարունակող յուրաքանչյուր դեպքին, քաղաքացիներին կդաստիարակեն օրենքների և ընդհանուր համակեցության կանոնների անխախտելի կատարման ոգով⁶:

Որոշ հեղինակներ կարծում են, որ քրեական գործի հարուցման փուլում ընդամենը ձևավորվում են նպաստավոր նախադրյալներ քրեական գործի հետագա քննության արդյունավետ կազմակերպման համար⁷: Միաժամանակ մի շարք գիտնականներ քրեական գործի հարուցման փուլին վերագրում են այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը բնորոշ է նախնական քննությանը: Օրինակ՝ Վ.Ն. Յանշինը և Ա.Վ. Պոբեդկինը նշում են, որ քրեական գործի հարուցման փուլը քրեական դատավարության ընդհանուր խնդիրների համատեքստում կոչված է արագ և լիարժեք բացահայտել հանցագործությունները,

⁵ Ст'у Михайленко А.Р. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. – Саратов, 1975, էջ 6-7:

⁶ Ст'у Крючатов И.А. Правовая природа возбуждения уголовного дела в советском уголовном процессе: автореф. дис. ... канд. юрид.наук. – Одесса, 1969, էջ 7-8:

⁷ Ст'у Прокурорский надзор в стадии возбуждения уголовного дела/ под ред. А.Н.Коробкова, М.Е.Токаревой. – М., 2002, էջ 6:

հայտնաբերել ենթադրյալ հանցանք կատարած անձանց և ապահովել քրեական օրենքի կիրառումը, որպեսզի հանցագործություն կատարած յուրաքանչյուր անձ ենթարկվի քրեական պատասխանատվության, միևնույն ժամանակ, ոչ մի անմեղ անձ անարդարացիորեն չդատապարտվի⁸:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Գ.Պ.Խիմիչևան՝ քրեական գործի հարուցման փուլի անմիջական խնդիրը հետաքննիչի, քննիչի կողմից հանցանշանների բացահայտումն է, որի նպատակով գրանցում և ստուգման են ենթարկում հանցագործության վերաբերյալ յուրաքանչյուր հաղորդում⁹:

Վերոգրյալի համատեքստում եզրակացնում ենք, որ քրեական գործի հարուցման փուլը, լինելով քրեական դատավարության բաղկացուցիչ մասը, նախ և առաջ պետք է ապահովի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խնդիրների լուծումը, այն է՝ մի կողմից հանցագործությունից անձի, հասարակության և պետության պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ:

Ուստի ակնհայտ է, որ խնդրո առարկա փուլի նշանակությունն ապահովելն է քրեական գործի հարուցման օրինականությունն ու հիմնավորվածությունը, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, որոնք չհիմնավորված քրեական գործի հարուցման դեպքում կարող էին խախտվել, քանի որ քաղաքացիներն անհիմն կներքաշվեին հանցագործության քննության ընթացակարգերի, հնարավոր է նաև՝ դատական վարույթների մեջ¹⁰:

Միևնույն ժամանակ, գաղտնիք չէ, որ խնդրո առարկա փուլի պատշաճ իրականացումից շատ հաճախ կախված է լինում քրեական գործի հետագա ընթացքը, մասնավորապես՝ հանցագործության և հանցանք կատարած անձի բացահայտումը և վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու

⁸ St' u Победкин А.В., Яшин В.Н. Возбуждение уголовного дела. Теория, практика, перспективы. – М., 2002, էջ 9:

⁹ St' u Химичева Г.П. Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности. – М., 2003, էջ 29-30:

¹⁰ St' u Уголовный процесс Российской Федерации, /отв. Ред. Проф А.П.Кругликов, М.: Проспект, 2009, էջ 335:

հարցի լուծումը: Չէ որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացումն ավարտական դատավարական փաստաթուղթ է, որի անհիմն կայացումը պարարտ հող կստեղծի ենթադրյալ հանցանք կատարած անձանց համար խուսափելու քրեական պատասխանատվությունից:

Այն մեծապես կարևորվում է նրանով, որ, ի տարբերություն քրեական դատավարության մյուս փուլերի, քրեական գործի հարուցման փուլն անմիջականորեն հաջորդում է ենթադրյալ հանցագործության կատարմանը և առաջնահերթ դառնում հանցանշաններ պարունակող հետքերի՝ օրենքով սահմանված կարգով ամրագրումը, որը հնարավորություն կընձեռի հետագա փուլերում ապահովել հանցագործության լիարժեք բացահայտումը և հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ապահովումը:

Համադրելով գործող քրեադատավարական կարգավորումները իրավակիրառ պրակտիկայում և տեսության մեջ քննարկյալ առարկա դարձված խնդիրները՝ կարծում ենք, որ քրեական գործի հարուցման փուլի հիմնական խնդիրը հանցագործության մասին ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցման կամ հարուցումը մերժելու մասին որոշման կայացման համար անհրաժեշտ պայմանների վերհանումն է: Մասնավորապես անհրաժեշտ է.

1. Ստուգել քրեական գործի հարուցման առիթի օրինականությունը: Ընդ որում, առաջին հերթին հաշվի պետք է առնվի հանցագործության մասին հաղորդման ամրագրման ձևի համապատասխանությունը քրեադատավարական օրենքով սահմանված պահանջներին: Բացի այդ, օրենսդիրը որոշ խումբ հանցագործությունների դեպքում նախատեսում է ոչ թե օրենքով սահմանված ցանկացած առիթի, այլ դրա որոշակի տեսակի առկայությունը: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը, այլ կերպ ասած՝ մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ կարող է հարուցվել ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա:

2. Ձեռք բերել ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ հանցագործության կատարման վերաբերյալ բավարար տվյալներ, որոնց համակցությունը բավարար հիմք կլինի ենթադրյալ արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու և համապատասխան հողվածով քրեական գործ հարուցելու համար: Նշված հանգամանքի կարևորությունը

պայմանավորված է նրանով, որ քրեական գործի հարուցման փուլում ենթադրյալ արարքին տրված ոչ ճիշտ քրեաիրավական գնահատականը քրեական դատավարության հետագա փուլերում կարող է հանգեցնել ձեռքբերված ապացույցների անթույլատրելիության: Ասվածի վառ ապացույցն է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումը, որով արձանագրել է, որ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը չի կարող իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը բացահայտելու նպատակով»¹¹: Արդյունքում քրեական գործի հարուցման փուլի առջև դրված խնդիրներն օրենքով սահմանված կարգով չլուծելու պայմաններում քրեական գործի քննության հետագա փուլերում կարող է վիճարկվել այնպիսի նշանակություն ունեցող ապացույց, ինչպիսին է «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները, որը կատարվել էր մինչև քրեական գործի հարուցումը, իսկ դրանից հետո այն հարուցվել էր այնպիսի ենթադրյալ հանցագործության կատարման փաստի առթիվ, որի բացահայտման համար նախատեսված չէ տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարումը:

Ստացվում է, որ քրեական գործի հարուցման փուլում ենթադրյալ հանցավոր արարքին ոչ ճիշտ քրեաիրավական գնահատական տալու արդյունքում ապօրինաբար կատարվել է «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, որն էականորեն սահմանափակել է անձի սահմանադրական իրավունքներն ու օրինական շահերը, դեռ ավելին՝ հիմք է դարձել անթույլատրելի ապացույցի ստացման համար:

3. Պարզել քրեական գործով վարույթը բացառող հանգամանքների առկայությունը, որոնք անվերապահորեն հանգեցնելու են քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացման: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նշված հանգամանքների առկայության պայմաններում հետաքննիչը, քննիչը, դատախազը պարտավոր են կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում նույնիսկ այն դեպքում, երբ առերևույթ առկա են բավարար հիմքեր քրեական գործ հարուցելու համար: Վարույթը բացառող հանգամանքի չպարզման դեպքում կարող են անհարկի վատնվել հանցավորության

¹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Կարինե Ժաժոյանի վերաբերյալ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԴ2/0004/01/14 որոշման 16-րդ կետ:

դեմ պայքարի քրեաիրավական միջոցները, սահմանափակվել անձանց իրավունքներն ու օրինական շահերը, կիրառվել քրեադատավարական հարկադրանքի միջոցներ և այլն այն դեպքում, երբ ի սկզբանե քրեական գործի հարուցումը եղել է ապօրինի և քրեական վարույթի ցանկացած փուլում այդ հանգամանքի բացահայտման դեպքում վարույթը ենթակա է լինելու կարճման:

4. Պարզել պաշտոնատար անձի՝ քրեական գործ հարուցելու իրավասությամբ օժտված լինելու հանգամանքը, մասնավորապես՝ քննչական ենթակայությունը: Նշված խնդրով պայմանավորված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում կայացման ենթակա որոշումների շրջանակում նախատեսում է նաև հաղորդումն ըստ ենթակայության հանձնելը: Նշված որոշման կայացման համար օրենսդիրը սահմանել է, որ քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է հանցագործության մասին հաղորդումը (առանց քրեական գործ հարուցելու) հանձնել ըստ ենթակայության, երբ քրեական գործի հարուցման հարցի լուծման համար հանցանքի կատարման վայրում անհրաժեշտ է կատարել դեպքին առնչվող նախնական գործողություններ:

Կարծում ենք, որ նշված ձևակերպումն արդարացված չէ, քանի որ հաղորդումն ըստ ենթակայության պետք է ուղարկվի ոչ միայն սահմանված դեպքում, այլ նաև այն ժամանակ, երբ պաշտոնատար անձն իրավասու չէ հարուցելու քրեական գործ, օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական գործով մեղադրյալը հաղորդում է ներկայացնում քննիչին առ այն, որ նա չարաշահում է իր պաշտոնական լիազորությունները: Ակնհայտ է, որ սույն դեպքում առկա չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պայմանները, սակայն քննիչն այս դեպքում իրավունք չունի լուծելու քրեական գործի հարուցման փուլի առջև դրված խնդիրները, որովհետև ի սկզբանե օժտված չէ նման լիազորությամբ, քանի որ պաշտոնատար անձանց կողմից ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ գործերը ենթակա են քննության ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից, բացի այդ տվյալ քննիչը շահագրգիռ անձ է:

Նշված հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ գործով՝ մասնավորապես արձանագրելով, որ «բոլոր այն դեպքերում, երբ հետաքն-

նության մարմնի աշխատակիցը, քննիչը կամ դատախազը ողջամտորեն կարող են հանդիսանալ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձ, անկախ այն հանգամանքից՝ դա տեղի է ունեցել իրենց լիազորություններն իրականացնելիս, թե դրանից դուրս, որպես քրեական գործ հարուցելու առիթ չի կարող դիտարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով՝ հանցագործության հայտնաբերում: Տվյալ դեպքում հանցագործության օրինական առիթ կարող է լինել նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ ֆիզիկական անձի հաղորդումը»¹²:

Դեռ ավելին, մատնանշված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օբյեկտիվ քննություն կատարելու պահանջը վերացական բնույթ կկրի, եթե չապահովվի քրեական գործի քննությունն իրականացնող մարմնի տվյալ գործի նկատմամբ գերատեսչական հետաքրքրության բացակայությունը, կողմերից մեկի և գործը քննող կառույցի շահերի համընկնման անթույլատրելիությունը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ քրեական գործով որպես տուժող է ճանաչված քննչական մարմնի ծառայողը, կամ վերջինս հանդիսանում է հանցավոր ոստիկանությունից տուժած անձ, անթույլատրելի է տվյալ գործի քննության իրականացումն այդ քննչական մարմնի կողմից, հակառակ դեպքում, չի երաշխավորվի գործի անաչառ քննության իրականացումը՝ կասկածի տակ դնելով ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

Ընդգծենք, սակայն, որ քրեական գործն ըստ ենթակայության ուղարկելու լիազորությունից սույն դեպքում քննիչն իրավունք չունի օգտվելու, քանի որ նշված կարգավորումը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Արդյունքում առկա է օրենսդրական բաց, այն դեպքում, երբ ՀՀ գլխավոր դատախազը, չօգտվելով իր լիազորությունից, քրեական գործի քննությունը չի փոխանցում մեկ այլ քննչական մարմնի, օրինակ՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը: Կարծում ենք, որ ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ է ուղղակիորեն կարգավորել նշված իրավիճակում խնդրի լուծման տարբերակները, որպեսզի չտուժի քրեական գործի քննությունը և չնպաստի ենթադրյալ հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից խուսափելուն: Մասնավորապես, առաջարկում ենք, որ ՀՀ վճռա-

¹² Տե՛ս նաև Ներսիսյանի և Է.Ամիրջյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0005/01/16 որոշում:

բեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում կատարվեն հետևյալ օրենսդրական փոփոխությունները, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասը, որը շարադրված է հետևյալ կերպ. «Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154¹, 154², 314.2, 314.3, 310.1 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները», լրացնել հետևյալ բառակապակցություններով. «ինչպես նաև այն գործերը, որոնցով որպես տուժող ճանաչվել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության, Պետական եկամուտների կոմիտեի կամ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողը, կամ վերջինս հանդիսանում է հանցավոր ոտնձգությունից տուժած անձ»:

Հիշյալ հարցի վերաբերյալ կարևոր դիտարկումներ է կատարել նաև ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը՝ արձանագրելով համապատասխան պաշտոնատար անձի արարքում իրավախախտման փաստն այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքի առկայության պայմաններում քրեական գործն ըստ ենթակայության չէր ուղարկվել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն՝ համապատասխան դատավարական գործողությունը կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, միևնույն ժամանակ արձանագրելով, որ այդ անգործությունը կարող էր ողջամտորեն հանգեցնել ապացույցի կորստի¹³:

5. Հաշվի առնել առանձին անձանց կարգավիճակով պայմանավորված առանձնահատկությունները, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ արտացոլվելու են անձի տվյալները, որի արդյունքում սկսվելու է փաստացի քրեական հետապնդումը: Մասնավորապես, քննության առարկա դարձնել այն հարցը, թե արդյո՞ք ներկայացված հաղորդումը չի վերաբերում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող, ինչպես նաև

¹³ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 6-ի թիվ ԿՀՈ 13 որոշման 1-ին կետ:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին կամ սույն օրենսգրքի 445-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական ընդդատությունից ազատված այլ անձանց կողմից ենթադրաբար հանցանք կատարելու դեպքերին, քանի որ նշված հարցը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, չի կարող լուծվել ներպետական օրենսդրությամբ, քանի որ ինչպես օրենսգրքի, այնպես էլ քրեական դատավարության նորմեր պարունակող այլ օրենքների գործողությունը չի տարածվում նրանց վրա, բացառությամբ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի: Նշված անձանց նկատմամբ գործերի քննության առանձնահատկությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին գլխով, այն է՝ «Միջազգային պայմանագրերով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց գործերով վարույթի առանձնահատկությունները» վերտառությամբ 51-րդ գլխով:

Միննույն ժամանակ, անհրաժեշտ է պարզել նաև, թե արդյո՞ք այն անձը, ում նկատմամբ հարուցվում է քրեական գործ և ում նկատմամբ փաստացի սկսվում է քրեական հետապնդում, չի օգտվում քրեական հետապնդման գործառության անձեռնմխելիությունից՝ գնահատման առարկա դարձնելով այն հարցը, թե արդյո՞ք նրանց վերագրվող գործողությունը կամ անգործությունը բխում է կամ բխել է նրանց ներկա կամ նախկին կարգավիճակից կամ գործունեությունից, թե՛ ոչ: Նշված հանգամանքը կարևոր երաշխիք է քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից, քանի որ անհարկի չի հանգեցնի սահմանափակումների՝ հանգեցնելով քրեական գործերի անհիմն հարուցման:

Քննարկվող հանգամանքի կարևորությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառության անձեռնմխելիությունը՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով, ճանաչելով Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր: Դեռ ավելին, նախա-

տեսելով օրենսդրի պարտավորությունը՝ սահմանելու հստակ կանոնակարգումներ, որոնք գործառությանն անձեռնմխելիության տեսանկյունից թույլ կտան մինչդատական քրեական վարույթի նկատմամբ իրականացնել արդյունավետ դատախազական հսկողություն և դատական վերահսկողություն, ինչպես նաև, ի հավելումն ընդհանուր պահանջների, գնահատել նաև գործառությանն անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ հարուցվելիք կամ արդեն հարուցված քրեական հետապնդման իրավաչափությունը¹⁴:

Վերլուծելով քրեական գործի հարուցման փուլի խնդիրները՝ կարող ենք եզրահանգել, որ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելը և դրանք օրենքով սահմանված կարգով քննության առարկա դարձնելը պետության՝ ի դեմս իրավասու մարմնի արձագանքն է հանցանշաններ պարունակող յուրաքանչյուր դեպքի: Հաղորդման ստուգման արդյունքում քրեական գործ հարուցելու մասին որոշման կայացումը պետության կողմից պաշտոնական ամրագրումն է, որ պետությունն իր իրավասու մարմինների միջոցով արձագանքել է հանցագործության մասին հաղորդմանը և պատրաստվում է կատարել համապատասխան գործողություններ հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

ПОНЯТИЕ И ПРОБЛЕМЫ СТАДИИ ИНИЦИАЦИИ УГОЛОВНОГО ДЕЛА

Казарян Тигран Самвелович

*аспирант кафедры уголовного
процесса и криминалистики
юридического факультета ЕГУ*

Правовые нормы, регулирующие стадию инициации уголовного дела, т.е. стадию возбуждения уголовного дела, а также правоприменительная практика, возникшая в результате её применения, постоянно находилась в центре внимания как правоведов, так и практиков.

Стадия инициации уголовного дела содержит в себе, с одной стороны, порядок изучения заявлений о преступлении следственными органами и принятие

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-1476 որոշման 4.1 կետը:

соответствующих решений в результате их рассмотрения, а с другой стороны, она, не имея соответствующего процессуального статуса, относится к правам и законным интересам человека, поскольку в данной стадии к лицу уже могут применяться меры пресечения, а также связанные с этим соответствующие права и обязанности.

Вышеупомянутое делает ещё более важным необходимость определения конкретных проблем стадии инициации уголовного дела.

Ключевые слова: инициировать уголовный процесс; отказать в возбуждении уголовного дела; проблемы стадии возбуждения уголовного дел; обстоятельства, исключающие процесс; подследственность, функциональная неприкосновенность; законность повода возбуждения уголовного дела.

CONCEPT AND PROBLEMS OF STAGES OF CRIMINAL CASE INITIATION

Tigran Ghazaryan

*PhD Student at Faculty of Law
of Yerevan State University*

The legal norms, regulating the stages of launching and initiating a criminal case, have always been in the centre of attention of both legal theorists and practicing lawyers.

On the one hand, the stages of a criminal case initiation involve the examination of the crime report submitted by the investigative bodies and the appropriate decision. On the other hand, not having any procedural status, it is directly related to a person's rights and legal interests, since at this stage some preventive measures may be taken. Thus, the definition of concrete problems of the stages of a criminal case initiation becomes far more important.

Key words: initiate a criminal procedure, rejection of a *criminal case initiation*, problems of the stages of a criminal case initiation, circumstances excluding proceedings, functional immunity, legality of the reasons of initiating a criminal case.

Հոդվածը գրախոսվել է՝ 31.01.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 06.02.2020թ.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մնացականյան Արտակ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական
աշխատանքների բաժնի պետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, ոստիկանության մայոր*

ՀՀ Սահմանադրության 1-ին իսկ հոդվածն ազդարարում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական** պետություն է: Իրավական պետության մեջ առանձնահատուկ տեղ պետք է ունենա հասարակության իրավական դաստիարակությունը: Անհնար է չնկատել, որ հետխորհրդային տարիների ընթացքում հասարակական գրեթե բոլոր հարաբերություններում ավելի ու ավելի է արդիական դառնում իրավաբանական գիտելիքների առկայության անհրաժեշտությունը: Ակնհայտ է իրավաբանական բուհերում դիմորդների և իրավաբանական կրթությամբ շրջանավարտների քանակի դինամիկան: Այս պարագայում ավելի, քան երբևէ կարևորվում է իրավաբանական կրթության որակի բարձրացումը, քանի որ արհեստավարժ իրավաբան դառնալու հիմքը դրվում է ուսումնական հաստատությունում:

Այս հարցի կարևորության մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի բարելավման հարցը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: ՀՀ կառավարության 2015 թ. օգոստոսի 31-ի նիստի N 40 արձանագրային որոշման հավելվածով հաստատվել է իրավական համաուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգը, որով կառավարությունն արտահայտեց ինչպես իր մտահոգությունները այս ոլորտի թերությունների և թերացումների մասին, այնպես էլ փորձ արվեց ուղիներ փնտրել այդ թերությունները վերացնելու և իրավաբանական կրթության համակարգը վերակառուցելու ուղղությամբ:

Հայեցակարգի նպատակն էր ստեղծել անհրաժեշտ հիմքեր իրավական

դաստիարակության և իրավական վարքագծային մշակույթի արմատավորման հանրային համակարգի ձևավորման, իրավաբանական կրթության զարգացման միջոցառումների մշակման և իրականացման համար: Հանրապետության Նախագահի կարգադրությամբ՝ նախատեսված իրավական համաուսուցման և իրավական դաստիարակության համակարգի վերակառուցման միջոցառումները պետք է ընթանան հետևյալ մակարդակներում.

1) նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրավական կրթության, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրավունքի ուսուցման և հասարակության իրավական համաուսուցման համակարգի կատարելագործում,

2) միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի ձևավորում և զարգացում,

3) բարձրագույն իրավաբանական կրթության համակարգի վերափոխում,

4) ՁԼՄ-ների միջոցով իրականացվող իրավական համաուսուցման և դաստիարակության կայուն համակարգի ստեղծում:

Սրանով փորձ արվեց իրավական կրթության որոշակի ծավալ հասցնել մատաղ սերնդին, որպեսզի դեռևս դպրոցական տարիքից բարձրացվի իրավագիտակցության մակարդակը: Հաջորդիվ որոշակիացվեց հետդպրոցական իրավական կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն իրավաբանական կրթության աստիճաններում: Իսկ ՁԼՄ-ների միջոցով իրականացվող իրավական համաուսուցման և դաստիարակության հիմնական նպատակներից մեկը կարելի է համարել իրավական համաուսուցման շահառուների շրջանակի ընդլայնումը, որի արդյունքում ակնկալվում է հասարակության իրավագիտակցության բարձրացում:

Վերը նշված հավելվածում որպես թերություններ նշվում են պրակտիկայի կարիքներին կրթության բովանդակության անհամապատասխանությունը, **դասավանդման ոչ արդյունավետ մեթոդաբանությունը** և ավելորդ ֆորմալիզմը, ուսումնական հաստատություններում իրավաբանական կրթությանը ներկայացվող հատուկ պահանջների բացակայությունը¹:

Ըստ Թոմաս Կունի՝ հասարակության զարգացման արդի փուլում

¹ Տե՛ս՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=82347>

կրթության մեջ նկատվում են կրթական հարացույցների փոփոխություններ, և կրթության փիլիսոփայության, մանկավարժության մեջ տեղի է ունենում հումանիտար և մարդասիրական շրջադարձ, որը ենթադրում է կրթության նոր մեթոդաբանության ուսումնասիրություն²:

Արդի ժամանակաշրջանում, երբ կայծակնային արագությամբ զարգանում են նորագույն տեխնոլոգիաները, երբ պետությունը և մասնավոր կազմակերպությունները մասնագետներից պահանջում են գիտելիքների նոր մակարդակ, պետք է համահունչ դարձնել նաև այդ մասնագետներին գիտելիք տրամադրելու մեթոդաբանությունը: Այս առումով կարելի է համաձայնել Լ. Միրզախանյանի հետ, ըստ վերջինիս՝ փոխվել են կրթության գերակայությունները, որ ենթադրում է համակարգի ներսում կառուցվածքային տարրերի մեթոդաբանության վերափոխում: Այն պետք է միտված լինի ապահովելու երկրի սոցիալ-տնտեսական, իրավական պահանջունքները, անձի, հասարակության, պետության պահանջների կայուն հարաբերակցությունը:

ՀՀ կրթական համակարգի արդիականացման առաջնահերթ խնդիրներից են ընդհանուր և մասնագիտական կրթության բարելավումը, շրջանավարտի մասնագիտական իրազեկության (նաև կարողունակության, գործիմացության) բարձր մակարդակի ապահովումը: Այս խնդիրները ենթադրում են մասնագիտական կրթության համակարգի արդիականացում, որը հենվում է ինտեգրացման և տեխնոլոգիականացման գործընթացների վրա: Այժմ հասարակությանն անհրաժեշտ է տարբեր իրավիճակներում արագ կոդմնորոշվող, ճիշտ որոշումներ կայացնող, պատասխանատու և թիմային արդյունավետ աշխատանքի պատրաստ, իրազեկ մասնագետ: Ժամանակակից բուհում իրավական կրթության նպատակը համապատասխան մասնագիտացում և բարձր որակավորում ունեցող իրավագետ պատրաստելն է, որը պետք է ձգտի մասնագիտական անընդհատ աճի: Ի պատասխան XXI դարի մարտահրավերների՝ իրավական կրթության համակարգում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Դրանք մասնավորապես վերաբերում են կրթության բովանդակությանը, կրթական հարացույցին,

² Sku` Кун Т. Структура научных революций (Сборник научно - образовательных докладов и статей, Е., 2014, с .13-17).

դասավանդման և ուսուցման տեխնոլոգիաներին և այլն³:

Վերը շարադրածից կարելի է հանգել իրավական կրթության կարևորությանը, իսկ իրավական կրթությունը, մեր կարծիքով, սկսվում է ուսումնական հաստատությունում դասախոսի լսարան մտնելու պահից: Այս պարագայում կարևորվում է, թե ինչպես կիրականացնի դասախոսն իրավունքի դասավանդումը, իրավունքի դասավանդման ինչ մեթոդ կնախընտրի, և ինչքանով արդյունավետ կլինի այդ մեթոդը սովորողին գիտելիք հրամցելու գործընթացում:

Ինչպես գիտենք, մեթոդը, դասական բնորոշմամբ, այն հնարքների ու միջոցների ամբողջությունն է, որն ուղղված է օբյեկտի ուսումնասիրությանը: Դասավանդման մեթոդն, ընդհանուր առմամբ բնորոշվում է որպես դասախոսի կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու սովորողի ուսուցման գործընթացը, սակայն տարբեր հեղինակներ ներկայացնում են դասավանդման մեթոդի այլ բնորոշումներ: Ե. Կրոպոնևան դասավանդման մեթոդը բնորոշում է որպես դասախոսի և սովորողի փոխկապակցված գործողությունների ամբողջություն, որն ուղղված է կրթելու խնդրի լուծմանը⁴, իսկ ըստ Օ. Տարասենկոյի՝ դասավանդման մեթոդը դասախոսի և սովորողների փոխազդեցության գործընթացն է, որի արդյունքում իրականացվում է կրթական ծրագրով նախատեսված գիտելիքների, ունակությունների և կարողությունների փոխանցում և ընկալում⁵:

Եթե ամփոփենք դասավանդման մեթոդի բնորոշումները, ապա կարելի է եզրահանգել, որ դասավանդման մեթոդը դասախոսի կողմից կիրառվող տարբեր հնարքների, միջոցների ամբողջությունն է, որի վերջնական նպատակը սովորողին տվյալ առարկայի վերաբերյալ ամբողջական գիտելիքներ, ունակություններ և կարողություններ հասցնելն է: Սակայն այս ամենից զատ, մեր կարծիքով, դասավանդման մեթոդը չպետք է սահմանափակվի միայն գիտելիք հասցնելով, պետք է յուրաքանչյուր կոնկրետ նյութի

³ Տես՝ Միրզախանյան, Լ. Ռ. (2014) *Իրավաբանական կրթության արդիականացման հիմնախնդիրը ժամանակակից մեթոդաբանական մոտեցումների համատեքստում*. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2, էջ 309.

⁴ Տես՝ Е.М. Кропанева, //Теория и методика обучения праву// Учебное пособие. Екатеринбург 2010, ст. 92.

⁵ Տես՝ О.А.Тарасенко //Современные методы преподавания юридических дисциплин//, Актуальные проблемы российского права. 2016. № 9 (70) сентябрь, ст. 219.

փոխանցելու ընթացքում ընտրվի այնպիսի մեթոդաբանություն, որ ընկալողի կողմից հետաքրքրություն առաջանա տվյալ նյութի վերաբերյալ, ինչպես նաև ցանկություն՝ խորանալ կամ իմանալ ավելին մատուցվող նյութի վերաբերյալ: Ի վերջո, ինչպես արդարացիորեն նշում է Ն. Իոֆֆեն՝ միայն լսարանի ինչ-որ նոր բան իմանալու ցանկության դեպքում է հնարավոր հասնել դրական արդյունքի⁶:

Առանձնակի կարևորություն ունի նաև դասավանդման մեթոդի ընտրության հարցը, քանի որ չի կարելի չարաշահել նույնիսկ ամենաարդյունավետ մեթոդի կիրառումը: Մեթոդի ընտրության առումով անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- ընտրված մեթոդը համապատասխանում է իրավունքի դասավանդման առանձնահատկություններին,
- ընտրված մեթոդը համապատասխանում է իրավունքի դասավանդման նպատակներին և խնդիրներին,
- ընտրված մեթոդը համապատասխանում է կոնկրետ թեմայի բովանդակությանը,
- ընտրված մեթոդը համապատասխանում է սովորողների ընկալման հնարավորություններին,
- ընտրված մեթոդը համապատասխանում է դասախոսի հնարավորություններին:

Մասնագիտական գրականության մեջ տարբեր հեղինակներ տալիս են իրավունքի դասավանդման մեթոդների տարբեր դասակարգումներ, օրինակ՝ Օ. Տարասենկոն դասավանդման մեթոդները դասակարգում է 3 հիմնական տեսակների՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ: **Պասիվ** մեթոդը դասախոսի և սովորողների փոխազդեցությունն է, որտեղ դասախոսը հիմնական գործող անձն է, իսկ սովորողները հանդես են գալիս որպես պասիվ ունկնդիրներ: Պասիվ մեթոդի կիրառման ընթացքում դասախոս-սովորող կապն իրականանում է հետևյալ ձևերով՝ հարցումներ, ինքնուրույն աշխատանք, ստուգողական աշխատանք, ռեֆերատների ներկայացում և այլն⁷: Ժամանակակից դասավանդման տեխնոլոգիաների և սովորողների կողմից

⁶ Сту` Н.А.Иоффе //Теоретические основы методики преподавания общественных дисциплин// Теоретические и методические основы преподавания права в школе /Курс лекций. – М.: Новый учебник, 2002. с. 66.

⁷ Сту` О.А.Тарасенко //Современные методы преподавания юридических дисциплин//, Актуальные проблемы российского права. 2016. № 9 (70) сентябрь, ст. 220.

նյութի ընկալման տեսանկյուններից պասիվ մեթոդը համարվում է ոչ արդյունավետ մեթոդներից մեկը, սակայն կան նաև այս մեթոդի դրական կողմերը՝ դասախոսությանը հեշտ և արագ պատրաստվելու և դասախոսության սահմանափակ ժամանակահատվածում համեմատաբար ծավալուն նյութ մատուցելու առումներով: Սա է պատճառը, որ շատ դասախոսներ նախապատվություն են տալիս հենց այս մեթոդին:

Ակտիվ մեթոդի դեպքում ակտիվ է ոչ միայն դասախոսը, այլ նաև սովորողները, իսկ դասախոսությունն ընթանում է դասախոս-սովորող կապի ամուր պահպանմամբ:

Ինտերակտիվ մեթոդի դեպքում սովորողների փոխներգործության շրջանակն ավելի է ընդլայնվում, և սովորողների կապը ոչ միայն դասախոսի հետ է, այլ նաև միմյանց հետ, ու դասավանդման ընթացքում այդ կապն ավելի է ակտիվանում: Այս մեթոդի դեպքում կարևորվում է նաև պարապմունքի վայրը, որը պետք է համապատասխանի տվյալ թեմայի բովանդակությանը: Այս մեթոդի կիրառման նպատակը ոչ այնքան ունեցած գիտելիքների ամրապնդումն է, այլ նոր գիտելիքների ձեռքբերումը⁸:

Ըստ գիտելիքի ստացման աղբյուրի դասավանդման մեթոդի ամենատարածված դասակարգումն է՝

- Խոսքային մեթոդներ (գիտելիքի աղբյուրը բանավոր կամ գրավոր խոսքն է),
- Տեսողական մեթոդներ (գիտելիքի աղբյուրը հանդիսանում է տեսողական նյութերը, ձեռնարկները և այլն),
- Պրակտիկ մեթոդներ (սովորողները գիտելիքներ և ունակություններ են ստանում պրակտիկ գործողություններ կատարելու միջոցով):

Խոսքային մեթոդները դասավանդման մեթոդների մեջ ամենակիրառվողն են, պետք է նշել՝ ժամանակին դրանք միակն էին և չնայած ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը՝ մինչև օրս զբաղեցնում են առաջնային տեղ: Ինչպես վերևում նշեցինք, այս մեթոդն ունի նաև իր դրական կողմերը (սահմանափակ ժամանակահատվածում մեծ ծավալի նյութ հրամցելու առումով), սակայն, այդուհանդերձ, չպետք է գերազնահատել այն, բազմաթիվ դասախոսներ հիմնավորում են տեսողական և պրակտիկ մեթոդներ

⁸ Տես՝ նույն տեղում:

րի զուգահեռ կիրառման անհրաժեշտությունը: Նաև չպետք է թերագնահատել այս մեթոդը, քանի որ խոսքն ակտիվացնում է ունկնդրի երևակայությունը, հիշողությունը, զգացմունքները: Ներկայումս ՀՀ բուհերում նույնպես դասավանդման մեթոդներից գերակշռում է խոսքային մեթոդը:

Խոսքային մեթոդներն իրենց հերթին կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ պատմելու, բացատրելու, զրույցի, քննարկումների, դասախոսության և գրքի հետ աշխատանքի:

Պատմելու մեթոդը ենթադրում է իրավական նյութի բովանդակության բանավոր ներկայացում սովորողներին: Այս մեթոդին, որպես նոր գիտելիքներ հրամցնելու միջոց, ներկայացվում է մի շարք պահանջներ՝ նյութի ներկայացումը պետք է լինի նպատակային և ուղղորդված, պարունակի միայն արժանահավատ և գիտականորեն ապացուցված փաստեր, համեմվի ներկայացվող նյութի արժանահավատությունը հիմնավորող վառ և համոզիչ օրինակներով, ունենա ներկայացնելու հստակ տրամաբանություն, լինի զգացմունքային, ներկայացվի պարզ և հասկանալի լեզվով, արտահայտվի դասախոսի անձնական գնահատականն ու վերաբերմունքը ներկայացվող փաստերի և իրադարձությունների վերաբերյալ:

Բացատրելու մեթոդը ենթադրում է ուսումնասիրվող նյութի, առանձին երևույթների բանավոր մեկնաբանությունները: Սա իրավունքի բովանդակության ներկայացման մենախոսության ձև է, որը պահանջում է խնդրի էության ճիշտ ձևակերպում, պատճառահետևանքային կապի և ապացույցների հետևողական բացահայտում, համեմատական վերլուծություն, վառ օրինակների մեջբերում, ներկայացման հստակ տրամաբանություն:

Զրույցի մեթոդը երկխոսություն է, ինչի օգնությամբ դասախոսը մանրակրկիտ մշակված հարցերի միջոցով նոր գիտելիք է հրամցնում սովորողին կամ ամրապնդում է արդեն իսկ ձեռք բերած գիտելիքները: Այս մեթոդը համեմատաբար ավելի հին մեթոդ է, որն օգտագործվում էր դեռևս հին հունական փիլիսոփաների կողմից: Կախված կոնկրետ խնդիրներից, ուսումնական ծրագրի բովանդակությունից, սովորողների հնարավորություններից՝ կարելի է առանձնացնել զրույցների մի քանի տեսակներ՝ երբ դասախոսը՝ հենվելով սովորողների արդեն իսկ ձեռք բերված գիտելիքների վրա, ուղղորդում է վերջիններիս նոր գիտելիքների ձեռքբերմանը, կամ տեղեկատվական զրույցներ, որտեղ դասախոսը նախապատրաստում է սովոր-

որողներին նոր գիտելիքների մատուցմանը: Ամրապնդող գրույցներն իրականացվում են նոր գիտելիքների մատուցումից հետո, որի ընթացքում հարցերը կարող են ուղղված լինել ինչպես կոնկրետ սովորողին (անհատական գրույց), այնպես էլ ամբողջ լսարանին (խմբային գրույց):

Այս մեթոդն արդյունավետ է միայն ճիշտ հարցադրումների դեպքում, իսկ հարցերը պետք է լինեն կարճ, հստակ և բովանդակալից, չի կարելի ձևակերպել երկակի, հուշող, պատասխան պարունակող հարցեր: Ընդհանուր առմամբ այս մեթոդն ունի որոշակի առավելություններ՝ ակտիվացնում է սովորողների հիշողությունը և խոսքը, ունի դաստիարակչական մեծ ուժ, իսկ թերություններն են՝ ժամանակատարությունը, որոշակի ռիսկայնությունը (սովորողները կարող են սխալ պատասխանել և այդ պատասխանը տպավորվի լսարանում):

Քննարկումների մեթոդը ենթադրում է է կոնկրետ խնդրի վերաբերյալ սովորողների մոտեցումների փոխանակում, իսկ այդ մոտեցումներն արտահայտում են կա'մ սովորողների անձնական կարծիքները, կա'մ կարող են հիմնվել այլ կարծիքների վրա: Այս մեթոդն ավելի նպատակահարմար է օգտագործել այն դեպքում, եթե սովորողներն ունեն հասուն և ինքնուրույն մտածելակերպ և կարող են հիմնավորել իրենց տեսակետը: Ըիշտ կազմակերպված քննարկումներն ունեն մեծ դաստիարակչական արժեք, սովորեցնում են պաշտպանել սեփական տեսակետը՝ հաշվի նստելով մյուսների կարծիքի հետ:

Խոսքային մեթոդների քննարկման համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ շատ կարևոր հանգամանքի՝ դասախոսի խոսքին: Դասախոսի պրոֆեսիոնալ գործունեությունը պահանջում է համապատասխան ձայն, որը պետք է լինի ճկուն և հնչեղ: Կարող է թվալ, որ իրավաբանական առարկաներ դասավանդող դասախոսի խոսքն այս կամ այն չափով նախապատրաստված է, դասախոսը կարող է պատրաստել իր դասախոսությունը, կարող է հստակ պատկերացնել՝ ինչ պետք է խոսի, բայց բանավոր խոսքի ժամանակ միշտ էլ անհրաժեշտություն է առաջանում ընթացքից փնտրել բառեր, հանպատրաստից ստեղծագործել և հորինել: Հանպատրաստից ստեղծագործելն ունի իր առավելությունները, քանի որ երբեմն անհրաժեշտություն է առաջանում լսարանային սահմանափակ ժամանակահատվածում ներկայացնել մեծ ծավալով նյութ, և այդ նյութի ճիշտ

ներկայացնելն ամբողջությամբ կախված է դասախոսի արհեստավարժությունից:

Տեսողական մեթոդների դեպքում ուսումնական նյութի մատուցումն իրականացվում է հիմնականում տեսողական ձեռնարկների և տեխնիկական միջոցների օգնությամբ:

Այս մեթոդը կիրառվում է խոսքային մեթոդի հետ փոխկապակցված և կարելի է բաժանել 2 հիմնական խմբերի՝ լուսաբանման և ցուցադրության:

Լուսաբանման մեթոդը ենթադրում է ուսումնական նյութի բովանդակությունը բացահայտող նկարների, աղյուսակների, սխեմաների և այլ ձեռնարկների ցուցադրություն:

Ցուցադրության մեթոդը ենթադրում է հիմնականում տեսաֆիլմերի, պրեզենտացիաների և այլնի ցուցադրություն:

Այս մեթոդի կիրառման համար անհրաժեշտ է պահմանել հետևյալ պահանջները.

- Տեսողական մեթոդի կիրառման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքը,
- Այս մեթոդը պետք է կիրառվի որոշակի չափաքանակով և միայն պարապմունքի համապատասխան պահին,
- Պետք է այնպես կազմակերպել, որ ցուցադրությունը տեսանելի լինի բոլոր սովորողներին,
- Լուսաբանման ժամանակ պետք է հստակ առանձնացնել կարևորը երկրորդականից,
- Պետք է հստակ և մանրագնին ներկայացնել մեկնաբանությունները,
- Ցուցադրությունը պետք է լիարժեք համապատասխանի ներկայացվող իրավունքի դասընթացին,
- Ցուցադրության ընթացքում սովորողներին պետք է ընդգրկել անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու գործընթացին:

Պետք է նշենք, որ դասավանդման ընթացքում նոր տեխնոլոգիաների ընդգրկումը հիմնականում կապված է տեսողական մեթոդի կիրառման հետ: Հետզհետե լայն տարածում է ձեռք բերում համակարգիչների, պրոյեկտորների, սենսորային գրատախտակների և այլ տեխնիկաների ներմուծումը դասավանդման գործընթացին: Մա հնարավորինս հեշտացնում է փորձի փոխանակման գործընթացը, մեծացնում է սովորողների հետաքրքրությունը

սովյալ առարկայի նկատմամբ, ստեղծում նոր մեթոդների և հնարքների գործածման հնարավորություն:

Իրավունքի դասավանդման **պրակտիկ** մեթոդը սովորողների պրակտիկ գործունեությունն է, որը ենթադրում է տարբեր իրավիճակային վարժություններ, իրավական խնդիրների լուծում, աշխատանք իրավական տեղեկատվության աղբյուրի հետ և այլն: Բանավոր վարժությունները նպաստում են տրամաբանական մտածողության զարգացմանը, հիշողությանը և խոսքին: Իմիտացիոն վարժություններն ունեն կոնկրետ նպատակաուղղվածություն, և հիմնական նպատակը սովորողի տեսական գիտելիքները գործնականում օգտագործելն է⁹:

Առհասարակ բոլոր ուսումնական հաստատություններում առանձնակի կարևորություն է տրվում սովորողների պրակտիկային: Վերջին ժամանակահատվածում ՀՀ իրավաբանական բուհերում լայն տարածում է գտնում իրավաբանական կլինիկաների գործունեությունը: Սա սովորողի տեսական գիտելիքները գործնականում կիրառելու լայն հնարավորություններ է ստեղծում: Գործնական հմտությունների ձեռքբերումն իրականացվում է «կենդանի» գործերի քննության ընթացքում: Իրավական օգնությունն ուղղորդված է, քանի որ այն ուղղված է կոնկրետ սուբյեկտին և կոնկրետ իրավական հարցին: Այդ աշխատանքն սկսվում է հաճախորդի հետ հարցազրույցից և ավարտվում խորհրդատվություն տրամադրելով կամ իրավական բնույթի փաստաթուղթ կազմելով: Ուսանողն ինքնուրույն է իրականացնում իրավաբանի աշխատանքը, սակայն խորհրդատվությունը հաճախորդին տրամադրվում է ղեկավարի՝ դասախոս-կոորդինատորի հսկողության տակ: Միննույն ժամանակ մի կարևոր հանգամանք ևս՝ դասախոս-կոորդինատորը մասնակցություն չի ունենում ուսանող-հաճախորդ շփմանը: Ուսանողը գործի հանգամանքները և կազմած փաստաթղթերը ներկայացնում է կոորդինատորին, ուստի վերջնական օգնությունը, որը տրամադրվում է քաղաքացիներին, համարվում է որակավորված: Իրավաբանական կլինիկայի շրջանավարտները, որպես կանոն, կարողանում են հեշ-

⁹ Стѹ Е.М. Кропанева, //Теория и методика обучения праву// Учебное пособие. Екатеринбург 2010, ст. 93-96.

տությամբ աշխատանք գտնել, քանզի նրանք արդեն տիրապետում են որոշակի գործնական հմտությունների¹⁰:

Ամփոփելով աշխատանքը՝ պետք է նշենք, որ դասախոսն ինքն է որոշում՝ դասավանդման կոնկրետ որ դեպքում ինչ մեթոդ կիրառի, սակայն այդ մեթոդը պետք է առավելագույնս ծառայի գիտելիքներ մատուցելու գործընթացին, առաջացնի սովորողի հետաքրքրությունը գիտելիքի նկատմամբ, կամք՝ հետագայում գիտությամբ զբաղվելու համար, և հենց այս տեսանկյունից էլ կարևորվում է դասավանդման մեթոդաբանության դերը կրթական համակարգում:

РОЛЬ МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ ЮРИДИЧЕСКИХ ДИСЦИПЛИН В УЧЕБНОМ ПРОЦЕССЕ

Мнацаканян Артак Самвелович

*Начальник научного отдела образовательного
комплекса полиции РА, майор полиции РА,
кандидат юридических наук*

В работе автор представляет характеристику методики преподавания права, остановившись на особенностях отдельных методов преподавания. Представлена классификация методов преподавания права, обсуждены преимущества и недостатки различных методов.

Ключевые слова: метод, речь, практика, интерактив, дискуссия, демонстрация, знание.

¹⁰ Տես՝ Ա. Մելիքսեթյան, // Իրավաբանական կլինիկան որպես ուսանող-իրավաբանների ուսուցման հատուկ ձև// Օրենքի պատվար թիվ 5, մարտ 2018թ, էջ 82:

THE ROLE OF METHODOLOGY IN TEACHING LAW DISCIPLINES WITHIN THE EDUCATIONAL PROCESS

Mnatsakanyan Artak

Head of the scientific department of the RA Police

Educational Complex, Major of Police, PhD.

The research covers the definitions of teaching law methodology and the characteristics of some specific teaching methods. Meanwhile, the classification of the law teaching methods are presented and their advantages and disadvantages are analyzed by the author.

Keywords: method, practice, interactive, discussion, display, knowledge.

Հոդվածը գրախոսվել է՝ 30.01.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 31.01.2020թ.

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Մուրադյան Մանուկ

*ՀՀ ոստիկանության իրավաբանական
վարչության պետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու,
դոցենտ, ոստիկանության գնդապետ*

(2) Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս արգելքի ինստիտուտների վրա հռոմեական իրավունքի ազդեցությունը: Իրավաբանական գրականության մեջ սուբյեկտիվ իրավունքի իրացման, վերջինիս չարաշահման հնարավորության կամ բացառման դիսկուրսն սկսվում է հռոմեական իրավունքում հայտնի *nullus videtur dolo facere, qui jure suo utitur* (ոչ ոք չի համարվում չարամիտ գործած, եթե նա օգտագործում է իր իրավունքը), *qui jure suo utitur, neminem laedit* կամ *qui jure suo utitur, neminem facit injuriam* (ոչ ոքի չի վնասում այն անձը, որ օգտվում է իր իրավունքներից)¹ և վերջիններիս հակոտնյա դիտարկվող *summum jus - summa injuria* (մինչև վերջ իրացված իրավունքը բարձրագույն անարդարություն է)² սկզբունքների միջև իրավական կոնֆլիկտի գնահատման ձևաչափով:

Գնահատելով «*qui jure suo utitur, neminem laedit*» սկզբունքի բովանդակությունը՝ իրավաբանական գրականության մեջ բերում են առանձին օրինակներ: Դրանց շարքում հատկապես ուշագրավ են հետևյալները՝ «Ես կարող եմ իմ տարածքում կառուցել հսկայական տուն, որն ամբողջությամբ կգրկի հարևանիս արևի լույսից, ես կարող եմ պարտքս հետ վերցնել, երբ կցանկանամ՝ անկախ այն հանգամանքից՝ գումարն ինձ անհրաժեշտ է այդ պահին, թե՛ ոչ» և այլն: Իրավաբանական գրականության մեջ պրակտիկայից վերցրած այս իրավիճակներով փորձ է կատարվել ցույց տալ, որ պատմական

¹ St' u Доманжо В. Ответственность за вред, причиненный путем злоупотребления правом // Уч. зап. Казанского Императорского университета. Кн. V. Казань, 1913. С. 1.

² St' u Памятники римского права: Законы XII таблиц. Институции Гая. Дигесты Юстиниана. М., 1997. С. 157, 167. Այս ձևակերպման տակ անհրաժեշտ է հասկանալ այն, որ եթե իրավունքն իրացվում է և հաշվի չի առնվում նրա նպատակը, սահմանը, ապա հենց դա է անարդարությունը: Այսինքն, խոսքն իրավունքի էությանը, նպատակին համապատասխան իրացման մեջ է:

որոշակի ժամանակահատվածում հռոմեական իրավունքը պաշտպանել է, այսպես կոչված, «ոչ ոքի չի վնասում այն անձը, որ օգտվում է իր իրավունքներից» սկզբունքը³: «Nullus videtur dolo facere, qui jure suo utitur», «qui jure suo utitur, neminem laedit» հռոմեական իրավունքին հայտնի սկզբունքների լեզվական մեկնաբանության և դրանց վերաբերյալ բերված օրինակների ուսումնասիրման արդյունքում հարց է առաջանում՝ ինչպես է հնարավոր կամ լեզվական ինչ մեկնաբանությամբ է հնարավոր այս ձևակերպումները կապել այն հանգամանքի հետ, որ չարաշահման կառուցակարգը որպես այդպիսին այս սկզբունքների կիրառության, գոյության պարագայում հնարավոր չէր: Նշված **սկզբունքների՝** իրավաբանական գրականության մեջ տրված թարգմանությունների արդյունքում⁴ կարելի է եզրակացնել, որ **խնդիրն առավելապես իրավունքի՝ իր նպատակին համապատասխան իրացման մասին է:** Հատկանշական է, որ «օգտվում է իր իրավունքներից» ձևակերպումը համարժեք է «իրացնում է իր իրավունքները» ձևակերպմանը: Անհերքելի է այն փաստը, որ եթե մարդը իրացնում է իր իրավունքը (այստեղ էական է այն, որ նշվում է «իրացնում է» տերմինը և ոչ թե չարաշահում է կամ իրացման ժամանակ թույլ է տալիս իրավունքի խախտումներ, որն իրացում համարելն արդեն սխալ է), ապա խոսել չարաշահման և կամ խախտումների մասին, մեղմ ասած, արդարացված չէ, սակայն իրավաբանական գրականության մեջ զուգահեռ բերված **օրինակները** վկայում են իրավունքի՝ դրա **նպատակին հակառակ իրացման մասին** (պարտքն առանց անհրաժեշտության հետ ուզելը, տուն կառուցելու իրավունքն օգտագործել հարևանին վնասելու տրամաբանությամբ և այլն) և ոչ թե նպատակային իրացման: Այսինքն՝ սկզբունքը նպատակային իրացման մասին է, իսկ օրինակները՝ նպատակին հակառակ իրացման: Եթե փորձենք նշված սկզբունքները ձևակերպել բերված օրինակներին համարժեք, ապա այդ սկզբունքների կոնստեքստում չարաշահման արգելքի մասին կարող էր խոսք գնալ, եթե, օրինակ, սկզբունքն այնպես ձևակերպվեր, որի թարգմանությունն ունենար հետևյալ բովանդակությունը՝ «**ոչ ոք չի համարվում չարա-**

³ St' u Покровский И. А. Основные проблемы гражданского права. М., 1998. С. 113. Малиновский А. А. Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование). – М.: Издательство «Юрлитинформ», 2007. С. 24.

⁴ Nullus videtur dolo facere, qui jure suo utitur (ոչ ոք չի համարվում չարամիտ գործած, եթե նա օգտագործում է իր իրավունքը), qui jure suo utitur, neminem laedit (ոչ ոքի չի վնասում այն անձը, ով օգտվում է իր իրավունքներից):

միտ գործած, եթե նա օգտագործում է իր իրավունքը դրա նպատակին համարժեք»։ Իրավաբանական գրականության մեջ նշված սկզբունքների և դրանց համարժեք բերված օրինակների գնահատման արդյունքում անհրաժեշտ է արձանագրել, որ առաջանում է անհամապատասխանություն բերված օրինակների և իրավաբանական գրականության մեջ սկզբունքների լեզվական նշանակության վերաբերյալ մոտեցումների միջև։ Առկա անորոշությամբ հակված չենք բացառելու և (կամ) թերագնահատելու սուբյեկտիվ իրավունքի չարաշահման վերաբերյալ հոռմեական իրավունքի ունեցած ազդեցությունը։ Խնդիրն այն է, որ *nullus videtur dolo facere, qui jure suo utitur* (ոչ ոք չի համարվում չարամիտ գործած, եթե նա օգտագործում է իր իրավունքը), *qui jure suo utitur, neminem laedit* կամ *qui jure suo utitur, neminem facit injuriam* (ոչ ոքի չի վնասում այն անձը, որ օգտվում է իր իրավունքներից) սկզբունքները *per se* չպետք է մեկնաբանել հոռմեական իրավունքում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինստիտուտի բացակայության լույսի ներքո։ Իրավիճակը բացահայտվում է, երբ մենք հղում ենք անում իրավաբանական գրականության մեջ առկա այլ սկզբունքների վրա, որոնք ըստ էության լրացնելու են վերը նշված սկզբունքները, որոնք, մեր կարծիքով, ոչ թե ունենին սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հնարավորությունը բացառող բովանդակություն, այլ իրավունքի իրացման, դրա նպատակային օգտագործման մասին էին։ Հեղինակները, ովքեր փորձում են հերքել, դրվագային դիտարկել հոռմեական իրավունքի ունեցած ազդեցությունը քննարկվող կառուցակարգի ձևավորման և զարգացման վրա, կարծես մոռանում են կամ առնվազն ավելորդ են համարում այնպիսի սկզբունքների գոյությունը, որոնք հիմնահարցի լուսաբանման առումով ունեն կարևոր դերակատարություն։ Այսպես, սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հնարավորության և դրա արգելքի մասին են հետևյալ ձևակերպումները (սկզբունքները)՝ «*male enim nostro iure uti non debemus*», ինչը թարգմանաբար նշանակում է՝ «չենք կարող չարամիտ, վատ նպատակներով օգտագործել մեր իրավունքները», կամ՝ «*contra legem facit, qui id facit, quod lex prohibet; in fraudem vero, qui salvis verbis legis sententiam eius circumvenit*», ինչը թարգմանաբար նշանակում է՝ «գործում է օրենքին հակառակ նա, ով կատարում է օրենքով արգելվածը», և, որ ամենակարևորն է, այս պարագայում՝ «չարաշահվում, շրջանցվում է օրենքը, երբ չարաշահողը պահպանում է օրենքի տառը՝

անտեսելով, խեղելով դրա նպատակը, իմաստը»⁵: Հիմնահարցի վրա հռոմեական իրավունքի ունեցած ավանդի մասին է նաև վկայում malitis non est indulgendum (չարաշահումն անընդունելի է) սկզբունքի գոյությունը: Իրավաբանական գրականության մեջ սկզբունքն ակտիվ շրջանառվում է՝ կապված ստրկատիրոջ կողմից ստրուկի նկատմամբ իր իրավունքների չափից ավել դաժան իրացնելու հետ: Ընդգծվում է, որ արգելվում է առանց պատճառի չափից ավել դաժան վերաբերմունքն ստրուկների նկատմամբ: Այսպիսով՝ ստրուկի՝ որպես խոսող գործիքի օգտագործումը ստրկատիրոջ իրավունքն էր, ինչն անթույլատրելի էր իրացնել այդ իրավունքի նպատակային շեղումով, օրինակ՝ անձնական հաճույք ստանալու կամ ստրուկին ծաղրելու նպատակներից ելնելով: Ավելին՝ հռոմեական իրավունքը մշակել էր նաև նման չարաշահումների դեմ գործիքներ, որը դրսևորվում էր ստրկատիրոջը ստրուկին վաճառելուն պարտավորեցնելու ձևով⁶: Այս մոտեցման դեմ հանդես եկողները պնդում են, որ «malitiis indulgendum non est» ձևակերպումն ըստ էության թարգմանվում⁷ է այլ կերպ և որևէ կապ չունի կոնկրետ օրինակում ստրկատիրոջ կողմից ստրուկի նկատմամբ իր իրավունքի չարաշահման հետ: Բացի էթիմոլոգիական բաղադրիչից, բերվում է նաև այն փաստարկը, որ հռոմեական իրավունքում ստրուկը ոչ թե հարաբերության սուբյեկտ էր, այլ օբյեկտ⁸: Հեղինակի այն փաստարկը, թե ստրուկը հարաբերության օբյեկտ է, այլ ոչ թե սուբյեկտ, նպատակ է հետապնդում ցույց տալու, որ ստրկատիրոջ նման գործողությունները որևէ մեկի շահերը (հարաբերության մեկ այլ սուբյեկտի) չեն վնասում, ինչը սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հատկանիշ է: Սակայն հեղինակը միաժամանակ նշում է, որ նման վարքագիծն անթույլատրելի էր, և որպես հետևանք՝ այն դրսևորվում էր ստրկատիրոջը՝ սեփականությունը (ստրուկին) օգտագործելու սահմանափակման ձևով (իրավունքի զարգացման ժամանակակից փուլում ևս սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ կիրառվող գործիքակազմի ամենատարածված ձևն այդ իրավունքի սահմանափակումն է): Այստեղից ակնհայտ է, որ հեղինակը ևս նման վարքագիծն

⁵ St' u Римское частное право: Учебник /Под редакцией И.Б.Новицкого, И.С.Перетерского. – М.: Издательство «Юристъ», 1996. с. 49-51.

⁶ St' u Памятники римского права: Законы XII таблиц. Институции Гая. Дигесты Юстиниана. М., 1997. С. 24.

⁷ St' u Темнов Е.И. Латинские юридические изречения / сост. и авт. предисл. проф. Е.И. Темнов. М., 2003. С. 245.

⁸ St' u Коршакова К. В. St'u՝ նշվ. աշխատությունը: Էջ 99:

անթույլատրելի էր համարում՝ անվանելով այն **«սեփականության ոչ տնտես-վար օգտագործում»**: Այն, որ ստրուկը հռոմեական իրավունքի իմաստով գույք էր, անվիճելի է, սակայն այն հանգամանքը, որ հռոմեական իրավունքը նման վարքը գնահատում էր անթույլատրելի, արդեն իսկ նշանակում է, որ դրա արդյունքում որևէ բան պետք է վնասվի: Միգուցե արդարացված կլիներ դիսկուրսը տանել չարաշահման և իրավախախտման հարաբերակցության գնահատման տիրույթում, սակայն հռոմեական իրավունքի այդ ժամանակների՝ հատկապես քննարկվող կառուցակարգի վերաբերյալ զարգացվածության աստիճանը, մեղմ ասած, բավարար չէր նշված հարաբերակցությունը ճիշտ գնահատելու համար: Կարծում ենք՝ նման վարքագիծը չարաշահում գնահատելու դեպքում անպայման ունենալու ենք վնասված շահ, ինչը երևում է նաև պատմական աղբյուրների այն վերլուծությունից, որտեղ այն պետք է առաջացնի որոշակի իրավական հետևանք (սեփականությունը (ստրուկին) օգտագործելու սահմանափակման ձևով՝ ստրուկին վաճառելու պարտականություն դնելը): Բիարկե, այս պարագայում չարաշահման մասին խոսք չի կարող լինել, եթե ստրկատիրոջ մեթոդները նպատակ ունեն պատժել ստրուկին՝ վերջինիս կողմից, օրինակ, իր պարտականությունները չկատարելու համար: Բացառապես ինչ-ինչ շահեր վնասելու հակվածությամբ իրավունքի իրացումը պետք է դիտարկել դրա չարաշահման տիրույթում: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ արգելված էր ոչ թե վատ վերաբերմունքը, այլ ծայրահեղ դաժան վերաբերմունքը: Ավելին, եթե ստրկատիրոջ արարքը գնահատելու լինենք օբյեկտիվ կողմից, ապա ստացվում է, որ ***վատ վերաբերմունքի իրավունքի չարաշահման*** մասին կարող էր խոսք լինել միայն այն ժամանակ, երբ այն դառնում էր ստրուկի համար անտանելի: Այս իմաստով ստացվում է, որ ստրկատերն ուներ ***վատ վերաբերմունքի իրավունք***, և միայն այն չարաշահվելու պարագայում էր վրա հասնելու ստրուկի նկատմամբ իրավունքներից զրկելու ձևով իրավական հետևանքը: Այստեղ կարևոր է նաև այն հանգամանքը, որ եթե պետությունը սահմանում է իրավունքի սահմանափակման գործիքներ, այդ ամենն արդեն նշանակում է, որ իրավունքը հանրային ճանաչման իմաստով արդեն գոյություն ունի: Անհրաժեշտ է կարևորել նաև այն, որ ստրկատիրոջ կողմից իր իրավունքի չարաշահման պարագայում վնասվում էին հենց հռոմեական պետության շահերը: Ինչպես իրավացիորեն ընդգծվում է իրավա-

քանական գրականության մեջ՝ «հենց պետությանը ձեռնտու չէր նման չարաշահումները, քանզի «խոսող գործիքների» նկատմամբ լիիրավ սեփականատերը պետությունն էր»⁹: Ընդգծվում է, որ չարաշահման որակման համար կարևոր նշանակություն ունեն առանձին շահեր վնասելու հակվածությունը և նպատակը: Այս իմաստով Հռոմեացի իրավաբան Մարցելը նշում է, որ չի կարելի դիտավորության մասին հայց հարուցել այն դեպքերում, եթե անձը, իր սեփական տարածքը բարեկարգելու նպատակներից ելնելով, փորում է այդ տարածքը՝ արդյունքում կտրելով հարևանի տարածք գնացող ջրի ստորգետնյա հոսքը¹⁰:

Հռոմեական իրավունքում չարաշահման փաստի գոյության մասին վկայող ակնառու օրինակ է անշարժ գույքի վաճառքից առաջ տան պատի գիպսային հատվածներ հեռացնելը՝ նոր սեփականատիրոջը չթողնելու մտադրությամբ: Ցելիուսը, լուծելով այս վեճը, հայտարարեց. «Պետք չէ չար նպատակներ ունենալ»¹¹. Չպետք է ստեղծվի տպավորություն, թե հռոմեական իրավունքում սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը կապվում էր բացառապես հարևանային իրավունքի հետ: Այն հնարավոր էր նաև ներընտանեկան հարաբերություններում՝ կապված ամուսնության իրավունքի հետ: Մասնավորապես հանրապետության վերջին շրջանում, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, բարոյականության անկմանը զուգահեռ, էականորեն ավելանում էին ամուսնալուծությունները: Ընդգծվում է, որ այդ փուլում պատճառներից էր ամուսնալուծությունների դեպքերը չսահմանափակելը, ինչի արդյունքում, օրինակ, տղամարդիկ, ստանալով այսպես կոչված *dos*-ը (տղամարդուն տրվող օժիտ), կարող էին ցանկացած պահի ամուսնալուծություն պահանջել կնոջից: Ստացվում է, որ գործ ունենք փաստացի չար նպատակներով ամուսնության իրավունքի իրացման հետ: Ավելի ուշ անհրաժեշտություն առաջացավ սահմանել մեխանիզմներ փաստացի ամուսնալուծված կանանց կամ այլ *dos* սահմանողների (կնոջ հայրը) իրավունքների վերականգնման իմաստով: Խոսքը վերաբերում է վճարված *dos*-ը *actio ex stipiaatu-ի միջոցով* հետ ստանալու պահանջի իրավունքին, երբ ամուսինն առանց որևէ հիմնավոր պատճառների պահանջում էր ամուսնալուծություն:

⁹ St' u Кузин А. А. Восхождение шиканы к римскому праву. Журнал «Социально-политические науки». Издательский дом Юр-БАК. М. 2017. С. 74.

¹⁰ St' u Покровский И.А. նշվ. աշխ. С. 113.

¹¹ St' u Перетерский И.С. Дигесты Юстиниана. М., 1956. С. 14.

Փաստացի ամուսնաընտանեկան իրավունքի առումով՝ հռոմեական իրավական մտքի զարգացումը (կնոջ կամ dos սահմանողի հետ ստանալու պահանջի իրավունք և այլն) պարզ ապացույցն էր այն բանի, որ հռոմեական հասարակությունը գիտակցում էր ամուսնու կողմից ամուսնության իրավունքի չարաշահման հնարավորության մասին: Սակայն ամուսնու կողմից ամուսնության իրավունքի չարաշահման դեմ այս գործիքը ժամանակի ընթացքում սպառեց իրեն, քանզի միայն dos ստանալու նպատակով տղամարդիկ սկսեցին ամուսնալուծություն պահանջել փաստացի ամուսնության ընթացքում dos-ը վատնելուց հետո: Իհարկե այդ դեպքում ևս կինն ունենալու էր dos-ը հետ ստանալու պահանջի իրավունք, սակայն դրա բավարարման հարցը կարող էր անհնար դառնալ հատկապես ամուսնու անվճարունակության դեպքերում: Հարաբերությունների նման զարգացումն ստիպեց սահմանել նոր կանոններ, որոնք ամուսնուն արգելելու էին առանց կնոջ համաձայնության վատնել dos-ը: Ժամանակի ընթացքում հարցի կարգավորումներն էլ ավելի խստացվեցին, և ամուսինն ամուսնության ընթացքում վերածվեց ընդամենը dos-ից օգտվողի: Ստացվում է, որ սկզբունքորեն ամուսնության իրավունքի չարաշահման դեմ ստեղծվեց բավականին ուժեղ գործիք: Այլևս օրյեկտիվորեն ձեռնտու չէր ամուսնանալը չար նպատակներով¹²:

Բերված օրինակները հիմք են տալիս հետևություն անելու՝ այնպես չէ, որ հռոմեացի իրավաբանները իրավիճակները ճիշտ չէին գնահատել, այլ ընդամենը ժամանակակից իրավաբանների մեկնաբանությունները՝ մեզ արդեն հայտնի լատինալեզու ձևակերպումների վերաբերյալ, չէին կարող արտահայտել այն իմաստը, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինստիտուտը (առնվազն դրա սաղմնային վիճակում) ծանոթ էր հռոմեացի իրավաբաններին:

Հռոմեական մասնավոր իրավունքի զարգացմանը զուգահեռ՝ ավելանալու էին ոչ միայն իրավունքի չարաշահման դեպքերը, այլ նաև ձևերը: Իրավաբանական գրականության մեջ հիշատակվում է նաև պայմանագրի ազատության իրավունքի չարաշահման, այն շրջանցելու դեպքեր («in fraudem legis»), երբ կողմերը, ցանկանալով հասնել նպատակին, կնքում էին օրենքի տառին համապատասխանող համաձայնություն, ինչը, սակայն, տանելու էր

¹² St' u Покровски И.А. История римского права. Издание Юридического книжного склада „ПРАВО“. Петроградъ, Литейный просп., 28. 1917. С. 360-361.

այն արդյունքի, որի դեմ պայքարում էր օրենքը: Նման գործարքները համարվում էին առ ոչինչ, քանզի իրավունքի նորմերը պետք է կիրառվեին ոչ թե տառացի, այլ նպատակին համարժեք¹³: Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդհանուր առմամբ հռոմեական իրավունքն իր զարգացման ընթացքում էական շեշտադրում է կատարել արդարության իրավունքի վրա՝ փորձելով այն կայացնել այնպիսի հասկացությունների գնահատման միջոցով, ինչպիսիք են՝ «չարամտություն» («peuspetito»), «օրենքին հակառակ» («contra legis»), «օրենքը շրջանցելով» («in fraudem legis»), «բարի խիղճ, բարեխղճություն» («bona fides»), «լավ բարքեր» («bona mores»)¹⁴:

Ըստ էության, այն հեղինակները, որոնք առհասարակ հերքում են սուրյեկտիվ իրավունքի չարաշահման կառուցակարգի արմատները հռոմեական իրավունքին վերագրելու տեսակետը, պնդում են, որ վերը նշված օրինակները հռոմեացի իրավաբանները դիտարկել են որպես իրավախախտում, քանի որ դրանք առաջ էին բերում պարտավորություններ, որոնք էլ կարող էին ծագել կա՛մ դեղիկտներից, կա՛մ կոնսրակտներից¹⁵: Այսպես՝ Կ. Ա. Կորշակովայի պնդմամբ վարքի դրսևորման նման ձևերը (տե՛ս վերը նշված օրինակները) դեղիկտներ էին և առաջացնում էին կոնկրետ պարտավորություններ, և դրանց որևէ կերպ պետք չէ անվանել *իրավունքի չարաշահում*՝ կամ, ինչպես հեղինակն է նշում, *«հատուկ տեսակի» խախտում*: Իրավունքի չարաշահման և իրավունքի խախտման հարաբերակցության հարցերը գնահատելով դրանց համար պարտավորությունների վրա հասնելու կամ չհասնելու հանգամանքների հետ՝ ստացվում է՝ չարաշահման դեպքում որևէ պարտավորություն չպետք է առաջանա չարաշահողի համար, իսկ եթե առաջանում է պարտավորություն՝ գործ ունենք խախտման հետ: Ժամանակից գիտական շրջանակներում սկզբունքորեն կասկած չի հարուցում չարաշահողի համար «պարտավորության» ինստիտուտի սահմանումը, իսկ գլխավոր խնդիրն այն է, թե ինչ ձևով պետք է դրսևորվի իրավական հետևանքը չարաշահողի համար: Բացի դրանից՝ հեղինակը վերջին դիտարկմամբ կարծես թե հակասության մեջ է մտնում իր տեսակետի հետ, քանզի նա վերը նշված օրինակների

¹³ St' u Хвостов В.М. Система римского права. Учебник /Вступительная статья: Суханов Е.А., Томсинов В.А. – М.: Издательство «Спарк», 1996. – С. 221.

¹⁴ St' u Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности: Перевод с французского В.А.Туманова. – М.: Издательство «Международные отношения», 1996. – 400 с.

¹⁵ St' u Черниловский З. М. Римское частное право. М., 2001. С. 139-140.

պարագայում անթույլատրելի է համարում խոսել նույնիսկ «հատուկ տեսակի» խախտումների մասին, այն պարագայում, երբ իր պնդմամբ *հենց խախտումներն* են (կարծում ենք՝ որևէ նշանակություն չունի՝ «հատուկ», թե այլ տեսակի) առաջացնում պարտավորություններ: Հեղինակի նման դիտարկումները թույլ են տալիս ենթադրելու, որ վերջինիս կողմից առնվազն բավարար չափով հստակեցված չեն խախտման և սուբյեկտիվ իրավունքի չարաշահման սահմանները: Կարծում ենք, անկախ այն հանգամանքից արարքը խախտում է, թե իրավական վարքագծի այլ տեսակ. սուբյեկտիվ իրավունքի չարաշահում, «հատուկ տեսակի» խախտում, անհրաժեշտաբար պետք է առաջացնի իրավական որևէ հետևանք: Հեղինակի դիտարկումներից պարզ է դառնում, որ չարաշահումը տեղ չունեն հռոմեական իրավունքում, որովհետև գոյություն ունեցող օրինակները խախտումներ էին և առաջացնում էին պարտավորություններ անձերի համար: Եթե փորձեն գուտ տրամաբանական ենթադրություն անել, ապա կստացվի, որ չարաշահում չի կարող լինել, որովհետև դրանք խախտումներ են: Հակված ենք մտածելու, որ նման պարզ հետևությունները բավարար են իրավական վարքագծի նշված տեսակների տարանջատման համար:

Հատկանշական է, որ հռոմեական իրավունքին հայտնի են եղել նաև սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ պայքարի դատավարական մեխանիզմներ ևս: Հիշատակվում է, որ եթե հայցվորը չէր կարողանում հիմնավորել, որ պատասխանողն իրեն պարտք է պահանջվող գումարը, ապա կորցնում էր նաև այն գումարը, որն իրականում պարտք էր: Խոսքը պարտքի իրական ծավալը գերազանցող պահանջի մասին էր: Նշվում է, որ եթե իրական պարտքը կազմում էր 90 դրամական միավոր, սակայն անձը՝ հայցվորը, պահանջում էր 100, ապա հայցվորը վարույթը տանուլ էր տալիս (*rem perdit*)՝ չհիմնավորված հայցապահանջ ներկայացնելու հիմքով (*causa cadit*): Նկատենք, որ դատարանն իրավունք չունեն պատասխանողին պարտավորեցնելու վճարել նույնիսկ իրական պարտքի չափը: Այսպիսով՝ չհիմնավորված պահանջի պատճառով հայցվորը կորցնում էր դրամական (իրական) պահանջի իրավունքը¹⁶: Կարծում ենք՝ այստեղ գործ ունենք հայցի իրավունքի

¹⁶ См. у Дождев Д.В. Римское частное право: Учебник. М.: НОРМА, 2000. С. 206. Հատկանշական է, որ ժամանակակից սահմանադրական իրավունքում այս սկզբունքը (նաև սուբյեկտիվ իրավունքը) հայտնի է որպես ընդհանուր ազատության կամ ազատ գործելու սահմանադրական իրավունք:

(պահանջի իրավունքի) չարաշահման հետ: Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ ուղղված հայցային գործիքակազմը հենված էր Բարեխղճության սկզբունքի վրա (*agefio bonae fidei*), որոնք դատավորներին հնարավորություն էին տալիս «չոր» իրավունքից շեղվել և ուշադրություն դարձնել արդարության և խելամտության սահմաններում պահանջները բավարարելու ձևաչափին: Բարեխղճության կանոնների պահպանման պայմաններում հռոմեական իրավական միտքն սկսեց տալ ազատության նոր բնորոշում, որի էությունը հետևյալում էր՝ «Ազատությունը բնական հնարավորություն է անելու այն, ինչ հարմար է, եթե դրան չի խանգարում ինչ-որ ուժ կամ ինչ-որ իրավունք»¹⁷: Որևէ իրավունքի վնասվելուն ուղղված ազատության իրացումը, այս բնորոշման համատեքստում, անթույլատրելի էր: Որպես օրինակ բերվում է, որ եթե պարտապանն ազատություն էր շնորհում իր ստրուկներին՝ դրանով իսկ ստեղծելով անվճարունակության վիճակ, նպատակ ունենալով վնաս հասցնել պարտատիրոջը, ապա պարտապանի նման գործողությունները գնահատվում էին որպես իրավունքի չարաշահում, իսկ որպես իրավական հետևանք շնորհված ազատությունը՝ առ ոչինչ, և ստրուկը չէր ընդունվում որպես ազատ¹⁸: Այս օրինակում իրավական հետևանքը դրսևորվում է ոչ թե այս կամ այն իրավունքից պարտապանին զրկելու ձևով, այլ պարտատիրոջ խախտված իրավունքները վերականգնելու ձևով, ինչը, մեր կարծիքով, պետք է դրվի չարաշահման հետևանքների վերականգման տրամաբանության հիմքում, ինչի մասին կխոսվի այլ հետազոտության շրջանակներում: Սուբյեկտիվ իրավունքների, այսպես կոչված, զգուշավորությամբ իրացման պահանջը դրված է եղել հռոմեական իրավունքի աղբյուրի հիմքում: Նշվում է, որ իրավունքները պետք է այն կերպ իրացվեն, որ դրանց արդյունքում չվնասվեն այլ անձանց իրավունքների իրացումը¹⁹: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը հենց սուբյեկտիվ իրավունքների իրացման չարաշահման արգելքի մասին է և ոչ թե իրավախախտման, քանզի ընդգծվում է, որ «իրավունքների իրացման» և ոչ թե խախտումների հնարավորության մասին է:

¹⁷ St' u Институтции Юстиниана. Перевод с латинского Д.Расснера. Под редакцией Л.Л.Кофанова, В.А.Томсинова. Серия «Памятники римского права». – М.: Издательство «Зерцало», 1998. С. 20.

¹⁸ St' u Институтции Юстиниана. Перевод с латинского Д.Расснера. Под редакцией Л.Л.Кофанова, В.А.Томсинова. Серия «Памятники римского права». – М.: Издательство «Зерцало», 1998. С. 27.

¹⁹ St' u Хвостов В.М. Система римского права. Общая часть. 4-е изд. 1908. С. 69.

Իրավաբանական գրականության մեջ ընդգծվում է, որ բացի իրական պարտքի չափը գերազանցող պահանջով դատարանին դիմելու օրինակից, հռոմեական իրավունքին հայտնի են եղել նաև, այսպես կոչված, դատավարական իրավունքի չարաշահման այլ ձևեր ևս: Որպես օրինակ բերվում է ժամանակավորեալ հայցը, ընդդատության կանոնների դիտավորյալ խախտումով հայցերը²⁰: Որպես դասական կարելի է բերել շուկայական հարաբերությունների կոնստիտուցիոն մրցակցային ոլորտից օրինակներ: Նշվում է, որ շատ էին դեպքերը, որ առևտրով զբաղվողներից մեկը դիտավորյալ, որպիսի մյուսի ապրանքը չվաճառվեր այդ պահին, հայց էր բերում դրա դեմ սեփականության իրավունքի վերաբերյալ վեճի շրջանակներում, սակայն նպատակը պոտենցիալ գնորդին մեկուսացնել էր: Իսկ երբ այդ հարցը լուծվում էր, հայցը հետ էր վերցվում²¹: Այստեղ մենք ունենք հայցի իրավունքի չարաշահման դասական օրինակ՝ ուղղված մյուս վաճառողի իրավունքները վնասելուն:

Այն, որ հռոմեական իրավունքում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման կառուցակարգն առավելապես կապված է եղել մասնավոր իրավական հարաբերությունների հետ, կարծես կասկած չի հարուցում, սակայն այս ամենը դեռևս չի նշանակում, որ հանրային իրավական հարաբերություններին ծանոթ չի եղել այս ինստիտուտը: Անհրաժեշտ հետազոտությունները թույլ են տալիս ենթադրել, որ կառուցակարգն իր առանձին դրսևորումներն է ունեցել նաև, օրինակ, քրեադատավարական հարաբերություններում: Ինչպես գիտենք, հռոմեական իրավունքին հայտնի է եղել, այսպես կոչված, հանրային շահերի մասնավոր պաշտպանության ինստիտուտը (*actio popularis*): Ինստիտուտի գործառնությունը դրսևորվում էր նրանում, որ ցանկացած քրեական գործ կարող էր սկսվել և ավարտին հասցվել, եթե մեղադրվողի, այսպես կոչված, քրեական հետապնդումն իր ձեռքը վերցնեք որևէ մասնավոր անձ, այսինքն՝ մասնավոր մեղադրողը, որը որևէ անձնական շահ չունեի տվյալ գործի շրջանակներում: Խնդիր չհետապնդելով կանգ առնել նշված ինստիտուտի առանձնահատկությունների հետազոտման վրա՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հռոմեական իրավունքը մշակել էր նաև մեղադրվողի՝ *actio popularis*-ի չարաշահումից պաշտպանության մեխանիզմներ: Ընդգծվում է,

²⁰ St' u Волков А.В. Возникновение проблемы злоупотребления правом в древнеримской цивилистике. Էլ *ntunipru*՝ <http://justicemaker.ru/view-article.php?id=26&art=701> (02.04.2019).

²¹ St' u Памятники римского права: Законы XII таблиц. Институции Гая. Дигесты Юстиниана. М., 1997. С. 226-227.

որ գոյություն ունեին ոչ հիմնավոր մեղադրանքներից և դրանց չարաշահումներից մասնավոր անձանց պաշտպանության մեխանիզմներ: Մասնավորապես՝ մեղադրվողն իրավունք ուներ *accusator*-ից (մեղադրողից) պահանջել երդվել այն մասին, որ մեղադրանքը ինքնանպատակ չէ, այսինքն՝ պահպանվել են բարեխղճության կանոնները (*iusiurandum calumnie*՝ բարեխղճության, խարդավանքի դեմ երդում), իսկ արդարացվելուց հետո մեղադրվողը կարող էր պահանջել մեղադրողին ճանաչել *calumniator* (զրպարտող), որին հետևում էր *infamia*-ն (վատ համբավի, անպատվության հաստատում), առանձին դեպքերում նաև՝ տուգանքի ձևով հատուցում²²:

Այսպիսով՝ հռոմեական իրավունքում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի, իրավական հնարավոր հետևանքների ամբողջ փիլիսոփայությունն արտահայտվում էր նրանում, որ իրավունքներն իրացնելիս չպետք է հետապնդել այլ անձանց վնաս պատճառելու նպատակ, չպետք է առաջնորդվել սեփական շահը կարևորելու «կոյր» տրամաբանությամբ, չպետք է օրենքի տառն օգտագործել չար նպատակներով՝ դրա նպատակին հակառակ: Իհարկե, առանձին դեպքերում հռոմեացի հեղինակները նույնացնում էին օրենքը շրջանցելը չարաշահման հետ, սակայն այդ հարցը նույնիսկ մինչև օրս չի ստացել իր հստակ պատասխանն անգամ դոկտրինալ մակարդակում: Հատկանշական է նաև, որ ոլորտին վերաբերող գրականության մեջ հիշատակվում է նաև Յուլ կայսեր «Չարաշահումների վերաբերյալ» հատուկ օրենքի մասին, որ մեզ չի հասել^{23,24}:

²² St' u Покровский И. А. Частная защита общественных интересов в Риме. // IVS ANTIQVVM. Древнее право. 2 (5), С 190-191.

²³ St' u Институции Юстиниана. Перевод с латинского Д.Расснера. Под редакцией Л.Л.Кофанова, В.А.Томсинова. Серия «Памятники римского права». – М.: Издательство «Зерцало», 1998. С. 379.

²⁴ Հոդվածի առաջին մասը տե՛ս «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի 8-րդ համարում, 2019թ., նոյեմբեր, էջ 42-52:

ПРОБЛЕМА ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ СУБЪЕКТИВНЫМ ПРАВОМ В РИМСКОМ ПРАВЕ

Мурадян Манук Оганесович

*Заместитель начальника Академии
Образовательного комплекса полиции РА,
канд. юрид. наук, доцент, полковник полиции*

Научная статья посвящена анализу возникновения института «злоупотребление субъективным правом» и вопросам запрета обсуждаемого института в римском праве. Она состоит из двух частей, в которых определены методология исследования, общие положения проблематики, оценка влияния римского права на институт «злоупотребления субъективным правом» и запрета на него. Была предпринята попытка показать, что в период римского права, по сути, существовали практические примеры злоупотребления субъективным правом и были разработаны механизмы борьбы против него.

Ключевые слова: Римское право, субъективное право, злоупотребление, запрет на злоупотребление.

THE PROBLEM OF ABUSE OF RIGHT IN ROMAN LAW

Muradyan Manuk

*Deputy Head of the Academy of the Police Educational Complex of RA
PhD in Law, Associate Professor Police Colonel*

The scientific article is devoted to the analysis of the origin of the institution “abuse of right” and the questions of its prohibition in Roman Law. It consists of two parts, in which the research methodology, the general provisions of the problem and the assessment of the influence of the Roman Law on the institutions of right abuse and its prohibition are specified. An attempt was made to show that in the period of Roman Law, in fact, there were practical examples of abuse of right and mechanisms to combat it.

Key words: Roman Law, abuse of right, prohibition of right abuse.

Հոդվածը գրախոսվել է՝ 20.09.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 24.01.2020թ.

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՊՐՔԻ
ՆԱԽԱԳԾՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼԻ
ՆԵՐԴՐՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Պետրոսյան Հակոբ

*ՀՀ ոստիկանության շտաբի տեսչական
վարչության պետի տեղակալ, ինքը և
հետաքննության բաժնի պետ,
խրավաքանական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ոստիկանության
գնդապետ*

Ներսիսյան Հայկ

*ՀՀ ոստիկանության շտաբի տեսչական
վարչության հետաքննության բաժնի
ՀԿՀ ավագ տեսուչ, ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի ակադեմիայի
մագիստրատուրայի սովորող,
ոստիկանության կապիտան*

Շուրջ երկու տասնամյակ գործող հետաքննության ներկայիս մոդելը Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է դեռևս 1999 թվականի հունվարի 12-ին ուժի մեջ մտած՝ ՀՀ քրեական դատավարության ներկայումս գործող օրենսգրքով: Հետաքննության մարմինների տեսակներն ու վերջիններիս լիազորությունները սահմանող սույն օրենսգրքի 56-րդ և 57-րդ հոդվածները տարիների ընթացքում մի շարք անգամներ ենթարկվել են և՛ փոփոխությունների, և՛ լրացումների (լրացվել է հետաքննության մարմինների ցանկը, վերջիններիս լիազորությունները): Օրենսգրքի ներկայիս տարբերակում հստակ սահմանված են հետաքննության մարմինները (դրանք 10 են)¹, ամրագրված են հե-

¹ Տե՛ս, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 56. Հետաքննության մարմիններն են՝

1) ոստիկանությունը.

2) գործառնաբեր, գործախնայությունների հրամանատարները և զինվորական հիմնարկ-ների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են գործամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին.

2¹) ռազմական ոստիկանությունը՝ օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով.

3) Հայաստանի փրկարար ծառայության մարմինները՝ փրկարարական ծառայության հետ կապված գործերով.

3¹) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ հրդեհներին և տեխնիկական անվտանգությանը վերաբերող գործերով.

4) հարկային մարմինները՝ հարկային հանցագործությունների գործերով.

տաքննության մարմնի, այդ թվում՝ հետաքննության մարմնի պետի և հետաքննության մարմնի աշխատակցի լիազորությունները:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի՝ նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով, իսկ հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում:

Չափազանց կարևոր է ընդգծել, որ հետաքննության ներկայիս մոդելի համաձայն՝ հետաքննության մարմիններն ունեն ինքնուրույն քննություն, այդ թվում՝ քննչական գործողություններ կատարելու և առանցքային նշանակություն ունեցող որոշումներ կայացնելու քրեադատավարական լիազորություններ:²

Որպես հետաքննություն իրականացնող ունիվերսալ մարմին՝ Հայաստանի Հանրապետությունում, հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով ստուգման գործընթացը, ինչպես նաև հետաքննության հիմնական մասն իրականացվում է ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների կողմից:

Արձանագրված վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է այն

5) մաքսային մարմինները՝ մաքսանենգության և, օրենքով նախատեսված դեպքերում, մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով.

6) ազգային անվտանգության մարմինները՝ օրենքով նրանց իրավասությանը հանձնված գործերով.

7) քրեակատարողական հիմնարկները՝ այդ հիմնարկների տարածքում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

8) օդանավի հրամանատարը օդանավում թռիչքի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ:

² Քրեադատավարական գործող օրենսդրության համաձայն՝ հետաքննության մարմիններին վերապահված է կատարելու 14 քննչական գործողություններից 10-ը, այդ թվում՝ զննություն, հետազոտման համար նմուշներ ստանալը, փորձաքննություն, խուզարկություն, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների լսում, առգրավում, քննում, կասկածյալի, տուժողների և վկաների հարցաքննություն, առերեսում: Հետաքննություն կատարող անձի կողմից կայացված՝ քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու, կասկածյալին ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, այն վերացնելու կամ փոփոխելու, համապատասխան քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար դատարանին միջնորդությամբ դիմելու, գործը քննիչին հանձնելու մասին որոշումները հաստատվում են հետաքննության մարմնի պետի կողմից:

մասին, որ տարեցտարի ավելանում է ինչպես հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների, այնպես էլ դրանցով կատարվող քրեադատավարական գործողությունների ծավալը, ըստ այդմ՝ ՀՀ ոստիկանությունում հետաքննչական գործառնություններ իրականացնող ծառայողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Այսպես, 2018 թվականի համեմատությամբ, հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներով ՀՀ ոստիկանության կողմից նախապատրաստված նյութերի քանակն աճել է **5.759-ով կամ 13.8%-ով (2018թ.՝ 41.466, 2019թ.՝ 47.225):**

27.3%-ով աճել է հարուցված քրեական գործերի քանակը (**2018թ.՝ 10.481, 2019թ.՝ 13.343**), իսկ **12.4%-ով** աճ է գրանցվել նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թվաքանակում (**2018թ.՝ 26.559, 2019թ.՝ 29.866**): Հետաքննության գծով հաստիքների գրեթե նույն թվի պարագայում՝ ստացված ցուցանիշները վկայում են բացառապես քրեադատավարական գործունեություն իրականացնող ծառայողների առավելագույնս ծանրաբեռնվածության մասին:

Կատարված քննչական գործողությունների քանակն աճել է **44%-ով կամ 1.488-ով (2018թ.՝ 3.377, 2019թ.՝ 4.865)**: Շուրջ **5.5 անգամ ավելացել է** ոստիկանության կողմից կիրառված ձեռքակալությունների թիվը (**2018թ.՝ 17, 2019թ.՝ 111**):

Այս ամենով հանդերձ՝ հատկանշական է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2019թ. աշնանը պաշտոնապես շրջանառության մեջ դրվեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը՝ ըստ էության, քրեադատավարական մի շարք նոր ինստիտուտների ներդրման և առաջարկվող նոր կարգավորումների հետ մեկտեղ առաջարկում է **հետաքննության բոլորովին նոր մոդել**:

Նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեև օրենսգրքի մակարդակով ներկայիս հետաքննության մարմնի աշխատակցի փոխարեն ամրագրվել է քրեադատավարական բոլորովին նոր սուբյեկտ՝ **հետաքննիչ**, սակայն հետաքննությունը՝ որպես նախնական քննության սկզբնական փուլ, **այլևս գոյություն չի ունենալու**: Համաձայն Նախագծի 188-րդ հոդվածի՝ **հետաքննությունն սկսվում է միայն նախաքննությունն սկսելուց հետո**՝ գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառում-

ների իրականացման ձևաչափով: Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ հետաքննության շրջանակներում գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել **բացառապես քննիչի գրավոր հանձնարարության** հիման վրա, իսկ հետաքննության շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ **ինչպես քննիչի գրավոր հանձնարարությամբ, այնպես էլ հետաքննության մարմնի նախաձեռնությամբ**: Ինչ վերաբերում է հետաքննության ավարտին, ապա ի տարբերություն գործող քրեադատավարական կարգավորումների, Նախագծի համաձայն, հետաքննությունն **ավարտվում է** նախաքննության հետ միաժամանակ, իսկ նախաքննության ավարտման պահին շարունակվող գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումները **դադարեցվում են**:

Առաջարկվող տարբերակի ուսումնասիրությամբ պարզվում է, որ ներկայիս հետաքննության ինստիտուտը, հետաքննության մարմնին տրված իր քրեադատավարական լիազորություններով հանդերձ, ամբողջությամբ վերանում է, **ստեղծվում է հետաքննական գործունեության նոր ոլորտ, «հետաքննիչ» անվամբ նոր քրեադատավարական սուբյեկտ, որն ըստ էության օժտված է լինելու ոչ թե դատավարական, այլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու գործառույթներով**:

Այսպես, Նախագծի 241-րդ հոդվածով թվարկված են **գաղտնի քննչական գործողությունների տեսակները**: Դրանք են՝

- ներքին դիտումը,
- արտաքին դիտումը,
- նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկումը,
- թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը,
- ֆինանսական գործարքների վերահսկումը,
- կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը:

Հարկ է ընդգծել, որ նշված միջոցառումներն **ըստ էության նույնացվել են** օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետ, որոնք ներկայումս թվարկված են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով:

Նախագծով առաջարկվող հետաքննիչի և քննիչի քրեադատավարական գործառույթների վերլուծության, ներկայումս գոյություն ունեցող իրավասությունների հետ համադրման արդյունքում, գալիս ենք այն եզրահանգման, որ

առկա են երկու սուբյեկտների գործառնությունների բաշխման որոշակի **չհավասարակշռված մոտեցում**, հետաքննության լիազորությունների շրջանակի էական կրճատում, նահանջ: Մասնավորապես, առաջարկվող տարբերակով հետաքննիչն իրեն վերապահված քրեադատավարական գործառնություններն հիմնականում իրականացնելու է **բացառապես քննիչի հանձնարարությամբ**, իսկ իր նախաձեռնությամբ կարող է իրականացնել միայն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնք, ըստ էության, իրականացնում և իրականացնելու է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով: **Արձանագրենք, որ հետաքննության մարմինն ուղղակիորեն զրկվում է քրեադատավարական ներկայիս լիազորություններից:**

Որքան էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեադատավարական ոլորտ բերելու և ապացուցողական նշանակություն հաղորդելու մոտեցումն ընդունելի լինի (Նախագծի 242-րդ հոդվածի 1-ին մաս), կարծում ենք, որ, միևնույն է, նման խմբագրությամբ օրենսգրքի ընդունումը գործնականում կարող է հանգեցնել որոշակի խնդիրների: Մասնավորապես՝

1) կարո՞ղ ենք բացառել արդյոք իրավակիրառ պրակտիկայում առաջացող հակասությունները երկու օրենսդրական ակտերի միջև (*ՀՀ ՔՊՕ* և «ՕՀԳ մասին» օրենք),

2) կհամարվի արդյո՞ք իրավաչափ գաղտնի քննչական գործողությունների անվան տակ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը,

3) քրեադատավարական օրենսդրությամբ գաղտնի քննչական, սակայն, ըստ էության, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման վերաբերյալ իրավանորմների նախատեսումը կարո՞ղ է ճիշտ համարվել արդյոք, եթե այն իրականում դուրս է քրեադատավարական գործունեության կարգավորման առարկայի շրջանակներից:

Նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ հետաքննության մարմնի պետը և հետաքննիչը **թեև հանդիսանում են վարույթի հանրային մասնակիցներ, սակայն նախատեսված չեն մեղադրանքի կողմում ընդգրկված սուբյեկտների շարքում**: Կարծում ենք, որ այս մոտեցումը ևս լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Առկա իրավիճակի վերլուծության և հնարավոր զարգացումների վերա-

բերյալ որոշ կանխատեսումների համաձայն՝ կարծում ենք, որ Նախագծով առաջարկվող տարբերակի ներդրման պարագայում գործնականում կարող են առաջանալ մի շարք խնդիրներ, մասնավորապես.

1. Ներկայումս, տարվա կտրվածքով, հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներով ՀՀ ոստիկանության կողմից նախապատրաստվում են շուրջ **47.000** նյութեր, այդ թվում՝ հարուցվում է շուրջ **13.000** և ավելի քրեական գործեր, որոնցով իրականացվում են բազմաթիվ քննչական և դատավարական գործողություններ, կիրառվում են դատավարական հարկադրանքի միջոցներ: Հետաքննության մոդելի առաջարկվող տարբերակով նշված աշխատանքները պետք է իրականացվեն նախաքննության մարմնի, տվյալ դեպքում՝ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ուժերով, ինչը վերջիններիս ծանրաբեռնվածության պարագայում գրեթե անհնար է:

2. Նշված աշխատանքների իրականացումը հնարավոր կլինի բացառապես քննիչների նոր հաստիքների տրամադրման դեպքում, սակայն պետք է հաշվի առնել, որ այս մոտեցումը ևս պետության վրա կարող է լուրջ ֆինանսական բեռ առաջացնել՝ հատկապես աշխատավարձերի վճարման առումով: Պետք է նկատի ունենալ, որ սկսնակ քննիչի մեկ ամսվա աշխատավարձը հավելավճարներով կազմում է շուրջ **350.000դր.**, այն դեպքում, երբ նույն աշխատանքը հետաքննության մարմնի աշխատակիցը ներկայումս կատարում է մոտ **200.000 դրամով**: Այսինքն, ֆինանսական տեսանկյունից ևս՝ հետաքննության նոր մոդելի ներդրումը ծախսատար է, քանի որ պետության կողմից միայն աշխատավարձերի ձևով կատարվելիք ծախսերը գրեթե **կրկնակի կաճեն**:

3. Ոստիկանության հետաքննության գծով ծառայողների հաստիքների ՀՀ քննչական կոմիտեի տրամադրման պարագայում նույնիսկ պետք է հաշվի առնել, որ ներկայացված **47.000 նյութերի 1/3-րդը** նախապատրաստվում են հետաքննության մարմնի աշխատակիցների՝ քրեական հետախուզության, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքային ոստիկանության ծառայողների կողմից: Այսինքն՝ նշված ծավալների աշխատանքների կատարման դեպքում **կրկին հաստիքների էական թվով ավելացման անհրաժեշտություն կառաջանա**, ինչը ևս էական ֆինանսական ծախսերի հետ է կապված:

4. Համաձայն Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների՝ մասնավոր մեղադրանքի կարգով քրեական հետապնդման գործերով տուժողը

քրեական հայցով դիմում է դատարան՝ իր խախտված իրավունքները վերականգնելու համար: Գաղափարը, ինչ խոսք, ընդունելի է, այն ակնհայտորեն կկրճատի նյութերի նախապատրաստմամբ զբաղվող ծառայողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, սակայն չպետք է անտեսենք այն հանգամանքը, որ նույն չափով էլ կավելանա դատարանների ծանրաբեռնվածությունը: Այս դեպքում արդեն անհրաժեշտություն կառաջանա ավելացնելու դատավորների հաստիքների թիվը, ինչն իր հերթին կրկին լուրջ ֆինանսական ծախսեր է ենթադրում:

Այս ամենով հանդերձ՝ պետք է արձանագրենք, որ բացի ֆինանսական կողմից, Նախագծով հետաքննության և նախաքննության ոլորտներին առնչվող ներկայացված իրավակարգավորումներն իրենց մեջ **որոշ ռիսկեր են պարունակում**, ինչը հնարավոր չէ անտեսել ևս: Այսպես.

1) Նախագծով օպերատիվ-հետախուզական գործունեությունը նույնացվում է քրեադատավարական գործունեության հետ՝

ա) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով ներկայումս նախատեսված 16 օպերատիվ-հետախուզական միջոցառումներից 6-ը նախատեսվել են Նախագծի մեջ որպես գաղտնի քննչական գործողություններ,

բ) նշված 6 օպերատիվ-հետախուզական միջոցառումները կատարելու համար հարկավոր է դատարանի որոշում, նույնը նախատեսված է 6 գաղտնի քննչական գործողությունների դեպքում, սակայն օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասով կա որոշակի բացառություն: Ահաբեկչական գործողությունների, պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանը սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների դեպքում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով թույլատրվում է ՕՀՄ-ի անցկացումը՝ 48 ժամվա ընթացքում այդ մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցելով դատարանին, իսկ Նախագծով նման բացառություն նախատեսված չէ:

գ) Նախագծով գաղտնի քննչական գործողությունները թույլատրվում է կատարել միայն ծանր և առանձնապես ծանր հացագործողությունների վերաբերյալ վարույթներով (տե՛ս, 242-րդ հոդվածի 3-րդ մաս), իսկ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի

համաձայն՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների առկայության պահանջը տարածվում է դրանցից 4-ի՝ ներքին դիտման, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման, հեռախոսային խոսակցությունների վերահսկման, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովման և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկման վրա:

2) Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ, որպես հայեցակարգային մոտեցում հետաքննության մարմինը, ի դեմս հետաքննիչի, ի սկզբանե չպետք է քննչական գործողություններ անելու հնարավորություն ունենա, սակայն Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում հնարավորություն է տրվում կատարելու ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին: Պետք է նկատի ունենալ, որ ապագայում, **պարեկային ծառայության ներդրման** շրջանակներում նշված գործառույթը պետք է իրականացնի ոչ թե հետաքննիչը, այլ ոստիկանության **պարեկային ծառայողը**, ով, փաստորեն, հետաքննիչը չէ:

3) Խնդիրներ կարող են առաջանալ նաև հանցագործությունների մասին հաղորդումների գրանցման, տեղեկությունների գտման և հետագա գործնական փոխհարաբերությունների (քննիչի կողմից դեպքի վայր մեկնելու) առումներով ևս: Նախագծի ընդունման պարագայում մի շարք նորմատիվ իրավական ակտերի փոփոխման և լրացման շրջանակներում վերանայման կարիք կունենա նաև ՀՀ կառավարության 23.11.2017թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթրելու Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1495-Ն որոշումը:

Դիտարկելով խնդրի կարևորությունը՝ առաջարկում ենք հետաքննության ոլորտի կանոնակարգման մի քանի տարբերակներ: Կարծում ենք, որ այն հնարավոր կլինի իրականացնել նաև ներկայումս արդեն իսկ սկսված սահմանադրական բարեփոխումների շրջանակներում: Այսպես.

Տարբերակ 1-ին. ոստիկանությունում հետաքննական ապարատի բազայի

հիման վրա ստեղծվում է քննչական նոր մարմին³, որի ենթակայությանը կհանձնվեն ոչ մեծ ծանրության և որոշ դեպքերում նաև միջին ծանրության հանցագործություններով քրեական վարույթ նախաձեռնելու և իրականացնելու գործառնությունները: Տվյալ դեպքում **ռստիկանության քննիչների** կողմից կիրականացվի լիարժեք, ամբողջական քննություն, և գործը մեղադրական եզրակացությամբ կուղարկվի դատարան, ինչի արդյունքում էականորեն կնվազի ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում ներկայումս առկա և ակնկալվող ծանրաբեռնվածությունը:

Տարբերակ 2-րդ. 1-ին տարբերակի բացառման դեպքում, պահպանվում են հետաքննության մարմնի քրեադատավարական լիազորությունները, հետաքննության մարմնին տրվում է իրավասություն՝ **մեկամսյա ժամկետում** ոչ մեծ ծանրության և որոշ դեպքերում նաև միջին ծանրության հանցագործությունների դեպքերով նախաձեռնելու քրեական վարույթ, իրականացնելու գործի լիարժեք քննություն և այն մեղադրական ակտով ուղարկելու դատարան:

³ Հարկ ենք համարում նշել, որ 2019թ. սեպտեմբերին ՀՀ ռստիկանությունում Եվրոպական հարևանության քաղաքականության ԹԱՅԵՔՍ (TAIEX) գործիքի ներքո իրականացված դիտորդական առաքելության շրջանակներում ներկայացված եզրակացություններում նշվել է. «...գարմանայիորեն ազգային ռստիկանությունը՝ որպես իրավապահ ամենամեծ կազմակերպություն, ունի սահմանափակ լիազորություններ: Ոստիկանական իրավասությունը վերաբերում է տասն օրվա հետաքննությանը, որից հետո ռստիկանության ծառայողը պարտավոր է քննությունը փոխանցել քննչական կոմիտեին: Այդ ինստիտուտների միջև համագործակցությունն ունի ֆորմալ բնույթ: Միևնույն ժամանակ, Պետական եկամուտների ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայությունը և Հատուկ քննչական ծառայությունն ունեն լիարժեք լիազորություններ՝ քրեական հետաքննություն անցկացնելու համար...»:

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ МОДЕЛИ ДОЗНАНИЯ, ПРЕДЛАГАЕМОЙ НОВЫМ УГОЛОВНО- ПРОЦЕССУАЛЬНЫМ КОДЕКСОМ РА

Петросян Акоп Рафикович

*Заместитель начальника Управления
инспекции, он же начальник отдела
дознания Штаба полиции РА, канд.
юр. наук, доцент, полковник
полиции*

Нерсисян Айк Нерсесович

*Старший инспектор по особо важным
поручениям отдела дознания
Управления инспекции Штаба полиции
РА, слушатель магистратуры Академии
Образовательного комплекса полиции
РА, капитан полиции*

В статье рассматриваются модели дознания, предусмотренные действующим уголовно-процессуальным законодательством и Проектом нового Уголовно-процессуального кодекса РА, их различия и особенности.

Сравнительно-правовой анализ основных функций и полномочий органов дознания показывает институциональные изменения, которые будут внесены в результате принятия нового Проекта Уголовно-процессуального кодекса РА.

В статье также рассматриваются возможные проблемы, которые могут возникнуть при введении новой модели дознания.

Ключевые слова: дознание, новая модель дознания, органы дознания, дознаватель.

ON SOME ISSUES OF THE INVESTIGATION MODEL PROPOSED BY THE DRAFT OF THE NEW CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Petrosyan Hakob

*Deputy Head of the Inspection
Department of the Headquarters of RA
Police, Head of the Investigation Division,
PhD in Law, Associate Professor,
Police Colonel*

Nersisyan Hayk

*Senior Inspector on Special Tasks of the
Investigation Division of the Inspection
Department of the Headquarters of RA
Police Master's Student at the Police
Educational Complex of RA,
Police Captain*

The article deals with the models of investigation provided by the existing Criminal Procedural Law and the Draft of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, their differences and peculiarities.

The comparative legal analysis of the main functions and powers of the investigative bodies shows the institutional changes that will be made by the adoption of the new Draft of the Criminal Procedure Code of RA.

The article also addresses the possible problems that may arise due to the implementation of a new investigational model, both in the transitional phase and afterwards.

Key words: investigation, new model of investigation, investigative body, investigator.

Հոդվածը գրախոսվել է՝ 29.01.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 04.02.2020թ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱԾԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆ

Սահակյան Ալեքսանդր

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
Ակադեմիայի ՕՀԳ և
քրեագիտության ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ*

Գրիգորյան Անուշ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
հասարակագիտական առարկաների և
հոգեբանության ամբիոնի ավագ
դասախոս, ոստիկանության մայոր*

Ներկայումս ընտանեկան բռնությանը վերաբերող և դրանից ենթադրաբար բխող՝ անչափահասների հանցածին վարքագծին նպաստող գործոններն ավելի խոր ուսումնասիրման կարիք ունեն, քանի որ անչափահասների հանցածին վարքագիծը կարող է պայմանավորված լինել մի շարք պատճառներով, որոնց մեջ պայմանականորեն կարելի է առանձնացնել ինչպես հոգեբանական, այնպես էլ սոցիալական պատճառները:

Տվյալ աշխատանքի նպատակը ընտանեկան բռնությունը՝ որպես անչափահասների հանցածին վարքագծի ձևավորմանը և անձնային առանձնահատկությունների փոփոխմանը նպաստող կամ ազդող պայմանի ուսումնասիրությունն է: Վերջին ժամանակներում անչափահասների կողմից կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործությունների շարժընթացում ցավալիորեն նկատվում է բռնության դեպքերի աճ, ինչի մասին վկայում է վիճակագրությունը: Տվյալ հոդվածում առաջ է քաշվում այն հիպոթեզը, որ ընտանեկան բռնությունը կարող է խթանիչ, նպաստող պատճառ կամ գործոն հանդիսանալ անչափահասների կողմից բռնության կիրառման և հանցավորության աճի գործում:

Ակնհայտ է, որ այս հարցի շուրջ յուրաքանչյուր ուսումնասիրություն կարող է օգտակար լինել հետագա նմանատիպ խնդիրների վերծանման, կանխարգելման և պատճառների վերլուծության հարցում:

Վերջին տարիներին գրանցված հանցագործությունների վիճակագրությունը ցույց է տալիս, որ ընտանիքում բռնություն գործադրած անձանց, այդ թվում նաև՝ անչափահասների, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկվածների, այդ թվում նաև՝ անչափահասների թիվն զգալիորեն աճել է:

Չնայած նրան, որ բռնությունը կարող է կատարվել և՛ ընտանիքում, և՛ ընտանիքից դուրս՝ ծանոթների, հարազատների կամ օտարների կողմից, դեպքերի հաճախականության առումով ընտանիքն առաջին տեղում է: Այստեղ են հիմնականում կատարվում ֆիզիկական, սեռական /այդ թվում՝ ինցեստ/, բազմազան դրսևորումներով հոգեբանական բռնությունները: Սպառնալիքները, ազատության սահմանափակումը, տարբեր արգելքները, սեքսուալ բնույթի գործողություններն այն գործիքներն են, որ պահում են անձին հնազանդության մեջ, թույլ են տալիս իշխել և վերահսկել նրան: Հետևաբար, անկախ դրդապատճառներից, բռնության հիմքում ընկած է անձերի անհավասարությունը և հասարակությունում դիմացինի համեմատ ավելի ցածր զբաղեցրած դիրքը: Այդ առումով ամենաթույլ, ամենաանպաշտպան, չդիմադրող օղակը կանայք և երեխաներն են: ^{1 2}


¹ <http://investigative.am/news/view/serakan-votndzgutyunner-anchapahasner-usumnasirutyun.html>

<http://investigative.am/news/view/yntanekan-brnutyunner.html>

http://investigative.am/news/view/texekatvutyun-yntanekan-brnutyun_2017.html

² https://www.e-draft.am/files/project_doc/1/15059163578516.docx

http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=9589&year=2017&month=10&day=18&lang=armh
<https://jam-news.net/%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D6%89/?lang=hy>



Առհասարակ, բռնության, մասնավորապես՝ ընտանեկան բռնության, ինչպես նաև անչափահասների հանցավորության վիճակագրության մեջ էական ուղղումներ կարող է մտցնել այնպիսի երևույթի առավել լիարժեք հաշվառումը, ինչպիսին լատենտությունն է, երբ լատենտ հանցագործությունների ոչ լիարժեք հայտնաբերման արդյունքում այս հանցավորության իրական մակարդակը կարող է էապես բարձր լինել վիճակագրականից: Շատ անգամ վիճակագրությունը չի կարող բացահայտել և մատնանշել այն գործոնները, որոնք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ այս կամ այն դեպքում: Այդ գործոններն իրենց հիմքում սովորաբար ունենում են բացասական երևույթներ, որոնք էլ ազդում են անչափահասի հետագա վարքագծի ձևավորման վրա:

Յուրաքանչյուր բացասական երևույթ կարող է խոցել անչափահասի փխրուն հոգին, և հետևանքները կարող են լինել անկանխատեսելի՝ սկսած ընտանեկան բռնությունից, մինչև հանցավոր գործունեություն: Այստեղ կարևոր է հաշվի առնել այն, որ ընտանեկան բռնության հետևանքով առաջ եկած խնդիրներն անմիջականորեն առնչվում են ինչպես ընտանիքին, նրա սոցիա-

լական կարգավիճակին, այնպես էլ պետական մակարդակով լուծում գտնելու անհրաժեշտությանը, հատկապես անչափահասների դեպքում, քանի որ նրանք են մեր ապագան: Յուրաքանչյուր բացասական իրավիճակի հաղթահարում պետք է առաջնային դիտարկել նրա հաղթահարմանն ուղղված քայլերի և օժանդակող դրական միջոցների ձեռքբերումով: Հակառակ դեպքում՝ մենք կունենանք բազմաթիվ խնդիրների փունջ, որի մեջ անչափահասների հանցավորությունը կլինի «սերմացուի» տեսքով:

Անչափահասների հանցավորությունը, նրա դինամիկան և կառուցվածքը շատ անգամ որոշիչ դեր են խաղում հասարակության զարգացման աստիճանի, բարոյական և սոցիալական բնութագրման հարցում: Այդ ամենն իր հերթին ազդում է երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակի վրա:

Եթե ուսումնասիրենք միայն քրեաբանական տեսանկյունից, ապա անչափահասների հանցավորությունը որոշիչ ազդեցություն ունի ընդհանուր հանցավորության աճի վրա, մասնավորապես՝ կազմակերպված, պրոֆեսիոնալ և ռեցիդիվ: Քրեաբանների կողմից ապացուցվել է, որ ինչքան վաղ տարիքում է մարդն սկսում կատարել հակահասարակական արարքներ և հանցանք, այդքան ավելի բարձր է հավանականությունը, որ նրա վարքագիծը կմնա նույնը և ավելի մեծ տարիքում: Հենց այդ պատճառով է, որ ռեցիդիվ հանցավորությունն անմիջականորեն կապված է անչափահասների հանցավորության հետ: Նույնը կարելի է ասել և կազմակերպված հանցավորության մասին. կազմակերպված հանցավոր խմբերը բաղկացած են լինում 18 տարին չլրացած մարդկանցից, ովքեր պարբերաբար հայտնվում են իրավապահ մարմինների տեսադաշտում:

Այստեղ էլ առաջ է գալիս «անչափահասների դաստիարակման և կրթության համար նորմալ պայմանների ապահովումը, որը հիմնականում պետք է իր վրա վերցնի ընտանիքը, սակայն այդ կառույցը շատ անգամ ի վիճակի չի լինում դա անել: Այդ իսկ պատճառով ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ, օրինակ՝ անապահով ընտանիքներից անչափահասների փախուստները»:³

³ Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. Общая характеристика преступности несовершеннолетних. <https://psyera.ru/6129/obshchaya-harakteristika-prestupnosti-nesovershennoletnih>

Չնայած նրան, որ անչափահասը ծննդյան օրվանից իր դաստիարակությունը հիմնականում ստանում է նախ ծնողական ընտանիքում, ուստի այնտեղ տիրող յուրաքանչյուր սոցիալական, ֆինանսական, բարոյահոգեբանական մթնոլորտ և այլ գործոններ կարող են իրենց անմիջական ազդեցությունն ունենալ նրա կայացման գործում: Հետևաբար, ընտանիքում առկա խնդիրները կարող են խթանիչ պատճառ հանդիսանալ անչափահասի հետագա վարքագծի փոփոխման գործում: Բարոյահոգեբանական կողմնորոշիչների, արժեքային համակարգի ճիշտ ձևավորումը թույլ կտա անչափահասին ընտրել ոչ թե հանցագործ, բռնի և անհայտ ուղին, այլ հանրորեն օգտակար գործունեությամբ զբաղվող և բարեկեցիկ կյանքով ապրող քաղաքացու ուղին:

Այս առումով, ընտանեկան բռնության դեպքերի և անչափահասների ներգրավվածության ծավալը հասնում է մտահոգիչ թվերի՝ չնայած նրանց նվազման միտումներին: Այստեղ հարկ է նշել ԶԼՄ-ների և վիրտուալ աշխարհի բացասական ազդեցության մասին: Չհսկվող համացանցը, դաժան բռնության, սպանության բազում տեսարանները, խեղաթյուրված արժեքները, բարոյահոգեբանական սխալ կողմնորոշիչները՝ բռնությունը և էրոտիկական քարոզող ֆիլմերը, քայքայում և խեղաթյուրում են ավանդական ընտանիքի հիմքերը, ահռելի վնաս են հասցնում ճիշտ կողմնորոշիչների ու արժեքային համակարգի դաստիարակման գործին: Այս հարցում ընտանիքի, դպրոցի և առողջ զբաղվածության բացը ցավալիորեն լրացնում են փողոցն ու «շրջապատը»՝ իրենց խեղաթյուրված բարոյական և արժեքային համակարգով: Որոշ ժամանակ հետո այդ ազդեցությունը հանգեցնում է անչափահասի և ընտանիքի միջև կապի խզմանը, արդյունքում՝ ուղղորդում նրան դեպի հանցավոր գործունեություն:

Այստեղ շատ կարևոր է ուստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների /ՄԳ և ԸԲԿ/ դերը, որոնք իրականացնում են նման ընտանիքներում անչափահասների կողմից գործադրված բռնության նախականիման, նրանց նկատմամբ հսկողության և անհրաժեշտ դաստիարակչական աշխատանքներ, ինչպես նաև իրականացնում կանխարգելիչ բնույթի աշխատանքներ՝ այսպես կոչված «ռիսկի խմբում» գտնվող անչափահասների նկատմամբ:

Շատ կարևոր է նաև ժամանակին հայտնաբերել ծնողական պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափող ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց, ովքեր իրենց հակահասարակական վարքագծով

նպաստում են անչափահասների կողմից ընտանիքում բռնություն կիրառելուն: Նշենք, որ նման բռնություն կատարած անչափահասի հետ ոստիկանի աշխատանքն ունի որոշակի բարդություններ և առանձնահատկություններ, այդ իսկ պատճառով հաճախ ներգրավվում են նաև այլ մասնագետներ: Քանի որ նման դեպքերը հաճախ տեղի են ունենում ագրեսիայի, հոգեկան անհավասարակշիռ վիճակի և առանձին դեպքերում՝ նաև աֆեկտի վիճակում, ուստի նրա հետ աշխատելիս ոստիկանը պիտի ունենա որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ նաև մանկավարժությունից և հոգեբանությունից:

Գաղտնիք չէ, որ ցանկացած հանցատեսակ և առանձին հանցագործություն ունի իր կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները: Անչափահասների պարագայում դրան նպաստող գործոնները կարող են յուրահատուկ ձևով ազդել նրանց վրա, քանի որ անչափահասներն ունեն որոշակի տարիքային և անձնային առանձնահատկություններ: Հետևաբար, ընտանիքում թե շրջապատում տեղի ունեցող յուրաքանչյուր դեպք, առավել ևս բռնության դեպք, ուղղակի կամ անուղղակի ձևով կարող է հանդիսանալ անչափահասի անձի ձևավորման վրա ազդող և հանցագործ գործունեությանը նպաստող պայման:

Բացի վերը թվարկած գործոններից, անչափահասի անձի ձևավորման վրա ազդում են նաև մի շարք այլ գործոններ:

Անձի ձևավորման գործընթացն ընդունված է համարել նրա սոցիալականացումը, այսինքն՝ անձի օժտվածությունը սոցիալական առանձնահատկություններով, սոցիալական կապերի հաստատումով, կենսակերպի ընտրությամբ, ինքնագիտակցության ձևավորմամբ, սոցիալական տարբեր խմբերի մեջ ներգրավմամբ, սոցիալական որոշակի դիրքերի և դերերի յուրացմամբ: Առաջնային սոցիալականացումն առաջ է գալիս, երբ երեխան անգիտակցաբար յուրացնում է ծնողների վարքի տարբեր ձևեր, մեծահասակների վերաբերմունքն այս կամ այն պրոբլեմային իրավիճակին և այլն: Հոգեբանների ուսումնասիրմամբ պարզվել է, որ մեծ տարիքում հանցագործները հաճախ դրսևորում են վարքի այն ձևը, որը «տպավորվել», «դաջվել» է նրանց հոգեկան աշխարհում մանկահասակ /դեռահասության/ տարիքում: Հանցագործ վարքագծի պատճառականության մեծ մասը, որոշակի առումով, առաջնային սոցիալիզացիայի անարդյունավետության հետևանքներից է:

Հանցագործության կատարման ճանապարհին կանգնած անչափահասների համար, որպես կանոն, վարքագծի նման տարբերակի ընտրությունն անմիջականորեն կամ վերջին հաշվով կապված է անձնային դեֆորմացիայի հետ: Հանցագործ ճանապարհ բռնած անչափահասների հետաքրքրությունների, պահանջմունքների, շահերի, գործունեության առաջատար ոլորտում հարաբերությունների համար հատկանշական է ուսումնական կամ արտադրական կոլեկտիվի հետ կապերի կայուն կորուստը, դրանց իրավական և բարոյական գնահատականների լրիվ անտեսումը: Հանցագործ անչափահասների մեջ ուսման անբավարար առաջադիմություն ունեցողների մասնաբաժինը 5-6 անգամ ավելի մեծ է նրանց օրինապահ հասակակիցների մեջ եղած անբավարար առաջադիմություն ունեցողներից: Ուսման նկատմամբ նման վերաբերմունքը համապատասխան արժեքային նեգատիվ կողմնորոշումների հետևանքը և արտահայտությունն են, ինչը էապես դժվարացնում է նման անչափահասների սոցիալականացումը և ապասոցիալականացումը նրան դաստիարակության և ուղղման գործընթացում:

Արտադրական ոլորտում նման անչափահասների համար բնութագրական է աշխատանքային գործունեության նկատմամբ հետաքրքրության բացակայությունը, արհեստի նկատմամբ օգտապաշտական մոտեցումը, արտադրական կոլեկտիվի խնդիրներից և կարիքներից օտարվածությունը: Նման անչափահասները չեն վախենում աշխատանքից ազատվելուց, քանի որ ոչ առանց հիմքի կարծում են, որ կարող են իրենց գոյությունն ապահովել նաև օգտագործելով շուկայական խառնակության ներկայումս տիրող պայմանները: Արտադրական գործունեության և ուսման մեջ հաջողությունների հասնելու ձգտումն իրավախախտ անչափահասների մոտ փոխարինված է, որպես կանոն, ժամանցային պահանջմունքներով և հետաքրքրություններով: Դեպի այդ ոլորտն են կողմնորոշված նաև նրանց արժեքային համակարգը և նախասիրությունները, գերաճած պահանջմունքները և հետաքրքրությունները:

Ի տարբերություն դրական շահեր և պահանջմունքներ ունեցող անձանց՝ իրավախախտի անձի զարգացումը տեղի է ունենում հակառակ ուղղությամբ: Աննպատակ ժամանցը ձևավորում է համապատասխան բացասական շահեր, որոնք ամրագրվում են սովորություններում և իրենց հերթին հանգեցնում սոցիալապես բացասական պահանջմունքների ձևավորմանը: Պա-

հանջմունքների խեղաթյուրված զարգացմանը համապատասխան՝ վարքագծային մակարդակում մշակվում է դրանց հանրորեն վտանգավոր, հակաիրավական եղանակներով բավարարման սովորույթը:

Իրենց սոցիալական էությանը վառ արտահայտված բացասական շահերի և պահանջմունքների առկայությունը, ակոհողային խմիչքների, առհասարակ թափառելու նկատմամբ հակումն առկա են անչափահաս իրավախախտների գերակշռող մասի մոտ: Եվ հակառակը, հասարակության կողմից խրախուսվող շահերի և պահանջմունքների առկայությունն, անչափահասների այդ խմբի մոտ դիտվում է երեքից-չորս անգամ առավել հազվադեպ:

Այս պարագայում մենք գործ ունենք ոչ թե հետաքրքրությունների սովորական սահմանափակության հետ, այլ դրանց՝ հակասոցիալական հետաքրքրություններով փոխարինման հետ և ընդ որում՝ վաղ տարիքում: Այստեղ պետք է նշել անբարենպաստ ընտանիքների ունեցած դերի մասին՝ ներառյալ այն ընտանիքների, որտեղ ծնողները կատարում կամ կատարել են հակահասարակական կամ անբարո արարքներ: Անբարենպաստության իմաստով նշանակալի դեր են խաղում ոչ միայն ընտանիքի կազմը, ծնողների նախկին դատվածություններն ու «քրեականացված» լինելը, այլև նրանց հուզական վերաբերմունքը երեխաների նկատմամբ, վերջիններին ընդունելը կամ մերժելը:

Անչափահաս հանցագործների բնութագրական առանձնահատկություններից է նաև նրանց բարոյական և արժեքային դիրքորոշումների էական դեֆորմացիան:

Ընկերության, պարտքի, խղճի, պատվի, ճշմարտության և այլ բարոյական կատեգորիաները նրանց մոտ վերաիմաստավորվում են՝ ելնելով խմբային շահերից: Կենսական նպատակներն ուղղվում են դեպի խմբային բնույթի հոգեբանական հարմարավետությունը, առօրեական հաճույքները, սպառողականությունը և այլն: Կատարելով հակաբարոյական և հակաիրավական արարքներ՝ իրավախախտ անչափահասները փորձում են ամեն կերպ ազնվացնել դրանց դրդապատճառները՝ խեղաթյուրված, բացասական գնահատելով տուժողների վարքագիծը: Նրանց մոտ հստակ ամրագրված է հանցագործությունների «ըմբռնման» հակաիրավական վարքագծի համար պատասխանատվության անտեսման և ժխտման դիրքորոշումը:

Անչափահասների ապասոցիալականացմանը և վարքագծային հակասոցիալական շեղումներին էապես նպաստում է հանցավոր ենթամշակույթի

ազդեցությունը, որը հանգեցնում է իրական արժեքների նենգափոխմանը և դեֆորմացիային: Այդ մշակույթի ազդեցության տակ հայտնված անչափահասի համար վարքագծային մոդելի ձևավորմանը նպաստում են տարաբնույթ քրեական «հեղինակություններ» և ընկերության, ազնվության, պարտքի և ճշմարտության վերաբերյալ խեղաթյուրված քրեական գաղափարներ:

Հանցագործ անչափահասների հուզականային ոլորտում առավել հաճախ ամրագրված է ամոթի զգացման թուլացումը, այլոց ապրումների նկատմամբ անտարբերությունը, անգսպությունը, կոպտությունը, ստախոսությունը, ինքնաքննադատության բացակայությունը:

Հուզական անհավասարակշռությունը, սնապարծությունը, համառությունը, այլոց տառապանքների նկատմամբ անզգա վերաբերմունքը, ագրեսիվությունը նույնպես կարելի է վերագրել անչափահաս հանցագործների անձի առավել բնութագրական հատկանիշների թվին: Ընդ որում, այստեղ խոսքը ոչ թե տարիքային առանձնահատկությունների մասին է, այլ հենց քրեածին խեղաթյուրումների և բարոյահուզական ոլորտներում առկա խեղաթյուրումների մասին է, որոնք հատուկ են միայն հանցագործություն կատարած անչափահասներին:

Վերջին ժամանակներս հետազոտողների կողմից մեծ ուշադրություն է դարձվում հանցագործ անչափահասների զանազան նյարդահոգեբանական շեղումների բացահայտմանը: Պարզվել է, որ այդ շեղումների ազդեցությունն իրավախախտ վարքագծի վրա հիմնականում կրում է անուղղակի միջնորդավորված բնույթ: Դրանք, որպես կանոն, խթանում են սոցիալական անհարմարվողականությունը, հակազդեցությունների ոչ ադեկվատությունը, սակայն չեն որոշում կոնկրետ հակաիրավական արարքի հիմնական բովանդակությունը, դրա բարոյաիրավական ուղղվածությունը:

Ամեն անգամ, երբ խոսվում է գնում մեղսունակ սուբյեկտների մասին, պարզ է դառնում, որ նյարդահոգեբանական շեղումների առկայությունը չէ, որ ստեղծում է հանցագործությունների կատարման ճակատագրական, անխուսափելի նախատրամադրվածություն:

Հոգեկան շեղումներն ազդում են հակաիրավական վարքագծի ձևավորման մեխանիզմի վրա, հանդես են գալիս անձի դեգրադացիայի գործընթացն արագացնող պայմանների, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակներում հակազդեցության ձևի ընտրության վրա նաև առանձնահատուկ հանցավոր մոտիվացիայի ձևավորման գործոնի դերում:

Կարծում եմ, սխալված չենք լինի, եթե նշենք, որ հոգեկան անոմալիաներ ունեցող անչափահասների շրջանում հանցավորության աճի տեմպերը մի քանի անգամ գերազանցում են անչափահասների ընդհանուր հանցավորության աճի տեմպերին: Այսուհանդերձ, հանցագործ անչափահասների թվի մեջ հոգեկան կայուն խանգարումներ ունեցողների մասնաբաժինն էական չէ, սակայն մեծ թիվ են կազմում անձի փսիխոպաթիկ գծեր ունեցող անչափահասները: Ընդ որում՝ նշված անչափահասների փսիխոպաթիան հիմնականում կապված չէ ժառանգականության հետ, այլ ձեռք է բերվել կյանքի և դաստիարակության անբարենպաստ պայմանների արդյունքում:

Անչափահաս իրավախախտների հոգեկան շեղումների առաջացման և զարգացման հիմնական պատճառներից են նաև ընտանեկան դաստիարակության անբարենպաստ պայմանները, այդ թվում նաև՝ ծնողների մոտ առկա նյարդահոգեկան հիվանդությունները, ակոհոլիզմը, անբարոյական և հակաիրավական ապրելակերպը, ընտանեկան բռնությունը և այլն:

Իրավախախտ անչափահասների մոտ առկա սոցիալապես ծանրացած հոգեֆիզիկական արատների թվում հետազոտողների կողմից առանձնացվում են ներքոշարադրյալները.

հոգեֆիզիկական զարգացման զանազան խանգարումները, որոնք ծագել են ներարգանդային զարգացման, ծննդյան ժամանակ և վաղ մանկական տարիքում / այդ թվում գանգուղեղային վնասվածքների, ինֆեկցիոն և ընդհանուր սոմատիկ հիվանդությունների արդյունքում /,

մանկական տարիքից սկսած՝ վառ արտահայտված պաթոլոգիկ գծերը և պաթոլոգիկ ռեակցիաները /չափից ավելի լացկանություն, նեղացկոտություն, համառություն, աֆեկտիվություն, գրգռվածություն, անհանգստություն, շարժողական ակտիվության ծայրահեղ ձևեր, քնի, խոսքի խանգարումներ և այլն/,

ֆիզիկական ինֆանտիլությունը /ալարկոտություն, շուտ հոգնելու հատկություն, ցածր աշխատունակություն/, ֆիզիկական արտահայտված թերզարգացումը, այդ թվում՝ արտաքին տեսքի արատները,

մտավոր զարգացման ցածր մակարդակը, որը դժվարություններ է առաջացնում հասակակիցների հետ հաղորդակցվելիս, սոցիալական փորձ և ինֆորմացիա ձեռք բերելիս:⁴

⁴. Криминология. Под ред. Кудрявцева В.Н. и Эминова В.Е. М., Юрист, 1997 г., с.290.

Որպես կանոն, անչափահաս հանցագործը հակահասարակական վարքագծի կայուն սովորություններով, հակումներով և կարծրատիպերով անձ է: Նրանցից քչերն են հանցագործությունը կատարում պատահականորեն, մնացյալի կողմից իրավախախտում կատարելն անհրաժեշտորեն պայմանավորված է սոցիալական և հոգեֆիզիոլոգիական գործոններով: Անչափահաս հանցագործներին հատուկ են վարքագծի համընդհանուր կանոնների նկատմամբ արհամարհանքի մշտական դրսևորումը /հայիոյախոսությունը, անսթափ վիճակը, քաղաքացիներին հետամտելը, հասարակական գույքի փչացումը և այլն/, մոլախաղերի, ալկոհոլային խմիչքների և թմրանյութերի նկատմամբ հակումը, թափառաշրջիկությունը, սիստեմատիկ փախուստները տնից, ուսումնական և այլ հիմնարկներից, վաղ սեռական կապերը, սեռական սանձարձակությունը, չարության, վրեժխնդրության, կոպտության, բռնության ակտերի մշտական դրսևորումը, այդ թվում նաև՝ ոչ կոնֆլիկտային իրավիճակներում դիտավորությամբ կոնֆլիկտային իրավիճակներ առաջացնելը, ընտանիքում մշտական վեճերը, ընտանիքի անդամների և ծնողների ահաբեկումը, անչափահասների այլ՝ ուսման մեջ առաջադիմող, կարգապահ վարքագիծ ունեցող խմբերի նկատմամբ թշնամանքի դրսևորումը, լավ չպահված և թույլի ձեռքից իրերն անպատիժ խլելու և յուրացնելու հնարավորություն ընձեռնող սովորություններ:⁵

Որոշ հետազոտողներ անչափահաս հանցագործի անձի տիպաբանության հիմքում դնում են այսպես կոչված՝ «ներքին պատրաստականության» և «իրավիճակի ճնշման սկզբունքը»՝ որպես այդ տիպաբանության մեթոդաբանական հիմք: Ամենաընդհանուր ձևով նման մոտեցումը հանգում է հետևյալին. անչափահասի կողմից հանցագործության կատարմանը հանգեցրել են նրա ներքին պատրաստվածությունը, ինչպես նաև արտաքին օբյեկտիվ գործոնները: Այս մոտեցման դեպքում անչափահաս հանցագործի անձի տիպաբանության հիմքում դրվում է երկու հիմնական չափանիշ.

1. անչափահաս հանցագործի բարոյական դիրքորոշումները,
2. հանցագործությանը հանգեցնող իրավիճակի առանձնահատկությունները:

Արժեքավոր լինելով հանդերձ՝ վերոհիշյալ տեսակետը չի կարող անչափահաս հանցագործի անձի տիպաբանության համընդհանուր մեթոդական

⁵ Криминология. Под ред. Кудрявцева В.Н. и Эминова В.Е. М., Юрист, 1997 г., с.291.

հիմք հանդիսանալ և կիրառելի է հիմնականում անձի կյանքի, առողջության և սեռական անձեռնմխելիության դեմ հանցանք կատարած անչափահասների անձի տիպաբանության համար:⁶

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ անչափահասների հանցածին վարքագիծն ունի ներքին և արտաքին գործոններով պայմանավորված դրսևորումներ, որոնք, մասնավորապես, ընտանեկան բռնության պարագայում խթանում են անչափահասի դեռ չձևավորված անձի խեղաթյուրումը: Հետևաբար, ընտանիքում տիրող բացասական մթնոլորտը կարող է վճռորոշ դեր ունենալ անչափահասի հետագա կյանքի ձևավորման գործում: Եվ այդ գործում կարևորվում է այն շեշտադրումը, որը պետք է դրվի առավելապես անչափահասի բարեկեցության և վերականգնման, քան պատժիչ մոտեցման վրա: Այս առումով անգամ միջազգային փաստաթղթերի մակարդակում շեշտը դրվում է ոչ միայն և ոչ այնքան կոնկրետ հանցավորության դեմ պայքարի և հանցավորության մեջ կասկածվողին «վնասագերծելու» վրա, որքան՝ միջավայրի փոփոխության:⁷ Շեշտադրվում է անչափահասի ներքին ու արտաքին ռեսուրսների զարգացումը /անչափահաս, ընտանիք, կրթություն, համայնք/, պայմանների բարելավումը, որի արդյունքում առնվազն կնվազի իրավախախտման համար նպաստավոր պայմանների ակտիվությունը: Նշենք, սակայն, որ այստեղ բացառություն չեն կազմում այն դեպքերը, երբ նորմալ ընտանեկան պայմաններում և նորմալ միջավայրում ցավոք ձևավորվում են և շեղված վարքագծով մարդիկ:

⁶ Рыбальская В.Я. Виктимологические исследования в системе криминологической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних / Вопросы борьбы с преступностью. М., 1980. Вып. 33.

⁷ Այս մասին տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ) 1990:

СЕМЕЙНОЕ НАСИЛИЕ КАК ФАКТОР, СОДЕЙСТВУЮЩИЙ ФОРМИРОВАНИЮ КРИМИНОГЕННОЕ ПОВЕДЕНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

**Саакян Александр
Габриелович**

*Доцент кафедры ОРД и
криминалистики Академии
Образовательного комплекса полиции
РА, полковник полиции*

Григорян Ануш Огсеновна

*Старший преподаватель кафедры
обществоведческих дисциплин и психологии
Образовательного комплекса полиции РА,
майор полиции*

Целью данной работы является исследование семейного насилия, как содействующего условия, которая способствует формированию правонарушений несовершеннолетних, и изменению их личностных характеристик. В последнее время наблюдается рост числа преступлений насильственного характера, совершаемых несовершеннолетними. В статье выдвигается гипотеза, согласно которой семейное насилие может стать причиной или фактором насилия и преступности среди несовершеннолетних. Материалы проведенных исследований по этой теме могут быть полезны для изучения вышеуказанной проблемы.

Ключевые слова: семейное насилие, несовершеннолетний, противоправное поведение, преступная деятельность, способствующий фактор, содействующие причины.

DOMESTIC VIOLENCE AS A CONTRIBUTING FACTOR OF THE FORMATION OF MINORS' CRIMINOGENIC BEHAVIOR

Sahakyan Aleksandr

*Associate Professor at the Chair of
Operational Intelligence Activity and
Criminalistics of the Academy of the
Police Educational Complex of RA, Police
Colonel*

Grigoryan Anush

*Senior Lecturer at the Chair of Social Sciences
and Psychology of the College of the Police
Educational Complex of RA, Police Major*

The aim of the article is to study domestic violence, as a factor, contributing to juvenile delinquency and to a change in minors' personal characteristics. Recently, there has been an increase in the number of crimes of violence committed by minors.

The article hypothesizes that domestic violence can be an incentive or a contributing factor for juvenile violence and crime. The research made in this article can contribute to the further studies of the above mentioned problem.

Key words: domestic violence, minor, contributing cause, stimulating factor, criminogenic behavior, law-breaking behavior.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.12.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 06.12.2019թ.

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Սափարյան Ամալյա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ, ոստիկանության
փոխգնդապետ, ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի ասպիրանտ*

Իրավական պետության հիմնական սկզբունքը մարդկանց սուբյեկտիվ իրավունքների իրացման և դրանք հանրային իշխանության կողմից հավուր պատշաճի երաշխավորելու օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակության ապահովումն է՝ մարդկանց վարքագծի ազատության ու իշխանության սահմանների հստակեցման համատեքստում: Այս հիմնադրույթն ընդհանուր գծերով իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ըստ որի՝ մարդը բարձրագույն արժեք է, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգելն ու պաշտպանությունը նախանշված է որպես հանրային իշխանության պարտականություն, ավելին՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ասվածի համատեքստում սահմանադրական իրավակարգի անօտարելի մասը կազմող հավաքների ազատության իրավունքը հանդես է գալիս որպես քաղաքացիների՝ քաղաքական որոշումների կայացմանը մասնակցելու անուղղակի նախաձեռնությունների արտահայտություն և իշխանության մարմինների հաշվետվողականության ապահովման իրական գրավական: Միաժամանակ, նշենք, որ, հանրային հետաքրքրությունն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու մտադրությունից գատ, հավաքն ինքնատիպ հարթակ է «երկու կամ ավելի անձանց» քաղաքական ուղղվածության հույզերն ի ցույց դնելու համար:

Նկատենք, որ «ժողովրդավարական անկեղծության տարր»¹ հանդիսացող հանրային հավաքները հնարավորություն են ստեղծում խաղաղ ճանապարհով արտահայտել կուտակված քաղաքական զգացումները և դրանով չեզոքացնել կամ գոնե նվազեցնել հանրային իշխանության այս կամ այն գործելակերպի արդյունքում առաջացած լարվածությունը կամ դժգոհությունը:

Անհերքելի է այն հանգամանքը, որ հուզական լիցքաթափումը յուրաքանչյուր հասարակության համար անհրաժեշտություն է, քանի որ այն թույլ չի տալիս բողոքի ակցիան վերածել վտանգավոր և հակաիրավական արարքների²: Հակառակ դեպքում, երբ տևական ժամանակ կայուն դրսևորմամբ արգելվում է իրացնել խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքը, տեղի է ունենում բացասական գործոնների գերկուտակում, ինչի արդյունքում անխուսափելի են դառնում բռնություններով ուղեկցվող հավաքները, որոնք էլ հաճախ վեր են ածվում զանգվածային անկարգությունների:

Այս համատեքստում մեր ուսումնասիրության առանցքը հավաքի կազմակերպչի պատասխանատվությունն է:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ խմբային որոշումներ ընդունելիս նույնիսկ հավաքի չկողմնորոշված մասնակիցները հակված են լինում աջակցելու այն անձանց, ովքեր գաղափարական ոգեշնչման աղբյուր են եղել իրենց համար: Այդ է պատճառը, որ ի հաշիվ անհատական ներկայության, հավաքի մասնակիցների մոտ հնարավորություն է առաջանում «նույնականացվել մեկը մյուսով, ինչպես մեկ ամբողջականության մասեր»³: Դա էլ, ըստ ամենայնի, հիմք է հանդիսանում, որ կազմակերպչի կողմից գործի դրվեն հատուկ հոգեբանական մեխանիզմներ, որոնք կարող են ազդել անհատների և նրանց հոգեբանության վրա:

Ավելին, Գյուստավ Լեբոն, իր՝ «Ժողովուրդների և զանգվածների հոգեբանություն» աշխատության շրջանակներում ուսումնասիրելով անհատի վարքագիծն ամբոխի մեջ, համոզմունք է հայտնում այն մասին, որ նման դեպքերում, առանց բացառության, անհատների գիտակցական գործունեությունը

¹ Sté u Хессе К. Основы конституционного права ФРГ, М.: Юрид. лит., 1981г. ст. 203.

² Sté u Храмова Т. М. Функциональный потенциал свободы собраний: Формальный атрибут или незаменимый элемент современной демократии DOI: 10.7256/1811-9018.2015.1.10518 2015 էջ 107:

³ Sté u Шайо А., Журнал Сравнительное Конституционное Обозрение No 5 (84) 2011 ст. 150
© Институт права и публичной политики, 2011

փոխարինվում է ամբոխի չգիտակցված գործունեության, ինչը պայմանավորված է ներկաների թվաքանակային առավելություններով և նրանց անհաղթահարելի ուժի գիտակցմամբ: Բացի այդ, ամբոխի մեջ ցանկացած գործողություն այնչափ «վարակիչ» է դառնում, որ անհատը շատ արագ «գոհաբերում է» սեփական շահերը կոլեկտիվ շահերին: Այդպիսի վարքագիծն իրական է դառնում, երբ մարդը, լինելով ամբոխի մի մաս, հայտնվում է հիպնոսացված սուբյեկտի կարգավիճակում և ենթարկվում իրեն ոգեշնչող անձին⁴:

Ի տարբերություն հոգեբանական մոտեցման առանձնահատկությունների՝ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը յուրաքանչյուր անհատի հնարավորություն է ընձեռում հանդես գալու որպես հանրային հավաքի կազմակերպիչ (ղեկավար)⁵:

Ընդ որում, թե՛ հավաքի կազմակերպման և անցկացման բուն ընթացակարգում, թե՛ այն կանոնակարգող օրենսդրության մեջ (իրազեկումը, հավաքի սկիզբը և ավարտը, ընդհուպ՝ հավաքը դադարեցնելը կամ ցրելը) առանձնակի կարևորվում է հավաքի ղեկավարի դերակատարությունը, ինչն էլ արտահայտվում է հավաքի մասնակիցների համար պարտականություն ամրագրելով. կատարել հավաքի ղեկավարի՝ կարգ ու կանոնի պահպանման վերաբերյալ ցուցումները:

Իր հերթին, հավաքի ղեկավարը, հասանելի լինելով ոստիկանության ներկայացուցչին, պարտավոր է հավաքի մասնակիցներին անմիջապես տեղեկացնել ոստիկանության պահանջների մասին, նաև անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի խաղաղ և բնականոն ընթացքն ապահովելու, հավաքի մասնակիցների բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով:

Որպես կանոն, հավաքի ղեկավարն է որոշում հավաքի ընթացքը, ձայն է տրամադրում ելույթ ունեցողներին և որոշում նրանց ելույթների հերթակալությունը: Ի դեմս նրա՝ հավաքի մասնակիցներն արտահայտում են իրենց կարծիքը, շփվում այլ մասնակիցների, նաև իրավապահ մարմինների հետ,

⁴ Стé u Гюстаж Лебон, «Психология народов и масс» Книга II, Изд. «Макет», СПб, 1995 г. էջ 8-9:

⁵ Նկատենք, որ «Հավաքների ազատության մասին» օրենքն ամրագրում է, որ հավաքի կազմակերպիչը հավաքի ղեկավարն է:

իրենց պահանջատիրությունը ներկայացնում հանրային իշխանության մարմիններին, նրա միջոցով փոխզիջումների համաձայնություն քննարկում կամ անհամաձայնություն արտահայտում: Ըստ այդմ էլ, հավաքի կազմակերպիչը հանդիսանում է հավաքի պատշաճ անցկացման հիմնական «բեռը» կրող անձը: Վերջինիս կողմից օրենքով սահմանված պարտականությունները չկատարելը կամ դրանք օրենքով սահմանված կարգի խախտմամբ կատարելն առաջացանում է վարչական (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով) և քրեական պատասխանատվություն (պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով)^{6,7}:

Մարդու և պետության փոխհարաբերությունների իրավակարգավորման բազմաշերտ տիրույթում պետության գործառույթների իրականացման նպատակով հաճախ անհրաժեշտություն է առաջանում պետական հարկադրանք կիրառել, որի միջոցով պետությունը հակազդում է հակասոցիալական արարքներին, սահմանափակում է սոցիալապես անցանկալի գործողությունների ազատությունը: Այսինքն՝ պետական հարկադրանքի կիրառմամբ պետությունն ազդում է մարդկանց գիտակցության և վարքագծի վրա:

Հավաքների ազատության իրավունքի իրացման համատեքստում հարկադրանքի միջոցների կիրառումը, առավել ևս խստացումը, կարող է իրավաչափ համարվել, եթե առկա է պատճառահետևանքային կապ հավաքի կազմակերպչի կողմից օրենքով սահմանված իր պարտականությունները չկատարելու և հավաքի բնականոն ընթացքը խաթարվելու միջև կամ հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելուն ուղղված վարչական իրավախախտումները և հանցագործությունները կանխելու նպատակով:

Այս առումով ուշագրավ են մեր իրականացրած՝ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները: Խոսքը վերաբերում է հետևյալ իրավակարգավորումներին:

⁶ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 1986 թ. հունիսի 1, հոդված 180¹ (ՀՄՄՀԳՄՍ 1985/23):

⁷ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք 2003 թ. օգոստոսի 1, հոդված 225¹ (ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407):

Իտալիայի Հանրապետության «Հասարակական կարգի պաշտպանության մասին» 1975 թ. օրենքով արգելված հավաքի կազմակերպչի համար նախատեսվում է ազատության սահմանափակում՝ 6 ամիս ժամկետով, կամ տուգանք՝ 103-ից մինչև 413 եվրոյի չափով:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության «Հասարակական կարգի մասին» օրենքը (1986 թ. խմբագրությամբ) հավաքի անցկացման համար պայմանները խախտելու դեպքում կազմակերպչի համար որպես պատասխանատվություն նախատեսվում է 3 ամիս ազատության սահմանափակում կամ տուգանք՝ 2700 եվրոյի չափով:

Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 431-5-րդ հոդվածով կազմակերպչի կողմից հավաք անցկացնելու իրազեկմանն առնչվող տվյալների խախտման դեպքում պատասխանատվություն է նախատեսվում ազատության սահմանափակում՝ 6 ամիս ժամկետով, և տուգանք՝ մինչև 7500 եվրոյի չափով:

Սինգապուրի Հանրապետության «Հասարակական կարգի մասին» օրենքը (2012 թ. խմբագրությամբ) առանց իշխանության մարմինների թույլտվության հավաք կազմակերպելու համար որպես կազմակերպչի պատասխանատվություն նախատեսվում է տուգանք՝ մինչև 20.000 սինգապուրյան դոլլարի (14.500 ամերիկյան դոլլարին համարժեք) չափով, կամ 12 ամիս ազատության սահմանափակում⁸:

Հիշյալ օրինակները փաստում են, որ մի շարք ժողովրդավարական պետություններում կազմակերպչի համար նախատեսված օրենքով սահմանված պատասխանատվության չափն էականորեն տարբերվում է հայրենական օրենսդրությամբ նախատեսվածից: Ինչը մեկ անգամ ևս ընդգծում է մեր կողմից քննարկվող հարցադրման կարևորությունը՝ պայմանավորված հավաքի կազմակերպչի առանձնահատուկ դերակատարությամբ և նրա՝ հավաքի մասնակիցների վրա հնարավոր ազդեցությամբ:

Այստեղ հարկ է նշել նաև, որ արարքի բնույթը (հավաքի կազմակերպչի գործողությունը կամ անգործությունը) և իրավաբանական պատասխանատվությունը խստացնող առաջարկը վերաբերելի է միայն հավաքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված իր պարտականությունները չկատարելուն⁹:

⁸ Տե՛ս <https://tass.ru/info/6727990>. (02.09.2019թ. 16:15)։

⁹ Նկատենք, որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված է, որ հավաքի ղեկավարը հավաքի ընթացքում պարտավոր է

Այդպիսի պարագայում չպետք է անտեսել հավաքի կազմակերպչի ողջամիտ ջանքերը՝ ուղղված խաղաղ հավաքի բնականոն ընթացքն ապահովելուն՝ միաժամանակ բացառելով կազմակերպչի պատասխանատվությունը հավաքի մասնակից չհանդիսացող անձանց կամ սադրիչների արարքների համար:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության փորձագետների կողմից պատրաստված «Հավաքների ազատության ղեկավար սկզբունքների վերաբերյալ» ուղեցույցում նշված է, որ հավաքի կազմակերպիչը սեփական ցանկությամբ կարող է ապահովագրել իր քաղաքացիական պատասխանատվությունը՝ կապված տվյալ հանրային միջոցառման հետ: Սակայն այդպիսի ապահովագրությունը նպատակահարմար չէ դարձնել հավաքների ազատության իրավունքի իրացման պարտադիր պայման, քանի որ հավաքն անկարգությունների վերածվելու դեպքում պատճառված վնասի փոխհատուցման պատասխանատվությունը դրվում է ոչ թե հավաքի կազմակերպչի կամ կարգադրիչների, այլ՝ պետության վրա¹⁰:

Այս առումով հետաքրքիր է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի որոշումը¹¹, որով հակասահմանադրական է ճանաչվել հավաքի մասնակիցների կողմից պատճառված վնասի համար հավաքի կազմակերպչին քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական դրույթը: Փաստորեն, սահմանադրական արդարադատություն իրականացնող դատարանի իրավական դիրքորոշմամբ մեկ անգամ ևս ընդգծվել է հավաքի կազմակերպչին տրված՝ հասարակական կարգը և հասարակական անվտանգությունն ապահովելու հատուկ դերակատարություն-

անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով:

¹⁰ St' u Ruководящие принципы по свободе мирных собраний, БДИПЧ ОБСЕ, 2010, п 5.7,197,198 (Հասանելի աղբյուրը <https://www.osce.org/ru/odihr/83237?download=true> 23.09.2019 10:50).

¹¹ St' u Конституционный Суд Российской Федерации Постановление От 14 Февраля 2013 Г. N 4-П По Делу О Проверке Конституционности Федерального Закона «О Внесении Изменений В Кодекс Российской Федерации Об Административных Правонарушениях И Федеральный Закон «О Собраниях, Митингах, Демонстрациях, Шествиях И Пикетированиях» в Связи С Запросом Группы Депутатов Государственной Думы И Жалобой Гражданина Э.В. Савенко. (Հասանելի աղբյուրը <https://base.garant.ru/70317716/> 08.10.2019 11:56)

նը, ինչի երաշխիքը հավաքի անցկացման համար նախատեսված կանոնակարգը պահպանելու հավաքի ղեկավարի պարտականությունն է, որն արտահայտվում է պատշաճ հետևողական վերաբերմունք ցուցաբերելով հավաքի մասնակիցների վարքագծի նկատմամբ:

Մեր կարծիքով, հավաքի ղեկավարի նկատմամբ քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման մասին քննարկումը տեղին է, երբ հավաքի կազմակերպչի դիտավորությամբ կատարված արարքների և հավաքի մասնակիցների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասից առաջացած հետևանքների միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Այս իմաստով որպես իրավակարգավորման արդյունավետ մոդել՝ կարող է կիրառվել «համապարտ պատասխանատվություն» նախատեսող պայմանագրի կնքումը խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացումն ապահովող հավաքի կազմակերպչի, ոստիկանության և տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչների միջև¹²: Կողմերը միասին ձևավորում են «անվտանգության եռանկյուն»՝ հավաքների ընթացքում հասարակական կարգը և անվտանգությունն ապահովելու նպատակով: Եռանկյունու գործունեության արդյունավետությունը կախված է երեք կողմերի գործունեության կոլեկտիվ պլանավորումից և գործողությունների համակարգումից, իսկ տարաձայնություններ ի հայտ գալու դեպքում՝ նաև բանակցելու պատրաստակամությունից:

Այս համատեքստում ուշագրավ է ինքնաբուխ հավաքի կազմակերպչի պատասխանատվությանը հարցը: «Հավաքների ազատության մասին» օրենքն ամրագրում է, որ հավաքի փաստացի կազմակերպչի պարտականությունն է անհապաղ տեղեկացնել ինքնաբուխ հավաքի մասին դրա անցկացման վայրի ոստիկանության ստորաբաժանմանը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն իր հերթին նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով տուգանք է սահմանում հավաքի կազմակերպչի համար՝ վերոնշյալ պարտականությունը չկատարելու համար: Նկատենք, որ այստեղ մեզ հետաքրքրող հարցի ա-

¹² Ст' у Закон ЮАР «О регулировании собраний», № 205 (1993 г.) (Հասանելի աղբյուրը Руководящие принципы по свободе мирных собраний, БДИПЧ ОБСЕ, 2010, п.153 <https://www.osce.org/ru/odihr/83237?download=true> 14.10.2019 18:18).

ռանցքը ոչ թե զանցակազմի օբյեկտիվ կողմն է՝ օրենքով սահմանված պարտականության չկատարումը, այլ զանցակազմի սուբյեկտը: Փաստորեն, ինքնաբուխ հավաքի դեպքում հնարավոր է պատասխանատվության միջոցների իրավաչափ կիրառում, բայց որքանո՞վ դրանք կլինեն նպատակային և արդյո՞ք կկիրառվեն հավաքի իրական կազմակերպչի նկատմամբ:

Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ անկախ հավաքների ազատության իրավունքի առանձնահատուկ դրսևորումներից (կարծիքն ազատ արտահայտելու հնարավորության արտահայտում, հասարակական կարգը և անվտանգությունը պատշաճ ապահովելու մտայնություն, հասարակության ու իշխանության մարմինների միջև առաջացած տարակարծությունները երկխոսության միջոցով լուծելու կարողություն և այլն), առանց քաղաքացիների առողջությանը և բարոյականությանը վնաս պատճառելու, հնարավոր է ապահովել սահմանադրական այս իրավունքի արդյունավետ իրացումը, սակայն օրենքով սահմանված կարգի խախտումով հավաքներ կազմակերպելու դեպքում հարկադրանքի միջոցների կիրառումը վեր է ածվում պարտադիր անհրաժեշտության, որի հիմքը մի կողմից հավաքի կազմակերպիչների և մասնակիցների շահերի հավասարակշռությունն է, իսկ մյուս կողմից՝ երրորդ անձանց¹³ շահերը: Ինքնաբուխ հավաքների պարագայում, հաշվի առնելով հավաքների ազատության իրավունքի իրացման բուն էությունը, նպատակահարմար է պարզել հավաքի իրական կազմակերպչին, այլապես հավաքի ղեկավարի ընդհատված կապը հավաքի մասնակիցների հետ կարող է խաթարել խաղաղ հավաքի բնականոն ընթացքը և բացառել սոցիալական արդարության վերականգնմանն ուղղված հավաքի կազմակերպչին պատասխանատվության ենթարկելու նպատակը:

Մեր կարծիքով, օրենսդրական փոփոխությունները (այդ թվում հավաքի կազմակերպչի պատասխանատվության խստացմանը վերաբերող) հնարավորություն են ընձեռում կատարելագործել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացը, քանի որ վերջինիս նպատակը ոչ միայն հասարակական հարաբերությունների սուբյեկտների շահերի ներդաշնակեցումն է և հակադիր շահերի զուգակցումը, այլև կոնֆլիկտային իրավիճակների կանխումը կամ դրանց լուծումը:

Այսպիսով, կարող ենք ամփոփել, որ ժողովրդավարական պետության

¹³ Նկատենք, որ այդ անձանց շրջանակը կազմում են, թե հավաքի մասնակիցները, թե այն անձիք, ովքեր չեն մասնակցում հավաքին:

կայացման և քաղաքացիական հասարակության զարգացման հաղթահարման ուղի նախընտրած հասարակության համար հանրային իշխանության մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կուռ համակարգ ստեղծելու և ապահովելու պարտականությունն իր մեջ ուղղակիորեն ներառում է նաև հարկադրանքի միջոցների իրավաչափ կիրառումը, առանձին դեպքերում՝ նաև խստացումը, եթե այն համաչափ է կատարված արարքի հանրային վտանգավորությանը, նպատակաուղղված կիրառվում է իրականում իրավական նորմերը խախտած անձի նկատմամբ և կարող է կանխել նոր խախտումները:

ОТВЕТСТВЕННОСТЬ ОРГАНИЗАТОРА СОБРАНИЯ

Сафарян Амаля Гагиковна

*Доцент кафедры теории государства и права
и конституционного права Академии Образовательного
комплекса полиции РА, подполковник полиции,
аспирант Образовательного комплекса полиции РА*

В научной статье обсуждаются вопросы, связанные с ответственностью организатора собрания, который имеет особую роль и возможное влияние на участников собрания. По мнению автора, законодательные изменения, в том числе, отягчающие ответственность организатора собрания, позволяют усовершенствовать процесс правового регулирования общественных отношений, поскольку его целью является не только гармонизация интересов субъектов общественных отношений и объединение противоположных интересов, но также предотвращение или разрешение конфликтных ситуаций.

Ключевые слова: свобода собраний, организатор собрания, ответственность, международный опыт, участник собрания.

ASSEMBLY ORGANIZER'S RESPONSIBILITY

Safaryan Amalya

Associate Professor at the Chair of Theory of State and Law and Constitutional Law, Police Academy of the Police Educational Complex of RA, Police Lieutenant Colonel, Postgraduate Student of Police Educational Complex of RA

The scientific article covers the issues related to the responsibility of the assembly organizer, who has a special role and possible influence on the assembly participants. According to the author, legislative changes, including raising the responsibility of the assembly organizer, makes it possible to improve the process of legal regulation of public relations, since its goal is not only to harmonize the contradictory interests of subjects of public relations, but also to prevent or resolve conflict situations.

Key words: freedom of assembly, assembly organizer, responsibility, international experience, assembly participant.

Հոդվածը գրախոսվել է՝ 09. 12.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 10.12.2019թ.

ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տոնոյան Անժելա

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի քոլեջի
տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս,
ռստիկանության մայոր*

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես սոցիալական և իրավական պետություն, իր հոգածության ներքո և իրավական պաշտպանության դաշտում է պահում հայ ժողովրդի համար բոլոր ժամանակներում կարևորագույն և հիմնաքարային նշանակություն ունեցող հարաբերություններից մեկը՝ ընտանիքը: Ընտանեկան, այդ թվում՝ ամուսնական հարաբերություններն անմիջականորեն հիմնված են տվյալ հասարակությունում դարերով ձևավորված ազգային և բարոյական ավանդույթների ու արժեքների վրա, և, բնականաբար, ժամանակին համընթաց քայլելու արդյունքում, այդ հարաբերությունները պարբերաբար ենթարկվում են որոշակի փոփոխությունների:

Փաստացի, ամուսնաընտանեկան հարաբերությունների ոլորտը բավականին խոցելի բնույթ ունի, քանի որ այստեղ ուղղակիորեն շոշափվում են մարդու անձնական կյանքը, անձնական կյանքի գերակայությունը գույքայինի նկատմամբ, որոշակի գույքային իրավունքներ, այդ հարաբերությունների շուրջ ստեղծված հասարակությունում գերիշխող բարոյական պատկերացումները¹: Հաճախ այդ հարաբերությունների զարգացման շարժիչ ուժերն են հանդիսանում անհատի, հասարակության և պետության փոխկապակցված շահերը, ինչն էլ պահանջում է դրանց կարգավորման գործընթացում հանրային և մասնավոր սկզբունքների, իմպերատիվ և դիսպոզիտիվ կարգավորման եղանակների խելամիտ և հավասարակշռված գուգակցում:

Տրամաբանական է, որ ամուսնական հարաբերությունների նկատմամբ այս կամ այն դիրքորոշումն արտահայտելիս պետությունը նախնառաջ պետք է հաշվի առնի, որ անհրաժեշտ է մի կողմից՝ պաշտպանել ամուսինների շահերը, մյուս կողմից՝ հնարավորինս չմիջամտել անհատի մասնավոր

¹ Տե՛ս՝ А. Покровский И. А. Основные проблемы гражданского права. М., 2003, (Классика российской цивилистики), չջ 162

ընտանեկան կյանքին, մի կողմից՝ հաշվի առնել կյանքի փոփոխվող հանգամանքները, մյուս կողմից՝ հնարավորինս չվնասել ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներն ու հասարակության մեջ ձևավորված բարոյական պատկերացումները: Մեր օրերում աշխարհում տարածված են ամուսնության տարբեր տեսակներ, որոնց մեծամասնության դեպքում, օրինական տարբերակն այն գրանցելն է պետության կողմից, սակայն քիչ չեն նաև փաստական ամուսնությունները, որոնք որոշ երկրների իրավական համակարգով ունեն առանձնակի իրավակարգավորում:

ՀՀ-ն որդեգրել է ամուսնությունը պետական համապատասխան մարմնում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում փաստացի գրանցելու ուղին որպես միակ օրինական ամուսնության տեսակ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը հստակ սահմանում է ամուսնության իրավունքի հասկացությունը, մասնավորապես՝ ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կնայք ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան: ՄԻԵԿ-ում նման դրույթ սահմանելը պարտավորեցնում է կոնվենցիայի անդամ երկրներին տալ ամուսնությանն ու ընտանիքին վերաբերող համապատասխան իրավական կարգավորում:

Ամուսնաընտանեկան հարաբերություններն իրենց հստակ իրավական կարգավորումն են գտել նաև ՀՀ օրենսդրական համակարգում:

ՀՀ Սահմանադրությունն ուղղակի կերպով անդրադառնում է այս իրավահարաբերություններին մի քանի հոդվածների ներքո: Հոդված 16-ը տալիս է ընտանիք հասկացության բացատրությունը. «Ընտանիքը»՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Ընտանիք կազմելու ազատության դրույթին լրացնելու է գալիս 35-րդ հոդվածը՝ ամուսնանալու ազատության իրավունքի և քաղաքացիների իրավահավասարության վերաբերյալ:

1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:

3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

Հոդվածի վերլուծությունից կարող ենք հասկանալ, թե որոնք են (իրավական առումով և Սահմանադրությամբ ամրագրված) ամուսնության համար էական պայմանները՝

- Որոշակի տարիքի հասած կին և տղամարդ,
- Ազատ արտահայտություն,
- Ամուսնական որոշակի տարիքի հասած լինել,
- Ընտանիք կազմելու նպատակ ունենալ:

Սակայն այս իրավունքը ևս բացարձակ չէ, քանի որ այն սահմանափակվել է օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով: Այս դրույթի հիմքում ևս ընկած է ՀՀ-ում գործող արժեհամակարգի առկայությունը:

Հաջորդ նորմատիվ իրավական ակտը, որը գրեթե ամբողջությամբ անդրադառնում և կարգավորում է ամուսնաընտանեկան հարաբերությունները ՀՀ-ում, ՀՀ Ընտանեկան օրենսգիրքն է, որտեղ, ի թիվս այլ սկզբունքային կետերի, սահմանվում են ամուսնության կնքման կարգն ու պայմանները, ամուսնությունը գրանցելու արգելք հանդիսացող հանգամանքները, սահմանափակումները:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը սահմանում է, որ ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ: Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից:

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը՝ բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա

ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

Արգելվում է ամուսնություն կնքել՝

ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.

բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.

գ) որդեգրողների և որդեգրվածների միջև.

դ) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:

Ամուսնության գրանցման պահից ձեռք բերված գույքը համարվում է նրանց համատեղ սեփականություն: Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

Ամուսնական պայմանագիրը փաստացի տարածված կիրառություն չունի ՀՀ-ում, սակայն իրավաբանական տեսանկյունից դյուրացնում է ամուսնաընտանեկան հարաբերություններում տարբեր հարցերի կարգավորումը: Ամուսնական պայմանագրի սահմանումը տրվում է Հնտանեկան օրենսգրքով, իսկ ավելի հանգամանալից կարգավորում կարող ենք գտնել Քաղաքացիական իրավունքում, քանի որ պայմանագրի կնքումը դասական քաղաքացիաիրավական հարաբերության դաշտում է:

Ամուսնական պայմանագիրն ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականություններն ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ամուսնության պետական գրանցումից առաջ կնքված ամուսնական պայմանագիրն ուժի մեջ է մտնում ամուսնության պետական գրանցման պահից: Ամուսնական պայմանագիրը կնքվում է

գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են փոփոխել ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականություն՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես ամուսինների առկա, այնպես էլ հետագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ:

Ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներին մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նախատեսել ընդհանուր գույքը բաժանելու հետ կապված վեճն առևտրային արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորություն:

Ամուսնական պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանափակվել որոշակի ժամկետով կամ կախման մեջ դրվել որոշակի պայմանների վրա հասնելուց կամ հակառակը:

Ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

Ամուսնական պայմանագիրն ամուսինների համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լուծվել ցանկացած ժամանակ: Ամուսնական պայմանագիրը փոփոխվում և լուծվում է ամուսնական պայմանագիր կնքելու համար սահմանված կարգով: Ամուսնական պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում չի թույլատրվում:

Ամուսիններից մեկի պահանջով ամուսնական պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել դատական կարգով՝ պայմանագրերի փոփոխման և լուծման համար քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

Ամուսնական պայմանագրի գործողությունը դադարում է ամուսնության դադարման պահից՝ բացառությամբ այն պարտավորությունների, որոնք ամուսնական պայմանագրով նախատեսված են ամուսնությունը դադարելուց հետո ընկած ժամանակաշրջանի համար:

Դատարանը կարող է ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործարքների անվավերության մասին Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով:

Ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման հարցն ամբողջությամբ արտացոլում է տվյալ հասարակության կողմից այդ ոլորտին վերաբերող առանձնահատկությունները: Հետևաբար, բնական է, որ տարբեր երկրներ կարող են տարբեր իրավական ձևակերպումներ տալ ու տարբեր պահանջներ նախատեսել ամուսնության համար:

Միջազգային իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրների օրենսդրությամբ ճանաչվում են միայն օրենքով սահմանված կարգով ձևակերպված, այսինքն՝ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում գրանցված ամուսնությունները կամ որոշակի եկեղեցական արարողակարգով կատարված ամուսնությունները, եթե դրանք տվյալ երկրում հավասարեցված են աշխարհիկ ամուսնություններին²: Այս դրույթը վերաբերելի է բոլոր տիպի կրոնական ուղղվածություն ունեցող երկրներին:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհում հաճախ օրինական ամուսնությունը շփոթության արդյունքում նույնականացվում է փաստական ամուսնության հետ, մինչդեռ, իրավաբանական տեսանկյունից նույնացնել դրանք պարզապես հնարավոր չէ: Ոչ մի երկրում փաստական ամուսնությունը իրավական հետևանքների առումով լիարժեքորեն չի հավասարեցվում օրինական ամուսնությանը: Պետությունն իր որդեգրած քաղաքականությամբ

² St' u Jung H. Ehevertraege: Fragendes Familienrechts. Frankfurt am Main, 1995, չժ 20, 41 - 46, §Гражданский кодекс Квебека. М., 1999, չժ 86, §Комментарий к Семейному кодексу Российской Федерации. М., 1996, չժ 51 - 52:

միշտ փորձում է վեր դասել ամուսնությունն այլ հարաբերություններից՝ կարելի էրելով դրա նշանակությունը: Որոշ երկրներում (Դանիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Հոլանդիա) օրենսդիրն առավելապես նմանեցրել է ամուսնությունը և գրանցված կենակցությունը: Այլ երկրներում, հակառակը, օրենսդրությամբ ընդգծվել են դրանց միջև տարբերությունները:

Ուսումնասիրելով արտասահմանյան որոշ երկրների՝ ամուսնության և ընտանիքի հարաբերությունները կարգավորող օրենսդրությունները՝ նկատում ենք, որ մի շարք պետություններ, օրինականացնելով փաստական կենակցությունները, նախևառաջ կանոնակարգել են փաստական ամուսնական գույգերի գույքային հարաբերությունները, նրանց տրամադրել են որշակի արտոնություններ ու առավելություններ, իսկ որոշ դեպքերում, ընդհակառակը, զրկել դրանցից³: Այսպես. Ֆրանսիայում նախատեսվում են փաստական ամուսնությունների ձևակերպման (գրանցման) հատուկ ընթացակարգեր (օրինակ՝ գրավոր համաձայնություն), Բելգիայի, Իսլանդիայի, Լյուքսեմբուրգի իրավական համակարգում լրացվում է համապատասխան դիմում, Դանիայում, Շվեդիայում, Նիդերլանդներում իրականացվում է հանդիսավոր արարողություն: Որոշ երկրներ էլ, պարտադիր չհամարելով այդ հարաբերությունների ձևակերպումը, իրականացվելուց հետո ճանաչում են դրանց գոյության փաստը (Հունգարիա, Իտալիա, ԱՄՆ, Պորտուգալիա, Շվեյցարիա, Ուկրաինա)⁴:

Հարկ է նկատել, որ փաստական ամուսնական հարաբերությունները մասնակիորեն օրինականացվել են Ուկրաինայի օրենսդրությամբ: Այսպես, Ուկրաինայի ընտանեկան օրենսգրքով նախատեսվում է, որ եթե տղամարդը և կինն ապրում են մեկ ընտանիքում, սակայն չեն գրանցում իրենց հարաբերությունները, ապա համատեղ ապրելու ընթացքում նրանց ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով: Նախատեսվում է նաև ալիմենտային պարտավորությունների առաջացման հնարավորություն (16, 91 հոդվածներ): Մարդու

³ *Տե՛ս* Косарева И. А. Международное, зарубежное и российское право о статусе лиц, состоящих в фактических супружеских отношениях // Семейное и жилищное право, 2009, № 1, Борминская Д. Новые тенденции в развитии семейного права: внебрачные союзы на примере отдельных европейских стран // Семейное и жилищное право, 2007, № 2:

⁴ *Տե՛ս* § Гражданское и торговое право зарубежных государств. Учебник. Т. II. М., 2006, չժ 521:

իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան⁵ ցույց է տալիս, որ «ընտանեկան կյանք» հասկացությունը չի սահմանափակվում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է տարածվել նաև փաստական ընտանեկան, այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների նկատմամբ⁶։ Կրունն ընդդեմ Նիդերլանդների (1994) գործով դատարանը վճռել է, որ ընտանեկան կյանքի հասկացությունը սահմանափակված չէ բացառապես ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է ներառել այլ «դե-ֆակտո» ամուսնական կապեր, որոնց շրջանակներում կողմերը բնակվում են միասին՝ առանց ամուսնության (տե'ս նաև Ջոնսթոն (Johnston) ընդդեմ Իռլանդիայի (1986) գործը)։ Աբդուլազիզը, Կաբալեսը և Բակկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության (1985) գործով դատարանը նշել է, որ համատեղ բնակվող զույգերը, որոնք ամուսնացած չեն, նույնպես իրավասու են օգտվելու 8-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից, եթե նրանց միջև հարաբերությունները կայուն են և կայացած։

Փաստորեն, ՀՀ-ը քաղաքացիների համար ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելու և օրենքով ամբողջական պաշտպանված լինելու միակ օրինական տարբերակն այն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում փաստացի գրանցելն է, որից հետո միայն այդ հարաբերությունների վրա կսկսվեն տարածվել նշված իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմերի ամբողջությունը։

Ամուսնության սահմանումը և այն կարգավորող իրավանորմերի շրջանակը հիմնականում ամբողջ աշխարհում ունի նույն տեսքը, սակայն, ժամանակակից աշխարհում տարբեր երկրներ տարբեր կերպ փորձել են ազատականացնել ամուսնությունը՝ համապատասխանեցնելով իրենց հասարակական կարիքներին ու բարքերին։

Մի շարք երկրներում, ազգային արժեքների փոփոխությամբ պայմանավորված, ամուսնություն իրավահարաբերության կողմ հանդիսացող կին և տղամարդ բառերին փոխարինելու է եկել 2 քաղաքացու կողմից, առանց սեռական խտրականության, արտահայտությունը, երեխայի հայր և մայր եզրույթները փոխարինվել են ծնող 1 և ծնող 2 արտահայտություններով և այլն։

Այնուամենայնիվ, ՀՀ-ն շարունակում է պահպանել և կատարելագործել

⁵ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածի դատական պրակտիկայի մասին մանրամասն

⁶ Տե՛ս Պրոկոպովիչ (Prokopovich) ընդդեմ Ռուսաստանի (2004), Գավրիկովան (Gavrikova) ընդդեմ Ռուսաստանի (2007) գործերը։

ամուսնաընտանեկան հարաբերություններին վերաբերող օրենսդրական համակարգը՝ հավատարիմ մնալով դարերից եկած ձևավորված արժեհամակարգերի, սահմանելով, որ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն:

ПРАВОВОЕ УРЕГУЛИРОВАНИЕ БРАКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Тоноян Анжела Наириевна

*Преподаватель кафедры технических
дисциплин Колледжа Образовательного
комплекса полиции РА, майор полиции*

Согласно Семейному кодексу РА, брак заключается в органах, осуществляющих государственную запись актов гражданского состояния в порядке, установленном законодательством РА, при обязательном присутствии лиц, вступающих в брак.

С согласия лиц, вступающих в брак, возможно подписание брачного контракта, по которому устанавливаются имущественные права и обязанности супругов в течение брака и (или) в результате его расторжения.

Изучая международный опыт, в статье была сделана попытка представить права и обязанности, вытекающие из супружеско-семейных отношений, последствия, возникающие в этой связи, а также представлены законные варианты нахождения в супружеских отношениях и полной правовой защищенности для граждан.

Ключевые слова: семья, брак, брачный контракт, ЗАГС /запись актов гражданского состояния/, расторжение брака.

LEGAL REGULATION OF MARRIAGE IN THE REPUBLIC OF ARMENIA

Tonoyan Anjela

*Lecturer at the Chair of Technical
Disciplines of the College of the
Educational Complex of Police of RA,
Police Major*

According to the Family Code of the Republic of Armenia and prescribed by the legislation of the RA, marriage is registered by the Civil Status Acts Registration Agency, in the compulsory presence of the persons getting married.

It is possible to conclude a marriage contract, with the consent of married persons, through which the property rights and obligations of spouses are determined during the marriage and (or) in case of divorce.

Studying the international experience, in the article we have tried to introduce the rights and obligations, arising within marriage and family relations, the consequences related to them, as well as the legal options aimed at the protection of rights of citizens' engaged into marital relations.

Key words: family, marriage, marriage contract, Civil Status Acts Registration, divorce.

Հոդվածը գրախոսվել է՝ 05.09.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 12.09.2019թ.

ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Օհանյան Դավիթ

*ՀՀ ռստիկանության
կրթահամալիրի ասպիրանտ*

Մարգարյան Վիկտորյա

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի 4-րդ կուրսի սովորող*

Ծրագրավորողներն ուշադրություն են դարձնում կրիպտոարժույթների¹ տեխնիկական ասպեկտին, ֆինանսիստները դիտարկում են դրանց որպես վճարամիջոց և ներդրում, իսկ իրավաբանների համար առաջին հերթին անհրաժեշտ է որոշել դրանց քաղաքացիաիրավական կարգավիճակը: Պրակտիկայում կրիպտոարժույթների շուրջ ձևավորվում են տարատեսակ հարաբերություններ, և այդ հարաբերությունների մի ստվար հատվածը կազմում են մասնավոր իրավահարաբերությունները: Դրանց շուրջ կնքվում են պայմանագրեր (առուծախ, նվիրատվություն, փոխանակություն և այլն), դրանք հանդես են գալիս ինչպես սեփականության, այնպես էլ պարտավորական իրավահարաբերություններում, մտնում են ժառանգական զանգվածի մեջ և այլն: Եվ, բնականաբար, այդ իրավահարաբերություններում առաջանում են տարբեր իրավական վեճեր:

Որպեսզի վերոշարադրյալը բովանդակագուրկ չհնչի, բերենք մեկ օրինակ ռուսական դատական պրակտիկայից.

Մոսկվայի արբիտրաժային դատարանը մերժել էր բավարարել պարտապանի ֆինանսական կառավարչի պահանջը՝ կապված պարտապանի կրիպտոդրամապանակի մուտքի հետ (փոխանցել գաղտնաբառը): Իր որոշումը դատարանը հիմնավորել էր նրանով, որ կրիպտոարժույթը **քաղաքացիական իրավունքի օբյեկտ չէ**, ՌԴ տարածքում գտնվում է իրավական դաշտից դուրս, կրիպտոարժույթներին առնչվող գործարքները, դրանց տրանզակցիան չեն երաշխավորվում պետության կողմից: Դատարանի կարծիքով՝

¹ 2008թ. ինչ-որ մեկը Մատուսի Նակամոտո կեղծանունով, համացանցում ներդրեց իր հոդվածը <<բիտկոին, էլեկտրոնային միատեսակ դրամական միջոցների համակարգ>> անունով, անցել է 12 տարի և կրիպտոարժույթները, ինչպես նաև բլոկչեյնը, որի վրա հիմնված է դրանք, արդեն իսկ համարվում են 21-րդ դարի հեռանկարային տեխնոլոգիաներից մեկը:

կրիպտոարժույթների համակարգում վերահսկող կենտրոնի բացակայությունը և օգտագործողների գաղտնիությունը հնարավորություն չեն տալիս հասակ որոշել կրիպտոարժույթի պատկանելիությունը կոնկրետ անձի:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դիրքորոշումն առ այն, որ կրիպտոարժույթները կարգավորված չեն, ուստի հնարավոր չէ կիրառել օրենքի անալոգիա, հակասում է ՌԴ քաղ. օր. 6-րդ հոդվածին, որի համաձայն՝ օրենքի անալոգիայի անհնարինության դեպքում կոդների պարտավորությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքների և իմաստի հիման վրա (իրավունքի անալոգիա) և բարեխղճության, բանականության ու արդարության պահանջներին համապատասխան: Գործի փաստերից երևում է, որ պարտապանն իրավունք ունի տիրապետել, օգտագործել և տնօրինել իր կրիպտոդրամապանակի բովանդակությունն այնպես, ինչպես իր սեփական ունեցվածքը, դրանց առնչությամբ կնքել օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող ցանկացած գործարք, որը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այսինքն՝ իրականացնել սեփականատիրոջը բնորոշ իրավագործություններ, որոնք նախատեսված են ՌԴ Սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մասում և ՌԴ քաղ. օր-ի 209 հոդվածում: ՌԴ քաղ. օր-ի 24 հոդվածի համաձայն՝ քաղաքացին իր պարտավորություններում պատասխանատվություն է կրում իրեն պատկանող ունեցվածքով՝ բացառությամբ այն ունեցվածքի, որոնց նկատմամբ օրենսդրությամբ հնարավոր չէ բռնագանձում իրականացնել: ***Պարտապանի մրցակցային զանգվածից ունեցվածքի ձևական բացառումն օրենքով նախատեսված չլինելու հիմքով բացառում կամ սահմանափակում է մրցակից պարտատերերի հնարավորությունը ստանալ իրենց պահանջների մաքսիմալ բավարարում:*** Ուստի Վերաքննիչ արբիտրաժային դատարանն այն կարծիքին է, որ առաջին ատյանի դատարանը բավարար չափով չի քննարկել և ուսումնասիրել ֆինանսական կառավարչի փաստարկները, և պետք է հնարավորություն տալ նրան մուտք ունենալու պարտապանի կրիպտոդրամապանակին²:

Այս և նմանատիպ այլ վեճերի ճիշտ հանգուցալուծման համար հարկավոր է նախ հասկանալ, թե ինչ են իրենցից ներկայացնում կրիպտոարժույթ-

² Стн. Постановление Девятого арбитражного апелляционного суда от 15.05.2018 N 09АП-16416/2018 по делу N А40-124668/2017

ներն ընդհանրապես և որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ՝ մասնավորապես:

Կրիպտոարժույթն էլեկտրոնային-թվային միավոր է, որն ստեղծվում և շրջանառության մեջ է դրվում առանց կենտրոնական բանկի կամ այլ պետական մարմնի հսկողության: Սովորաբար կրիպտոարժույթին բնորոշ է երեք հատկանիշ՝

1. ապակենտրոնացվածություն (դեցենտրալիզացիա),
2. գաղտնիություն,
3. երաշխիքի բացակայություն:

Կրիպտոարժույթի ապակենտրոնացվածությունը նշանակում է, որ չկա որևէ մարմին որը կոնկրետ դրանք և դրանք ստեղծողներին՝ էմիտենտներին³: Գաղտնիությունը նշանակում է, որ սուբյեկտները, որոնք դրանք մտցնում են քաղաքացիական շրջանառության մեջ, միշտ չէ, որ իդենտիֆիկացվում են: Այդ իսկ պատճառով, կրիպտոարժույթները երբեմն օգտագործվում են կասկածելի, երբեմն հակաօրինական գործարքներում, ինչն առաջացնում է դրանց օգտագործման ռիսկայնություն: Երաշխիքի բացակայությունը հարաբերական հատկանիշ է, քանզի ցանկացած համաշխարհային արժույթ երբեմն կարող է էականորեն տատանվել:

Կրիպտոարժույթները որպես սեփականություն

Տրամաբանական է, որ կրիպտոարժույթը չի համարվում գույք՝ վերջինիս դասական (նյութական) իմաստով, բայց կարելի է այն դիտարկել որպես ոչ նյութական գույք: Ըստ Վ.Վ. Ռովնիի մարմնականին վերաբերում է գույքը, իսկ ոչ մարմնականին տեղեկատվությունը և գույքային իրավունքները: Միջանկյալ նշանակություն ունեն գումարը և արժեթղթերը, որոնք մոտ են իրենց բնույթով գույքին, սակայն բովանդակային առումով իրենցից ներկայացնում են գույքային իրավունքներ⁴: Ավելի կոնկրետ է արտահայտվում Կ. Ի. Սկլովսկին, երբ պահանջի իրավունքը դիտարկում է որպես իրավունքի օբյեկտ (ոչ մարմնական- *res incorporales*), ուստի հնարավոր է դառնում այդ իրավունքներին վերաբերվել որպես գույքային իրավունք՝ դիտարկելով դրանք որպես գույք, այս միջոցը ճանաչվում է երբեմն էֆեկտիվ, իսկ իրավաբանական տեսանկյունից՝

³ այնուամենայնիվ որոշ կրիպտոարժույթների պարագայում (օր.՝ Onecoin), դրանք որոշակի կենտրոնացված կառավարում ունեն:

⁴ Տե՛ս՝ В.В. Ровный- Проблемы единства российского частного права, Исд-во Иркутского университета, 1999г. , էջ՝ 310

հարմար⁵: Ոչ մարմնական գույքի կոնցեպցիայի էությունն այն է, որ գույքային իրավունքի որոշակի նորմեր տարածվում են նաև ոչ նյութական օբյեկտների նկատմամբ: Նման մոտեցումը մինչ այժմ էլ պահպանում է իր արդիականությունը և ակտիվորեն կիրառվում է իրավաստեղծման տեխնիկայում: Այս ինստիտուտը քննարկվում է դեռևս **Գայի** ինստիտուտներում: Մասնավորապես՝ ոչ մարմնականն այն գույքն է, որ հնարավոր չէ շոշափել, այդպիսիք են համարվում նրանք, որոնք պարփակվում են իրավունքի մեջ, օրինակ՝ ժառանգությունը, ուզուֆրուկտը, պարտավորությունը, ինչ ձևով էլ այն ձևակերպված լինի, և ընդհանրապես կարևոր չէ, որ ժառանգության մեջ լինում են մարմնական գույքեր: Նույնիսկ բարիքները, որոնք հավաքվում են հողից, ունեն ֆիզիկական բնույթ, և նույնիսկ այն, ինչ մեզ է անցնում պարտավորությամբ, մեծամասամբ ֆիզիկական առարկաներ են, ինչպես օրինակ՝ հողը, ստրուկը, փողը, այնուամենայնիվ, ինքնին ժառանգման իրավունքը, ուզուֆրուկտի իրավունքը, պարտավորական իրավունքը համարվում են **res incorporales**, այսինքն՝ ոչ մարմնական գույք (**Gai. 2.14**) [**1, c. 46**]⁶:

Ջարգացող հասարակական հարաբերությունները, մասնավորապես՝ թվային տեխնոլոգիաների զարգացումը, ոչ փաստաթղթային (էլեկտրոնային) արժեթղթերի ստեղծումը, ներդրումային ֆոնդերի հիմնումը և այլն, վկայում են գույքային ինստիտուտի արստրակցիայի անհրաժեշտության մասին, ինչը բխում է հռոմեական իրավունքում արմատավորված տարանջատումից: Վերջինս Ս.Ս.Ալեկսեևին անվանում է ֆունդամենտալ-իրավական կատեգորիաներից մեկը, որն ունակ է իրագործել իրավունքի կատեգորիկ բնույթի կոնսուտրուկտիվ զարգացումը⁷: *Res incorporales*-ը ներկայումս պոզիտիվացվում է որոշ երկրների կողմից⁸: Ա. Չուրիլովը նույնպես կրիպտոարժույթները

⁵ Сту` Склоковский К.И. – Собственность в гражданском праве, учебно-практическое пособие, М, Дело, 1999г., էջ՝ 512

⁶ Сту` Институтции Гая // Памятники римского права: Законы XII таблиц. Институтции Гая. Дигесты Юстиниана. — М.: Зерцало, 1997. — էջ՝ 45-51.

⁷ Сту` Алексеев С. С. Гражданское право в современную эпоху / С. С. Алексеев. М.: Юрайт, 1999. էջ՝ 40.

